



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
J 514

ԱՅՐԻՑ ԿԵՇԵՐ

△ト'△△COCUSU△

ԳԵՂՄԱՆՑՈՒՅՆԻ ՔՐԴԱ ԱԹԵԼԻ

Գ Ե Զ Ե Ա Ն Ց Ի :



下卷

1864 — *njd* ,

28.515

9574-AO

Գ. ՆԵՐԱԲԻՆ ԿԸՆ-Ը ԾՐԱԽԹԴԻՒՆ

Բաժանումն նախարարաց	—	—	—	133.
Թիւ նախարարաց	—	—	—	137.
Նախարարաց հագուստները	—	—	—	138.

Դ. ԶՕԲՔ.

Պատերազմական կարգը	—	—	—	143.	
Հայոց զօրաց զգեստները	—	—	—	145.	
Հայոց զօրաց զինավառութիւնը	—	—	—	148.	
Թիւ զօրաց	—	—	—	—	157.
Բաժանումն զօրաց	—	—	—	—	159.
Օլենուորական աստիճանները	—	—	—	—	160.
Բանակի տեղը	—	—	—	—	162.
Վրան պատարագի	—	—	—	—	—
Եռանձին յատկութիւն Հայոց զօրաց	—	—	—	163.	

Ե. ԵՐԿՐՄՎԱՅՐԾԱԽԹԻՒՆ ԵՒ ԿԸՆ-Ը ԿԸՆ-ԽԹԻՒՆ

Ե. Ճանապարհ Կասպից ծովովը	—	—	—	173.
Բ. Ճանապարհ սև ծովովը	—	—	—	174.
Դ. Ճանապարհ Եփրատ գետի վրայով	—	—	—	176.
Դրամք Հայաստանի	—	—	—	178.

Զ. ՀԵՅՈՑ ԼԵԶՈՒՆՆ ԳԻՒՆ ԵՒ ԳՐԵԿԱ-
ՆԱԽԹԻՒՆԻՆ:

Լեզուն	—	—	—	—	—	—	—	181.
Դիր Հայոց	—	—	—	—	—	—	—	—
Գրականութիւն	—	—	—	—	—	—	—	188.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆԻ Հայաստան աշխարհը ինչու պէս հնումն, էնպէս ել նորումն զայտնի է ու բիշ աղգերին Արմենիա անունով, բայց Հայերը երբէք էդ անունը չեն տուել նրան: Արմենիա բառը կրկէք չի պատահում Հայոց զրքեթումը և չի գործածուում Հայոց լեզուումը: Խորենացին ասումէ, թէ « մեր աշխարհքը մեր Հայկ նահապեատի անունովը կոչուումէ Հայք» (1): Մինչեւ ցայսօր ել Հայերը կոչում են իրանց Հայրենիքը Հայկ նահապետի անունով Հայոց աշխարհն, երբեմն ել և այն շատ հազիւ, Յարեթի և իր յաջորդների էստեղբնակուելու համար կոչումնն Յանենեան երկը, Թարգումեան երկը կամ Թարգուման պուան և այլն. ուստի Հայաստանի բնակիչն ել բացի Հայկեան կոչուելուց, կոչուումնն երբեմն և Աստվածազնունի⁽²⁾ Ասքանազի անուամբը. Թարգումային՝ Թարգոմի անուամբը: Մովսէս Խորենացին և Հայոց ուրիշ մատենագիրները ասում են, թէ Թարգոմ Հայկայ Հայրն էր. այս բանս հաստատումնն և Արաց տւանդութիւնքն ել, որոնք Հայերին, Արացիներին և առ հասարակ Կովկասեան աղգերին կոչումնն Թարգումազեանք, այսինքն Թարգոմի սերունդներ, իսկ Թարգոմի մեծ որդուն կոչումնն Հայոս (2): Բայց այս բոլոր անունները ամենքից աւելի գործ են ածուում Հայոց լեզուումը և լսուումնն Հայոց աղգի բերանից. ուրիշ աղգերը մի անորոշ ժամանակից սկսեալ՝ այս աշխարհքն

(1) Խորենացի գիրք Ա. Գ. Բ.

(2) Ալապրոտ, ձանապարհորդութիւն Կ Արացտան մասն Ա. եղբա 66:

կոչումնեն Արմենիա, իսկ ժողովը թիւն Արմենք և
Այս բառի ծագումը մեկնումէ Մովսէս Խորենա-
ցին՝ ասելով. “Արամի շատ քաջութեան զործ-
քերն են պատմում իր պատերազմական նահատա-
կութեամբը. սա ամէն կողմից ընդարձակեց Հայոց
սահմանները. որա անուամբն են ամէն ազգերը
մերաշխարհը անուանում, ինչպէս Յոյները՝ Արմենք,
Պարսիկներն ու Ասորիները Արմենիք,,(1): Ճշմար-
տարան Խորենացու այս խօսքերը, որ հիմնուած են
պատմաբանական փասուերի վրայ, պարզումնեն Յու-
նաց պատմաբանների կարծեաց անհաստատութիւնը,
որ ունին այս բառի ծագման համար:

Ինքնասէր Յոյները սովորութիւն ունին հա-
մարեա բոլոր հին ազգաց նահապեաններին Յունա-
կան ծագումն տալ: Այսպէս Սարաբոնը իր աշ-
խարհազրութեան Ժ.Ա. գրքումը պատմումէ, թէ
Հայաստունը ստացելէ իր Արմենիա անունը Ար-
մենոսից, որ Յասոնի պատերազմակից էր. նրա
յաջորդ պատմաբաններից մի քանիսն էլ ինչպէս
Յուստինոսը, կրկնեցին այս պատմութիւնը առանց
փոփոխութեան, մի քանիսն էլ ինչպէս Ստեփան-
նոս Բիւզանդացին, ասում են, թէ Հայաստունը
ստացելէ իր անունը Հռոդոսացի Արմենոսից և
այն. բայց բոլոր այս պատմութիւնները, որ ոչինչ
փաստի վրայ չեն հիմնուած և մէկս մէկու հակա-
ռակ են, արժանի չեն ուշադրութեան և չեն հա-
նիլ Հայ պատմազրի վկայութեանը: Հրեից ազ-
գին ծանօթ չէր Աշունիս բառը. Մովսէսն այս-
պէսէ ասում: “Տապանը նստեց Կոթներորդ ամսումը
ամսի 27-ին Արարատոյ լեռանց վերայ (2):
“Սոյնեպէս Եսայեայ Մարգարէի զրքի մէջ Արրոյեց-

(1) Գիրք Ա. 41. Ժ.Բ.

(2) Օննդոյ 41. Է. Համար կ:

առց և Լատիներէն Թարգմանութեան մէջ Ազրի-
մելեքի և Սալասարի համար ասած է. “փախան
Արարատեան կողմերը,, բայց Եօթանասնից թարգ-
մանութեան մէջ և Արաբերէնի մէջ ասած է. “փա-
խան իրենք Հայաստան,, (1), և դ. Թագաւորաց
զբքումը ըստ Երրայականի, Արաբերէնի և 79-նից
ասած է. “իրենք փախան Արարատեան երկիրը,,
Լատինացւոց թարգմանութեան մէջ փոխանակ
“Արարատեան երկը,, ասած է Հայաստան, կամ
ինչպէս նրանք ասումնեն Արմենիա:

Ա երողքեալ օրինակներից երեւումէ, որ սուրբ
զբքի մէջ Հայաստանն ասուում է Արարատեան
երկիր. Իօշարն ասումէ, թէ “ընդհանուր կարծիքն
այս է, որ Արարատն է Հայաստունը,, (2). Իօ-
շարի այս կարծեացը համաձայն է և Խնձիճեանը,
այս զանազանութեամբ միայն, որ Իօշարի կարծի-
քովը Արարատ բառն՝ առաջ էր սարի անունը,
որով և Սուրբ զիրքը կոչումէ և երկիրը, բայց
Խնձիճեանը կարծումէ, որ բառս Արարատ ամէնից
առաջ էր դաշտի անունը, որ յետոյ ասուեցաւ ամ-
բողջ նահանգին. և որովհեաև այս նահանգն էր
Հայոց նահապեաների և առաջին թագաւորների
բնակարանը, ուստի և այս նահանգի անուամբը,
որպէս առաջին զիխաւոր նահանգի, Սուրբ զիրքը
կոչումէ բոլոր թագաւորութիւնը, ինչպէս Հռովմի
անուամբը կոչուեցաւ և բոլոր Հռովմայեցւոց կայ-
սերութիւնը (3): Եղբեմն Հայոց պատմաբաններն
էլ զորօրինակ, Մարարաս Կատիան, Փաւստոս
Քիւզանդացին և Մովսէս Խորենացին, Հայա-
տունը կոչումնեն Արարատեան երկիր: Ա բացիք
Հայաստանին ասումնեն Սօմիսէթի այսինքն՝ Հա-

(1) Գլ. Լ. Համար 38:

(2) Աշխարհագրութիւն սրբազն պատմութեան Գիւրը Ա
հլ. Գ.

(3) Հնախօսութիւն Հայաստանի Գիւրը Ա. Ի.

բաւային երկիր։ Հայոց մատենագրաց մէջ այս բառը
առաջին անգամն է, որ պատահումէ միայն ԺԳ-
գարու պատմագիր Արդանայ պատմութեան մէջ։

Այս նկատողութեան վերջումը, որի մէջ Հայա-
տունը անուանուումէ Հայազգի և օտարաց մա-
տենագրութեանց մէջ, պէտք է աւելցնել և այն, որ
Յունաց և Հռովմայեցւոց պատմաբանները շատ
անգամ Հայաստունը խառնել են Սկիւթացւոց,
Մարաց, Կովկասեան ազգերի և Պարթեաց թա-
գաւորութեանց կոչման ժիտ. այս հասնատուումէ
Ը. Պլինիոսի (1) և Յուստինոսի (2) վկայու-
թիւններովը, որոնք ասում են, թէ Պարթեաց թա-
գաւորութեան անունովը երբեմն կոչուում էին և
շատ թագաւորներ ՚ի միասին, Բ. հին մատենա-
գիրները երբեմն Հայաստանի լեռները, գետերը և
բերքը սեպհականում են վերոյիշեալ երկիրներից մէ-
կին, ինչպէս Արքիկանոս և Անդրոնը ասում են, որ
Երարատ սարը Պարթեաց երկրումն է. Հերոդո-
դոսը իր պատմութեան մէկ տեղումն ասում է, թէ
Խփրատը Մարքումն է։ Հատ անգամ էլ պատա-
հում է, որ Յունաց և Հռովմայեցւոց հեղինակ-
ներն անգիտութեամբ Հայաստանի մի քանի նա-
հանգները յիշում են ինչպէս առանձին անկախ տէ-
րութիւններ. այս բանս տեսնուումէ Հերոդոտոսի,
Քսենոփոնտի, Պլինիոսի և այլոց դրուածքնե-
րում։

Անժննութեան ՀԱՅԱՍՏԱՆԻ Դեռ չիսուեցած Հայ-
աստանի բուն նահանդների բաժանուելու համար,
ցոյց տանք էն բաժանմունքները, որ օտար թագա-
ւորները մացըին նրա մէջ. այս թագաւորաց մէջ ա-

(1) Գիրք Օ. 42. Իլ.

(2) Գիրք 41. 42.

ուաջին տեղը պատկանումէ Շամիրամին, որը որ ինչ-
պէս Այսկէս Խորհնացին ասումէ. “ Հայոց աշ-
խարհօւմը շատ տեղեր արձաններ է հաստատում
և միևնույն զրովը հրամայումէ յիշատակներ գրել,
շատ տեղեր էլ էն զրովը սահմաններ էր հաստա-
տում,, (1):

Հռովմայեցոց իշխանութեան ժամանակը, Յու-
նաց և Հռովմայեցոց մատենագիրներն պատմում
են, թէ և շատ անյայտ կերպիւ, այն բաժան-
մունքները, որ մացրին Հայաստան Անտոնիոս և
Պոմպէոս. Սարարանը Պոմպէոսի համար ասումէ,
թէ երբոր նա տիրեց Միհրզատի թագաւորու-
թեանը, Հայաստանի և Արդքիսի սահմանակից
երկիրները բաժանեց մանր մանր թագաւորութիւն-
ներ, որոց օգնութեամբը պատերազմումէր. մնացած
երկիրներն էլ բաժանեց ՃՐ, հասարակապետու-
թիւններ և միացրեց Բիւթանիայի հետ (2):
Արանից երեսումէ, որ այս բաժանմունքը ըլտարած-
ուեց Մնծ Հայաստանի վերայ, այլ միայն Փոքր
Հայաստանի վերայ: Ուրիշ տեղ էլ ասումէ Սարա-
րանը, թէ “ վերջին անգամները Հռովմայեցիք նշա-
նակեցին նոր իշխաններ և նոր բաժանմունքներ
արին, կարգեցին մեծ և փոքր թագաւորներ, մի
քանի քաղաքներ աղատ թողին և մի քանիսը փոքր
թագաւորաց իշխանութեան հպատակ արին կամ
թողին Հռովմի իշխանութեան տակը,, : Էս էլ
պէտք է Փոքր Ասիայի համար իմանանք: Ուրեմն
մենք հաւաստի տեղեկութիւն չունինք Հայաստանի
աշխարհապետական բաժանմանց վերայ Հռովմայե-
ցոց իշխանութեան ժամանակ, մինչև Քրիստոսի
ծնունդը:

(1) Գերք Ե. Հ. Ժ. Օ.

(2) Գերք Ժ. Ը.

Առվակն Խորենացին ասումէ, թէ “Դ. դարումը
Քրիստոսից յետոյ Հայոց Խոսրով մեծ թագաւ-
ռորի սպանուելուց յետոյ, Յունաց վերայ թագա-
ւորեց Պռոբոս. հաշառութեան գաշն կապելով Ար-
տաշեր (Պարսից թագաւորի) հետ, բաժանեց մեր
աշխարհը, փոսեր փորելով”։ Միւս տեղը Խորե-
նացին Արտաշերի համար ասումէ, թէ “Արտա-
շեի հաստատած սահմանների քարերը նորոգեց
Արտաշերը և փոխելով իր անուամբը՝ Արտաշե-
րական կոչեց,, (1): Այս բանը հաստատումէ և
Եղաթանգեղոսը. նա ասումէ, թէ “Խոսրովի սպա-
նութիւնից յետոյ, Պարսից թագաւորը գալով
Հայաստան, այն աեղերը իրան անունովն է կո-
չում, փախցնումէ Յունաց զօրքերին և մինչև Յու-
նական սահմանները հեաներն է ընկնում, յետոյ
փոսեր փորելով, սահմաններ է հաստատում և Ոյջք
ասուած աեղը կոչումէ փոսերի դռներ (2):

Դ. դարի վերջումը Արկաղիոս կայսրը և Շա-
պուհ Բ. Պարսից թագաւորը բաժանեցին Հայաս-
տունը իրենց մէջ, բայց այս միայն երկու թագաւ-
ռորութեանց մէջ սահման կտրել էր նշանակում
և ոչ թէ զաւառներ բաժանել։ Յունաց մատենա-
գիրները շատ անդամ խօսում են, թէ ինչպէս Հայ-
աստունը նոր բաժանմունքներ ստացաւ զանազան
կայսերներից և մանաւանդ Յուստինոս մեծից,
բայց այս բաժանմունքը աւելի Փոքր Հայաստանին
էր վերաբերում։ Զարմանալի է, որ Յունաց հե-
ղինակներից ոչ ոք չե՛ խօսում այն բաժանմանց
համար, որ Մօրիկ կայսրը մայրեց Հայաստան
Զ. դարու վերջումը, որի համար շատ երկար
պատմումն Հայոց պատմաբանները և մանաւանդ
Յովհաննէս Կաթուղիկոսը. որովհեաև երբ որ

(1) Գրեք Բ. Կ. ՀԵ.

(2) Եղաթանգեղոս. երես 38:

Պարսից Խոսրով թագաւորը Մօրիկ կայսեր օդութեամբը թագաւորումէ Պարսկաստանի վերայ, Էն ժամանակը ինչպէս Յովհաննէս Ամուղիկոսը ասումէ. “Մօրիկը ՚ի վարձ իր բարերարութեանը պահանջումէ Խոսրովից Ասորեստունը Դարա և Մծրին քաղաքների հետ, և Հայաստունի էլ Էն մասը, որ կոչուումէր Տանուտերական գունդ, բացի Դվին զլիաւոր քաղաքիցը և նորա երկու գաւառներիցը, որք են Մասեաց ոտն և Երազած ոտն Վերցնելով այս երկուսը, Խոսրով մնացածը տալիս է Մօրիկին, Ընծափիսար սարիցը սկսեալ մինչ և Առեալ և Հացիւ զիւղերը, որոնք դժնուումնն Վանայ ընի Հիւսիսային արեւնեան ափերումը: Մրանից յետոյ Մօրիկ թագաւորը ամբարտաւանօրէն կամելով փոխել այն երկիրների անունները, որ մեր Երամ նահապեաից էին կոչուած, նաև՝ Առաջին Հայքի անունը Երկրորդ Հայք դրեց, որի մէջ զլիաւոր քաղաքն է Սերաստիա. Կապագովիսան, որի զլիաւոր քաղաքն է Կեսարիան և որ առաջ կոչուումէր Երկրորդ Հայք, կոչեց Երրորդ Հայք և մի առաձին վիճակ (επαρχια) շենց. Մելիսախնէն իր գաւառներովը, որ նոյնպէս Մելիսախնէն էր կոչուում, սրա չետ էլ Երրորդ Հայքը անուանեց Առաջին Հայք, Պոնտոսը՝ որի զլիաւոր քաղաքն է Տրապիզոն, անուանեց մասն Մեծին Հայոց, Չորրորդ Հայքը՝ որի զլիաւոր քաղաքը Մարտիրոսաց քաղաքն է այսինքն Միրկերտ, կոչեց Յուստիանուպոլիս. Կարնոյ երկերը՝ որի զլիաւոր քաղաքն է Թաէոդոսուպոլիս, կոչեց մեծ մասն Մեծին Հայաստանի. Հռովմայեցւոց իշխանութեան տակ եղած մեծ Հայաստանի մասը Բասենի երկրից մինչև Ասորւոց սահմանները անուանեց մեծ Հայաստուն. Տայք նահանգը իր շրջակայքովը կոչեց նոր Հայաստուն և Դվինի կողմերը

կոչեց «Սերքին Հայաստուն»: Այս փոփոխութիւնն
անելով Մօրիկը, հրամայեց զրել թագաւորական
դիւանաներումը, : Այս բանս հաստատումեն
Հայոց Վարդան և Թառվմայ Արծրունի (1) պատ-
մաբանները, իսկ Յունաց Թակոփիլակտ Սիմոքատ-
տայ (2) պատմիչը:

Մօրիկի մահից յետոյ Հայաստանի Յունական
սահմանները շատ անդամ փոփոխութիւն, մինչեւ
վերջապէս Ակջուղեան Թառվքիրը բոլորովին հա-
լածեցին նրանց Հայաստանից: Այս միջոցումը,
կարծես թէ, Յոյները նոր աշխարհագրական բա-
ժանմունքներ մտցրին Հայաստուն, որ իրնց հա-
լածուելուց յետոյ էլ երկար ժամանակ մնում
էին (3):

Արաբները յընթացս Եւ Բ. Թ. և Ժ. դարուց
սիրելով Հայաստանի մեծ մասի վերայ, բաւակա-
նացան մէկ քանի անստոյդ բաժանմունքներով:
Արաբացւոց ամենահին աշխարհագիրները բաժա-
նումեն Հայաստանը երկու մեծ մասն. Հայաստա-
նի Հիւսիսային մասը ասում էին «Սերքին(զախիլէ),
իսկ Հարաւայինը՝ Արտաքին (խարաչէ). Էս բա-
ժանմունքը ընդունումէն Ի՞ն Հօկալը և Եղի-
սին (4)

Յիշելով օտար ակրութիւններից արած Հայաս-
տանի բաժանմունքը, ասենք հիմայ, թէ ի՞նչպէս էր
բաժանուումնա իր անկախութեան ժամանակը. ա-
մէնից առաջ, յառաջ են գալիս էս հարցմունք-
ները. ումնից կամ ե՞րբ է մտել այս բաժանմունքը

(1) Գիրք Բ. դւ. 3:

(2) Գիրք Ե. դւ. 3:

(3) Յիշատակարան Հայաստանի Աէն-Վարտէնի Գիրք
Եղես 30: Լաստիվերացի դւ. Պ. և պլն:

(4) Յիշատակարան Հայաստանի Աէն-Վարտէնի դւ. Ե.
Եղես 31:

Հայաստան։ Պէտք է կարծենք, որ Հայաստանի
նահանգներ բաժանուիլը մատ նրա առաջին քառա-
կիշներից, որովհետև եթէ Հայկի սերունդներից
մէկը տիրումէր մի նշանակեալ տեղի վերայ, որտեղ
և ինքը մշակումէր, նշանակումէ, որ նորա բնակե-
ռած և մշակած տեղը բնականաբար բաժանումէր
նորա միւս ազգականի բնակուած տեղերիցը. Հենց
սրահամար էլէ, որ նահանգների անունները մեծ
մասամբ նախարարութեանց անուններիցն են։ Այս
բանը հաստատումէ Պլինիոսը. նա ասումէ. « Հայա-
աստանը բաժանուումէ իսկապէս նախարարութիւն-
ներ, որ կոչուումէ զինուորական կառավարչութիւն
(стրатегія)։ Երբեմն նրանցից մի քանիսը ինչպէս
առանձին տէրութիւններ, կոչուումէին օտարական
անուններով, թուով 120 (1)։ Բայց այսքան մեծ
տարածութեան վերայ և այսքան պատերազմներից
յետոյ այս բաժանմունքը չկարողացան մնալ ճիշտ
և սահմանեալ և երեխի թէ խառնուեցան. ուրեմն
թագաւորներից մէկը պէտք է կարգ գնէր նրանց
և հաստատէր։ Պովմայ Արծրունին այս բաժա-
նումը տալիս է Արտաշէս Բ. Թաղաւորին (2).
Արտաշէսը ամենքից աւելի հոգս քաշեց իր տէ-
րութիւնը բարեկարգելու. ինչպէս ժամանակագիր-
ները վկայում են, նրա ժամանակը չկար մի կտոր
անմշակ և անբնակ երկիր, նախարարութիւնները
բաժանուած էին և քաղաքներն ու գիւղերը սահմա-
նած։ Պովմէս խորենացին ասումէ, որ Արտաշէսը
հրամայեց գեղերի և ազարակների սահմանները ջո-
կել, և սահմաններին նշաններ հաստատեց. այսպէս
հրամայեց տաշել չորեքանկիւնի քարեր, մէջերը
բաժակի նման փորել և գետնումը թաղել և նրանց

(1) Գերք. Օչ թէ 9:

(2) Գերք. Դ. թէ 17:

վերայ շինել չորեք անկիւնի մանր աշտարակներ
գեսնից մի քիչ բարձրութեամբ (1): Այս բանը
հաստատումէ նոյնպէս ինքը Խորենացին, երբ որ
խօսումէ Պարսից Արտաշեր թագաւորի վերայ:
“Արտաշեսի հաստատած սահմանների քարերը
նորոգեց Արտաշեր և իր անուամբը Արտաշերա-
կան կոչեց (2):

Ուրեմն վերոյ զրեալ բաներից կարելի է փոքր
ինչ հաւաստի վճռել, թէ Հայաստանի բաժան-
մունքը խառնուումէ նախարարութեանց ծագման
հետ և թէ յետին անդամը Արտաշես Ռ. թագաւ-
որը հարկաւոր համարեց աւելի խսկապէս նշանա-
կել նորանց սահմանները և դիւանումը զրել:
Այս բաժանմունքը ընդունումեն Խորենացին և
միւս բոլոր մատենագիրները. սրա վերայ հիմնուե-
ցան նախարարութիւնքը և եպիսկոպոսութիւնքը.
Էս էր իրենց ձեռնարկութիւնը թէ հարկ ժողովե-
լուս, թէ զօրք հաւաքելուս և թէ կառավարու-
թեան միւս գործքերը կատարելուս

Թէի ՆԱՀԱՆԳԱՑ ԵՒ ԳԱԻԾՄԱՑ. Հայոց, Յունաց
և Հռովմայեցոց աշխարհագիրները միաձայն բա-
ժանումեն Հայաստանը երկու՝ Անծ և Փոքր:

Անծ Հայաստանի սահմանը Արեելքիցն էր
Կասպից ծովը և Արտաքատական աշխարհը, Մարաց
նահանգը (Հաղբեժան), Հարաւից՝ Սորես-
տունը, Միջագետքը և Ասորիքը, Արևմտքից՝ Փոքր
Հայաստունը և Հիւսիսից Առղքեաց աշխարհը,
Արաստունը և Սղուանքը:

Անծ Հայաստունը բաժանուումէ 15 նահանգներ,
Բարձր Հայաստուն, Չորրորդ Հայք, Աղձնիք, Տու-

(1) Գիւրը Բ. 42. 56:

(2) Գիւրը Բ. 42. 77:

բուրերան, Առկը, Կործեր, Պարսկահայք, Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտի, Գրուգարք, Տայք և Այրարատ: Ամէն մի նահանգն էլքածանուում են գաւառներ, որ մենք էստեղ չպէտք է թուենք, որովհետեւ շատ զժուարին է իսկութեամբ վճռել նրանց դիրքը: Հետեւելով Մովսէս Խորենացու աշխաբհազրութեանը՝ բոլոր նահանգներն էին 187, թէպէտ Գրիգոր լուսաւորիչը իր մէկ նամակի մէջ, որ զրումէ Եղիազար և Տիմոթէոս Եպիսկոպոսներին, ասումէ, թէ Հայաստանը 620 նահանգ ունէր (1): Բայց պէտք է կարծել, որ այս թուումն էին և Հայաստանից դուրս զըտնուած կողմերը, որոնք էն ժամանակը նրանից կախումն ունէին, որովհետեւ Մեծ և Փոքր Հայաստանումն էնքան նահանգներ երբէք չեն եղել:

Փոքր Հայաստանի սահմանն էր Արեւելքից՝ Մեծ Հայաստանը, Հարաւից՝ Ասորիքը և Արևիկիան, Արեւմտքից՝ բուն Կապաղովկիան, Հիւսիսից՝ Պողեմոնական Կապաղովկիան և Պոնտոսը:

Փոքր Հայաստանը բաժանուումէր Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Կապաղովկիա (2):

ՕՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ Հայաստանի օդը զանազան տեսակ է. զտնուելով մէկ լայնութեան աստիճանի տակ Հարաւային Խապանիոյ և Կեռպօլիտանեան տէրութեան հետ, Հայաստանը ունի իր մէջ աշխարհիս բոլոր կլիման՝ ջեռուցեալ գոտից սկսեալ, մինչև սառուցեալ գոտին: Մշտական սառնապատ լեռների վերայ միշտ սաստիկ ցուրտ է լինում և ձիւնը շարունակուումէ տարուան երկու երրորդ մասը. իսկ դաշտ տեղերումը երկար ժամանակ ամառ է և ան-

(1) Օենոբ:

(2) Աշխաբհազրութիւն Մովսէսի Խարենացւոյն

տանելի շոքեր և անռւմ։ Առհասարակ Հայաստանի
Փղը թէ հինեթե նոր մատենադրաց միաբան վկայուա-
թեանց համեմատ առօղջարար է (1) և նորա բարե-
խառնութեան համար Ասորւոց, Պարսից և այլ մերձաւ-
կայ ազգաց գոռող իշխաններն ամառուան սաստիկ
շոքից պատսպարան են շինել իրենց։ Առօվսէս խորե-
նացին պատմում է, թէ “Համիրամը գնումէ Հա-
րաւային լեռնակողմերը, վասն զի ամառնային ժա-
մանակ էր և կամենում է զբունուլ ծաղկաւէտ
դաշտերումը և հովիտներումը. տեսնելով երկրի գե-
ղեցկութիւնը, օդի մաքրութիւնը, պարզ աղբիւր-
ների բլիսումը և սրբնթաց գետերի խողխոջումը,
պէտք է, ասում է, որ մենք այսպիսի բարեխառն
ողի և մաքուր ջրերի և երկրի մէջ, քաղաք և
արքունիք շինենք, որ տարուան չորրորդ մասն, այ-
սինքն ամառը բարեվայելուչ անցկացնենք Հայա-
ստանումը,, (2):

Հայոց քաղաքներումը շատ անզամ է պատա-
հել բուք և մրբիկներ, որոց համար շատ տեղիս-
սում էն Ատրաբոն (3), Պըւտարքոս (4) և Առվ-
սէս խորենացին (5): Վասնովոնտը իր պատմու-
թեան Դ. զբքումը պատմում է, թէ ի՞նչպիսի զժուա-
րութեամբ իր զօրքը մինչև կէսը թաղուած լինելով
ձիւնի մէջ, անցկացաւ մինչև Եփրատ գետի ա-
փունքը։ Արա անաստուններից շատերը կտորուեցան
և զօրքերից շատերը փչացան, որոնցից ումանք աչքի
լուսից զբկուեցան և ոմանք ոտների մատներից։

(1) Օդը լաւ է, ասում է Հարդենը, բայց իիստ սառն է.
մինչև անգամ Ապրել ամսին էլ ձիւն է գալի. էս պատճա-
ռաւ գիւղացիք պարտաւորուած են թաղել իրենց խաղողի
վաղերը (թուփ), որոց բաց են անում գարունքը։

(2) Առօվսէս Խորենացի Գիրք Ա. 42. Ճ. Զ.

(3) Գիրք Ճ. Յ.

(4) Կենսագրութիւն Լուկուլոսի։

(5) Գիրք Ի. 42. Ճ. Զ. Ա. Յ.

Հայաստանի սաստիկ ձմեռան համար խօսումնեն
Դեղողոս Սիկիլացին, (1) Տակիտոսը (2) և Յովէ^{Հան} ոսկեբերանը, որի աքսորանաց տեղն եղաւ Փոքր
Հայաստանի Առմանա քաղաքը։ Ծատ անգամ
դառնաշունչ ձմեռը, սաստիկ մրրիկները և մեծ
ձիւնը ազատել են Հայերին, կոտորելով նրանց
թշնամիներին։ Այսպէս փչացան Անտոնիոսի լե-
գէօնը և Ամսիլ Կայսեր զօրքը և այլն։

Ենթաք ՀԱՅԱՍՏԱՆԻ. Ամրաբոնն ասում է, թէ
“ Հայաստանն ունի շատ լեռներ և բլուրներ, որ
տեղ խաղողը հաղեւ է համնում, բայց այն տեղ
կան և շատ դաշտեր, որոնցից շատերը պաղաւէտ
են (3):

Հայաստանի Լեռանց գտնիները բոլորովին այլ
տեսակ դասաւորութիւն ունին Մեծ Կովկասի գո-
տիներիցը։ Հայաստանի մէջ տեղիցը սրբազան Աս-
սիսը բարձրացնումէ իր ալեսոր զլուխը։ Օ՞ննոց
զրքի մէջ խօսելով Ամի թոռան Յետկանայ որդւոյ
բնակարանի համար, ասածէ. “սրանք ամենքը Յետ-
կանայ որդիքն են և սրանց բնակութիւնն եղաւ Աս-
սիսից մինչև Արեելեան կողմի Ասփերաց սարերը (4):

Այս խօսքերը կատարելապէս հասկանալի են
Հայոց համար, որոնք միշտ Արարատ սարին ասում
են Ասսիս՝ Ամասիա նահապետի անուամբ։ Առւրբ
Կիքի շատ թարգմանիչները անտեղեակ լինելով
Հայոց լեզուին և պատմութեանը, անզիտութեամբ
Ամսեաց սարը համարումէին ուրիշ լեռն և ոչ
թէ Արարատը. նրանք համարումէին, թէ նա
Հայաստանից դուրս է, որ ընդդէմ է Առւրբ զրոց

(1) Գերք Ժ.Դ. 411.

(2) Գերք Ժ.Բ.:

(3) Գերք Ժ.Ա.:

(4) Գ.Հ. Ժ. համար 30:

մաքին, որովհետեւ շատ բնական է, որ «Եղի՛ որ-
դիքը ջրհեղեղից յետոյ բնակուելով Մասեաց շրջա-
կայքումը» շատացան և յետոյ քիչ քիչ հեռացան
նրա ստորափյօթ, այնպէս որ Յետկանի որդիքը
մինչև Սոփերայ լեառը տարածուեցին՝ այսինքն մին-
չեւ Հայաստանի Ապեր գաւառի լեռները։ Հայաս-
տանի լերանց զղթայն տարածուումէ Հիւսիսից Հա-
րաւ, բայց Մասիսի բարձրութեան համար ոչինչ
ստոյգ տեղեկութիւններ չունինք, թէ Հայոց, թէ
Յունաց, թէ Հռովմայեցւոց և թէ Ծարբացւոց
մատենազրութեանց մէջ, թէ և նրանք միշտ տա-
լիս են այս տիտղոսները, Էտի՞ր, Էտի՞րագոյն, Էժ-
էտառն և այլն. Երբայեցիք այս լեառը աշխարհիս
ամեն լեռներից մեծ էին համարում, յարմարա-
ցնելով Սուրբ գրքի այս խօսքին. « Եւ նստեց տա-
պանը եօթներորդ ամսի 27-ին Ծարաւատայ լերանց
վերայ», այն ինչ միւս լերանց զլուխներն երեւեցան
շատ ուշ՝ այսինքն « տասներորդ ամսի առաջին
օրը երեւեցան լերանց զլուխները,, (1): Կարծիք
չկայ, որ Անծ և Փոքր Մասիսն էլհրաբուղիս էին.
Բոլոր նրանց շրջակայքը լիքն են հրաբուղիս լերանց
գոյն զգոյն նիւթերով. լերանց վերայ էլ մայր հողը
մեծ մասամբ աւազուտ է (2), բայց չկայ ոչ մի
աւանդութիւն, որով կարելի լինի վճռել, թէ երբ
է կատարուել այդ հրաբղւութիւնը:

Անծ Մասիսի բարձրութիւնը գտնուումէ 39° 42'
հիւսիսային լայնութեան և 61° 55' արևելեան
երկայնութեան տակը. Փոքր Մասիսի բարձրու-
թիւնը 39° 39' և 62° 2': Այն հաւասար գիծը, որ
միացնումէ երկու բարձրութիւնները, պարունակումէ
իր մէջ Պ. Գեօդրովի չափելովը տասը վերատ և
350 սաժեն երկայնութիւն. Անծ և Փոքր Մասիսները

(1) Օ՞ննդոց գլ. լ. համար 4:

(2) Ոտուսասաւան Փոքր Ասիայում Գիլեկու Գօնաւանի:

բաժանուած են միմեանցից մի դաշտով, որի ընաթացքն է Հերսուային Արևելքից դեպի Հարաւային Արևմուտքը։ Այս դաշտը Երասխի հովիտի կողմիցը պատած է բարձր բլուզ։ Այս դաշտի վերայ կան նոյնակեա տեղ տեղ բաւական հաւասար տեղեր, որ ծածկուած է թանձր (զալին) խոտերով, տեղ տեղ էլ կարատուած է ժայռերով։ Ամաժամանակը ձորակներովը վազում են հալած ձիւնի ջրերը։ Մեծ Պասիսի գլխին երկու բլուր կայ, որ մեկ մէկից լաժանուում են մեկ սառուցի ձորակով. էս բլուրներից բարձրը մատիկ է տալի դեպի Հարաւե ծովի մակերեւութից բարձր է 16,953 ոտք, իսկ Երասխի դաշտից բարձր է 14,351 ոտք։ Ուրեմն Մեծ Պասիսը 1,219 ոտքով բարձր է Պննըլան սարից, որ Եւրոպայի ամենաբարձր սարն է։ Փոքր Պասիսի զլուխը նմանում է քառանկիւնի բրդի (սարաւածա) կտորի, որի ամեն կողմը մինչև 150 քայլ կը լինի։ Երա բարձրութիւնն է ծովի մակերեւութից 12,839 ոտք։ Մեծ Պասիսի մինչև Էնտեղը, որ միշտ ձիւնով ծածկուած է, բաւական բարձրութիւն ունի, որ ինչպէս Պարրօտ պլոֆիսօրը նկարագրում է՝ 14000 ոտքից պահաս չի լինի ծովի մակերեւութից։ Փոքր Պասիսի զլի ձիւնը աւատ ժամանակը բալորովին հալում է, բայց շատ շուտ էլի դալիս է վատ եղանակների ժամանակը։

Տորոս Երանց շղթան ընկնում է Հայաստանի Տարօն, Մոկք և Աղճիք նահանդների կողմովը և քանի Արևելք է գնում, Էնքան բարձրանում է, բաժանուած է Հայաստանի պատմութիւնը Վիջագետքից։

Կորդուաց լեռները, որ Եփրատ գետի Հարաւային կողմումն են, ընկած են դեպի Ապնայ ծովը և Մեծաղեաքը, Արևմուտք Հարաւայ Տիգրիս գետի մատերքումը և Տիգրանակերտ կամ Սմբատաղարի շղակայքովը այս լեռները խառնուում են

Տորոս լեռանց մի քանի ճիւղքերին։ Կորդուաց
լեռների բարձրութեան և քարոտութեան վերայ Քսե-
նոփոն ար խօսում է իր պատմութեան Դ։ գրքումը

Պարխար լեռներն ընկած են Մեծ Հայաստանի
Ճիւսիսային Արևմտեան կողմը դէպի Տայք նա-
հանգը, որ սահմանակից է Առղքեաց աշխարհին և
բաժանում են Հայաստունը Աւ ծովիցը։ Այս լեռ-
ների շղթաները հովանաւորած են գեղեցիկ ան-
տառներով։ Եթէ կամենանք ասել, որ Սարաբոնի
Պտղոմէոսի և Պլինիոսի դրած Պարխարտիս լեռ-
ները Հայաստանի Պարխարեան լեռներն են, այս
երեսում է աւելի Արքառերի նմանութենից, որ եթէ
դէն ձգենք յունական տիւ վերջաւորութիւնը, կմնայ
Պարխար, որ եթէ չ տառը փոխենք ՚, կմնայ
հայկական անունս Պարխար, Ա. տեղի դրութեան
նոյնանմանութիւնից։ որովհետեւ ինչպէս Յունաց
աշխարհագիրները Պարխարտիս լեռներն, այնպէս
էլ Հայոց աշխարհագիրները Պարխար լեռները
համարում են Հայաստանի Արևմտեան Ճիւսի-
սումը։ և Դ։ ինչպէս Սարաբոնը պատմում է,
Պարխարտիս լեռան համար, թէ մեծ վայելչութիւն-
ներ է տալի իր գեղեցիկ տեսքովը, թանձրախիտ
անտառներովը, հովիտներովը ու ձորերովը, այնպէս
էլ, համարեա, Մովսէս Խորենացին է նկարագրում
Պարխար լեռը։ Խորենացու խօսքովը Պարխար լե-
ռը ծածկուած է մըրիկներով և խոնաւ տեղերը
մեղներով, իսկ բոլոր լեռը լիքն է անտառներով
(1)։ Այս լեռան համար Քսենոփոնտն էլ յիշում
է, ոչ թէ անունն է տալի, այլնկարագրումէնորա
տեղի դրութիւնը։

Մովսէսիքեան լեռները բաժանում են Հայաստանը
Արաստանից, Առղքիսից և Կապաղովկիայից (2)։

(1) Գիրք Բ. Ա. Օ.

(2) Սարաբոն, Գեղեց Ճ.Ե. Պլինիոս Գիրք Ե. Պտղո-
մէոս, Գիրք Ե. Գ. Ժ.Պ.

Բացի վերոյիշեալ լեռներիցը Հայաստանումը
կան էլե շատ լեռներ, որոնցից երեքը են Արա-
գած լեռոը՝ Հայկայ Արմենակ որդույ անունովը (1):
Եյս մեծափառ լեռոը, որ գտնուումէ 49°32' Հիւ-
սիսային լայնութեան և 60°51' Արեւելան երկայնու-
թեան տակ, ունի բոլորովին ուրիշ դիրք. “Աս ու-
նի հրաբուզն լերանց բոլոր յատկութիւնները և
մինչեւ իր պատմութեան մէջ մանելը, հաւաստի
երեւումէ, որ Արագածը եղելէ աշխարհիս երեսելի
հրաբուզիններից մէկը. Նրա լաւայի հեղեղները
թափուածէ հարաւային կողմից մինչեւ Երասխ գետը,
նորա վչացրած տեղերի սահմանը (ռածու սփերա)՝
մի քանի տեղ մինչեւ 200 վերստի տարածութիւն
երեւումնն Արագածի զառիվայրումը բոլորովին ան-
տառ չկայ և ամառը լաւ արտատեղի է լինում.
Նրա գլուխն է տափարակ բլրածեւ կամ լաւ և ասել բոլորակաձեւ ձոր, որ սահմանափակուած է
երեք դուրս ընկած ձիւնապատ սաստիկ ծուռը
կոնուսի ձեռվ. Նրանցից ամենից բարձրի գլուխը
զնտապետ Խոցկոյի երկրաչափական չափովէ 13454
ոտքով՝ ծովի մակերեւութից բարձր Արեւելի է
նոյնպէս Առիւծ լեռն Եկեղեցեաց գաւառումը՝
Արձան լեռոը Տարօն գաւառումը (2) Ծաղկոց
լեռն Այրարատ նահանգումը. այս լեռնիցն է
սկիզբն առնում Եփրատը, “Եպատ լեռն” Եփ-
րատ գետի ափերումը, որ Յոյներն ասումնեն՝ Եփ-
րատիս, իսկ Պտղոմեոսը՝ Նիմֆատ (3): Պլինիոս
յիշումէ Կապուտակ լեռն համար Գարանիտիս
երկրումը. պէտք է ասել, որ սա է Կապոյտ լեռը,
Արա (4) լեռն միւզը, որին Ստրաբոնը ասումէ.

(1) Խորենացի Գիրք Ա. 7. Ժբ.

(2) Մամլէս Խորենացի Գիրք Գ. Ա. 19. 3.

(3) Պտղոմեոս Եպ. Ժ. 3.

(4) Եղիշէ երես 222:



Արոս, որ տեղից նա կարծումէ, թէ բղխում են
Երբատի և Երասխի ակունքը (1): Երեելի է
նոյնպէս Սուկաւ կամ Սուկաւտ լեառը, որ չին
ժամանակը ջքաբաշխ էլ էր կոչուում, իբանից
վազող ջրերի շատութեան համար ։ նորա ձարա-
ւային կողմն է Վարազ լեառը, որոց երկուսն էլ
Բագրեանդումն են:

Երեելի է նոյնպէս Ահմ լեառն Եղձնեաց նա-
հանգի Սասունք գաւառումը ։ Վանայ լճի Երե-
մտեան կողմն է Վարազայ լեառը, իսկ ձարա-
ւային կողմն է Ընձափարս լեառը, իսկ այն լեռները,
որ ձայաստունը Կասպից ծովից բաժանուում են,
կոչում են Կասպեան լերինք (2):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՐԸ, ԳԵՏԵՐԸ: Ձայաստանումը շատ
գետեր կան, ասումէ Ստրաբոնը, որոնցից առելի
երեելիքն են՝ Փասիս և Լիկոս, որ թափուումնն
Պոնտոս ծովը, Կուրը և Երասխը՝ որ թափուում
են Կասպից ծովը, իսկ Երբատ և Տիգրիսը, որ
թափուումնն Արմիր ծովը (3) (Պարսից ծոցը).
ուրեմն Ստրաբոնը յիշումէ միայն Մեծ ձայաս-
տանի ամենամեծ գետերը, որոնցից Լիկոսը միայն
Փոքր ձայաստանին է պատկանում:

ԵՐԱԾՈՒ ԳԵՏ: Այս գետը կոչումէ Արամայիս
նահապեաի Երաստ թոռի անուամբը, ինչպէս Մով-
սէս Խորենացին ասում է. “Երամայիս (Երմենա-
կայ որդին) շինուած է իր համար բնակարան մի բլրի
վերայ գետի ափի մօտ և իր անունովը Երմաւիր
է կոչում, իսկ զետի անունը իր Երաստ թոռի ան-
ուամբը կոչում է Երասխ, (4): Յունաց հեղինակները

(1) Ստրաբոն Գիոք ԺԵ

(2) Գլինես Գիոք Ե՛

(3) Մովսէս Գիոք ԺԵ

(4) Մովսէս Խորենացի Գիոք Ա Ա՛ ԺԵ

Եղասին ասում են Արակսիս, իսկ Հռովմայեցւոց
հեղինակներ՝ Արակսէ (1):

Խորենացու խօսքերից երեսումէ Յունաց անհի-
մըն պատմութիւնը Եղասիի անուշան ծագման հա-
մար: Ստրաբոնն ասումէ, « Որպէս թէ “ Արակսիս
ասուածէ Արմենոսի անունիցը, որ Արդոնաւանդ-
ների կռուումը պատերազմակից էր Յասովին (2):

Արաբացւոց աշխարհագիրները ասում են Երաս-
ին Թաօշև Թօսու, որ Արագ բարի կրծատեալն է,
ինչպէս երեմն կոչում են այսպէս Յունաց և
Հռովմայեցւոց մատենագիրները: Վրացիք էլ կո-
չումնն Քափսի: Սուրբ Գրիքը ասումէ Երասին
Գեհոն (3), որ Եփրայեցւոց լեզուաւ նշանակումէ
“ Ծնթանալ, սրբնթաց լինել,,: Ասպէսէր կոչուում
այսգետը, ասումէ Կալմետը, որովհետեւ շատ սրբն-
թաց էր գնում,,: Երասիը առնումէ իւր սկիզբն
Եփոս լեռնիցը (4). (Հռովմայեցիք արտաբերում
էին Արոսը՝ բին գեօլ): Երասիը սկզբումը Արե-
մուտքից գետի Արևելք գնումէ հանդարտ, բայց
երբ որ երկու կողմիցը լեռները ճնշումնեն, սրբնթա-
ցութեամբ վազումէ և դիպչելով ապառաժներին,
սաստիչ կարկաչելով ընկնումէ դաշտը: Երասին
գեղեցիկ նկարագրութիւնը մենք կարդում ենք Խո-
րենացու (5), Յովհաննէս Կաթուղիկոսի, Սարա-
բոնի (6), Պոմպոնիոս Մելեոսի (7) և ուրիշների
զրուածոց մէջ: Երասիը առնելով սկիզբը Հայ-
աստանի լեռնոտ մասումը, ջրումէ Արարատ, Սիւ-

(1) Պէտքոս Գիրք Զ:

(2) Ասրաբոն Գիրք ԺԵ:

(3) և երկոտդ գետի անունն է Գեհոն Յանդ գլ. ԺԵ.
Համար 13:

(4) Ասրաբոն Գիրք ԺԵ:

(5) Գիրք Ե. գլ. ԺԵ:

(6) Գիրք ԺԵ:

(7) Գիրք Պ. գլ. Ե:

Նվա, Ուսի և Փայտակարան նահանգները։ Արա
ափերումն էին շինուած Վաղարշաւան և Երուան-
դաշատ քաղաքները, որին շրջապատած էր Երասլիը,
Երտաշատ, Երմանիք (Եմրարտանահանգումը) և
Նախիջեան (Վասպուրական նահանգումը)։
Հիւսիսային կողմից Երասլի մէջ թափուող զե-
տերէց երևելիքն են Մուրց, որին Պլնիոս Մու-
սուս է կոչում (1) և հիմա Հասանղալի ջուր է
ասուում, որ Բասենի գաւառն է ջրում (2), Եսու-
րեան, որ բղնումէ Կարնոյ շրջակայ լեռներիցը,
Ջրումէ Բասեն և Ծիրակ գաւառները և Բագա-
րան, Կարս և Ենի քաղաքները ու թափուում է
Երասլի հին Երուանդակերտի մօտ, (որին հիմա
Եղջաղալայ են ասում)։ Եյս երեք գետը՝ միա-
մին առեալ՝ հիմի ասուումն Երփաչայ (Գարբոյ
գետ) (3)։ Քասախը բղնումէ Երագած լեռնիցը,
անց է կենում Վաղարշապատի և Կարբի քաղաքի
մոտովը, որոնց անուամբը ասուումէ Վաղարշապա-
տայ գետ և Կարբոյ ջուր (4)։ Միւս տեղումը
Երասլի ընդունումէ իր մէջ Հրազդանը՝ (այժ-
մեան Օշանգու) գետը, որի ափումն է Երևան
քաղաքը (5), Եղատ գետը՝ (այժմ Գառնեայ գետ)։
Նրա հովտի հետ կապուած են Հայոց պատմու-
թեան հին հին յիշատակները. այս տեղ Քրիս-
տոսի ծննդից 2000 տարի առաջ Գեղամը շինելէ
քաղաք, որ հիմի էլ իր աւերակներովը ցոյց է
տալի Հայոց ճարտարապետութեան չքնաղ տիպերը։
Մինչև հիմա էլ զարմացնումէ ճանապարհորդնե-

(1) Գերք Օ. Գ. Թ.։

(2) Մալսէս Խորենացի Գերք Բ. Գ. Ա.։

(3) Մալսէս Խորենացի Գերք Բ. Գ. Ա.։ Խ. Մատո-
թէս Առ. Հայեցի։

(4) Մալսէս Խորենացի Գերք Բ. Գ. Ա.։

(5) Մալսէս Խորենացի Գերք Բ. Գ. Ա.։ Յովհաննէս

Կաթողիկոս։ Վարդանայ Եղիսարհաղբութիւն։

րին էստեղի ամայի վանքը, որ մի ժայռից է փո-
րած. նորա մօտ են Դվին և Երտաշատ քաղաք-
ները՝ Հայոց թագաւորութեան հին մայրաքաղաք-
ները :

Հարաւային կողմից Երասխի մէջ թափուռումէ
Տղմուտ գետը (Ազայ ըստ Տաճկաց), որ բղնելով
Երտագի շրջակացքիցը, Կախիջևանայ զիմացը
թափուռումէ Երասխ գետը: Շատ գետեր էլ Եղբ-
րէժմանի լիոներից թափուռումն Երասխ գետը,
որոնք այնքան նշանակութիւն չունին: Երասխը
մինչև Կուր գետի հետ միանալը, թափուռումէ
ջրվէժներից. որին Հայք Քարավազ և Տաճիկ-
ները Երազը են ասում: Երասխի կամրջների
համար մենք կարդում ենք Եդաթանգեղոսի մէջ
այս բանս: “Համնելով Երաշատա քաղաքի կամրջ-
ներին, որովհետեւ Երասխ գետը էն ժամանակը մե-
ծացած լինելով՝ գալիս էր սառցոտ և ձիւնալի ա-
լիքներով, կէս մասը անցնելով Վաղարշապատ
քաղաքի կամրջից, որ ասուռումէր նոյնպէս Մեծա-
մօրի կամուրջ, շտապումէին համնել Երտաշա-
տու կամրջին, բայց նրանց վերայ յարձակուեցան
ծանալապարհին և Տաթերեան կամրջների մօտ նեղը
ձգելով, ածեցին գետը (1)”, Եյս կամուրջները
յիշումէ Փաստոս Բիւզանդացին (2), Պաղար
Փարպեցին (3) և Տակիտոսը (4), բայց չեն ի-
մացուռում, թէ այս կամուրջները քարեաց էին, թէ
փայտեայ: Մի քանի պատմաբաններ ասում են,
թէ Մեծն Եղէքսանդրը Երասխի վերայ քարեայ
կամուրջներ շինեց, որ քանդուեցան Երասխի
սրբնթացութիւնից և նրանց աւերակները երկար

(1) Եդաթանգեղոս երես 36:

(2) Փաստոս Բիւզանդացի Գնեք Գև Շւ ԺՄ, ՌԵ:

(3) Երես 250, 299:

(4) Գերք ԺՄ Շւ ԼՅ:

ժամանակ մնացին : Այս բանս հաստատումէ Արքիլիոսի Լնէականի հետեւալ խօսքովը . “ և անսանձելի են Դակի և Երասխ գետերը , որ անպիտան են կամքջի համար (1),,: Երասխի ջուրը Արեւքումը գովուած էր իր առողջարար յատկութեամբը , որի համար Պարսից երեւլի Հաֆիզ բանաստեղծը երգում է իր ուսանաւորների մէջ :

ԿՈՒՐ ԳԵՏԸ. Հայերը այս գետին ’ի հնուց ասում են Առւր , Վրացիք՝ Մտկվարի , իսկ նախնի Յոյններն և Հռովմայեցիք՝ Աիրուս (2): Այս գետը իր սկիզբն առնումէ Պարսար լեռներից՝ Տայք նահանգումը , ընթանալով դէպի Մեծ Հայաստանի Հիւսիսային Արեւքը , Տայք և Գուգարք նահանգներովը , բաժանումէ Հայաստունը Վրաստանից և Եղուանքից . մանելով Վրաստանի սահմանները , ոռողանումէ Թափլիզ և Գօրի քաղաքները , յետոյ դառնալով դէպի Հարաւային Արեւքը , կրկին մանում է Հայաստուն , որտեղ առնելով իր մէջ շատ գետեր և լեռնային հեղեղներ , միանում է Երասխին և շատ գետերով թափումէ իր ջրերը Կասպից ծովը : Այս գետերից մի քանիսը Մայն յարմար են նաւազնացութեան համար . որովհետեւ կուրի մէջ թափուող գետերը , ասում է Մտրաբոնը , շատ սիկաւէտ (տլուտ) են , որից գոյացել են մի քանի մանր կղզիներ և Ծակներ , և գետաբերաններն ել լցուած են տիլով (3):

ԵՓԲԱՏ ԳԵՏ. Յոյները և Հռովմայեցիք այս գետին ասում էին Եփրատ , իսկ Հայերը Եփրատ : Այս գետի ակունքն երկու տեղեց է . Վարդան

(1) Լնէական Գեւք Ը. Եղեւ 727.

(2) Մորաբան , Գեւք Ժ. Ա. Պէնիսս , Գեւք Ժ. Ա. Դ. Թ. Թիւպրանիսս Մելա , Գեւք Գ. Դ. Ե. Դ. Թիւ

(3) Գեւք Ժ. Ա.

աշխարհագիրը այսպէս է ասում. “Եփրատ գետն
Եկեղեց գաւառումն է: մի ակն Արզումի մէջն է,
երկրորդ ակը Արձիշումը: սա անցնելով Տարօն
գաւառովը, գնումէ Ասորիք, (1): Ուրեմն
Եփրատը բաղկանումէ երկու գետի միաւորութիւն
նից, որոց մէկի սկիզբն է Կարմոյ (այժմ Արլում)՝
բարձրաւանդակութիւններիցը, իսկ միւսն Արարա-
տեան նահանգի՝ Օաղկոտն գաւառի՝ Օաղկոց լեռ-
նիցը: Եփրատի ափների Հայերը Եփրատի երկու
ճիւղերին էլ ասումնն Եփրատ, ինչպէս Կարմոյ
մօտի Ծինկելիք սարերից բղնածին, որ ջրում է
Դիրջան և Եկեղեց գաւառները, բաժանելով
Հայաստունը Կապադովիկայից, և ընդունումէ Գաղլ
գետը՝ որին Պլինիոսը (2) Լեկոս է ասում, այնու-
ակէս էլ Օաղկոց (Արտաղ) լեռնից եկած ճիւղը
քին, որ ջրումէ Տարօնը (այժմեան Մուշ) գաւ-
առուը, ընթանալով Արեւելքից գետի Արեւմուտք (3)
և որ Տարօն գաւառուումը ընդունումէ իր մէջ
Մեշեայ կամ Մեղրագետք. միւս տեղումն էլ ըն-
դունումէ Մաշուշեկ գետը (այժմեան Մաշուշ)՝
և միանալով վերսիշեալ Հիւսիսային ճիւղքի հետ,
Եփրատ անուամբ գնումէ դէպի Հարաւային
Արևելք, բաժանելով Մհծ Հայաստունը Փոքր
Հայաստունից և Ասորիքը Միջազնատից և մանե-

(1) Մովսես Խորենացի, Գիրք Գ. գլ. Ծմբա Պլինիոս
ասումէ. “Եփրատը բղնումէ Մհծ Հայաստանի Կարանիսէս
գաւառումը”:

(2) Պլինիոս, Գիրք Ե. գլ. Բայ. Լեկոս Օունարէն գայլ
ասել է:

(3) Տակիստոս, Գիրք ԺԵ. գլ. ԺԵ. Պետարքոս կ Աբե-
սագրութեան Լուկուլսի: Պլինիոս (Հիւրց Ե. գլ. ան):
Եփրատի այս ճիւղը կոչումէ Արանիսա, որ պարս է եկալ
Կարածանի կոչումից (այժմ Մաշրատ չայ): Ջնարք երես 38:
Արամանգեղոս երես 28: Հայոց հելլենիստը եւ ենին Եփր-
րատ գետին ասումնն Արածանի, Նրա երկու ճիւղերից մէկի
անունովը: Ճամանակագրութիւն Եւսեբի: Ասովէկ, Գիրք
Դ. գլ. Խօն:

լով Պարսից Խրակում, միանում է Տեղրիսի հետ
և Բասօր քաղաքի ներքեւ թափուռմ է Պարսից
ծոցը . Եւ որովհետեւ Սարաբոնը, որ ծնկլէր Կա-
պադովիի այստումը վերջումը ճանապարհորդութիւն
արեց զէպի Հայաստուն, երկու Ճիւղքն էլ, թէ
Ճիւսիսային և թէ Արևելյանը կոչումէ Եփրատ,
ուրեմն մենք էլ պատճառ չենք ունենալ ընդու-
նել էն կարծիքը, թէ Եփրատը երկու ակունք ու-
նի, և այն միւս Ճիւղքն էլ կըկոչենք մի գետ, որ
մտնում է Եփրատի մէջ : Եփրատը նաւազնացու-
թեան յարմար գետ է (1) և ամառ ժամանակը
երբ որ Հայաստանի լեռների ձիւները հալում են
և մեծանում է, դուրս է զալիս իր ափներիցը և
ջըում է շրջակայքը (2). իսկ ձմեռը նրա ջրերը
շատ պակասում են, այնպէս որ բնակիչքը հար-
կադրուում են կտրել այն առուները, որ տեղով նո-
րա մեծացած ժամանակը ջուր են տանում (3):
Եփրատ գետի կամուրջների համար յիշում են
Տակիտոս, Պլէնիոս, Մովսէս Խորենացին և ու-
րիշները: Եփրատի ջուրը քաղցր է և առողջա-
րար, բայց մեծ մասամբ պղտոր է. Աբաբները ասում
են, թէ Եփրատին առողջարար յատկութիւն ունի,
որ Տեղրիսի ջրերից թեթև է:

Տեղրիս գետի անունը դուրս է եկել
ու բառից, որ Տեղենախանոս Վարոնն էլ հաս-
տառում է այս խօսքերովը. “ է նա հայերէն բառ,
որոց լեզուի մէջ, տէպն էլ՝ սրբնթաց գետն էլ Տեղ-
րիս է ասուում,,,: Պլէնիոս, Սարաբոնը և Եւստա-

-
- (1) Պլէնիոս Գիրք Եւ ԴԼ. ԿԴ. Հերոդոտոս, Գիրք Եւ
ԴԼ. ԾՐ. Սարաբոն, Գիրք ԺԵ:
(2) Սարաբոն, Գիրք ԺԵ:
(3) Տակիտոս, Գիրք ԺԵ: ԴԼ. Գիրք ԺԵ: ԴԼ. Մովսէս Խորենացի,
Գիրք Բ. ԴԼ. ԺԵ:

թէսո Հայոց լեզուն չիմանալով, աէդ կարծում
նն Մարտ բառ. (1), իսկ Արւենուի անոս Կուրսաֆոսք
համարում է Պարսից բառ. (2): Տիգրիս գետը
Սուրբ զբքի Յօվսէփոսի մեկնութեան մէջ, նոյն-
պէս Արարացւոց և Պարսից Մարդմանութեանց
մէջ, նոյնպէս և մի քանի Հայոց սպասմագրաց
մէջ առունում է Դկղաթ: Խնանունը կողմուում է երշ-
կու բառից աէդ և շատ, այն տեղերից մէկի անունը
է, ուստի Եփրատ գետի մի ակը բղխում է: Արա-
բացիք Տիգրիսին առումնն Պէջլէ:

Տիգրիսը մէկ ճիւղքով սկիզբն է առնում Չոր-
րորդ Հայոց նահանդի Հաշտեան գտնառից (3),
միւս ճիւղքը գալիս է Կորլուաց լեռներից (4)
Հատախ քաղաքի մօտովք էս բանիս համաձայն Են
Յունաց և Հռովմայիցւոց մատենագլիքները, որոնք
երկու ակն են ընծայում Տիգրիսին, այս զանազա-
նութեամբ միայն, որ կարծումնն, թէ Տիգրիսի
երկրորդ ճիւղքը բղինկէ երկրորդ անդամ երկրի
տակ ընկնելուց յեաց (5): Տիգրիսը բաժանում է
Միջադեպը Անորեստանից, շարունակում է իր ըն-
թացքը գէպի Հարաւ, ջրում է Բաղդադը և միաշ-
նալով Եփրատ գետի հետ, թափուում են ՚ի միա-
սին Պարսից ծոցը (6): Տիգրիսն էնպէս մեծ ջուր-
չէ, ինչու Եփրատը, և Ասրաբոնի (7) ասելով:

(1) Պլինիոս, Գիրք Դ. 72. Ի.:

(2) Գիրք Դ. 72. Թ.:

(3) Աշխարհագրութիւն Ա արդանայ: Պլինիոս, Գիրք Զ:
Դ. Ի.:

(4) Աշխարհագրութիւն Ա արդանայ: Պլինիոս, Գիրք Ե:
Դ. Ճ.Գ.: Քանոնագիւնաս, Գիրք Գ:

(5) Հնախոսութիւն Հայաստանի՝ Խճճիթեանի, Գիրք Ա:
Դ. Զ.:

(6) Յիշատակարան Հայաստանի Ան Մարտենի, Գիրք
Ե. Երես 53:

(7) Ասրաբոն Գիրք Փ.Օ:

նաւագնաց է մինչև այն տեղ, որ տեղ՝ վերջերումը
հիմնուել է Սիւեկիա քաղաքը (1): Պարսիկները
վախենալով թշնամեաց արշաւանքներից՝ ինչպէս
Եփրատի՝ նոյնպէս և Տիգրիսի մէջ սաստիկ քա-
րավազներ, կատեր (ալօշ) էին շնորհ, որ Աղէք-
սանդր Մակեդոնացին քանդեց, բայց նրանք էլլ-
շնորհին, որ մնում էին մինչև Յուլիանսս կայսեր
ժամանակները, ինչպէս յիշում է Վամինանու Մար-
կելինը (2), վերջերումը, ինչպէս երեսում է, քանդ-
ուեցան բոլորովին, որովհետեւ մի քանի ժամա-
նակից յետոյ Ըստրոս, Պարսից և Մարաց ապ-
րանքով վաճառականութիւն էր լինում Տիգրիսի
և Եփրատի վրայով: Տիգրիս գետի կամրջե հա-
մար յիշում է միայն Դիռն Կասիոպ առելով, թէ
Տրոյանոսը հրամայեց Մծբնից բերել ամէն բանը,
ինչ որ պէտք էր Տիգրիսի կամուջը շնորհու հա-
մար Կորդուաց լերանց մօտ, (որ Բարբերդից զէ-
ողի Արևմուտքն է ընկնում):

Ծարուն ԿԱՄ ՃՈՐՈՒ Ի ՀԵՇԻՄՆ ՓԱՄԻՄ: Այս գետը
այժմ Տաճկերէն Չորակ է առուռում, Արացերէն
Ճորոքի: Ինճիճնանի կարծիքով Ասուրը զբառումը
կոչուումէ Փիսոն (3), գրախափ չորս գետերից մէկը:
Ծարուն բառը դուքս է դալիս ծոր (Հեղումն) և ուզն
բառերից, որպէս թէ յայտնուում է սորա առույն
նման սաստիկ ծորելը: Ասվէսը այս բառս փո-
խեց Փիսոն, որ Երբայիցերէն էլլ աճիլ, լցուիլ
նշանակուում: Յունաց և Հռովմայիցւոց մասենա-
գիրներն էլ այս գետին առում նե Պաղիսը Ացն
կարծիքը, թէ Յունաց և Հռովմայիցւոց Պաղիսը

(1) Մարաբոն, Գիրք Ժ.Օ:

(2) Գիրք ԵՒ:

(3) Ծանդոց Հ. Բ. Համար Ա.

Օռորտին է, հաստատում է այս փաստելով (1).

Ա. Հին մատենագիրները բոլորը Փասիսի ակունքը կարծում են Հայաստանի լևաներումը (2): Սորաբանները ասում են, թէ Պատքիսը մեծ մասամբ ծովին մօտիկ է, նորա միջովն անցնում է Փասիս մեծ գեաը, Հայաստանիցն սկիզբն առնելով (3): Դիոնիսիոսը ասում է, թէ Փասիսը սկիզբն է առնում Հայաստանի սարերիցը: այսպէս են Հաստատում և Պլինիս, Պքոկոպիան և այլք: Սորաբոնն էլ խօսելով Հայաստանի գետերի վերայ, նրանց թուումն էլ յիշում է և Փասիսը: Տ. Փասիսի ընթացքի նկարագրութիւնը (4) բոլորովինն նման է Օռորուի ընթացքին: Ինչպէս հնուց Փասիսը ընթանում էր Վողբիսի մօտովն, Տրապիզոն քաղաքի մօտից, այսպէս էլ այժմ Օռորու գեաը ընթանում է Տրապիզոնի Փաշայութեան սահմանովք: Ինչպէս Փասիսի շըշակայքումը, ասում էին, ոսկի կար, էնպէս էլ Օռորուի մօտ դանուում են ոսկու հանքեր: Եթէ Օռորուը Փասիսը չէ, ի՞նչ պէս ուրիմն Յունաց և Հռոմայցւոց մատենագիրները թուելով Հայաստանի ամենափոքր գետերն անգամ, լուսմ են Շարսիսի նման մեծ գետի համար, մի՞ թէ սրանից չէ երեսում, որ նրանք յիշել են միայն ուրիշ անուամբ, այսինքն՝ Փասիս կոչելով: Վարձեմ բաւական են այսքան փաստերը այս տալու, թէ ինչպէս Օռորու կամ Շորուն է նախննաց Փասիսը, էնպէս էլ Փասիսը այժմեան Փարշ գեաը չէ, ինչպէս մի քանիսը կարծում են, խափուելով Փասիս և Փարշ բառերի նմանահրեա-

(1) Խաճճեանի Հայիսուութիւն Հայաստանի, Պէտք Ա:

(2) Սորաբոն, Գիւք ԺԱ:

(3) Սորաբոն, Գիւք ԺԱ:

(4) Սորաբոն, Գիւք ԺԱ: Քամենեփոնտ, Գիւք ԴԱ: Պետքաս, Գիւք ԵԵ: ԱԼ: ԺԳ:

չութիւնից. Ա. որովհեաւ Փարշ կամ Ռիօնը
չէ բղխում Հայաստանիցը, ինչպէս նախնեաց Փա-
սիսը, այլ բղխում է Արքիասեան լեռներիցը, Ա բաս-
տանի Հեւսիսային կողմը, որ Հայաստանից շատ
հեռու է, և եթէ կարծենք, թէ այժմեան Փարշը
նախնեաց Փասիսն է, ուրեմն պէտք է բոլոր նախնի
մատենագրաց վկայութիւնները սուտ համարենք,
որոնք Փասիսի ակը կարծումեն Հայաստանումը:

Բ. Եյժմեան Փասիսը Արդքիսովը չէ պնում և
չիռու է Տրապիզոնից, ընդդէմ Պլինիոսի և այլոց
վկայութեանց, որ և ընդդէմ է լինում Քսենոփոն-
տի պատմութեանը, որ պատմում է Յունաց զօրքի
Փասիսից անցնիլը, որովհեաւ եթէ Փասիսն է այժ-
մեան Փարշը, ուրեմն նա չէր ընկնիլ Յունաց
զօրքի ճանապարհովը և Փարշի մօտերքումն էլ
չին Տայք և Աղձնիք, որոց համար յիշում է
Քսենոփոնտը իր պատմութեան մէջ, այլ Ճորո-
խի մօտքերումը: Փարշի շրջակայքումն էլ ոսկի
չի գտնուում: Պիշենկ, որ կարծում էր, թէ Ախո-
րելիսան Արդքիսն է, ասում է. “Էն տեղ ոչ ոս-
կոյ և ոչ արծաթի հանք կայ և ոչ էլ գետերի
մէջ ոսկոյ աւագ, ուրեմն չի կարելի հետքն ան-
գամ գտնել յիշելոյ այն հաշակաւոք առասպելը
ոսկի բրդի, որ Արգոնաւորդները տարան էս աշ-
խարհքիցու: Այսպէս՝ այն կարծիքը, թէ Փարշն
է նախնեաց Փասիսը, համեմատ չէ, ոչ Քսենո-
փոնտի պատմութեան հետ Յունաց զօրքի անցնե-
րու համար, ոչ Արգոնաւորդաց պատերազմին և ոչ
նախնեաց Փասիսի նկարագրութեան հետ: Ճորոխ
կամ Փասիսը Շայքերթի Արևմտեան կողմի սա-
քերից սկիզբն առնելով, զնում է գէպի Հեւսիս-
սային Արեւելք, ջրելով Տայք գաւառը, որ տեղ
ընդունում է իր մէջ շատ զետեր և առուներ: Փոքր
ինչ հեռու էլ զարձնելով իր ընթացքը գէպի
Հեւսիս, բաժանում է Տրապիզոնի գաւառը և

Լազերի երկիրը Գուրիայից և թափուռում է Անծովը Գունիա քաղաքի մօտ (1): Ճորոխը կամ Փասիսը ունէր շատ կամուրջներ, Պլինիոսը յիշում է մինչև 120 (2):

Բացի վերոյիշեալ գետերից Հայաստանումը կային շատ ուրիշ նաւազնացութեան յարմար գետեր, որոնք այնքան նշանաւոր չեն և որոնցից շատ քիչերն են հասնում ծովը: Ուրեմն Հայաստանը մէկ գետաւէտ երկիր է, որոյ ջրերն իրապետղաբերութեան զիլաւոր պատճառն են և ազատում էին այն չորութիւնից, որ մեծ վնասներ է բերում Արևելեան կողմերին: այս գետերը յարմար միջոց էին վաճառականութեանց իրար հետ հաղորդակցութեանը:

Եշերը: Հայաստանը գոլով լեռնաւէտ երկիր, ունի շատ լճեր. Ասրաբոնն ասում է. “թէ Հայաստան շատ լճեր կան,, (3): ‘Նրանցից երեսելքն են. Վանայ լիճը, որ Արաքացի Աբու Փաթ աշխարհազրի հուշուուլը չորս օրուան ձիռ ճանապարհից աւելի է շրջակայքը: Մովսէս Խորենացին իր աշխարհազրութեան մշջ կարծում է 100 մղոն նրա երկայնութիւնը և 60 մղոն լայնութիւնը: Հին ժամանակը Վանայ լիճը կոչուում էր Շաշունեաց և Արշունեաց լիճ (4): Նրա մօտի գաւառների անուններովը նոյնպէս կոչուում էր և Վառապուրական լիճ: այն նահանգի անուամբը, որ երկք կողմով նրան պատաժ էր (5): Ես լիճ չուրը աղի է, որա համար Հայք կոչում

(1) Ծիշաստակարան Հայաստանի, Աւն Վարտէնի, Գիւղը Երես 37:

(2) Ասրաբոն, Գիւղը Ժ. Պլինիոս, Գիւղը Զ. Կ. Դ.

(3) Ասրաբոն, Գիւղը Ժ. Պլինիոս:

(4) Փաւստոս Բիւզանդացի, Գիւղը Գ. Կ. Ժ. Օ.:

(5) Վարդան պատմագիր.

են աղմ լէ՞ (1): Արա միջին կան շտո մանդ
կղզներ և նրանցից մէկի անուամբը կոչուում է
երբեմն և Եղբայրայ լէ՞: Տաճիկները հիմի
առում են նրան Երժիշե և Վանայ լիճ, նրա
ափների մօտիկ Վան և Երժիշ քաղաքաց ան-
ուամբը:

Երևի թէ Պլինիոսի և Ստրաբոնի Երևնէ,
Երսիսաս և Թռոսպիտիս ասածներն է Վանայ
լիճը, որովհետեւ նրանց ջուրն էլ աղի է (2):
Ժողովրար իր Ճանապարհորդութիւն 'ի Ճա-
յաստան և 'ի Պարսկաստան զրքի մէջ այսպէս է
Նկարագրում այս լիճը: “ Եյս լիճը իր խաղաղ
տեսքով և կապոյա ջրովը հեռուից երևումէ իրեւ
մէկ հանդարտ ծով: Նրա բարձրաւանգակութիւնը
լիքն է կաղամախի, անդիկ արմաւի, մրահնւոյ և
վարդագոյն գարնիի ծառերով: Կա ունի շատ կա-
նաչաղեղ կղզներ, որոց մէջ բնակուած են խա-
ղաղասէր միայնակնացներ: Եյս լիճի ձկնորսու-
թիւնը արդիւնք է բերում մինչև 60 հազար պի-
աստր, որ սկսուումէ մարտի քսանին և վերջա-
նումէ ապրիլի 30-ին: Եյս ձկնորսութիւնը շատ
տռատ է և բազկանումէ միայն մի ձկնից, որ պա-
ռեի է կոչուում և բաւական նմանութիւն ունի
Սարդինիայի ձկան:

Հայոց հին հեղինակները պատմում են այն ա-
հազին ամբարտակի (բանդ) համար, որ շինեց
Շամիրամ պահպանելու իւր առած քաղաքը հե-
ղեղներից: այն հսկայական աշխատանաց հետքերը
դեռ մնում են և նրանց Պարսկական անունը բանդ:

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Ե. 42. ՃԱ. ՁԲ.

(2) Ստրաբոն, Գիրք ՃԱ: Յիշտատակարան Հայաստանի
Աէն Մարտէնի, Գիրք Ե. երես 56:

մա (ամբարտակ, բանդ) հաստատում է Հայոց
մատենազբաց պատմութիւնը (1):

ԱՐՄԵՆՅԱՆ ՎԻՃ Խորենացին իր աշխարհազգին թեան
մէջ այս լիճը կոչում է Արագուան լիճ. Արարուն
էլ ասում է, թէ Հայաստանի մեծ ըներից մէկն
էլ ասուում է Վանդեանք, որ նշանակում է Արա-
գուանակ (2). Կրա ջուրն աղի է և տարածուած է
մինչև Ետրապատական աշխարհը և շրջապատ-
ռած է լիոներով, որոնցից շատ զետեք և առու-
ներ են իջնում և թափուում Կրա մէջ : ԱԷն-Վար-
աէն էս լիճը խառնում է Արքայունի Սղառուցա-
քի հետ, որ կարծում է նա լինել Ետրապատա-
կանումը և նկարազբում է Որմիոյ ծովից ջոկ:

ԱԵՒՆԱՅՅ ՎԻՃ Եյսեղէմ է կոչուում իր միջե-
կղզու անուամբը: Հայք ասում էին Գեղամայ
ծով՝ Գեղամ նահապետի անուամբը, որ շնոր-
հորա մօտ քաղաք և կոչեց իր անուամբը (3):
Եյս լիճը գտնուում է Հայաստանի Հիւսիսային
մասումը, Երասխի ձախակողմեան ափումը՝ Հիւս-
չիսային Երեւելքից դեպի Հարաւային Երեւելք
ընկած: Տաճիկները և Պարսիկները հիմա կոչում
են Գեղօդլայ դաշտայ կամ Գեղօդլայ դանդել (լոռ
ծով): կամ Գարենա շերին (քաղցր ծով), ու-
րիշ լճերից զանազանելու համար, որոնց ջրերը
աղի են:

Բացի այս մեծ ըներից Հայաստանումը կան-
էլի շատ ուրիշ նշանաւոր լճեր, որք են. Գայլա-
տուաց լիճը Եյրաբանեան նահանգումը (4). Պատ-

(1) Վինչև հիմայ էլ երեւումըն պյու բանդերի հետքերը,
որ շնորհ Կ ամիրամ: Ուստաստան Փոքը Եսիայի մէջ, շա-
րադրութիւն Գիլելք Գինունի:

(2) Արարուն, Գիրը ԺՎ:

(3) Վավեէս Խորենացի, Գիրը Ե Աւ. ԺԲ:

(4) Վավեէս Խորենացի, Գիրը Բ. Աւ. ԿԲ:

Էտիացիս՝ Տայք նահանդումը (1), Օռովակ Հիւսիս
սոյ, որ Խնձիճեանը համարում է այժմեան Փառ
հավանը (2), Գառանի լիճը այժմեան Արզումի
շրջակայքումը, որ ինչպէս խորենացին վկայում է,
լեքն էր ձկներով և թռչուններով։ Արզումի
շրջակայքի եղած մասնը Ճերիցը նրանց մօտի լեռ-
ները հիմայ կոչուում են Բինգիծլի լեռներ, այսինքն՝
հայութ Լիճին առցեր. Հայաստանումը ինչպէս լեռ-
նաւէս երկիր, զմինուում են շատ մոռոտ (Ճմճմայ)
աեղեր նոյնպէս և ջերմուկներ, որոնց համար յիշ-
շում են Խորենացին և Քսեննիոնտը։

Պատրիարքանան Նկնքնարքութեան ՀաՅաստանի
Տէրութեանց հիմնուիլ այսինքն՝ մի քանի սերունդը
ների միութիւնը քաղաքական ընկերութիւնների
վառնալու համար, առ հասարակ այնպէս ծանր և
աննկատելի եղանակաւ է կատարուում, այնքան
փոքր յիշատակարաններ է թողում, որ պատմու-
թիւնը շատ դժուարութեամբ կարող է քննել, թէ
ի՞նչպէս և ի՞նչ հանդամանաց ազդեցութեամբ մէկ
ազգը ըլնթացս մի քանի զարուց կամաց կամաց
թողում է նախնի նահապետական կեանքը և հաս-
տատում է քաղաքական հասարակութիւնը։ Վզդն
ապրում է, նրա նահապետական յարաբերութիւն-
ները փոխուում են նորա մէջ իրաւաբանական և
քաղաքական, սերնդական կապը սահմանուում է
նորա մէջ իրաւաբանօրէն, յեաոյ այն կապը տես-
ղիք է տալի մէկ աւելի ընդարձակ քաղաքական
ընկերութեան, որի մէջ մարդը, որ յառաջ կախ-
ուած էր ցեղական յարաբերութեամբ մէկս մէկու-
հետ, կամաց կամաց դառնում է մի ինքնազլուկ

(1) Արիստակէս 1 աստիվերացի, Գլ. Բ.

(2) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Գլ. Օ. Խնձիճեան,
Գիւք Ե. Գլ. Օ.

տէր և նրա տեղը և նշանակութիւնը սահմանում
ումէ առանձին յատկութիւններով, տաղանդնե-
րով և սխրագործութիւններով և ոչ թէ միայն
ֆնողական պայմաններով:

Հայոց պատմութիւնը չէ՝ պարունակում իր մէջ
գեպքերի այն շարունակ կարգը, որով մենք կա-
րողանանք քննել Հայոց ազգի աստիճան առ աստի-
ճան վերափոխութիւն նահապետական կեանքից դէպի
փրաւաբանական և քաղաքական կեանքը: Աւրիշ
խօսքերով ասենք, Հայոց ազգի պատմութեանը
մէջ չկայ այն հարցմունքի վճիռը, թէ ինչպէս
նրանց ցեղական և աղջոյին սկզբունքներից դուրս
եկան օրէնսդրական և քաղաքական սկզբունք-
ները: Բայց Հայոց տէրութեան յառաջ գնալու
պատմութիւնը ունի իր առանձին բնութիւնը և
զանազանութեմէ ուրիշ տէրութեան յառաջանա-
լու պատմութիւնից զիսաւորապէս նորանով, որ
չնայեցեալ իր սաստիկ հնութեանը, նա չունի իւր
մէջ ոչինչ անհաւատալի և անձշմարտանման պատ-
մութիւններ և իր հաստատութիւնը դանում է
Սուրբ դրբի մէջ ու հին մատենագրաց մէջ: Այժ
ասածներս աւելի հաւատալի են լինում էն ժա-
մանակը աւելի, երբ որ մենք համեմատում ենք էս
պատմութիւնները մէկ կողմից ազգային աւանդու-
թեանց և միւս կողմից աշխարհագրական և ազ-
գարանական (геноалогический) ցոյցերի հետ:

Ըստ վկայութեան Սուրբ Գրոց(1), նախնի մա-
տենագրաց (2) և քննութեան նոր ուսումնական-
աց(3) Հայաստանը, որի լիուների վերայ գա-

(1) Օճնդոց, գլ. ը. համար կ:

(2) Իւրով, (Հնութիւն Երբայեցւոց, Գիրք Ա. գլ. Ճա-
նիկոր. Դամասկաց. իր պատմութեան Պ. Օ. Քըքումը:
(3) Կալմեղոս և յետին ժամանակիս ուսումնականք:

գարեց Ասյի տապանը, է մարդուս նախկին բնակարանը, որ տեղից մարդիկ տարածուեցան ուրիշ կողմեր։ Քրիստոսի ծննդից 2200 տարի յառաջ, երբ Բաքիլընումը սկսաւ զօրեղանալբանաւոր Բեկը (Աներովթ) և բոլոր երկիրը իր իշխանութեան տակ ձգել, Հայկ Թաորգոմայ որդին, իրեն անձնական ազատութիւնը պահպանելով, չհնազանդեց նրան և իրեն գերդաստանի ու իր հետ միացած մարդկանց հետ գնաց Հայաստուն, որ տեղի բնակիչքն էլ յօժարութեամբ հնազանդեցան նրան։ Պէտք է կարծել, թէ Հայաստանումը եղած այս նախնի բնակիչքը թափառական կեանք էին վարում, որովհետեւ միացն Հայկին և իր որդւոցն ենք տեսնում, որ բնակարաններ են սկսում շինել (1)։ Ուրեմն Հայոց պատմութեան մէջն էլ կրկնուում է էն ընդհանուր փաստը, որով միւս տէրութիւնները՝ համարեայ յառաջ են եկել, ինչպէս հիները՝ էնպէս էլ նորերը։ Քաղաքական ընկերութիւնը կամ հասարակութիւնը ծագում է երկու ազգի միաւորութիւնից, որոնցից սկզբումը մէկը տիրապետում էր և միւսը հնազանդումէր նրան։ ՚ի վերջոյ երկուոը միանալով՝ դառնումեն մի ցեղ։ Հայոց ազգի յառաջնալը երկու դարուց աւելի տեսեց, նրանց մէջ միայն ցեղական և ազգային յարաբերութիւններն էին տիրած, և միայն արտաքին վտանգը, որ ծագուելու էր Ասորուց հզօր թագաւորութիւնից։ Անոսի ժամանակը, որ սաստիկ խէթ աչքով էր նայում Հայոց ինքնազլուխ տէրութեանը, միջոց տուեց Արամին տարածել իր իշխանութիւնը բոլոր Հայոց աշխարհի վերաց և

(1) Ե հնութեանց վերայ սէր ունիլը Հայոց ազգի առանձին յատկութիւնն է, Ա բացիք այս մասին մի առած ունին. “Երբ որ Հայոյ կը հարստանայ, պատերը ծուռը կերևին”, (Ծոդցա Ամենի գամկիդրերէա, կէդէքի բրունդաթ էլվէնէքաւ)

իրան ձեռքի տակն առնելով նրանց, լինել ամբողջ
ազգի զլուխը: Արամ արտաքին թշնամիներին սար-
սափի մէջ ձգեց և «Սինոսն էլ խոստովանեց նորա
ինքնազլիսութիւնը, չհամարձակուելով յայտնելիք
թշնամական մաքերը: Արամին յաջորդեց իր որդի
Արայ Գեղեցիկը և «Սինոսը ճանաչեց նոյնպէս
նրա ժամանակը նրա հօր իրաւունքները (1):
Իսյց Համիրամ ցանկացաւ զլուխ բերել այն
բանը, ինչոր իր նախորդը չկարողացաւ, այսինքն՝
իր իշխանութեան տակն առնել Հայտնայացաւ, և
երեսումէ, որ չկարողանալով Արայի հետ յայտնի
կերպիւ պատերազմել, առաջարկումէ նրան իրա
հետ ամուսնանալ: Ինչպէս երեսումէ, Արայն
Համիրամի չար մաքերը իմանալով, մերժումէ
այդ բանը: Ին ժամանակը պատերազմը սկսաւ.
Արայ սպանուեց պատերազմումը և Հայոց թա-
գաւորներն եղան Ասորեստանեայց հարկատու, որն
որ շարունակուեց մինչև «Սինուէի իսպառ սպուռ
կործանումը, որի մէջ մասնակից էր և Պարոյք
Հայոց թագաւորը:

Այս տեղ մէջ բերենք Մարարաս Աստինայի
պատմութիւնը, Հայկայ Հայաստուն դառնալը և
նորա սերնդոց բարգմանալը մինչև Արամ, որի ժա-
մանակը տէրութեան ներքին կեանքը յառաջ զա-
լու հետ մեծացաւ և նրա տէրութիւնը: Այս
պատմութիւնը, որ պարունակումէ իր մէջ շատ
հնութիւն և շատ ծշգութիւն իր ազգայնութեան
և տեղական յատկութեամբը, բացի իր պատմա-
բանական զլիսաւոր օգտիցը կարողէ լինել և մեր
վերոյգրեալ բաներին հաստատութիւն և Հայոց
ապագայ պատմութեան մէջ շատ բան կըպարզէ:
“Այս գեղապատշաճ, անձննեայ, խայտակն և
հաստաբազուկ Հայկը, ասումէ Մար Արաս, քաջ

(1) Մովսէս Խորենացի, Գիրոք Ե. 42. Ճ-Ն:

և երեսելը լինելով հսկայից մէջ , ընդդէմ կացաւ ամենքին , որոնք կամենում էին միապետութիւն անել բոլոր հսկայից և դիւցաղանց վերաց : Այս քաջարար դէմ կացաւ Բէլայ բռնաւորութիւններին , երբ որ մարդկան ազգը տարածուել էր բոլոր աշխարհի վերաց , շատ հմկաների և անսասելի ազէտների և քաջնորի մէջ : Որովհետեւ էն տեղ կատաղելով ամենքը սուրբ խրումէին իրանց ընկերների կողը և կամենում էին տիրել իրար վերայ , էս ժամանակը յաջող միջաց էր գաել Բէլը բռնանալու և բոլոր երկիրը իր ձեռքի տակն առնելու : Չուղելով Հայկ հնազանդուիլ Բէլին , Բարեիլոնումը իր Երմենակ օրդին ծնելուց յետոյ գնաց Արարագայ երկիրը , որ Հիւսիսային կողմումն էր իր որդիքներովն , աղջեկներով և թռոներովն , որոնք գօրաւոր մարդիկ էին թռուվ իրեւ . 300 , և միւս աղախիններովը և իր մօտ եկած միացածներով : Գրալիս բնակուումէ լիուան ոտումը մի դաշտ տեղ , որ տեղ յառաջնանից յըտուած ճարդիանցից մէ տանիսը բնակուած էին , որոնց Հայոյից հնազանդացնեւածն էրեւ , շնորհ է բնակարան և գուլիս է Արմենակայ որդի Ալարծնուին ժառանգութիւննեւն , : Այս բնուը ճշարդուած է հնէն անգիբ առաջները , :

“Եւ ինքը Հայկը , ասումէ ժամանակագիրը , գնումէ միւս իր ծառաների հետ դէպի Հիւսիսային Արեմուտքը , բնակուումէ մի բարձրաւանդակ դաշտի վրայ և այդ լեռնադաշտի անունը կոչումէ Հարք , այսինքն՝ էս տեղի բնակուողներիցս յառաջ ենք եկել Քառօրդոմայ տան ազգը : Ընումէ է էս տեղ մի զիւղ և կոչումէ իր անուամբը Հայկաշնէ : Լյա տեղ յիշուումէ և այս պատմութիւնը , թէ այս դաշտի Հարաւային կողմը մի երկայնանիստ սարի մօտ յառաջուց բնակուած են եղեւ ու ճարդեն , նրանի եւ եւ իւն ունակներուն են են

գիւղաղն Հայէն։ Այս բանո ճշտարարութ էն նոյնակե՛
և ուրէլ անդէր առածնեցը։

Ժամանակագիրը յառաջ տանելով իր պատմու-
թիւնը, ասումէ. “ Երբ որ Տիտաննեան Բէլը հաս-
տասումէ իր թագաւորութիւնը տմէնքի վերայ,
ուղարկումէ Հիւսիսային կողմը իր որդիկներից
մէկն հաւատարիմ մարդկանց հետ Հայկի մօտ,
դաւ հնազաղութիւն և խաղաղութեամբ ապրիւ։
Բնակուեցիր, ասումէ, այդ ցուրտ սառնամանի-
քումը, տաքացրու, փափկացրու քո հպարտ բար-
քի ցրտութիւնը և հնազանդելով ինձ, հանդարտ
ապրիւ և որ տեղ կամենաս գու բնակուիր իմ
երկրումը,։ Հայկ յետ դարձրուց Բէլը պատգա-
մաւորներին խիստ պատասխան տալով։ Պատգամա-
ւորը յետ է գառնում կրկնն Բարիլոն։ Ին ժա-
մանակը Տիտաննեան Բէլը անչափ հետեակ զօրք է
ժողովում, զալիս հասնումէ Հիւսիսային կող-
մերը Արարագայ երկիրը Վաղմնոսի տան մօտ։
Փախչում է Վագմնոսը Հայկայ մօտ, սուրհանդակ
է ուղարկում իրանից յառաջ։ Խմացի՛ր, ասում
է, ով գիւցազունքերից քաջդ, զալիս է քո վե-
րայ Բէլ անթիւ քաջերով և երկնայնահասակ պա-
տերազմող հսկաներով։ Խս իմանալով նորա իմ
տանս մօտ լինիլը, փախայ և ահա զալիս եմ շտա-
պով։ ուրեմն շուտ մնածիր՝, ինչոր անելու ես։
Խսկ Բէլը իր բազմութեան յանդուզն և ան-
ձոռնի զօրութեամբը, ինչպէս լիոնից վազող հե-
ղեղ, շտապումէր հասնել Հայկայ բնակութեան
սահմանը, վստահանալով իր քաջ զօրքի վերայ։
Այս տեղ ուշիմ և խոհեմ հսկայն, քաջազանդուր
և խայտակն Հայկը, շուտով հաւաքումէ իր որդ-
ւոցը և թոռներին, քաջ և աղեղնաւոր մարդկանց
թուով շատ քիչ և ուրիշ իր ձեռքի տակ եղած-
ներին, հասնումէ մի ծովակի ափ, որի ջուրը ազե-

է և մանր ձկներ ունի մէջը. Առշելով էր զօրքին,
ասում է նրանց: Ինչլայ ամբոխի դէմը գուրս գա-
լուս, աշխատենք թափանցիլ էն տեղը, որ տեղ
Ինչն է. կամ մեռնենք ու մեր ընտանիքը նրանց
ծառայութեան տակ ընկնին, կամ մեր մատների
յաջողակութիւնը ցոյց տալով նրանց, ցրուենք
ամբոխը և մենք ստանանք յաջողութիւնը,,:

“Յետոյյառաջ անցնելով բոլոր տարածութիւնը,
համառում են մի դաշտի մէջ երկու բարձր լեռների
մէջ տեղը և ամրանում են ջրի ընթացքի աջու կողմը
մի բարձր տեղում: Գլխները բարձրացրին և տեսան
նրանք Ինչի անկարգ գունդը ցանուցիր տարած-
ուած երկրի երեսին. իսկ Ինչլը կանգնած ամբոխի
մէջ տեղը ջրի ձախ կողմը մի բլբակի վերայ՝ ինչ-
պէս մէկ դիտանոցի վերայ: Ճանաչեց Ճայկը զե-
նավառեալ գունդը, որոց մէջ Ինչլը առաջ էր ան-
ցել մի քանի սպառազէններով: Մի մեծ տարա-
ծութեամբ հեռու էր Ինչլը իր զօրախմբիցը: Մեծ
երկաթի գլխանոցը գլխին՝ գեղեցիկ նկարներով,
զարդարուած պղնձի տախտակով պատած էր թի-
կունքը և կուրծքը և կոներն ու բաղուկները պահպա-
նակներով ամրացած, գօտին մէջքին և ձախ կող-
միցը երկայրի սուրը կապած, աջ ձեռքին բռնած
արի նիզակը, ձախ ձեռքին վահան. իսկ իր աջ ու
ձախ կողմը ընափիր մարդիկի էին բռնել: Տեսնելով
Ճայկը Տիտանեան Ինչլն էնպէս զբահաւորուած
և նրա աջ ու ձախ կողմը քաջ մարդկանցով պատած՝
կարգեց Արմենակին իր երկու եղբայրների հետ աջ
կողմը, և Արդմուխին և ուրիշներին երկու որդւոյցը ձախ
կողմը, ինքն էլ առաջին կանգնեց և զօրքի միւս
մասն էլ էր քամակին կանգնացրեց երեք անկիւնի
ձեռվ կարգելով և հանգարտ յառաջ գնաց:

Երկիրը թնդաց այս երկու կողմի սկաների իրար
վերայ յարձակուելուց, ստատիկ ահ տարածուեց

ամենքի վերայ ոյս քաջաց միմեանց հանդիպեաւուցը։ Այս տեղ շատ հսկայ և յաղթանգամ մարդիկ երկու կողմից ել սրոյ ճարակ լինելով, երկիր ընկան և պատերազմը երկու կողմանէ մնում էր անյաղթելի,,:

“ Այսպիսի անսպասելի զիպուածը տեսնելով Տիտանեան թագաւորը և չիմանալով ինչ անի, զարհուրեցաւ և շտապեց բարձրանալ կրկին այն բլրի վերայ, որ տեղից իջաւ, մտածելով ամբոխի միջին ամրանալ մինչև բոլոր զօրքը վերայ հասնի և միւսանգամ պատերազմը սկսի։ Այս իմանալով աղեղնաւոր Հայկը, յառաջ է գնում, հասնում է արքային, պինդ քարշումէ իր լայնալիճ՝ աղեղը, զիպջնում է երեք թեւանի նետը նորա կուրծքի տալտակին և ոլաքը թիկունքի միջովն անց կենալով՝ գետին է ընկնում և այսպէս հպարտ Տիտանեանը կործանուումէ, գետին է զիսլում և ողին փշում։ Խակ նորա ամբոխը տեսնելով այսպիսի քաջութիւնը, յետ փախան։ Այս քանս բաւական է սրա համար,,:

“ Ին պատերազմի տեղը Հայկը բնակութիւն է շինում և անուանումէ Հայք, յաղթութիւն համար. ուստի և այն գաւառը մինչև հիմի ել ասուումէ Հայոց ձոր, խակ էն բլուրը, որ տեղ վէր ընկաւ Բէլն, անուանեց Հայկը Գաերեղմանք, որ հիմի ել էսպէս է կոչուում։ Բայց Բէլն զիսկը դեղով զարդարելով՝ հրամայումէ Հայկը տանել Հարք և թաղել մի բարձր տեղ կանանց և որդւոց տեսնելու համար. խակ մեր աշխարհը մեր Հայկ նահապետի անուամբը կոչուումէ Հայք,,:

“ Եշի շատ բան է պատմում էն գրքի մէջ, բայց մենք մէջ բերենք էս տեղ, ինչ որ մեղ համար հարկաւոր է,,:

“ Սրանից յետոյ դառնումէ Հայկ իր առաջին

բնակուած տեղը, ասում է ժամանակադիրը, իր
Կագման թոռնն ապրով շատ բան պատերազմի ա-
ւարից և իր անուանի աղախիններից, հրամայում
է նրան զնալ բնակուիլ իր առաջուան տեղը և
ինքը գնում է և հանգստանում Հարքումը: Ինչ-
պէս մենք ասացինք, Ծարիլընումը արդէն ծնել
էր Ծրմենակին: Նրանից յետոյ շատ տարիներ ել
տպրելով մեռնում է, յանձնելով բոլոր ժողովուրդը
իր որդի Ծրմենակին,,:

“ Ծրմենակը թողում է իր եղբայրներից երկուսին
Խոռին և Մանաւազին բոլոր իրենց աղախիննե-
րով և Մանաւազայ Բազ որդույն Հարքումը:
Մանաւազը ժառանգում է Հարքը և նորա որդի
Բազը աղի ծովի Հիւսիսային Ծրեմտեան ափը,
որ իւր անուամբը կոչում է ծովն ել՝ զաւառն ել:
Ըստմին, թէ սրանցից է գուրս եկել Մանաւա-
զեան, Բքնունեաց և Որդունի նահապետութիւն-
ները, որոնք յետոյ ինչպէս պատմում են, ջնջուե-
ցան միմեանցից պատերազմով: Խակ Խոռը շատա-
նում է Հիւսիսային կողմերումը, բնակարաններ է
շինում, և ասում են, թէ նրանից է գուրս եկել
Խոռիսոռնեաց մեծ նախարարութիւնը, որոնք մեր
ժամանակներն ել երեսի են:,

“ Խակ Ծրմենակ վերցնելով բոլոր բազմութիւնը,
զնում է Հիւսիսային Ծրեմելեան կողմը, իջնում է
մէկ խոր դաշտի վերայ, ըջապատած բարձրագա-
գաթ սարերով, որի Ծրեմտեան կողմը կարկաջա-
սահ գետեր էին անցնում: Այս դաշտը, որ ընկած
էր դէպի Ծրեմէք, երկայն ձգուած էր դէպի արե-
գակը: Խեռների ստորոտումը շատ պարզ և վճիտ
աղբերներ են բղխում, որոնց ջրերը հաւաքուե-
լով դառնում են հանդարս գետեր լեռների սկզբնե-
րումը և դաշտի ափերումը, ինչպէս պատանիները և
երիտասարդուհին աղջիկները ման են դալի դաշտումը,,:

Եյլ Հարաւային լեառը, որի զվարվը ման է զալի արեգակը իր սպիտակափառ զվարվ, ուղղակի դուրս է եկած գետնիցը կամաց կամաց վերջանալով իր սուր ծայրով։ “Կրտ համար մերերից մէկն ասաց, թէ մի գօտին պինդ կապած մարդ ման կրդայ նորա չորս կողմովը երեք օր. կարեկ է ասել, որ ոա մի ծեր լեառն է երիտասարդ լեռների մէջ։ Այս խոր գաշտումը բնակուելով Արմենակ, շինումէ նրա Հիւսիսային կողմի մէկ մասը և միենոյն կողմից լեռան ոտքն է շինում և էն ոարին իր անուան նմանութեամբը կոչում է Արագած, իւկ էն կալուածները՝ Արագած ոտն։ Իսյց պատմագիցը մի աւելի սքանչելի քան է ասում, թէ “մինչև մեր Հայկ նահապետի գալը մեր երկրի շատ կողերումը ցրուած էին քիչ մարդիկ։”

“Այս Արմենակը ապրելով մի քանի տարի, ծնեց Արմայիսին և յետոյ երկար ժամանակ ապրելով՝ մեռաւ։ Խակ նորա որդի Արմայիսը շինումէ իր համար բնակարան մի բլրակի վերայ գետի ափումը և անուանում նորան իր անուամբը Արմաւիր և գետի անունը իր Արասա թոռի անուամբը կոչում է Արասիւ Իսյց շատակեր և շատածին Հարայ որդւոյն էլ ուղարկում է իր բոլոր աղախիններովը մի մօտիկ պաղաքեր և առատ դաշտ, որ աել շատ ջրեր կան, որ է Արագած լեռան քամակին՝ Հիւսիսային կողմում։ Հարայի անուամբն էն գաւառը, ասումնեն, կոչեցաւ Ծիրակ, սրանով արդարանումէ էն առասպելը, որ ասումնեն գիւղացիք, թէ “քո Հարայի որկորնէ, մեր Ծիրակայ ամբարքն չեն,,։ Արմայիսը մեալով մի քանի տարի, ծնաւ եր Ամասիա որդւոյն։ Նրանից յետոյ մի քանի տարի էլ ապրելով՝ մեռաւ,,.

“ Ամասիա բնակուելով Արմաւիրումը, մի քառ
նի տարբուց յետոյ ծնաւ Գեղամին, Գեղամից յե-
տոյ քաջ Փառոփին և Յոլակին։ Արանց ծնելուց
յետոյ անցէ կենում գետը, գնում է գեպի ձարա-
ւային լեռը, Էն տեղ լեռան ոտքի ձորումը շինում
է երկու տուն, մէկը Արևելեան կողմը Էն աղբեւր-
ների ակներին մօտիկ, որ լեռան ոտքիցն են բղխում,
իսկ միւսը առաջինի տան Արևելուեան կողմը իրա-
րից կէս օրուան ոտով գնալու ճանապարհով չե-
ռու։ Այս երկու տունը նա տուեց ժառանգու-
թիւն իր երկու որդոցը՝ քաջ Փառոփին և կտրիճ՝
Յոլակին, որոց մէջը բնակուելով նրանք, իրանց
անունովը կոչեցին Էն տեղերը։ Փառոփից կոչուեցաւ
Փառախոտ, իսկ Յոլակից՝ Յոլակերտ։ իսկ Էն
լեռն Ամասիա իր անունովը կոչումէ Ամասիս։ յե-
տոյ նոքը յետ գառնալով Արմաւիր, մի քանի
տարի ապրելուց յետոյ մեռաւ։

“ Բայց Գեղամ մի քանի տարուց յետոյ ծնաւ
ձարմային Արմաւիրումը, և թողելով նրան բնա-
կիչներով Արմաւիրումը, ինքը զնաց մի ուրիշ լե-
ռի մօտ, որ ձիւսիսային Արևելեան կողմն է մի
ծովակի ափումը։ Շինութիւն է անում այս ծովա-
կի ափումը, թողում է Էն տեղ բնակիչներ և իր
անուամբը Էն լեռը կոչումէ Գեղեւ Էն գիւղերն
էլ Գեղարքունի, որոյ անունովը կոչուում է և
ծովը։

Այս տեղ ծնաւ Գեղամ իր խրոխոտ, բարձրա-
հասակ, գեղեցկաղէմ, քաղցրաբան և գեղեցկաղեղն
Սիսակ որդւոյն։ սրան տալով իր կայքից մեծ
մասը, նոյնպէս և շատ ծառաներ, սահման է նշա-
նակում նրան ժառանգութեան համար ծովի Արև-
ելեան կողմիցը մինչև մի գաշտ, որ տեղ Խրասխի
գետը կտրելով լեռների քարանկիւնները, անց է կե-
նում ձգուած նեղ տեղերով և սաստիկ գոջգո-

շալով ընկնում է դաշտը։ Այս տեղ բնակուելով
Սիսակը, լնում է իր բնակած սահմանները շե-
նութիւններով և աշխարհը իր անունովը կոչում
է Արևիք, իսկ Պարսիկներն աւելի պարզութեան
համար Սիսական են ասում։ Արա ցեղեցը այս
տեղ վերջերումը գանելով Ա աղարշակ, որ Պար-
թևներից Հայաստանի առաջին թագաւորն եղաւ,
անուանի մարզիկ, կարգեց այս երկրին տէր, որ է
Սիսական աղջը։ Ա աղարշակը պատմութիւնից
իմանալով այս բանն արեց, այլ թէ էս ինչպէս է,
իր տեղը կըպատմենք։ Իսայց ինքը Գեղամը կրկին
յետ է դառնում էն դաշտը և էն լիուան ստորո-
տումը. մի ամուր ձորակում շինում է մի գեղ և
նրա անունը դնում է Գեղամի, որ յետոյ նորա-
գառնիկ թուիցը կոչուեցաւ Գառնի. սրա ցեղեցն
էր այն Ա արժ անունով պատմանին, որ իր լաւ
նետ ձգելով յաջող էր եղջերուներ, վայրի այծեր
և վարագներ որսալումը, որին վերջումը Արտաշէս
Ա աղարշակայ թոոր գտաւ էն տեղ և կարգեց
թագաւորական որսերի վերայ և գեղեր պարզեց
նրան Հրազդան գետի ափերումը. սրանից է, ա-
սում են, յառաջ եկել Ա արամնունի տունը։
Այս Գեղամը, ինչպէս ասեցինք, ծնաւ Հարմային,
նրանից յետոյ ուրիշներին ել և յետոյ մեռաւ,
հրամայելով իր Հարմայ որդւոյն բնակուել Արմա-
փրումը։

“Ահա Հայկ որդին Թարգոմայ, որդւոյն թիւ-
րասայ, որդւոյն Գամերայ, որդւոյն Յաբեթի՝
Հայապանի ցեղապետը։ Ահա նրա սերունդները
և նրա բնակուելու աշխարհը։ Խստուց յետոյ, ա-
սում է ժամանակիրը, սկսեցին շատանալ և եր-
կիրը լցնել,, :

“Իսկ Հարմայ կենալով մի քանի տարի, ծնում
է Արամին, որի համար պատմում են, թէ շատ մեծ

Քաջադործութիւններ և յաղթութիւններ է արել և
լայնացրել է Հայոց սահմանները ամէն կողմից :
Սրա անու ամբն են ամէն ազգերը մեր աշխարհը
անուանում, ինչպէս Յոյները Արմենիք և Պար-
սիկներն ու Ասորիքը՝ Արմիք,, (1):

Պարսից իշխանութեան ժամանակը Հայաս-
տունը լինում է Պարսից դաշնակից. Տիգրան Հայոց
թագաւորը Վիւրոսի հետ միաբանելով, իրուա-
կում է Աժդահակայ զօրութիւնը. (որ նշանակում
է օձ, վիշապ) և զերի է թիրում Մարաց թագա-
ւորի ամբողջ տունը և 10000 էլ Մարացիք, որոնց
բնակացնում է Մասիսի ստորոտումը (2): Թահպէտ
Տիգրանայ պատմութիւնը և նորա պատերազմը.
Աժդահակի հետ ըստ Մար-Աբասի բոլորովին հա-
մաձայն չեն Յունաց պատմաբաններին (3), բայց
չեն կարելի ասել, թէ Հայոց պատմաբանի բերած
փաստերի մէջ պատմաբանական Շշմարտութիւն
չ'կայ, որ հաստատուում են Հայոց պատմու-
թեան նրանից յետոյ եղած անցքերովը. որովհետեւ
մենք տեսնում ենք, որ վերջերումը Մարք էն աս-
տիճան զօրեղանում են, որ Հայոց թագաւորները
սկսում են երկիրւ կրել նրանց զօրութիւնիցը (4):
Աղեքսանդր Մակեդոնացին Ասիայի վերայ պա-
տերազմելուս Հայաստանին չ'մօտեցաւ, բայց լի-
նելով Բաբելոնումը, ուղարկեց այս տեղ իր Մնտ-
րաս Կուսակալին: Ա ահէն, Հայաստանի թագա-
ւորը, Դարեհ Կողոմանոսի դաշնակիցը, հաւա-
տարիմ լինելով իր նախահարց կանոնին, “ լաւ է
մեռանիլ հայրենեաց վերայ, քան թէ տեսնել ”

(1) Մովսէս Խորենացի, Գիւք Ա. Ա. Ժ-ԺԳ.

(2) Մովսէս Խորենացի, Գիւք Ա. Ա. Ժ-ԺԳ.

(3) Հերոդոտոս, Գիւք Ա. Քանոնփոնտ, Ա. Գ.

(4) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Ա. ԽԵ.

օտարների որդւոյցը իրենց հայրենի երկիրը ոտնաւտակ տալուս,, (1), զէնքը ձեռքին ընկաւ էս պատերազմումը, պահպանելով իր տէրութեան անկախութիւնը:

Աղեքսանդր մեծի թագաւորութիւնը քանդուելուց յետոյ Հայաստունը վիճակուեցաւ Սելևիոս Նիկանովը ինահոգոս մեծի ժամանակը Հայաստունը յանձնուեցաւ երկու Առաստակալաց՝ Արտաշէսին և Օատրիագեսին, որոնք երկուսն ել համարումէին Հայկայ հին ցեղի յաջորդները Խա ժամանակը Մնիբաղը, հալածուած Հռովմայեցւոց փրէժինդրութեամբը՝ պատսպարուեցաւ Հայաստանումը և նորա ծրագրովը (ուռան) շնուեցաւ Արտաշատ քաղաքը Խրասխ գետի վերայ, որ եղաւ Հայոց մայրաքաղաք:

Հատ չանցկացաւ, երկու Առաստականերն ել ապստամբեցան Անտիոքոսի դէմ և ձգելով իրենց փրայից Սելևիացւոց լուծը, իրանց անուանեցին Հայոց թագաւորներ և իշխանութիւնը թողին իրենց յաջորդներին, որ երեսում է թէ շատ չտեսեց, որովհետեւ Արտաւազդի ողբերդական մահից յետոյ Արշակ Պարթևաց թաղաւորը բազմացնում է Հայոց գահի վերայ իւր փոքր եղացը Աղաղարշակին, (149 տարի Վրիստոսից առաջ), որ եղեառաջին թագաւորն Արշակունեաց ցեղից և որոց ցեղը 500 տարուց աւելի տիրեց Հայոց գահին: Հայոց պատմութիւնը Աղեքսանդրի մահից մինչեւ Արշակունեաց թագաւորութիւնը յայտնի է մեզ միայն Յունաց պատմազրաց հաղորդած տեղեկութիւններից (2): Հայոց պատմաբաններից ոչ

(1) Առվակս Խորենացի, Գիրք Ե. գլ. Ճազ.

(2) Պողիքիս, Դիոդորոս Աիկիլքացի, Ապպիանոս, Ատրաբոն, Գիւք ԺԱՌ Պլուտարքոս (Կեանք Լուկուլլոսի):

մէկը չի խօսում այս ժամանակի շրջանումը ։ Ա-
յաստանի մէջ պատահած անցքերի մասին։ Մով-
սէս Խորենացին պատմելով Աղէքսանդր Մակեդո-
նացւոյ պատերազմը Հայաստանի հետ, նրանից
յետոյ եկած ժամանակի համար բաւականանումէ
այս ծանօթութեամբս։ “ Այսուհետեւ մինչեւ Ա ա-
ղարշակայ Հայոց վերայ թագաւորիլը ոչինչ ճշմա-
րիտ բան չեմ կարող պատմիլ, որովհետեւ պատա-
հած շփոթների մասին ամէնքը ուղղումէին տի-
րել մեր աշխարհքին և սրա համար Էլ մեծ Ար-
շակը հետութեամբ մտաւ Հայաստուն և թա-
գաւորեցրեց իւր Աղարշակ եղբօրը Հայոց աշ-
խարհի վերայ (1)։

Հայկայ սերնդոց թագաւորութեան ժամանակը
Հայաստանի գաղթականութիւնը անդադար շատա-
նումէր մերձակայ երկիրներիցը, ինչպէսքանանացւոց
երկիրը նուածելուս նորաբնակիններիցը շատերը ա-
զատուեցան Հայաստանումը Խորայելացւոց սրիցը
և Քանանացւոց Քանանիդէս անուամբ մի երե-
ւելի իշխանից դուրս եկաւ Գննթունեաց նախա-
րարութիւնը (2)։ Ասուածաշնչի պատմու-
թիւնը Սորոց Անեկերիմ թագաւորի Աղրամե-
լիք և Սարասար որդւոց համար, որոնք փախան
Առարատեան երկիրը, հաստատումէ Հայոց պատ-
մութեամբը, որի մէջ խօսումէ այս երկը նախա-
րարութեանց վերայ, որ ծագեցան Անեկերիմայ
որդկերանցից (3)։ Ամէնից բազմաթիւ գաղթակա-
նութիւնը եկաւ Պաղեստինից։ Մովսէս Խորենա-
ցին ասումէ, թէ ըստ աւանդութեան, դեռ Կա-
բուգտառնոսորի ժամանակիցն արդէն Հայաստան

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Ա. 42. 1. Ա.

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Ա. 42. 1. Ճ. Յ.

(3) Դ. Թագաւորաց, Գլ. Ժ. Թ. համար 37. Խորենացի
Գիրք Ա. 42. 1. Պ. 1.

Անբաժիշտեցան Երբայեցւոց ցեղեր Շամբատի առաջնորդութեամբը, որ Բազրատունեաց ազգի ցեղապեան եղաւ (1): Տիղրան Բ. Թագաւորը՝ Պուտիկոսի ժամանակիցը՝ շատ անգամ գուրս բերեց Պաղեստինից Հայաստուն բազմաթիւ գաղթականներ (2), որոնք էլքան շատացան, որ մի քանի քաղաքներում նրանց թիւը բազմացաւ Հայոց թուիցը: Զորբորդ գարումը Քրիստոսի ծննդից յեռոյ, Երաւաշատ քաղաքումը հաշուումէր 9000 Հրէից գերզաստան, Երուանդաշատումը 30000, Բազրաւանդ գաւառի Օարեհաւանումը 8000. Օարիշատումը 14000, Վանումը 18000 (3). Կախիջևանումն էլ 16000 Հրէից գերզաստան և 2000 Հայոց: Այս Հրէից մէկ մասը Հայաստանումը քրիստոնէութիւնը տարածուելու ժամանակը մլրտուեցան և խառնուեցան նախկին բնակչաց հետ, մէկ մասն էլ Շապուհը տարաւ Պարսկաստան (4): Քրիստոսի ծննդից 500 տարի յառաջ Տիղրան Թագաւորը բնակեցրեց Մասիսի Երեւելեան կողմը Երասխի մօտերքը մինչև 10000 Մարաց գերիներ (5):

Հաստատ ապացոյցներ կան, որ Հայաստանը շատ անդամ եղելէ պատսպարան Հնդկաստանի և Չինաստանի հալածականներին: Քրիստոսի ծննդից 150 տարի յառաջ Վաղարշակ թագաւորի օրովք Հնդկաց թագաւորի Դեմետր և Գիսանէ որովոց առաջնորդութեան տակ Հայաստաննեկած գաղթականները բնակուեցան Եփրատի բարձր

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Ա: Ց. Ի.:

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ: Ց. Ժ. Ժ. Օ. Ժ. Խ. Խ. Խ.:

(3) Փաւատոս Բիւզանդացի, Գիրք Պ: Ց. Ն. Ռ.:

(4) Մովսէս Խորենացի, Գիրք Պ: Ց. Լ. Ա.:

(5) Մովսէս Խորենացի, Գիրք Ա: Ց. Լ.:

Էղջմբը (1): «Արանք վերջերումը էնքան շատա-
ցան, որ քրմերի ընտրելու ժամանակը հաւաքուե-
ցան 6,946 հոգի, որ ընդդիմանան Քրիստոնէու-
թեան տարածուելոյն (2): Մովսէս Խորենացին
մանրամասնաբար պատմումէ, թէ ինչպէս Գ. դա-
րու վերջումը Քրիստոսի ծննդից յետոյ Զինաց-
ւոց երկրից երկու ժագաւորազն իշխաններ իրանց
մերձաւորների հետ գաղթեցին Հայաստանը: Արան-
ցից մեկի սերունդը, Մամիկոննան անուամբ, վեր-
ջերումը երևելէ տեղ ունեցան Հայոց պատմու-
թեան մէջ (3): Քրիստոսից շատ առաջ այսպի-
սի մէկ գաղթականութիւն էլ եկաւ Զինաստա-
նից Կովկասեան կողմերը, որ Օրբելեան ցեղն էր,
որոնցից մի մասը Կուր գետից անցկացան Հայա-
ստան և բնակուեցան Ալւնիք նահանգումը: Խո-
րենացին պատմումէ Բուլղարաց Հայաստան գաղ-
թիլը, հիմնելով էն մատենագրաց վկայութեանց
վերայ, որոնք էին այս անցքը պատահելուս, որոնց
միջից ելաւ էն նախարարական ցեղը, որոնք իրենց
ցեղապետի անունով կոչուեցան Վանանդա-
ցիք (4):

Հայաստան լցուեցան նոյնպէս Ալանաց, (5)
Պարսից (6), Կասպից ծովի ափերի բնակիչնե-
րի (7), Բասլաց (8) և մի քանի ուրիշ տեղերի
գաղթականներով: Այս բազմաթիւ ազգաց գաղ-
թականները խառնուելով Հայոց ազգի հետ, ան-
կասկած պատճառ դարձառ ազգի անեցմանը, որ

(1) Օհնոր, երես 35:

(2) Օհնոր, երես 29:

(3) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Աւ. ՁԵ. ՁՊ. ՁՊ.

(4) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Աւ. Ամօ:

(5) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Աւ. ՅԲ. ՅԲ:

(6) Օհնոր:

(7) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Աւ. ՅԳ:

(8) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Աւ. ՅԲ:

Դ հարկէ կունենար իր մէջ այս պյլ և այլ ազգերի զանազան բնութիւնները. բայց Հայաստանի համար ոյսպիսի մի երևելի արժանայիշատակ շըջան չեղել: Նրա գաղթականութիւնը, որ միշտ ենթարկեալ էր արտաքին թշնամանական ազդեցութեանց, չկարողացաւ յընթացս մի քանի դարուց համել այն ազգային վսեմ յառաջադիմութեանը, որին հասան Յոյները և սրբ պատճառը կարելի է համարել: Այսի Հայաստանի աշխարհապրական դիրքը, որ տեղ միշտ պատահումէր Արևելքի և Երևմտքի իրարու զիազէլը. սրբ համար բոլոր ազգային յառաջադիմութիւնը այս տեղ ենթարկուեցաւ երկու իրար հակառակ ազդեցութեանց, որոնք եթէ չճնշեցին ել նրան, այնու ամենայնիւ կանգնացրին: Արկուորդ պատճառն է հին Հայաստանի քաղաքական (ողջիւտիկական) կազմուածքը, որի նշանակութեան և Հայոց ազգի վերայ ունեցած ազդեցութեան համար մանրամասն պէտք է խօսենք:

‘Ներքին խաղաղութիւնը, որ վայելեց Հայաստունը Արշակունեաց ազգի թագաւորութեան օրից, շատ չտեսեց: Տիգրան I. թագաւորը (195—60) խառնուած էր Անրդատայ Հռովմայեցւոց գէմունեցած պատերազմի մէջ և Հայաստանը շուտով եղաւ Հռովմայեցւոց և Փարսից վիճելու երկիր: Այս արտաքին ներգործութեանց թշնամական ընդդիմութիւնը կրկին կանգնացրեց Հայոց ազգային յառաջադիմութիւնը: Չորրորդ դարու սկզբումը Տրդատ թագաւորի ժամանակը Հայաստունը լուսաւորեցաւ քրիստոնէութեան կրօնի լուսովը: Քրիստոնէական եկեղեցին մեծ նշանակութիւն ունի Հայաստանի վիճակի վերայ. եթէ Հայերը մինչեւ հիմքի կան ինչպէս մի առանձին ազգ մարդկութ-

թեան գերդաստանի մէջ, ՚ի հարկէ սրանով
նրանք պարտական են մեծ մասամբ իրենց եկեղեց-
յուն, որ ազատեց նորանց մերձակայ զօրաւոր ազ-
գերի բարոյական և նիւթական ստրկութիւնից
և այս քրիստոնէութիւնը արգելվով նրանց ու-
րիշների հետ միանալը, սկիզբն արեց մի ազգային
յառաջադիմութեան: Քրիստոնէութեան տարած-
ուելով Արևմուտքի բարոյական ներգործութիւնը
մեծ ազդեցութիւն ունեցաւ Հայաստանումը: Յու-
նաց գրականութիւնը մի ժամանակ սեպհականու-
թիւն դարձաւ էն տեղ բազմաթիւ թարգմանու-
թեանց ձեռքով: Բայց միւս կողմանի, քաղաքա-
կան յարաբերութեանց մէջ Հայաստունը գտնու-
ումէր Պարսկաստանի մեծ ազդեցութեան տակ,
որ տեղ Գ. դարու կիսումը Արշակունի Պարթևաց
իշխանական գաւաղանը ընկաւ Սասանեան ցեղե-
ձեռքը, որ Հայաստանի թշնամին եր: Տրդատի
ժառանգները իրանց երերեալ գահը պահելու հա-
մար, պարտական էին հարկ տալ Հռովմայեցոց
կեսարներին և Պարսից Սասանեաններին, բայց
էս երկուտակ հպատակութիւնն էլ չ'կարողացաւ
նրանց ազատել: 387 թուին Հայաստանի զօրու-
թիւնը երկու մասն եր բաժանուել, Արեւելեան
Պարսկաց և Արևմուեան Շիւզանդիոյ: Երկու մասի
վերայ էլ Արշակունի թագաւորներ էին զրած,
բայց երկար չտեսեց, շուտով կորաւ և Հայոց ան-
կախութեան վերջին շուքը: Հայաստանի Արեւե-
լեան մասն ընկաւ կրակապաշտ Սասանեանց ան-
գութ ֆանատիկութեան ծանր լծի տակը, որոնք
ամենայն ճիզն էին թափում դարձնել քրիստո-
նէիցը մողաց օրէնքին: Շիւզանդեան կայսրները
նայում էին Արևմուեան Հայաստանի վերայ միայն
ինչպէս իրանց կայսերութեան սահմանադրուխ երկ-
ըի (ուահճան Հայութայեցոց Արյուրունեան), որ

ողէտք է կրէին Արևելքից եկած բոլոր ծանր հար-
ռւածները, ուստի և իրանք անտարբեր աչքով
մտիկ տուին այն արիւնահեղ պատերազմին, որ
Հայերն իրանց սեպհական միջոցներովը քրիս-
տոնէական հաւատոյ համար կէս դար, համարեա,
արին զօրեղ Սասանեանց հետ:

Երբ որ Հայերը ընդունեցին Քաղկեդոնի ժո-
ղովը, որ ամենամեծ և երեսելի հետեանք ունե-
ցաւ. վերջերումը Հայոց ազգի պատմութեան մէջ,
Բիւզանդիոյ կայսրները դարձան նրանց անհաշ-
թշնամիքը:

Խօթներորդ դարումը Խոլամականութիւնը ամե-
նաշխնջ հեղեղներով ընկաւ Ասիայի վերայ և Հա-
յաստանի Ամեսեան կողմերի գրութիւնը բոլորո-
վին փոփոխեց:

Երեք օր կոռուելուց յետոյ Ասդեցիայի մօտ
(636 տ.) Սասանեան իշխանութիւնը քանդուեց
և Տիգրիսի ափերումը քաղաքականութեան մի նոր
կեղրոն հաստատուեցաւ: Այն, ինչ որ մենք զանում
ենք Աղէքսանդր Սակեղոնացւոյ պատերազմաց
պատմութեան մէջ, այս անդամն էլլ կրկնուեցաւ
Հայաստանի համար: Անելով բնական սահման-
ներով և պատուարներով բաժանուած Տիգրիսի
և Խփրատի հովտիցը, Հայաստանը շատ քիչ էր
դարձնում իր վերայ խալիֆաների ուշադրութիւնը
քաղաքական յարաբերութեանց մէջ, բայց այս
Հայաստեց նրան Արտարացւոյ սարսափելի աւե-
րածներիցը, որոնց շարժողը թէ նրանց աւարա-
ռութեան սէրն էր և թէ քրիստոնէութեան հետ
ունեցած անհաշտ նախանձը: Միւս կողմանէ Բիւ-
զանդիոյ կայսերաց սուսած անսասիլի նեղութիւններն
եւ շատ անդամ հարկադրեցին Հայերին ինդրել
Բաղդատու խալիֆաների հովանաւորութիւնը:
Ամսպէս շնորհիւ վերջիններիս հովանաւորու-


թեանը կրկին զարթնեց Հայոց թագաւորութիւնը : 885 թուին, բարձրացաւ գահի վերաց Աշոտ Բագրատունին . Հայոց ազգայնութեան ոգին, կարծես թէ, յարութիւն առաւ մի ժամանակ, Բագրատունեաց Անի մայրաքաղաքը շուտով զարդարուեցաւ հոյակապ և շքեղաշուք տաճար ներով և պալատներով, նորա մէջ համարուում էր 100,000 բնակիչ : “Այելով Բագրատունեաց թագաւորութեան կարծ միջոցին և այն ժամանակի խոռվութիւններին, չք կարելի չվարժմանաբ Հայաստանի մէջ ճարտարութեանց ծաղկելու վերայ . Անւոյ աւերակները ճարտարախօս հռետորի պէս վկայում են այս բանը : Այս, ի՞նչ մեծ լուսաւորութեան կարող էր հասնել Հայ ազգը, եթէ չ'արգելէին նրան արտաքին քաղաքական (ազօլիտի կական) մրրիկները :

Իրանի և Թառւանի դարեւոր պատերազմը բռնուվին վերջացաւ յօդուտ Թառւանների, երբ որ Բազդաղի խալի ֆութիւնը թուլացաւ և այս պատերազմովը բացուեցաւ անթիւ յափշտակիչ պատերազմողների համար ճանապարհ գէպի Արևմուտք :

Բագրատունեաց Գագիդ Բ. վերջին թագաւորը հրաւիրուեցաւ Կոստանդնուպօլիս Կոստանդին Մոնոմախոս կայսեր հետ ահսութիւն անելոյ պատրուակաւ, որ տեղ նենդութեամբ բռնուեցաւ և խստութեամբ հարկադրուեցաւ հրաժարուել գահէցը : “Նրա Անի մայրաքաղաքը՝ Ծնայիցեալ բնակչաց զիմազրութեանը՝ առնուեցաւ կուսակալի մատնութեամբը : Յոյները շատ ժամանակ չ'վայելեցին էս յաղթութիւնը . 1064 թուին Սուլթան Ալ-Երսլանը տիրեց Անիին : Արա ժամանակից սկսան Հայերը ցիրուցան լինիլ Ասիոյ, Եւրոպիոյ և Աֆրիկէի անգամ ամենահեռու կողմերը, նրանք

թողին իրենց տարաբաղդ հայրենիքը, որ շատ
անգամ ամայի էր դարձել արենծարաւ թռուրք
Սեղուկների և Առնղոյների ձեռքով։

Հայերը գաղթելով Վիլիկիայ, մի նոր Հայոց
թագաւորութիւն կազմեցին, որ մեծ և երեսելի
նշանակութիւն ունեցաւ և միջնորդ եղաւ Արե-
մաքին և Արևելքին խաչակրաց պատերազմի ժա-
մանակը։ 1375 թուին այս թագաւորութիւնը վեր-
ջացաւ Լեռն Օ.ի. Մամելիքներից գերի ընկնե-
լով և այնուհետև Հայերը չկարողացան կազմել
մի ինքնադրուխ քաղաքական կեանք (*).



Ե. ՆԵՐՄՈՒՅԻՆ ԻՇԽԱԿՈՒ- ԹԻՒՆ:

ԻՇԽԱԿՈՒԹԻՒՆ ԹԱԴԱՏՈՒՐԻ. Հին Հայաստանումը
ծայրագոյն իշխանութիւնը, օրէնսդրական, կա-
ռավարչական և դատաստանական՝ միայն թագա-
ւորի ձեռքովին էր։

Բուն Հայաստանումը թագաւորեցին երեք ցեղ,
Հայկազունք, Արշակունիք և Բագրատունիք,
Ծորորդ ցեղը, որ էր Ոտոքնեանցը՝ թագաւորեց

(*) Վեր ներկայ քննութեան ժամանակ առաջներիս ունե-
լիք Հայոց, Յունաց և Հռովմայեցոց պատմագիրները,
նոյնպէս և Խորապացի նոր հետախոյշների գրուածքը Հայա-
տանի մասին Վեր շարադրութեան սահմանը կընդարձակ-
ուեր, եթէ մենք յանձն առնելնը մանրամասնաբար քննել
այս հեղինակութիւնները. սրա համար բաւականում ենք
միայն նրանց յիշտատակելով։ Քայլ մեզ պարտք ենք համա-
րում ասել, թէ շինասոր ազգիւր մեր շարադրութեանը առել
ենք մեզ Խնձօնանի աշխատասիրութիւնները. Հնախօսութիւն
Հայաստանի, երեք հատոր, Անետիկ, 1835 օրանոթ. հեղին.

բուն Հայտատանից դուրս Աիլիկիայումը. Նրանց
տէրութիւնը կանգնեց և տարածուեց նոր երկրումը,
ուրիշ հանգամանաց ներքոյ, սրա համար Աիլիկիայի
Հայոց տէրութեան ներքին կեանքը չի կարող լի-
նել մեր արդի քննութեանը առարկայ:

Հայկայ ցեղը լինելով միենոյն սերունդից ինչ
որ ժողովուրդն էր, ճանաչելով ժողովրդի պահանջը՝
բաւականութիւն տալով նրան, ուներ մի անսահ-
ման իշխանութիւն։ Պասմութիւնը չի յիշում և
ոչ մի տեղ, որ ժողովուրդը ընդդիմութիւն ցոյց
առւած լինի Հայկազնւն թագաւորներից մէկին.
այս ցեղը միշտ սիրելի էր իր ժողովրդին, այս սէրը
վերջերումն էլ ունեցաւ ժողովուրդը նախարարաց
վերայ (1)։

Ասեցէք, թէ ի՞նչ սիրով իօսում է Խորենա-
ցին այս ցեղի համար, եթէ որ պատմում է նրանց
վերայ: “ Այժմ ես անց եմ կենում մեր մարդ-
կանց թիւը, մանաւանդ թագաւորաց, մինչև Պար-
թևաց տիրիլը, որովհետեւ սիրելի էին ինձ այս
մարդիկը, որ ծագել են մեր թագաւորիցը, ինչ-
պէս իմ բնիկ հայրենակիցներ, իմ արենառու մեր-
ձաւորներ և իսկապէս հարազաններ: Այս, ինչ-
պէս հանելի էր ինձ, եթէ Փրկիչը էն ժամանակը
գար և ինձ գնէր և նրանց ժամանակը լինէր իմ
աշխարհ գալը, որ ուրախանայի նրանց տեսնե-
լով և ազատուէի այժմեան վտանգներից , (2)։

Երբ որ Հայկայ սերունդից վերջին թագաւորը
վեր է կենում Վշեքսանդը Մակեղոնացւոյ դէմ և
պատերազմի մէջ սպանուում է, Հայաստուն լի-
նումէ Մակեղոնացւոյ թագաւորութեան մէկ մասը:

(1) Այսինք հիմա մեր ազգի մէջ արծարծուում և երկա-
ռում են երգեր այս ցեղի աւելի երկելի թագաւորների
վերայ :

(2) Վազգես Խորենացի, Գիւրը Ա. 45. 1. 1.

Այս ժամանակից սկսեալ (330 ապրի Քրիստոս
սից առաջ) մինչև Արշակունեաց սկիզբը (150
տարի Քրիստոսից յառաջ) Հայաստունը կա-
ռավարուում էր Երեմի Վակեգոնացւոց կառավա-
րիներից, Երեմի Հայ իշխաններից։ Իս միջոցը
Խորենացին Նկարագրումէ այս խօսքերով։ “ Ին
ժամանակի վերկացած շփոթութեանց պատճառաւ
ամենքը մտածում էին տիրել մեր աշխարհի վե-
րայ, սրա համար Էլ հեշտ էր Արշակ մեծին
մանել Հայաստունն և թագաւորեցնել իր Աղար-
շակ եղքօրը Հայոց աշխարհի վերայ,, (1):

Աղարշակ ստամալով իր եղքօր տիրած Հա-
յաստունը, տեսաւ, որ նա չէ ստրկացած և օտար
աշխարհակալ ազգերի քմացնյարմար չէ կառավար-
ուած։ տեսաւ, որ ըստ իրանց հին սովորութեանցը
Հայկայ ցեղն էլի խաղաղ է, տեսաւ, որ նախա-
րանները ժառանգական իշխանութեամբը և հա-
մարեա իրենց ինքնիշխանութեամբը տիրում են
իրենց կայքին, տեսաւ, որ նրանց ձեռքին էր դա-
տաստան և պատիժ, հարկը ժողովելը և զօրք
կառավարելը։ որովհետեւ օտար աշխարհականները
զրկելով Հայաստանին քաղաքական անկախութիւ-
նից, չին մերձեցել երկրի ներք ին կեանքին։

Աղարշակ իր տէրութեան կառավարութեան
համար արած փոփոխութեամբը և զործունեու-
թեամբը, որ մեծ նշանակութիւն ունէր, ցոյց
տուեց, թէ ինքն է մէկ իմաստուն կառավարիչ,
որ կարող է բաւականացնել տէրութեան պահանջ-
մունքները և հողալ իրան տան և իր հաստա-
տութեան համար Հայոց դահի վերայ. մեծ բանն
այս է, որ նա չի շարժում նախարարներին իրանց
տեղից և չի մերձենում նրանց իրաւունքներին,

այլ ընդ հակառակն հաստատում է իրենց ունեցած իշխանութիւնը. շատ կարելի է նորա համար, որ անկարելի էր այս անել, չապատամբեցնելով իր գեմ ժողովրդին, որ հաւատարիմ էին և համարում էին նրանց իրենց ցեղապետները: Արակէս և իցէ, այս միայն գիտենք, որ Աղարշակը, անխախտ թողլով նախարարաց իրաւունքը և արտօնութիւնը, նրանցով սահմանափակեց իր թագաւորական իշխանութիւնը, որ վերջերումն աւելի եքեւում է Արշակունեաց թուլասիրաց թագաւորաց ժամանակը, որ նախարարները չեն կամենում գործակից լինել թագաւորին պատերազմներումը, միմեանց մէջ խոռվութիւն են անում և անդադար իրար վերայ են յարձակում (1): Թաէ արդարեւ երկրի կառավարութիւնը բոլոր նախարարաց ձեռքին էր, կարելի է հաստատել 'ի թիւս այլոց և Առվակս Խորենացու այս խօսքերովը: “Առամ Պարսից թագաւորը զիտելով, որ անկարելի է առանց նախարարաց տիրել ձայսատանին, հաշտութեան պայմաններ է կապում Ամբատ ասպետի ձեռքովը (2):

Ձայնրի քրիստոնէական կրօնը ընդունելուց յետոյ, թագաւորական իշխանութեան վերայ բարձարանում է Ապթուղիկոսական իշխանութիւնը. Ապթուղիկոսն է լինում թագաւորական գործերը գատողը և թագաւորի ու նախարարաց մէջ խաղաղութիւն ձգողը (3). Նա նախարարաց հետ 'ի միասին կառավարում է թագը (4): “Ասխարարները երբ որ կամենում են Արտաշեր Արշակունի վերջին թագաւորին գահից վեր ձգել, խնդրում են

(1) Առվակս Խորենացի, Գիրք Գ. 42. Իմ. և Լ. 3.

(2) Առվակս Խորենացի, Գիրք Գ. 42. Օմ:

(3) Առվակս Խորենացի, Գիրք Գ. 42. Իմ. 1. իր:

(4) Առվակս Խորենացի, Գիրք Գ. 42. Գ. Կերակոս:

Ապօւղիկոսին համաձայնիլ իրենց հետ (1)։
 Երտաշիր իրեն պաշտպանելու պատճառաւ ասում
 է նախարարաց համար, թէ “Կրանք իսկզբանէ
 սովոր ին նախատել իրենց թագաւորներին, ուստի
 հիմայ էլ կամենում են կատարել իրենց չար ցան-
 կութիւնը, որովհետեւ նրանք միշտ հակամիտ էին
 վոյսել թագաւորներին և ատում էին նրանց (2),”
 Կաթուղիկոսական իշխանութիւնը նոյն աստիճան
 բարձրացել էր թագաւորական իշխանութիւնից,
 որ Տիրան թագաւորը “ըյանդպնեց յայտնի մեղան-
 չել մեծին Վրդանէս Կաթուղիկոսի դեմք,, (3),
 Յուսիկ Կաթուղիկոսը միշտ անարգանք է թա-
 գում թագաւորի վերայ և արգելում է նրան եկե-
 ղեցին մտնել (4). Պապ թագաւորը մեծին “Եր-
 սիսի մշտական կշտամբանքներից աղատուելու հա-
 մար պարտաւորուեց ծածուկ կերպիւ սպանելու
 նրան և գեղեց իր սեղանի վերայ (5):

Բազրատունեաց թագաւորութեան ժամանակ
 բացի վերոյիշեալ թագաւորական իշխանութիւնը
 թուլցնող միջոցները աւելցան նաև Բաղրատու-
 նեաց տանը գահակալութեան համար պատահած
 երկտառակութիւնները և պատերազմները; Ընկնե-
 լով Արաբացւոց քաղաքականութեան տակ, որոնք
 յօժարութեամբ բաժանում էին թագը թագաւորա-
 կան գերդաստանի զանազան տննանցը, Հայաստա-
 նումը ծագեցան և մի քանի թաղաւորութիւններ

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. ԿՊ. Պապա-
 կարպեցի, երես 35:

(2) Պապար Փարպեցի, երես 42:

(3) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. Բ.

(4) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. ԺԴ. Փաւաստու-
 թիւզանդացի, Գիրք Գ. 42. ԺԲ.

(5) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. ԼԲ. Փաւաստու-
 թիւզանդացի, Գիրք Ե. 42. ԿՊ. ԿՊ.

միմեանց հակառակ։ Թագաւորները զբաղուած լիս
նելով առտնին պատերազմներով և անհնապանդ
նախարարներին հանգարտացնելով, զրկուում էին
կարողութիւնից պահպանել իրենց հայրենիքը
Արարաց, Թաուրք-Անջունքաց և Յունաց աւերիչ
յարձակմունքներից, մինչև վերջապէս նախարարքը
մատնում էին Բաղրատունեաց Գասպիկ Բ., վերջին
թագաւորին Բիւզանդիոյ Կոստանդին Աննումա-
խոս կայսերը (1)։

Թէև նախարարներն օրինաւոր պատերազմներ
էին անում իրենց թագաւորաց հետ, բայց շատ
հազիւ կը գտնուին նրանցից ումանք, որ մատճէին
տիրել գահին։ Թագաւորը սուբբ էր և անմեր-
ձենալի, նախարարները պատերազմնելով նրան հետ,
երբէք չին աշխատում թունաւորել կամ սպա-
նել նրանց։

Եմմանուէլ Մամիկոնեանը ցանկալով վրէժ առ-
նել իր Մուշեղ եղբօր համար, վեր կացաւ Ա ա-
րագդատ թագաւորի գէմ։ արիւնահեղութեան ժա-
մանակը թագաւորը տարաբարդար զերի ընկաւ
Եմմանուէլի որդւոց ձեռքը, որոնք կամեցան սպանել
նրան, բայց հայրն արգելեց ասելով։ ոիրասպան մի-
լինիւ (2)։

Հայոց թագաւորները շատ մերձաւոր էին իրենց
հպատակացը, պայշտիցը զուրս գալուս նրանք
չին շրջապատուում բարձմաթիւ պահպաններով,
և գնում էին նախարարաց մօս խնձոյքների ժա-
մանակը։

ԿԱՐԴ ԳԱՀԱԺԱՌԱՆԴԱՌԵՄԵԱՆ Հայոց մէջ թագա-
ւորական իշխանութիւնը ժառանգական էր։ Հայ-
կազունեաց և Արշակունեաց թագաւորութեան ժա-

(1) Յովհաննէս Կաթուղիկոս, Լաստիվրացի, Վիրակոս,
Ա արդան, Պատմէոս և այլ պատմագիրք։

(2) Փաւատոս Բիւզանդացի, Գևրգ Եւ Ալ։

մանուկը դահակալութիւնը հօրից անցնում էր անդարձանիկ որդւոյն, իսկ Բազրատունեաց ժամանակը գահը ժառանգում էր թագաւորի եղբայրը : Արշակունեաց և Բազրատունեաց թագաւորութեանց ժամանակը մինչև Աշոտ Գ. ողորմածը, թագաւորի փոքր որդիքը կալուածքից մասն չէին ստանում : Այս դրածներս հաստատենք Հայոց ժամանակապրաց վկայութիւններով:

“Որովհետեւ Աղարշակ շատ տղայք ունէր, ասում է Մովսէս Խորենացին, լաւ համարեց ամենքին իր մօտ չպահել Մծընումը, ուստի ուղարկեց բնակութիւն Հաշտենից գաւառումը և նրա մօտիկ ձորաւմը, որ Տարօնից գուրս է, տալով նրանց բոլոր շնուրը և աւելցնելով նրանց համար առանձին ոռնչիններ գանձագունից . իսկ իր մօտ միայն պահեց իր անդրանիկ Արշակ որդւոյն թագաւորութեան համար . հստոց յետոյ, աւելցնում է Խորենացին, օրենք էլաւ Արշակունեաց մէջ, որ մեծ որդին բնակուի թագաւորի հետ, ժառանդ լինել թագաւորութեանը, իսկ միւս որդին ու աղջկիրքը զնան Հաշտենից կողմը իրանց ազգային ժառանձրութիւնը վայելելու , , (1): “Արտաւազդ Արշակունեաց երկրորդական ցեղի համար նշանակած կալուածքի մասի վերայ աւելցրեց և Աղեղովիտ և Արերանին: Աա (Արտաւազդը), ասում է Խորենացին, իրան եղբարցը և քոյքերին ժառանգութիւն է աալի Աղեղովիտ և Արերանի գաւառները, թողարք նրանց և արքունական մասը, որ այն գաւառների շնուրութիւն էր, կապելով նրանց համար առանձին ոռնչիկ և մուտք, ինչպէս որ Հաշտենից գաւառումը գտնուած ազգականներն ունեին, որ նրանք աւելի պատռական և մօտիկ արքայազն

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Բ:

Համարուին քան թէ միւս Արշակունիքը, միայն
օրէնք է դնում, որ նրանք Այլրաբատումը չֆնան,
որ տեղ թագաւորի բնակաբանն է (1): Այս օրէնքին
համաձայն Սանատրուկը Արզարու աղջկանցը
ուղարկեց Հաշտենից գաւառը. “Արգարու բոլոր
արու զաւակներին սրակուսոր արեց բացի աղջկան-
ցէց, որ դուրս հանեց քաղաքիցը (Եղեսիիցը) և
ուղարկեց Հաշտենից գաւառումը բնակուելու,, (2):
“Արտաւազէ հալածում է Այլրաբատիցը իր բո-
լոր եղարցը Աղեղվայ և Առբերանի գաւառները,
որ չընակուին Այլրաբատումը թագաւորի կալուած-
քումը, բայց միայն Տերանին (իր եղօրը) պա-
հումէ իրեն փօխանորդ, որովհետեւ որդի չու-
նէր,, (3): Այսպիսի անդապիսութեամբ Հաշտե-
նից գաւառումը բնակուած Արշակունիքը կարծ
միջոցում այնքան բազմացան, որ հարկադրուեցան
դիմել (Տերան) թագաւորի մօտ և խնդրել այս-
պէս. “ընդարձակի՛ր մեր ժառանգութիւնը, որով-
հետեւ նեղ է և մենք շատացել ենք,, նա էլ հրա-
մայեց նրանցից մի քանիսին գնալ Աղեղվայ և
Առբերանի գաւառները. Էն ժամանակիը նրանք
սկսան աւելի գանգատել նեղութեան համար, բայց
Տերան ուշադրութիւն չանելով, օրէնք զիեց, որ
էլ նոր ժառանգութեան մասը չտան նրանց, բայց
ինչ որ ունին նրանք, հաւասար բաժին անեն
իրանց մէջ: Երբ որ նրանք բաժանեցին ըստ մար-
գաթուի, Հաշտենից գաւառը բաւական չեղաւ
նրանց ժառանգութեան համար. զրա համար նրան-
ցից շատերը գնացին Աղեղվայ և Առբերանիք

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Բ.

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Լ.

(3) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Կ.

կողմերը (1): Եթբ որ պարսից Արտաշեր թագաւորը Մեծին խոսրովաց մահից յետոյ տիրում է Հայաստանին, “գեղեցկապէս զարդարում է Հայոց աշխարհը և հաստատում է առաջուան կարգը. Տին Արշակունեացն էլ, որոնք հեռացրած էին թագից և Այլարատումը բնակուելուց, կարգումէ կրկին իրանց տեղերումը միևնոյն ոռծիկով, ինչպէս յառաջ էին (2):

~~Այսպէս Հայաստանումը Հայկագանց և Արշակունեաց մէջ գահակալութիւնը հիմնած էր անդրանիկութեան իրաւունքի վերայ ուղեղ պահպահ իջնելով ձիւղէ ձիւղ. այս օրէնքը անքակակիլի էր և բացի Ամսատրկից ոչ ոք չ'յանզգնեց օրինաւոր ժառանգի գէմ կոռւել: Բազրատունեաց թագաւորութեան ժամանակը թագաւորի եղբօր մեծութիւնը գերազանց համարուեցքան թէ որդւոց բնական արժանաւորութիւնը. այս ցեղի թագաւորութիւնը հռչակուածէ գահակալութեան համար եղած պատերազմներով, որոնցից ամենից աւելի երեսի է Աշոտի իրա եղբայր Յովհաննէսի հետ արած պատերազմը:~~

Մինիթար Գօշը իր Դատաստանադրքի մէջ ասումէ, թէ թագաւորի եղբայր կենդանի ժամանակը որդիքը իրաւունք չ'ունին թագաւորելու, բայց միայն եղբօր մահից յետոյ որդիքը իրաւունք ունին գահը բազմելու (3):

Դահակալութեան ժառանգութեան համար զրած Արշակունեաց օրէնքի փոփոխութիւնը շատ կորըստական հետեւանդներ ունեցաւ տէրութեան համար: Դահակալութեան համար եղած ներքին և առ-

(1) Առվակս Խորենացի, Գիրք Բ. 42. Կիւ.

(2) Առվակս Խորենացի, Գիրք Բ. 42. Կիւ.

(3) Դատաստանագիրը Մինիթար Գօշի ձեռագիր. Լաւարեանց ճեմաբանի գրատանը,

տընին կոխուները թուլացրին տէրութիւնը և Բաղրատունեաց գահու կործանման մէկ պատճառն եղան:

ԹԱԳԱՏԻՈՐԱԿԱՆ ԴՐՈԾԱԿ. Հայտատանի առաջին թագաւորների դրօշակն էր արծիւ, բայց վերջին Ռուբենեանց ժամանակն էր առիւծ. այս բանիս յիշատակութիւնը գտնումնք միայն Վինաս Համբեցւոյ զրուածքումը, որ այսպէս է ասում. “Եւսն թագաւորին կայսրները ուղարկեցին առիւծի նշան, որ նկարուած էր նորա դրօշակի վերայ և տարուում էր նորա առաջին: Եւս դրօշակը սեպհականուած մնաց Հայոց մէջ մինչեւ Աթլեկեցւոյ թագաւորութեան վերջը. Խոկ Հայոց առաջի թագաւորները, որ Հիւսիսումը բնակուումէին, արծուի դրօշակ ունէին,, (1):

ՏԻՑԱՌ ԹԱԳԱՏԻՈՐԱՑ. Հայոց թագաւորաց տիտղոսը շատ պարզ և համառօտ էր. քնննենք պատմաբանական յիշատակների մէջ և տեսնենք, թէ ինչպէս էին զրում Հայոց թագաւորները իրենց տիտղոսը պաշտօնական զրուոց մէջ: Վաղարշակը այս խօսքերով է զրում իր եղբայր Արշակ Պարթևաց թագաւորին նամակը. “Վաղարշակ քո փոքր եղբայր և նիզակակից, քեզնից կարգուած Հայոց նահանգու,, (2): Երգարը իր բոլոր նամակներումը Տիբերիոս կայսերը, “Երսեհ Վոորւոց թագաւորին և Երտաշես Պարսից թագաւորին զրելուս, միշտ կոչում էր իրեն “Երգար, նահանգ Հայոց,,. Տրդատի ժամանակի թղթերումը տիտղոսը մի փոքր փոխուեցաւ, նա կոչուում է

(1) Վինաս Համբեցի, երես 48:

(2) Վաղարշակ Խորենացի, Գագր Ե. 75. 10:

Առաքաւոր Մեծին Հայոց։ Եզաթանգեղոսի մէջ
պահպանուած Տրդատայ նամակը Լեռն կայսեր
վերայ՝ սկսուում է այսպէս։ “Տրդատիս թագաւոր
ամենայն զօրօք կրկիս Հայոց Մեծոց և Աշուն
Տիկին և օրիորդ մեծ Խոսրովիկուստ և ամենայն
Տրապարակք բազմամբոխ ժողովրդոց՝ որ իցեն ՚ի
Հայոց մեծաց,,։ Արշակունիաց թագաւորները չեն
ընդունում իրենց վերայ այն մեծ և սնափառ տիտ-
ղոսները, որով մեծացնում էին իրենց միւս ասիա-
կան ազգերի թագաւորները։ Արշակունիաց վերջին
թագաւորներից մէկը՝ Արշակ Ռ. Վալես կայսերը
իր նախորդիների օրինակին համաձայն էտպէս էնա-
մակ զրում։ “Արշակ, Առաքաւոր Մեծին Հայոց և
բոլոր նախարարք Արամեան ազդիս,, (1)։ Օսար
թագաւորները Հայոց թագաւորների վերայ նամակ
գրելիս զանազան պատուելի տիտղոսներով էին
զրում։ Մեծն Կոստանդիանոս կայսրը զաշանց
թղթի մէջ այսպէս է կոչում Տրդատին։ “մեր
թագաւորութեան երկուրդը՝ Տրդատ ահեղանշան
թագաւոր Հայոց,,։ Դիրկղետիանոսը կոչում է
Տրդատին իրեն աթոռակից և նիզակակից։ “Խնք-
նակալ կայսր Դիրկղետիանոս սիրելի եղբօր մեր
և աթոռակից Տրդատայ ողջոյն, զիտութիւն լիցի
եղբայրութեանդ քում նիզակակիցի մերում,, (2)։
Կայսրները և ուրիշ մերձակայ թագաւորները
զանազան տիտղոսներով մեծարում էին Հայոց
թագաւորներին (3)։

Այսպէս Արշակունի անկախ թագաւորները տի-
ւելով բոլոր Հայաստանի վերայ, ընդդէմ սովորու-
թեան միւս Արևելեան թագաւորաց, չեն բարձ-

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. Իմա.

(2) Արաթանգեղոս:

(3) Փաւստոս Տիրզանդացի, Գիրք Գ. 42. ԺԵ:

թացնում իրենց շքեզ տիտղոսներով, բայց միայն
կոչում էին Հայաստանի նահաւորներ. իսկ
Բագրատուննեաց թագաւորները, երբ արդէն տէրու-
թիւնը մերձնում էր իր կործանմանը և թագա-
ւորաց վիճակը կախուած էր մերձակայ թագաւոր-
ներից, որոնցից ստանումէին իրենց թագը, երբ ոք
Հայաստանի իշխաններն իրենց թուլութեամբը և
իրենց ուրիշներից կախեալ լինելով հաղիւ թէ
կարողանում էին կոչուիլ թագաւորներ, էն ժա-
մանակն էին Շահնշահ կամ Շահնշահ տիտղոսը
ընդունում՝ այսինքն թագաւոր թագաւորաց: Այս
տիտղոսը առաջին անգամը ինքն իր վերայ ստա-
ցաւ Աշոտ Բ. Մբասայ որդին: Յովհաննէս կառ
թուղիկո ու իր պատմութեան մէջ խօսելով Աշո-
տի համար, միշտ տալիս է նրան այս տիտղոսը:
Ասողիկի վկայութեանը համաձայն Աշոտ այս տիտ-
ղոսն ընկալաւ այս պատճառուաւ. “ Աշոտ Աւոնի
հրամանուով յիտ է դառնում մեր աշխարհը և
գանում է իր հօր ծառաները (1) թագաւոր դար-
ձած, ուստի և անուանում է իրեն Շահնշահ
այսինքն՝ թագաւորաց թագաւոր և հալածում է
Խամայելացւոց զօրքը Հայոց աշխարհիցը,, (2):

Վարդան պատմագիրը Հայոց թագաւորների
այս տիտղոսն իրանց վերայ առնելու պատճառն
այսպէս է ասում: “ երբ որ Աշոտը իրեն հնաւ-
զանդացըց իր հօր եղքօր որդի Աշոտին և Գա-
գիկ Արծրունի թագաւորին և Անգսէս Աղուա-
նաց բոնաւորին և Ճանաչելով իրեն նրանցից և
Վըաց Կերսեհ թագաւորից հզօր, կոչուեցաւ
նրանց վերայ Շահնշահ,,:

Բառս Շահնշահ, որ օտար է Հայոց լեզու-
ումը, ամէնքից աւելի հաստատումէ Յովհաննէս

(1) Գագիկ Արծրունի և Ամբատ եղքօր որդի Աշոտից:

(2) Ասողիկ, Գիքը Վահ Աւ Զ.

կալթուղիկոսի խօսքը , որ ասում է , թէ այս տիտղ
զոսը Հայոց թագաւորները ստացան առաջին ան
դամը Սուստվմանաց իշխաններից : Որքան Հա
յատառնը թուլացաւ , այնքան այս տիտղոսը գործ
ծածական դարձաւ . այսպէս կոչուեցաւ և Աշոտ
Գ. ողբրմածը , որովհետեւ Ասողին ասում է , թէ
“ Երասից յետոյ թագաւորեց նորա որդի Աշոտը
որ Ծահնշահ ել եր կոչուեմ ” , (1) : Կիրակոսը
այս տիտղոսը տալիս է նորա յաջորդներին՝ Արմ
բատ Բ.ին , Գրագիկ Ե.ին և Ա անանդայ մէկ գալ
ւառի վերայ թագաւորող Գրագին : Ա արդան
պատմագիրն այս տիտղոսը տալիս է և մի քանի
Ա ասպերական թագաւորներին : Խն ժողովքը , որ
գումարեց Ա ևն թագաւորը , Կիրակոսի պատմե-
լով , Ծահնշահ կոչեց և Օտքարէ զօրավարին :
Ա ճեղերումը ըստ վկայութեան Կիրակոս և Ա ար-
դան պատմաղբաց այսպէս կոչուեցան և շատ ան-
նշան մարդիկ :

Թաղաւորաց կանայքն ըստ Հայ պատմադրաց
վկայութեան , միայն կոչուում եին Տիկն (2) :
իսկ Ռադու-նէ (3) և Դշենոյ (4) բառերը շատ
հազլւ են գործ ածել մեր մատենագիրները թա-
գաւորաց կանանց համար : Մեծին Կոստանդիա-
նոսի և Տրդատայ դաշանց թղթի մէջ Աշխեն
թագուհու անուան վերայ աւելցրած է և Բաքրէն
բառս :

Օտումն թԱԳԱԱՊՐԻ : Մենք չունինք ոչինչ աւան-
դութիւն , որ կարողանանք պատմել , թէ արդեօք

(1) Ասողիկ , Գիրք Գ. Ք. Բ.

(2) Մովսես Խորենացի , Գիրք Բ. Ք. ՕՆ Փաւանիս
Բիւզնակացի , Գիրք Գ. Ք. Բ.

(3) Մովսես Խորենացի , Գիրք Բ. Ք. Խ. Խ.

(4) Փաւանիս Բիւզնակացի , Գիրք Ե. Ք. Ջ.

մեր Հայկաղուն թագաւորներն օրհնում էին իրենց
իրաւունքը հանդիսիւ, ընդունելով բարձրագոյն
իշխանութիւնը : Խակ այն ինչ կը վերաբերի Առա-
շակունեաց և Բագրատունեաց թագաւորութեան
ծէսին, Հայոց մի քանի պատմագիրները վկայում
են դրա համար, թէպէտ և նրանց շատ քիչ խօս-
քերիցը չի կարելի մանրամասնաբար պատմել ոյս
ծէսիրը, բայց փոքր ՚ի շատէ կարելի է հաստա-
տել և ասել, թէ զլսաւորապէս այդ ծէսը էնպէս
էր, որ Ասթուղիկոսը օրհնում էր նոր թագա-
ւորներին, օծում էր նրան սուրբ մեռնով և
դնում էր նորա զլուխը թագը : Հաստատենք մեր
խօսքը Հայոց ժամանակագրի զրուածքներից:
Անուրով ասում է, թէ Հմմանուէլ Ամրկոնեան
զօրավարը կարող էր պատերազմումը սպանել
Արագդատին, բայց “չսպանեց, որովհետեւ նա
ծծեալ նակառը էր,,,: Աշոտ Բագրատունի առա-
ջին թագաւորի թագաւորութեան համար այսպէս
է պատմում Յովհաննէս Ասթուղիկոսը . “յետոյ
հրաւիրուեցաւ այն տեղ մեծ Հայրապետն Գրէ-
որդ, որ Աստուածային գովաբանական շարական-
ներից և օրհնութիւններից յետոյ, փոխանակ նրան
սուրբ մեռնով օծելու, պատմում է նրան թա-
գաւոր Ասքանազեան ազգի վերայ,,,: Արդան
պատմագիրն ասում է, թէ “Ամրատ ստանալով
թագաւորական պատիւը, շնումէ Սուրբ Փրկչի
տաճարը Երազգաւորսումը, որ է Շիրակաւանը,
որ տեղ էլ օծուեցաւ նա ,,: Աշոտ Գրի թագա-
ւորութիւնը ինչպէս Ատթէոս պատմագրի հե-
տեւեալ խօսքերից երեսում է, կատարուեց մեծ հան-
դիսակատարութեամբ. “հրաւիրեցին արժանազով
Յովհաննէս Աղուանից Ասթուղիկոսին և նրա
հետ էլ 40 Եպիսկոպոսների և թագաւորական
փառքով կոչեցին Փիլիպպոս Աղուանից թագա-

ւորին , . . . այն օրն եղաւ շատ մեծ ժողովք Անի
քաղաքումը , որ այժմեան ժամանակս եղաւ Հայոց
թագաւորանիստ քաղաքն և էս տարի օծուեց
Աշոտ թագաւորը , ինչպէս օծուել էին իր հայրե-
քը և նստաւ Հայոց առաջին գահի վերայ
լսելով այս ամէնը , ամէն շրջակայ թագաւորներն՝
Եփիսաղաց , Յունաց , Բաբիլացւոց և Պարսից ,
առւրք և սէր ուղարկեցին նրան պատուական
ընծաներով՝ շնորհաւորելով նորա թագաւորու-
թիւնը (1):

ԱԶԳԱՑԻՆ ՆՐԴՈՒՄՆ. Ակրակս պատմազրի հե-
տեւեալ խօսքերից կարող ենք վճռել , թէ նորա թա-
գաւոր նստած ժամանակը սովորութիւն կար
հաւատարմութեան համար երդուիլ : “Սա ասումէ .
“ Յովհաննիսի կամ Ամրատի մահից յետոյ միա-
բանուեցան իշխանքն և զօրքը Պետրոս Պատրիար-
քի հետ , ժողովեցան Անւոյ հոյակապ Աաթուղիկէ
Նկեղեցին , թագաւոր զրին Գագիկին՝ Յովհան-
նիսի եղբօր որդուոյն , ուխտելով երդուեցան հաւա-
տարմութեամբ ծառայել նորան , :

ՊԱՏԿԵՐ ԹԱԴԱՒՈՐԻ. Յովհաննէս Աաթուղիկոսի
հետեւեալ խօսքերը , որ ասումէ Աշոտի համար ,
վկայում են , որ սովորութիւն կար թագադրութիւ-
նից յետոյ նկարել թագաւորի պատկերը . նա ա-
սումէ . “ յետ են զառնում սուրբ եկեղեցին ,
Գևորգ Հայրապետն էլ նրանց հետ և էն տեղ
կարդալով նորա վերայ նուիրական աղօթքը , գծե-
րով , զրերով և նկարներով ձևացնում են նորա
ուկեթել հագուստը , դնելով նորա զլուկը ար-
քայական թագը , :

ԹԱԳ. Թագաւորական թագը պահուում էր գանձարանումը . “ Ամբատ որոնում է թագաւորական գանձը և գանելով Անատրուկ թագաւորի թագը , զնում է Երտաշեսի դիմին (1): Փաւստոս Երւղանդացւոյ խօսքին համաձայն , առանձին տեղ էր նշանակած միայն թագը պահելու համար . “ տարան նրան ներս հանդերձատունը (բարձերօն) այսինքն՝ որ տեղ զնում էին թագաւորական թագը , (2): Ա երջին ժամանակներումն ըստ վկայութեան Աիրակոսի , մածին Խոսրովայ թագը ապահովութեան համար պահուում էր Ա բաստան մինչև Ուուզուդան թագուհւոյ ժամանակները , որ թագաւորեց Փ. Պարումը , որի յաջորդը , որին թագաւոր նստացրին Առնղոլները՝ նրանց պահանջելով ուղարկեց Թաթարաց Խանին . “ երեք մասը բաժանելով , ասում է Աիրակոսը , պատուական և անգին գահը և մածին Խոսրովայ՝ Տրդատ Հայոց թագաւորի հօր հրաշալի թագը , որի նմանը չունեին ուրիշ թագաւորները , որ այս տեղ իրուք թէ տեղի ամրութեան համար պահուում էր Ա բաց թագաւորաց մօտ ուրիշ շատ թանգագին բաների հետ , ուղարկում է Խանին Ուուզուդանի յաջորդը . :

Քրիստոնէութեան ժամանակը թագի վերայ խաչ կար , որի համար խօսում է Գրիգոր Անդիստրոսը խաչի ոտանաւոր ներբողի մէջ :

ԽՈՅԵՐ ԹԱԳԱՄԻՐԱՑ (ԳՏԱԿ). Բացի թագից թագաւորներն ունեին և խոյր , որ կարելի է տանն էին ծածկում . այսպէս է ասում Առվակս Խորենացին . “ ուղարկեց նա (Անանունը) Եղիշէի մօտ , որ շենի նորա համար բեհեղի խոյր , սոկոյ թե-

(1) Խորենացի , Գիւք Բ. Ա. Խ.:

(2) Փաւստոս Երւղանդացի , Գիւք Ե. Ա. Օ.

լով զարձուած՝ ինչպէս յառաջ շինում էր նորա
հօր համար (1):

ԽԱԳԵԿՈՐԱԿԱՆ ԶԳԵԽՏՏՔ. Անձն Կոստանդիանոս
ընծայեց մեր Տրդատ թագաւորին հետեւալ թա-
գաւորապատկան զարդերը, որ նշանակուած է դա-
շանց թղթի մէջ. “ ընծայեցինք սրան մեր կայ-
սերական զարդերը և զէնքերը, արքունազրոշմնշա-
նաւոր կառքեր, օդաթռիչ ծովային ձիանք ոսկե-
սար զբահնիրով, հաւաշեան սրեր և վեշապի ա-
րեան մէջ նկրկած նիզակներ ,,:;

Լաստիվերտցին Ռատզրատունեաց թագաւորու-
թեանց շքեղ հանդերձների համար այսպէս է խօ-
սում. “ երբ որ թագաւորն առաւտուց դուրս էր
գնում քաղաքից, նմանում էր նորափեսայի, որ
դուրս է գալիս իր ռուազաստիցը, կամ ինչպէս
առաւտօնեան աստղը, որ ամէն արարածոց զվիցը
բարձրանալով, ամէնքի հայեցուածքն իրեն է քա-
շում, էսպէս էլ նա փայլումէր իր պսպղուն
հանդերձների մէջ և իր մարգարտաշար թագովն
ամէնքի հայեցուածքն իրան ձգելով, զարմացնում
էր նրանց. նրա ոսկեզարդ սպիտակ նժոյնն իր
վերայ ընկած արեգակի ճառագայթներովը շլացնում
էր մարկ տռւողների աշքերը, իսկ զօրքի բազ-
մութիւնը, որ նորա առաջին գնումէին՝ նմանում
էին իրար մօտ ժողոված ծովի ալիքների (2):
Երբ որ Վանուէլ զօրավարն, իրրե հոգաբարձու
Պապ թագաւորի որգուոցը, մտաւ Հապուչ Պար-
սից թագաւորի հպատակութեան տակ, էն ժամա-
նակը նա ուղարկեց նորա համար և թագաւորի
որգուոց համար թագ. “ էսպէս էլ ուղարկեց թա-

(1) Մովսէս Խորենացի, Գիւղը Բ. Պ. 1. 7.

(2) Լաստիվերտցի, Դ. Փ.

գաւորական պատմուման, մի սամուլի քուրք և
ոսկեայ ու արծաթեայ Գարդմանակ (զլխիպատիւ)
և թագի արծուից սկսեալ գնում էին երկու շըղ-
թայ, որոց միաւորութիւնը ասուումէր “ազգային
աւանդութեանց կառ ,,, այսպիսի մէկ զարդ, որ
թագաւորները կրում են իրանց կուրծքի վերայ և
կարմիր վրան, որի վերայ կար արծիւ և հրաշա-
լի վարագոյրներ և երկնագոյն հոգանոցներ։ Ա-
նուել սպարապեաին ուղարկեց ոսկի զարդ պալո-
տի համար և տռւեց նրան իր ձեռքովը մեծ իշ-
խանութիւն Հայոց աշխարհի վերայ ,, (1)։

Յովհաննէս Կաթուղեկոսը յիշումէ այն ընծա-
ները, որ ուղարկում է Եմիրապետը Սմբատ Ե-
թագաւորին։ “ Երեելի թագաւորական զգեստ և
թագաւորական թագ և ակսնակուռ կամար բոլոր
ոսկւուց և պատուական սուր և օղաղնաց ձիտնք
զէնքով և զարդարանքով ,,, յեռոյ յիշումէ Յու-
սուփ ոստիկանի ուղարկած նուելքները։ “ շատ
ահաւոր և փառաւոր ձիանք, զանազան շքեղ
զբահներով և զէնքելով ոսկի սանձերով, ոսկի
զարդերով նոյնպիս Սափերայ ոսկուց շինած թագ
և նորա վերայ զարդարած թանգադին քարեր,
ասղնեղործ վարսակալ մարգարտից և շատ պատ-
ուական ակներ և շատ թագաւորական երեելի ոս-
կեզարդ զգեսաներ շղաշատեռն՝ ուղարկումէ ’ի պա-
տիւ Սմբատ թագաւորին։

ՊԱԼԱՏ ԹԱԳԱԽՈՐԻՆ Հայոց ժամանակագրաց վը-
կայութեամբն Ելշակունեաց և Բագրատունեաց
ժամանակը թագաւորական պալատը (2) իր բազ-

(1) Փաստոս Ծիւղանդացի, Գիրք Ե. 4. 1. 1.

(2) Հայկազանց ցեղի պալատների վերայ ոչինչ տեղեկու-
թիւն չունինք։

մամարդութեամբ, հարստութեամբ և շքեղութեամբը
ոչինչ պակաս չէր մերձակայ տէրութեանց պա-
շտոնիրիցը : Պալատականաց առանձին կոչումներն
և նրանց առանձնապէս ունեցած գերտղունց ար-
տօնութիւնները քաղաքական աստիճանաւորներից
աւելի հաստատուեցաւ Վաղարշակ Արշակունի ա-
ռաջին թագաւորից : Վաղարշակի ժամանակի հան-
դամանքը և յարաբերութիւնքը պատճառ են տալի
մեզ մտածելու, թէ էս թագաւորն իր պալատի
կարգաւորութեան մէջ նմանումէ Պարթևաց թա-
գաւորներին . մեր կարծիքը հաստատում է մի
քանի աստիճանաց և պալատական կարգերի նմա-
նութեամբ :

Ո՞վսէս Խորենացին մի քանի տեղեկութիւն-
ներ է հաղորդում Մար Արասից, Վաղարշակի
պալատի կարգադրութեան համար և պալատական
աստիճանաւորաց պարտաւորութեանց համար . “ա-
մէնից առաջ, ասումէ Խորենացին, Վաղարշակ
կարգաւորումէ իրան և իր տունը՝ սկսելով իր
զլսիցը և թագիցը : Բաղարատ Արէային նրա
առաջուան հաւատարմութեան և քաջութեան հա-
մար շնորհակալութիւն է անում և պարզեռում է
իր ազգին տանուտէրութեան պատիւ և իրաւունք
թագաւորի զլսին թագ դնելու և թագադիր աս-
պետ կոչուելու, և երբ որ թագաւորի պալատումը
ման գալուս լինի, սաորին կարգի երեքտակէ
մարդարտից վարսակալ կապելու առանց ոսկեոյ
և թանգագին ակների (1): Արտաշէս Բ. իր
գայեակ Ամրատի առանձին արժանաւորութեանց հա-
մար պարգևում է նրան թագ թանգագին քարե-
րով զարդարած (2):

(1) Ո՞վսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Խ.

(2) Ո՞վսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Խ.

Թաղաղութեան և ասպետութեան պարտաւութունը միաւութիւնը ժառանգական էր Բագրատունեաց ցեղեցիք։ Նոր դանուած Հայոց պատմութեան երևելի յիշատակարանը՝ Աբեսոս Կպիսկոպոսի Հայոց պատմութիւնը յայտնումէ, թէ ինչի՞ համար Բագարատ այդքան պատուին արժանացաւ, ստացած ալով թագաղըութեան և ասպետութեան ժառանց գական իրաւունքը։ “Արշակ մեծն, ասում է Աբեսոս, թագաւորացրեց իր փոքր կոչեցեալ Արշակ որդւոյն Հայոց վերայ Սոճին քաղաքումը և ուղարկեց նրան Սոճին Արևելք մեծ բազմութեամբ 70000 զօրքով՝ ուղեկցութեամբ աշնուածկանաց, իշխանաց և նախարարաց՝ թուով մինչև 11000 և ոչ չ' վատահացաւ նորա դէմ զուրս գալ զօրքով։” Արան դիմաւորելու է գալի մեծն Բագարատ Փառաղեանն Արմենակի ցեղեց իր զօրքով։ բերում է նրան ընծայ ոսկի և արծաթ, հազինումէ նրան հանդերձ բարակ քաթանից և պատմուձան, դնումէ նրա գլխին իր հայրենի թագը, բազմացնումէ նրան ոսկի գահը, քարերով զարդարած և տալիս է նրան կին իրեն աղջկեր։ Արշակ թագաւորը նշանակումէ Բագարատին Հայոց աշխարհքի վերայ ասսետ, այսինքն՝ իշխան և զինաւոր հրամանատար, բոլոր թագաւորական կառավարութեանց զլուկս, հայր թագաւորի և եղբայր (1)։ Հիմայ մենք հասկանում ենք, թէ ի՞նչէր ուզում ասել Խորենացին, ասելով։ “ամէնից առաջ վարձատրումէ այն զօրաւոր և իմաստուն Շահբատ Բագարատին, որ Հայութից ազգիցն էր, նորա բարսւթեանց վահարէնը հաստուցանելով։ տալիս է նրան իշխանութիւն ազգով թագաղիր լինել Արշակունիացը և իր բոլոր

նշանից ծագած ազդը կոչուեն նօրա անուամբը
Բազրատունիք . . . որովհետեւ այս Բազրատը
յօժարութեամբ նեփն էնեն տառաջն ընծայ դուեց
Աշշարշան, Առշակայ Մակեդոնացւոց հետ պա-
տերազմից յառաջ, որ և սա էլ արքունի դրանն
էր: Խոկ Հայաստանի արեւմտեան սահմանի վե-
րայ նա նշանակուեց կուսակալ և իշխան 11000
զօրաց (1):

Եհա թագաղրի արժանաւորութեան պատմա-
կան ծագումը, որը որ ինչպէս և միւս աստիճա-
նաւորութիւնը, մացրել է Աշղարշակը Հայաս-
տուն, փոխ առնելով, ինչպէս վերել ասացինք,
Պարթեաց տէրութիւնից: Այս կարծիքը հաս-
տատուումէ նոյնպէս Պլուտարքոսի վկայութեամբը,
որ նկարագրելով Հայոց պատերազմը Հռովմայեց-
ւոց հետ, ասումէ. Արտաւազդի կուսակից Պար-
թեաց թագաւորի զօրապետ Առուենը “ ժառան-
գական իրաւունք ստացաւ զնել զիադէմը (թազը)
Պարթեաց թագաւորաց գլուխը նրանց գահակա-
լութեան ժամանակ , (2):

Բազրատունեաց ազգի թագաւորութեան իրա-
ւունքը այնպէս արմատակալել էր ժողովրդի մրտ-
քումը, որ այս կարդը չպահիլ համարուումէր
ընդդէմ օրինաց բան: Խորենացին, որ իր գրուա-
ծոցը մէջ այնքան համառաթութիւն է սիրում,
ասելով, թէ Արուանդը միաձայն հաճութեամբ
թագաւոր ընտրուեցաւ, էլի հարկաւոր է համա-
րում աւելցնել, թէ “ թէպէտ էս ժամանակը չկար-
մի Բազրատունի, որ թագը զնի նրա գլխին (3):

(1) Առվեկո Խորենացի, Գիրք Բ. 42. գ.:

(2) Պլուտարքոս: Արասու, 142 և 151. Ծանօթու 1
թիւն Պ. Խմբնի Խորենացւոց թարգմանութեան մէջ:

(3) Առվեկո Խորենացի, Գիրք Բ. 42. 1. ի.

Բազրատունեաց աւագը ժառանգում էր թագալրութեան հետ և ասպետի կոչումը, որի հետ միացած էր, ինչպէս Սեբէոսի խօսքերիցն երեւումէ, արեմանեան սահմանի գլխաւոր զօրապետութիւնն։ Ասպետ բառը զննելով՝ ճշմարտուում է Սեբէոսի վկայուաթիւնը, որովհետեւ առաջ պարսկերէն նշանակում է ձի, պէտք զլիսաւոր, ուրեմն ասպետ նշանակում է գլխաւոր ձիաւոր զօրաց. սրանով ևս կարծումեմ, որ սխալուումէ Խնձիձեանը (1), կարծելով, որ Բազրատունիք ասպետական կոչումը ստացան իրանց թագաւորական պաշտօնի մէջ. Հիմնելով նորա վերայ, որ Խորենացին և մի քանի ուրիշ հեղինակներ (2) առանց զանազանելու դործ են ածում այս երկու բառն էլ։ Թագալրութեան պաշտօնը յիշելուս Խորենացին պատմում է, որ Սմբատը, գերի անելով Մեհրուժան մատնչին, դնումէ նրա գլուխը թագի նման հիւսած տաք երկաթ, ասելով. “պսակումեմ քեզ, Մեհրուժան, որովհետեւ դու ուզումէիր թագաւորել Հայոց վերայ և ևս առաջերս պէտք է պսակեմ քեզ իմ հայրենեաց իշխանական սովորութեան համեմատ” (3)։ Ես կարծումեմ, որ ասպետ բառը թագալրի մոքով էնդուր համար է զործ ածուել, որ այս երկու պաշտօնն անբաժան տրուումէր Բազրատունեաց ցեղից մէկին, կամ թէ կարելի է, որ վերջերումս ասպետ կոչումը կորցրել է ’ի միասին արեմանեան սահմանի զօրապետութեան իրաւունքը և մնացել է Բազրատունեաց վերայ ինչպէս տիտ-

(1) Հնախոսութիւն Հայաստանի, մասն Բ. գլ. ԺԳ. երես 98 և 99.

(2) Մավսէս Խորենացի, Գիրք Բ. գլ. ԺԳ. Խորենացին պատմութեղոս։ Պաշար Փարսկեցի, երես 224։ Ծառվաճակը Արքանի, Գիրք Ե. գլ. ԺԳ.

(3) Մավսէս Խորենացի, Գիրք Գ. գլ. 112.

զոս. մեղ էլ պատմութիւնից յայտնի է, որ մի քանի թագաւորներ զըկեցին նրանց արևմտեան գնդի գլխաւոր զօրապետութիւնից (1), և Արշակունիւնաց վերջին թագաւորաց ժամանակն էլ այդ գունդն արդին չկար: Իսկ թէ ասպետ բառի սկզբանական կոչումը չէր միայն պատւոյ տիտղոս (քավալեր), ինչպէս կարծում է Խնճիճեանը, այդիմ կարծեօքը բաւական հաստատուումէ Սիրէսոսի վկայութեամբ և ասպետ բառի գննելովը:

Այժմ խօսենք պալատական աստիճանների վերայ, որ Աղարշակ այսպէս է նշանակում. “իր ձեռնոցներ հազցնողը Քանանացւոց ցեղիցն էր և նորա աղդի անունը դնումէ Գնճունի. իրեն թիկնապահներն էին զինավորեալ մարդիկ՝ խոռ Հայկազնւոյ սերունդից, ընտիր և քաջ մարդիկ, նիշակաւոր, սուսնրաւոր, և նրանց գլխաւոր նշանակումէ Մաղլուազ անունով մեկին. իսկ նրանց ազդի անունը թողումէ առաջուանն՝ այսինքն (խոռնուունի) (2):

Դատ անունով մեկին, Գառոնկայ ցեղից, որ Գեղամի զաւակներիցն էր, նշանակում է Յագառարականն որուցի վերայ Գարաղ անուանի մեկին նշանակումէ յետնոց ջոկն վերայ և մեկ Աբելի էլ նշանակում է տան կառավարիչ և գահը մաքուր պահող : Արծրունիք պէտք է կոչուին արծիւ ունի, որովհետեւ նրանք արծիւ էին

(1) Մովսէս Խորենացի, Գիւքք Եւ Գլ. Ճ. Պ.

(2) Ա երջին թագաւորաց ժամանակը թիկնապահութեան կոչումը միայն մեկ մարդու էր տուած՝ Մաղլուազի ցեղից, որից ծագեցաւ առանձին նախարարութիւն՝ Մաղլուազունի անուանը. Ղազար Փարզեցի, երես 75. 212. Փաւասոս Ծիւզանդացի, Գիւքք Եւ Գլ. Լ՛. ԽՊ: Մովսէս Խորենացի, Գիւքք Գլ. Թւ.

թանում թագաւորի առաջին (1). Գնունի նշանակում է գինի ունի, որովհետեւ նա էր պատրաստում թագաւորի խմբչքներն։ Ինչպէս իրաք է ընկել էս մարդի անունը իր պաշտօնի հետ, նա թագաւորի համար պատրաստում էր լաւ և համեղ գինիք և անունն էլ Գին էր։ Ասում են, թէ Աղաղաշակը բաւական լինելով նրանից, նրա անունը դասում է՝ ի կարգս մեծ նախարարական ազգաց (2)։ Եւյս երկու ցեղն՝ այսինքն Արծունեաց և Գնունեացը՝ ծագեցան Անսեքերիմի ազգից։ Ապանդունիք նշանակուած էին զենարանների (միս մորթելու տեղ) վերայ, ձաւնունիք կոչուում էին բազէակիրներ և բազէականներ՝ անտառների մէջ բնակուելու համար։ Զիւնականքն են ամարանցների պահապաններ և ձիւն բերողներ։ Նախարարութիւն ստացան իրանց ծառայութեան համար, ինչպէս թագաւորի մերձաւոր մարդիկ։ Աղաղաշակ պատրաստեց չորս գունդ, պալատը պահպանելու համար, որոնք ամէնքը զինավառեալ մարդիկ էին և ձայկազունի թագաւորաց ցեղից, ու

(1) Բնովմա Արծունին Գինը Ա. Դ. Ջ. երեք զանազան կարծիք և մէջ բերում էս ազգի ծագման համար, որ թէպէտ մի առանձին պաշտօն չունէին, բայց Ա առպարական մեծ նահանգին տիրեցվ էին առաջին նախարարական ցեղերից մէկը, որոնք վերջը հաստն թագաւորական աստիճանի։ Ժ. Ե. գարումը նրանք թողին իրենց ժառանգութիւնը՝ Ա ասպարական նահանգը Վ ասիլ կայսերը, ստանալով նորա փոխանակ փոքր ձայսատանի Արքաստիա քաղաքը։ Բնովմա Արծունի, Գինը Ա. Դ. Գինը Գ. Ա. Ջ. Բ. Պ. Գ. Գինը Ե. Դ. Գ. Յովհաննէս Կաթողիկոս։ Լ աստիվերտացի։ Բացի այս պալատական ծառայութիւնից Արծունեաց ազգից մի քանի մարդիկ ստացան գլխաւոր զօրապետութիւն և ուրիշ կառավարչական (адミニստրատիվնայ) պաշտօններ։ Խորենացի, Գինը Բ. Դ. Ժ. Ֆ. Փաւառու Բիւզանդացի, Գինը Դ. Դ. Բ.

(2) Գնունեաց ցեղին էր պատկանում Տուրուբերան նահանդի Աղեղովիտ քաւառը

լոնք զանազան ժամանակում ստացել էին իրանց հայրերից ժառանգութիւն գեղեր և աւաններ: Իս տեղ, ինչպէս ես լսում, ասում են, թէ Պարսից թագաւորութեան ժամանակ օտարներից գնդեր էին բաղկացել և կոչուել Աստան: Զգիտեմ, վերջացել էր առաջուան ցեղը կամ թէ մէկ յարձակմանց պատճառաւ ջնջուել էր և նրա փոխանակ կաղմուել են գնդեր ուրիշներից, թագաւորական անունով: Բայց առաջինները հասաւասպէս գուրս էին եկած մեր առաջին թագաւորաց ցեղերիցն, ինչպէս Արաստանումն էլ կոչուում էին Ահեծուղ (1): Վաղարշակ հրամայում է նոյնազէս ներքինացնել այն ազգիցը, նրանց նահապետ նշանակելով Հայք՝ Ետրպատականից մինչեւ Շուաշի և Կախճաւանի կողմանց իշխանին: Բայց ի՞նչպէս և ո՞ր տեղ էին կատարուում էս Հայք իշխանի գործքերը, չզիտեմ, որովհետեւ ոչ մի տեղ չէ նշանակած (2): Կերքինեաց կառավարիչը բացի Հայք կոչուելուց (Տաճ. բարայ), կոչուում էր և հայութեան (3): Իս ծառայութիւնը ժառանգական չէր ոչ մի ազգի, բայց մարդպետը նախարարաց կարգումը մի բարձր տեղ ունէր: Մարդպետի բնակարանը (քանձութակ) կոչուում էր Աստան (պալատ), այսպէս կոչուեցաւ և վերջին ժամանակն ուրիշ նախարարաց բնակուելու տեղը էլ (4): “ Բայց մենք մոռացանք, ասում է Մովսէս Խորենացին, սարսափելի Ալաքին, որ իսկապէս չեմ կարող ասել, Հայկիցն էր, թէ նրանից առաջ եղածներից,

(1) Կանոնաւոր գրուում է Արեծուղի, սեփե նշանակում է պալատ, թագաւոր, ծուլի որդի:

(2) Մովսէս Խորենացի, Գիւք Եւ Կւ Իս:

(3) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Գւ Կւ Իս, Բի Ճիւք Եւ Կւ: Օչ Եւ Մովսէս Խորենացի Գիւք Գւ Կւ Ճիւք:

(4) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Եւ Կւ ԼՊ:

որոնց համար հին գրոյցն ասում է, թէ կային։
Նա շատ քաջ մարդ էր, որան Ա աղարշակը քիչ
մարդով նշանակում է պահել լեռները և այսու¹
խայրի այծերը։ Նրանք կոչուեցան Ալկունիք. այսպի-
սի պաշտօն ստացու և Միանդակ անյաղթելին,
որից ծագեցան Մանդակունիք (1)։

Ա աղարշակ նշանակում է երկու յիշեցնողներ,
որոնք պարտական էին գրով յիշել նրան, մինը
բարեգործութիւնը միւսը վրէժինդրութիւնը։ Բա-
րեգործութիւնը յիշեղին հրամայում է թագաւորի
բարկութեան կամ անիրաւ բան հրամայելու ժա-
մանակը յիշել ճշմարտութիւնն և մարդասիրու-
թիւնը (2)։

Լա կարգադրութեան մեջ անկարելի է չնշմա-
րել քաղաքական գողափարը, որ Ա աղարշակն
ունեցել է իր տնօրէնութեանց մեջ։ Արան շըջա-
պատումնեն անդէտ մարդիկը, որոնք պարտական
էին նրան իրանց մեծութեամբն, որոնք մեծ մա-

- (1) Մավակս Խորենացի, Գիրք Բ. գլ. Բ. Ալկունեաց
ցեղը մատնողութեան համար կոտորուեցաւ Տրդատայ ժամա-
նակն և նրանց ժաւանդական կայրը՝ Տարօնու երկիրը ստա-
ցան Մամիկոնեանք։ Խորենացի, Գիրք Բ. գլ. ԶԵՌ
Մանդակունեաց ցեղը կոտորուեցաւ նոյնպէս թագաւորական
տան վերայ ունեցած հաւատարմութեան համար, որովհետեւ
երբ որ Խորովը սպանուում է Վահկից, որ ուղարկուած էր
Արտաշէր Պարսից թագաւորից, որ տիրումէ Հայաստանին
և հրամայումէ ուորը քաշել բոլոր թագաւորական ցեղը, էն
ժամանակն Արտաւագդ Մանդակունին ազատումէ Տրդատին
Խորովի որդւոյն, փախցնելով նրան Հռովմայեցոց թագա-
ւորութիւնը։ Արտաշէր այս բանս լսելով, հրամայումէ չնշել
բոլոր Մանդակունիներին . . . և բոլորը սուրը քաշուեցան։
Արտաւագդի քոյրերից մեկը շատ գեղեցիկ աղջիկ լինելով,
յափշտակուեցաւ Տաճառ անունով մեկից, որ Աշոցան աղ-
ջիցն էր՝ Գուշար Հայկաղնոյ զաւակներից, և տարուեցաւ
կեսարիա ու այսպէս աղատուեցաւ։ Տաճառ ամուսնացաւ նո-
րա հետ՝ միբահարուած նրա անչափ զեղեցկութիւնից։ Խո-
րենացի, Գիրք Բ. գլ. ԱՅ Այն աղջկայ ցեղը կոչուեցան
Մանդակունիք, թէպէտ շատ քիչ է յիշուում վեջերում։
(2) Մավակս Խորենացի, Գիրք Բ. գլ. Բ.

սամբ Հայկական ծագումից չէին. ինչպէս երևում է, նա շատ չէր հաւատում ժողովրդին և նրանց առաջնորդներին, որոնք Հայկայ սերնդիցն էին, որոնք չետեւ ցանկալով ընդհանրութիւն (պոպուլարութեան) դանել, ընդհամուր անուն Ճարել, շրջապատում է իրեն թիկնապահներով Հայկայ ցեղից, բայց նրանց գլխաւոր նշանակում է Մաղլսազ անունով մէկին. պալատական գունդերն էլ, որոնք սկզբումը Հայկայ ցեղիցն էին, վերջումն էնապիսի մարդիկ էին, որոնց թագաւորական ծագման վերայ կասկածում է Մովսէս Խորենացին:

Յեշենք մենք և այն պալատական աստիճանները, որ Ապարշակը ՀՀաստատեց, բայց յիշուումնն միայն Արշակունեաց ուրիշ թագաւորայ ժամանակը. «Օքնանիչ, որ կարծեօք պէտք է լինէր Մամիկոնեան ազգից, սրա համար յիշուում է Արշակ թագաւորի ժամանակը (1). Աւելի այէտ, (2) սորա պարտաւորութիւնն էր առնել նադառութեան առաջ: Փաւստոս Ռիւզանդացին այսպէս է պատմում, « թէ Արշակ թագաւորը վերցրեց թագաւորական սուրն և աղեղը, որ տունց նրան « Արշամէր՝ սենեկապետ լինելով (3). Մեսրով տալիս է նրան գանձապահութիւնն և թագաւորի կնիքը պահպանելը (4): Պատճառութեան (5). Հապալատական, արդուունի առն վերակացուած (6). Խորենացին ասում է. « Արտաշէսը կարգում է հաղարատած իմաստուն և բանաստեղծ Արոյրին և հաւատում է

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 7L. ԻԲ. ԻԵ.

(2) Փաւստոս Ռիւզանդացի, Գիրք Բ. 7L. Ի.

(3) Գիրք Գ. 7L. Գ.

(4) Մեսրով, Գ. Ե. Օ.

(5) Փաւստոս Ռիւզանդացի, Գիրք Գ. 7L. ԺԵ:

(6) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 7L. ԺԳ. Գիրք Գ.

7L. ԱՅ. Փաւստոս Ռիւզանդացի, Գիրք Գ. 7L. Բ:

նրան բոլոր արքունիքը „ Քարտուղար, այսպէս
Մեսրոփ, կրթուած և սովորած լինելով Մեծին
Ներսիսի մօա, նրա մահից յետոյ կարգուում է
քարտուղար արքունի դրանը . . . (Վ ռ.ամշա-
պուհը) շատ նեղութիւն է կրում քարտուղարի
համար, որովհետեւ Մեսրոփի գնալուց յետոյ ար-
քունի դռնիցը մի ճարտար դպիր չի գտնումիրեն
համար. (1): Ազաթանգեղոսը յիշում է և պա-
լատական աստիճանը Ծահաղ, Եղիշէն և Մես-
րովին էլ Ծահ—Ըստապէտ (2). բայց առ հասա-
րակ դժուար է ճշառութեամբ վճռել Հին Հայաս-
տանի ժամանակուայ աստիճանաց և ծառայու-
թեանց նշանակութիւնը :

Եթր որ Հայոց թագաւորներն ընդունեցին քրիս-
տոնէութիւնն, էն ժամանակը պալատական աստի-
ճանաց մէջն էլ մատան դրան էրեցունիւնն (3) և
Եղիշէուպունիւնն (4): Ուրեմն պալատական
ծառայութեանց մեծ մասն, ինչպէս մենք տեսանք,
ժառանգական էին և երեկոյի նախարարական ցե-
ղերին էին պատկանում և միայն յանցանքն ու թա-
գաւորի բարկութիւնը զրկում էր մի որդու իր հօր
պաշտօնից:

ԽնԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԹԱԳԱԽՈՐԱՅ ՈՒՐԻՇ ԱՐՔՈՒՆԻՔ-
ՆԵՐԻ ՀԵՏ: Հայոց թագաւորները իրենց ամուսին
ընարելուս իննամութիւն էին անում մերձակայ
տէրութեանց և թագաւորութեանց հետ Խորե-
նացին պատմում է, թէ Արտաշէս Բ. ամուսնաւ

(1) Մովսէս Խորենացի, Գիւքք Գև 42. Խէ, Թբ.

(2) Եղիշէ, երես 174:

(3) Փաւասոս Ծիրզանդացի, Գիւքք Գև 42. Ժէ Արտա-

հոս: Դ ազար Փարպեցի, երես 129:

(4) Մատթէոս, երես 143: Արտակոս:

Յաւ Սաթինիկ Ալանաց թագաւորի աղջկայ հետ
Սմբաթ Առի կինը ըստ վկայութեան Յովհաննէտ
Կալժուղիկոսի, Խոգերացւոց թագաւորի աղջիցն էր։
Երասմ Հշոտ Բ-ի եղբայրը ամուսնացաւ Ափիսա-
պաց Գուրգէն մեծ իշխանի աղջկայ հետ, որ Աքաջ
Առիներսէ թագաւորի քրոջ որդին էր։ Արշա-
կունեաց մի քանի թագաւորները խնամութիւն
արին և Հռովմայեցւոց կայսերաց հետ։ Արտա-
շէս Ա-ը Եր Արտաշամայ աղջիկը տալիս է կին
մէկ Միհրդատ Աքաջ բրեշնի, որ Դարեհինախոս-
քար Միհրդատի զաւակիցն էր, որին Աղէքսանդր
Մակեդոնացին կարգել էր Աքաջւոց գերիների վե-
րայ (1)։

ՀԱՐՍԱՆԻՔԻ ԾԿԸՆԸԸԸ Առվաշէս Խորենացին պատշ
մելով Արտաշէս Բ-ի հարսանիքն Ալանաց թա-
գաւորի Սաթինիկ աղջկայ հետ, ասում է. « սո-
վորութիւն էր թագաւորաց մշ, երբ որ վեսայոււ-
թեան ժամանակ տաճարի գուռու կը հասնէին, վոռ-
դեր էին շաղտալի, ինչպէս Հռովմայեցւոց հիւպա-
տոսներն. էնպէս Էլ թագուհիքն իրենց տուազաս-
տումը մարդարիտ էին շաղտալի (2): Խորենացին

(1) Առվաշէս Խորենացի, Գնիք Բ- ու Ռ- մ- Ժ- Ա-։

(2) Այս սովորութիւնը մինչեւ հիմա կայ Գուրգայու ծայե-
րի մշ (Ապահանու մօտ), երբ որ պատկուածներն եկեղեցուց
պատում են նուն, վեսայի գրան մօտ շալ են տալի նորաւ-
պատիների վերայ մանը արծաթի գրամմէր, երբեմն ևս ոսկի՝
համեմատ իրենց կարողութեան, իսկ ով որ արծաթ և ոսկի
շունի, շաքարեղէն և շաղտալի։ Օանօթ. Պ. Խմինի, Խորե-
նացու թագմանութեան մշ երես 297։

Հին ժամանակը Ուսաց իշխաններին էլ այդ կերպով
կիմաւորում էին. պատմութիւն Ուսաց Տերութեան։ Գու-
գունովի թագաւոր պատկուիլ։ Օանօթ. Հեղ։

Հայաստանումն այդ սովորութիւնը մինչեւ հիմա էլ կայ,
էս տեղ գրան ոչ թէ շաղ են տալի, այլ բարեկամքն են ըն-
ծայում. իսկ շաքարեղէնի փոխանակ իւղ և մեղս են պատիտ
տալի նորապատակների գլխին։ Օանօթ. Ցարդ։

էս մեկնութիւն է բերում զաղթան երգին, որ գեռ
երգուում էր ժողովրդի մէջ. “ Ոսկի անձրեւ էր
գալիս Արտաշեսի փեսայութեան ժամանակը, մարտ
հարտի անձրեւ էր գալիս Ապթինկի հարսնութեան
ժամանակը (1):

Քրիստոնէութեան ժամանակ թագաւորաց հար-
սանիքի ժամանակ, թագուհու զլսին թագ էին
դնում և ծիրանի էին հազցնում նրան, ինչպէս
վկայումէ Մովսէս Խորենացին. “ գալով Տրդատը
մեր աշխարհն, ուղարկում է Սմբատ ասպետին՝
Բագարատի հօրը բերել աշխէն կյամին՝ Աշխա-
դարայ աղջկանը իրա կնութեան համար, որի հա-
սակն ոչինչով չէր պակասիլ թագաւորի հասակիցն
և հրամայում է Արշակունի զրելնրան և ծիրանի
հազցնել և թագ դնել զլսին, որ ամուսին լինի
թագաւորի (2):

ԲԱԶՄԱԿԱՌԻԹԻՒՆ. Հեթանոսութեան ժամանակը
մեր թագաւորաց մէջ բազմակնութիւն լինելու սո-
վորութիւնը յայտնում է Մովսէս Խորենացին Ա-
պյափէս. “ Աբգարի կանանցից զլսաւորին, որի
անունն էր Հեղինէ, ուղարկեց իր քաղաքը (3).
Բ. Ապթինիկն առաջնոր լինելով Արտաշէսի կո-
նանցիցը, ծնում է նրան համար Արտաւազ-
դին ” (4).

ԱՌԱՐՈՒԹԻՒՆ. ԹԱԴԱԿԱՊՐԱՅ ԹԱՐՄԱԿ ԺԱՄԱՆՎ
Մովսէս Խորենացին Արտաշէսի պատմութեան մէջ
շատ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. 3:

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. 29:

(3) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. 13:

(4) Մովսէս Խորենացի. Գիրք Բ. 42. 3:

մեզ Հայոց կռապաշտ թագաւորաց թաղման սու
վորութեան մասին. “Արիստան Փեղլացին, ա-
սում է նա, գեղեցիկ նկարագրում է Արտաշէսի
մահը” շատ մարդիկ մեռան Արտաշէսի
մահուան ժամանակ, սիրելի կանայք և աղախինք
և հաւատարիմ ծառայք, և ո՞րպիսի թաղման հան-
դէս կատարեցին մարմինը պատուելու համար, ո՞չ
թէ բարբարոսի նման, այլ քաղաքական հարկով.
Դագաղն ոսկեղէն էր, գահն և անկողինը բեհե-
զից և պատմուժանը, որ մարմնոյ վերայ ձգած էր,
ոսկեթել էր, թաղը զրած զիսին և զէնքն էլ ոսկ-
ւով պատած՝ առաջն էր զրած, նրա զահի չորս
կողմն էլ որդիքն ու ազգականները, սրանց մօտ էլ
զինուորական պաշտօնեայքը, նահապետները, նա-
խարարաց բազմութիւնն և միանգամբյն զօրաց
գնդերն զինաւորուած, որպէս թէ պատերազմի են
պատրաստուում։ Առաջին էլ պղնձեայ փողեր էին
հնչում և յետնուց սև հագած ողբացող կու-
սանքն և սուգ անող կանայք, նրանց նտեիցն էլ
ռամիկների բազմութիւնն. և էսպէս տարան թա-
զեցին և գերեզմանի վերայ շատ յօժարակամ մեռ-
նողներ եղան (1)։ Առենք ունինք նոյնպէս Հայոց

(1) Առվակս Խորենացի, Գիեք Բ. Գ. Ա. Կ. Առապաշտու-
թեան ժամանակ թաղման ժամանակը լինում էին յօժարա-
կամ ինքնասպանութիւններ, մազերը պոկտում էին, ճակա-
ները ջարդում էին և երեսները չանկռում։ Քրիստոնէու-
թեան ժամանակը Ներսէս կամուզիկոսը ժողովքի մեջ բա-
նագրեց սպառնալիքներով և արդելց էս հեթանոսական սո-
վորութիւնը, բայց նրա մահից յետոյ կրկին վերանորոգեցին,
ինչպէս երեսում է Ժաւատոս Շիւզանգայու այս հետեւալ
խոսքերից։ “Եթէ մէկը յանկարծ մեռնում էր, ոչ ոք չէր
համարձակում յուսահատութեամբ ընդդէմ եկեղեցւոյ կա-
նոնաց լալ մեռելի համար, չանկռել երեսն և աղաղակել
(Ներսեսի ժամանակը), բայց միայն լալին էին՝ սաղմոններ և
շարականներ երգելով և վաւած ջահերով և մոմերով ուղե-
կից էին լինում հանգուցելոյն . . . իսկ Ներսիսի մահից յետոյ

քրիստոնեայ թագաւորաց թաղման նկարագրուած
թիւնը, որ ինչպէս կրում է աւելի շքեղուած
թեամբ է կատարուել : Այսպէս է Տրդատայ թաղ-
ման հանդէսի նկարագրութիւնը, «վեր կազմն տառ-
քան նրան թարգան, արծաթապատ դագաղի մէջ,
որի վերայ Ծած էին ոսկեսանձ ջորիներ և զա-
գաղն էլ զարդարած էր գոյն գոյն ծածկացներով
և զօրքն էլ այս և այն կողմից զինառուած
դրօշակներով . իսկ գագաղի առաջին Աստուա-
ծային շարականներ էին երդում և խունկ էին
ծխում, իսկ նրա մօտը բարեկամները, սիրելիներն,
ընտանիքն և նրա որդիկներից շատերը ոտով
գնում էին և դագաղից յետոյ փողերն ու ողբոց աս-
ւիղներն էին հնչում և ողբասաց կուսանքն էին
գնում, նոյնպէս և անթիւ բաղմութիւնն առմ-
կաց : Եւ այսպէս հասան էն տեղը, որ շինած էր
թագաւորական տապանը մաքմաքիոնից, վրէն էլ
շուշայ ձգած և զնելով նրա մէջ այն պատուա-
կան գանձն, անուշահոտ նօւերքը և մէծ աշխա-
տաւորը՝ թաղեցին նրան մեծին Գրիգորի զքուա-
նիոյ տեղումը, որ նա պարիսպ քաշելով անուա-
նեց իրա պարաեզր , , :

Յովհաննէս Կաթուղիկոսն այս խօսքերովն է

Երբ որ ողբում էին ննջեցելոց վերայ, արք և կանայք սուռ
էին անում փողելով, կիթառներով և քնարներով, ճղճղատ-
ուած ձեռներով և երեսներով և զղուելի ու գարշելի կերպին
Քրար ընդգէմ թռչուալով, ծափ էին տալի և այսպէս ուղե-
ւորում էին ննջեցելոցը , , :

Մովսէս Խորենացին ասում է, թէ «Աերսէս չնջեց նախա-
քարաց միջեց երկու բան. առաջին՝ աղգականաց միջեց չհասու-
թիւնը, որ պահում էին իրենց իշխանական ցեղերը չնջուելու
համար, երկրորդ՝ ինքնակամ սպանութիւնները, որ լինում
էին մեռածների վերայ լսա հեթանոսական սովորութեանը»:
Վիքք Գ. Ք. Խ.

նկարագրում Աշոտ Ա. Բագրատունի թաղաւորի թաղումն: “Եւ որովհետեւ, ասում է նա, ճանապարհին Քատասպար կոչուած ապառաժոտ իջևանումը պատահեց նրա մահը, վերիաւան նրան դադաղով և տարան նրա թագաւորանիստ Քաղաքան աւանը, դադաղը զնորդարելով ոսկեզարդ ծածկոցներով. զօրքն զենաւորածուած մեծ ղարդարանքով և զրօշակներով, շրջապատել էին մեծ Արթուղիկոսին. միւս եկեղեցւոյ կղերն էլ առաջին գնալով, սաղմոս և օրհնուաթիւններ էին երգում. իսկ նրա երեք որդիքը, պալատի մեծամեծներն և միւս բարեկամները զնում էին դադաղի ետեից . . . էսպէս աեղ հասան: Իստեղ պէտք էր տեսնել ողբացող կուսանաց արտասուալից հառաջանքներն և կանանց, տիկինների և ռամիկների լացուկոծը, Յետոյ շինելով թագաւորական տապան, թաղեցին նրան իր հայրերի հանգըստարանումն: Այս յուղարկութեան մեջ պատմիը չի յիշում փող կամ քնար հնչիլն, այն ինչ այս սովորութիւնը գեռ կար այն ժամանակն, ինչ պէս Ստեփաննոս Օրբելեանի այս պատմութիւնից երեսում է. “Արևնեաց մեծ իշխանը՝ Գարսուար մեռնում է պատանեկութեան մեջ . . . յետոյ երանելի Տիկին Մարիամը վերցնելով նրա մարմինը, զարդարում է թագաւորական զարդերով, անթիւ ժողովզդով, աղաղակներով, փողահարների ու քնարածուների ողբերգական պարերով: Օաքարիսյ Արթուղիկոսի հետը տանում թաղում են իր հայրերի հանգստարանումը,, (1):

Այս իսկ բառերով, համարեա, խօսումէ Օրբելեանն Աշոտ Արևնեաց իշխանի թաղման համար,

(1) Ստեփաննոս Օրբելեան, թլ. Լ. Հ.

որ մեռաւ Յուսուփի Ոստիկանի ժամանակը. “ Մեծ
Ավանեաց նախարարն ու զահիրէց Աշոան իր շատ
քաջագործութիւններից յետոյ վախճանումէ, իսկ
նրա բարեպաշտուհի և կանանց մէջ անհամեմատ
Ըուշան կինը զարդարելով նորա մարմինը թագաւ
ռորական ձեռվ, անթիւ ժողովրդով, դամբանական
փողերով և ողբերգական քնարահարութիւնով
թաղում է,, (1):

Մարմինը զմռասելու սովորութիւն լինելը, երբ որ
պէտք էր տանէին մէկ տեղից միւս տեղ, երեսումէ
Ատեփաննոս Օրբելեանի այս խօսքերիցն. “ Թաւ
փառականութեան և հեռաւաւրութեան մէջ մեռ
նումէ նրանց մայրն՝ երանելի Տիկին Մարիամը,
որի մարմինը զմռասելով՝ զնում են փայտեայ տա-
պանի մէջ և պահում են մինչև օրն իրենց
գալը . . . սոցա յետ դառնալուց յետոյ շքեղ
հանդիսով և անթիւ բազմութեամբ ժողովրդոց
թաղում են իրենց մօրը նրա շինած եկեղեցւոց
մօս (2):

(1) Հողեռականաց թաղման ժամանակ յիշուռում են մա-
մբ և կանթեղներու փաւաստոս Ռիւզանգային այսպէս է նկա-
րագրում Վրդանէս Կաթուղիկոսի թաղումը. “ որանից յե-
տոյ փոխուեցաւ աշխարհքից Վրդանէս մեծ քահանայա-
պեաը. բոլոր Հայոց աշխարհքը ժողովեցաւ և մեծ պաշտա-
մամբ, սազմոններով, հոգեւոր երգերով, կանթեղներով, մո-
մերով և խնկարկութեամբ, արքունական կառքով յուզարկա-
ւորեցին սուրբ Վրդանէսին մեծ տիւրութեամբ թարդան գիւղը
Դարանազեաց գաւառումը ” Գիւղը Գու Գլ. Ժ. Ե. Այսպէս
Կորին պատմիչի վկայութեամբ, Վահան Ամատունին կա-
տարեց սուրբ Մերօքի թաղումը ” անթիւ ժողովրդով ..
եկեղեցական երգերով, վառած կանթեղներով և ճրագներով
բոլոր զօրաց ներկայութեամբ:

(2) Այսպէս զմռասած էր Խառհակ Կաթուղիկոսի մարմինը,
որ մեռաւ Խառանումը, որ տեղից պէտք է բերէին Հայուսա-

Անեւ ՀԱԴՆԻԸ. Յովհաննէս Կոյժուղիկոսը պատումում է, թէ “ Սմբատ իր Աշոտ Ե. հօր մահից յետոյ սև հագաւ և Սովորակէհ Աքաց իշխանը պատահում է Սմբատին, հաղցնում է նրան թագաւորական զգեստն և հանում է նրանից սեփ շորերը,, : Բայտ ասութեան թառվմայ Արծրունւոյ, երբ որ հրաշագեղ Սովիա Տէկինը լսում է իր մարդի՝ Գրիգոր Դերաննիի մահն, ընկնումէ երեսի վերայ գետին, մոխիր է ցանում զլսին, խաւարացնումէ պարագար, այսինքն՝ իշխանի սենեակն եղէն ձգերով իր մարդարտով զարդարուած պատուոյ քօղը, հագնում է սև շորեր, պատրաստում է իր զլիսի համար թուխ քօղ, կանչում է ողբացող աղջկանցը, հրամայում է նրանց լաց լինիլ և կարգելով Խրայեցւոց երդիչներ, նորոգել է տալիս Խարայէլայեցւոց թագաւորների ողբերը (1):

Զի կարելի ծշտութեամբ նշանակել միջոցը, թէ որպան ժամանակ սև էին հաղնում մեռած թագաւորի համար, որովհետեւ թառվմայ Արծրունին ասում է, թէ “ նրա մեռնելու օրը Գուրգէնի”

առան. “ հրամայեց բերել սոկեհուռ շորեր և անուշահոս իւղ և զմռսեց սրբոյ մարմինը և պատրաստելով կառք և սպիտակ ջորիներ, ուղարկեց պայտասանն ” :

Այսոց մի քանի հեղինակների խօսքով կարելի է հաւատ ընծայել, թէ թաղում էին թանգագին հանդերձներով. նաև թաղում էին մարմնոց հետ ոսկի և ոսկեղին իրեր, որովհետեւ երբ որ Պարսիկները պահանջեցին Ա ասակից սոկի, էն ժամանակը “ ուզում էին փորել գերեզմանները ” , ասում է Կշեշէն. այսպէս ։ գարումը Արաբացւոց շահամոլութիւնը լցնելու համար փորում էին մեռածների գերեզմաններն և հանելով էն տեղեց սոկի, տալիս էին նրանց ” : Այս սովորութիւնն Աղուանից մէջ էլ լինիլ և մինչեւ հիմա մի քանի Չերքէղների ցեղերի մէջ պահուիլ հաստատում է Ատրաբոնը: Ատրաբոն, Գիւք Ժ. երես 503:

(1) Երբ որ Գլին քաղաքում երկրաշարժութիւնից ջընչ ուեցան շատ բնակիչներ, մնացածներից մեծ մանը սև հագան-

(Գաղղիկ Արծրունի թագաւորի եղբօր) մեծ սույն եղաւ բոլոր հայաստանումն և (Գաղղիկ թագաւորը 40 օր շատ մեծ սուդ արեց նրա համար,, (1):

Հեթուամ՝ թագաւորի մահից յետոյ, նորա որդի Լեռնը, բատ վկայութեան Ապահամի, սուդ պահից երեք ամիս, “բայց երբ որ Դերանեկը մեռաւ, Եշտ Եւ թագաւորի և Գեորգ Կաթուղիկոսի ժամանակ, նորա եղբայրը՝ Գրիգոր Ապահուրականի իշխանը ժողովելով բոլոր Ապահուրական երկիրը, քառան ամիս սուդ արեց նրա համար,, (2):

Խորենացու հետեւեալ Խօսքերից երեւում է, որ սովորութիւն է եղել մահարձան կանգնացնել թագաւորաց գերեզմանների վերայ. նա և ասում է, Երտաշէս թագաւորը յիշելով, որ Երուանդն Երշակունեաց ապահան է, հրամայում է նորա մարմինը թաղել և մահարձան կանգնացնել նորա վերայ (3):

Հայոց և օտարաց հեղինակները շատ գովում

“Ես չեմ ասում աղքականաց համար, շարունակում է Յովհաննէս Կաթուղիկոսն . . . երգեցիկ կուսանաց աղիուղորմ ձայներն և աւ հագած կանաց ու վշտակ աղաղակով սուդ անող մարդկանց ձայնը մինչև երկինքն եին հառանում:

(1) Խորենա Արծրունի, Գերք Եւ Գլ. Եւ:

(2) Խորենա Արծրունի, Գերք Գւ. Գլ. Բւ:

Հետեւեալ պատմաբանների Խօսքերից կարելի է ասել, որ այստանումը կար արքից օձիքը (եախայ) պատռելու սովորութիւնն ի նշան ախրութեան. Եդաթանգեղոս ասում է, թէ “երբ որ երանելին Գրիգոր Խօսեց այս ամինը, բոլորը ձեռքները փեշերը ձգած՝ պատմուանները պատռում էին ”: Եշտէն ել ասում է. Գոտժկան հասաւ Հայոց աշխարհից ճակատը ջարդելով և օձիքը պատռելով ապստամբ Վասիլի համար ”: Աղաթանգեղոս, երես 177: Եշտէն երես 135 :

(3) Վական Խորենացի, Գերք Բւ. Գլ. Խ.Օ:

Ես Արդար թագաւորի ամսաւին Հեղինէ թագուհէ և ոյ շերիմը, որ դեռ մնում էր Խորենացու ժամանակը. “Հեղինէն, ասում է Խորենացին, բարեպաշտ լինելով իր մարդ Արդարի պէս, չկարողացաւ կռապաշտից մէջ բնակուիլ, այլ զնաց Խրուսաղէմ որի երևելի շերիմը մինչև այսօր կայ Խրուսաղէմումը զրան առաջին” (1): Պաւսնիած Յոյն պատմիչը մի քանի տեղեկութիւններ է հայորդում մեղ Հեղինէի շերմի համար, “Ես շատ արժանաւոր շերիմներ գիտեմ, ասում է նա, միայն էս տեղ նրանցից երկուսն եմ յիշում, մէկը Աղեղանեայումն և միւսը Հրէաստանումը Հեղինէ թագուհէոյ հրաշակերտ շերիմը, նրա դուռն ինչպէս և միւս մասերը մարմարեայ էր (2): “Ալս համար յիշում է նոյնպէս և Յովսէփոս (3): Լեռն մանրամասնաբար նկարագրումէ այս շերիմը՝ պատկրն էլ զնելով:

Թու Ի՞՞Չ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՐ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՐԱՔՈՒԹԻՒՆԸ ՕՏԱՐ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԷջ: Հայաստունը իր քաղաքական կննաց առաջին ժամանակներումն իր առաջին թագաւորաց ժամանակը համարուում էր երկրորդակարդ տէրութիւն կամ պարզ ասել երկրորդ՝ իր հզօր մերձակայ տէրութիւններից յետոյ, որոնք էին Ասորիք և Պարսիկները: Արամյաղթեց Արաց “Աիւքար—Աղէս իշխանին,

(1) Առաջին Խորենացի, Գիւքը Բ. Գլ. Լ. Օ.

(2) Պաւսնիած, Գիւքը Ը.

(3) Յովսէփոս, Գիւքը Խ. Գլ. Դ.

Փաւստոս Խիւզանդացին յիշում է այն գեղեցիկ շերիմը, որ կանգնեցին Փառէն կաթուղիկոսի գերեզմանի վերայ, Գիւքը Գ. Գլ. Ժ. Օ.:

Հարկատու արեց նրա երկիրը մինչև Օպառապ
լեռն և լինելով իր բոլոր մերձակայ տէրութիւն-
ներից հզօր, ստացաւ նախագահութիւն ուրիշ
տէրութեանց վերայ, բայց այս նախագահութիւնը
մնաց Հայտատան մինչև «Սինոսի ժամանակը», որ
կամեցաւ իր Տէլ նախահօր վրէմն առնել Հայե-
րից, որին սպանել եր Հայկը «և ջնջել բոլոր
Հայկայ սերունդներին». բայց սրտումն երկիւղ
ունենալով, ծածկում է իր չարութիւնը, հրա-
մայում է մեր Արամին վարել իր իշխանութիւնն
անկասկած և իրաւունք է տալիս նրան մարդարտէ
վարսակալ դնել զլիսին և իրենից երկրորդ կոչ-
ուիլ» (1): Այս երկրորդականութիւնը պահեց և
Արայ. ինչպէս Խորենացին ասում է, թէ «Արայ
մի քանի տարի «Սինոսի վախճանելուց առաջ կա-
ռավարեց իր հայրենիքը միննոյն յարդանք ընդու-
նելով «Սինոսից, ինչոր ուներ իր հայր Արա-
մը», (2): Արշակունեաց թագաւորելուց յետոյ
Հայոց գահը համարում էր երկրորդ՝ որովհետեւ
Արշակունեաց ցեղը չորս ճիւղը բաժանուեց, Ար-
շակունիք Պարթևաց, Հայոց, Հնդկաց և Ապա-
քըթաց (3). բոլոր Արշակունեաց մէջ առաջին
տեղին ուներ Պարսից թագաւորը, որ կոչում
էր թագաւոր թագաւորաց և տիրում էր բոլոր
Պարսկաստանին (4): Երկրորդ տեղը պատկանում
էր Հայոց թագաւորին, որ տիրում էր Հայա-
տանի վերայ, երկրորդ Արշակունի կոչմամբ.
Հնդկաստանի Արշակունիք ունին երրորդ տեղը

(1) Մոլսէս Խորենացի, Գիւք Ա. Գլ. ԺԳ:

(2) Մոլսէս Խորենացի, Գիւք Ա. Գլ. ԺԵ:

(3) Կանոթոթիւն, Պ. Ամինի Խորենացւոյ ուսւերէն թարգ-
մանութեան մէջ, երես 278:

(4) Եղաթանգեղը, երես 25—37: անդ ևս :

և թագաւորում էին Շակարեայումը, որոնց Հայ
մատենագիրները կոչումնեն Վուշանաց թագաւորք։
Չորրորդ ճիւղը Արշակունեաց թագաւորում էր
Կասպից և Աւե ծովերից գէպի հիւսիս. Փաւս-
տոս Հիւզանդացին էս ճիւղը կոչումէ Սաղքթաց
Արշակունիք, որոնք միենոյն ծագութն ունեին, ինչ
որ Հայոց Արշակունիքը (1): Արտաշէս Հայոց
թագաւորը յառաջադէմ լինելով, չի բաւականա-
նում երկրորդականութեամբ և որոնում է նախա-
գահութիւն, որին համաձայնումէ Արշական (Պար-
սից թագաւորին) և տալիս է նախագահութիւնը,
որովհետեւ Արտաշէսն էր հպարտ և պատերազմակը,
որ իր համար արքունիք շինեց Պարսից աշխար-
հութն և իր պատկերով առանձին զրամ կտրեց և
Արշականին իր ձեռքի տակն առաւ (2): Այս
նախագահութիւնը մնումէ միայն Արտաշէսի ժա-
մանակը, որովհետեւ նորա որդին և յաջորդը Տիգ-
րան Բ. “Հրաւիրումէ ՚ի փոխադարձ սէր Ար-
տաշէս Պարսից թագաւորին, որ զրկուել էր նա-
խագահութիւնից իր հօր հպարտութեամբը. իսկ
ինքը՝ Տիգրանը իր կամքով երկրորդական տեղն է
ընդունում՝ յետ դարձնելով նրան առաջնական
գահը (3): Այսպէս շարունակուեց երկար ժամա-
նակ, մինչև Արշակունեաց վերջին ժամանակներն։
Ագաթանգեղոս ասումէ, թէ “ երբ որ Արտաւան
Պարսից թագաւորի մահից յետոյ այս զահը հա-
սաւ Խոսրով Հայոց թագաւորին, որ երեսորդն էր
Պարսից աէրունիւնից, որովհետեւ ով որ Հայոց թա-
գաւոր էր, նա Պարսից տէրութիւնից երկրորդ էր (4):

(1) Գիւք Գ. Գլ. Օ. Ե.

(2) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Գլ. Ժ. Ե.

(3) Մովսէս Խորենացի, Գիւք Բ. Գլ. Ժ. Ե.

(4) Արթանգեղոս, երես 26.

ՀաՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՐՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ՝
ԶԱԿԱՑ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ: Ա.) ՅԱՐՄԲԵՐՈՒԹԻՒՆ
ՊԱՐՄԻՑ ՀԵՏ: Հայաստանի բարեկամական յարա-
բերութիւնը Պարսկաստանի հետ սկսում է Պար-
սից տէրութեան հիմնարկութիւնից. Աիւրոս բա-
րեկամական հաւատարմութիւն ունելով Հայոց
մեծ Տիգրանի հետ, նորա օգնութեամբը յաղթեց
Աժդահակ Մարաց թագաւորին: Խորենացին ա-
սումէ, թէ “ այսպիսի մտածմանց պատճառը (այ-
սինքն Աժդահակի այսպիսի երկիւղի և կասկածի
պատճառն էր) Աիւրոսի և Տիգրանի մտերմական
դաշնադրութիւնը, որի յիշատակիցն շատ անգամ
քունը փախչում էր Աժդահակից, և իր խորհրդա-
կաններին միշտ հարցմունք էր անում, թէ ի՞նչ
հնարքով կարող ենք քանդել այն Պարսկի սիրոյ
կապը անթիւ զօրք ունեցող Հայկազնից , , (1):
Այս միև նոյն բանը կրկնում է Խորենացին հե-
տեւել գլխումը Աժդահակի համար. “ մեծ վտանգ
էր Աժդահակին այն ժամանակը Աիւրոսի և Տիգ-
րանի միաբանութիւնից , , (2):

Արշակ Պարսկաստանի գահը բարձրանալուց
յետոյ, Պարսից և Հայոց բարեկամութիւնն աւե-
լի հաստատուեց, երբ որ Հայոց գահը ստացաւ
նրա եղբայր Աշղարշակն և երկու տէրութեանց
վերայ թագաւորեց միև նոյն տունը: Ազգակցու-
թեան կապը, որ միացրելէր երկու թագաւորա-
կան տներն իրար հետ, մի քանի դար չթուլացաւ
և Հայոց թագաւորները շատ անգամ խառնուում
էին Պարսից Արշակունեաց ընտանեկան վէճերի
մէջ, վճռում էին նրանց միջի գահակալութեան
համար ծագած վէճերը, ոչ թէ զէնքի զօրութեամբ,
այլ ինչպէս մերձակայ ազգականք, անձամբ ներկայ

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Ա. 42. Խ:

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Ա. 42. Խ:

դտնուելով և յորդորելով : Արգարը գնումէ Պարսկաստան, որ վրդոված էր թագաւորի որդուց խոռվութեան պատճառաւ և կարգի է գնում իր կամքովը նախագահութիւնը, ոչ ոք չի ընդդիմանում նրան և ամենքն անխօս համաձայնում են նրա անօրէնութեանցը : Խորենացին ասում է, թէ « Պարսից Արշակ թագաւորի մահից յիտոյ, մեր Արտաշէս թագաւորը թագաւորացնումէ իր համանուն Արտաշէսին՝ նորա (Արշակի) որդւոյն Պարսից աշխարհի վերայ , (1): Երբ որ Պարսից Պատիժահար գաւառի լեռնային բնակիչքը և կասպից երկիրը չհնազանդուցան, էն ժամանակը Արտաշէս թագաւորը ուղարկում է Արքատին զօրքով, որ ամենքին հնազանդացնում է :

Այն ժամանակը, երբ որ Հայաստունը խաղաղութեան մէջ էր և սպառնալիք էր մերձակայ ազգաց, յանկարծ հասնումէ Պարսից Արտաւան թագաւորի մահուան և Սասանեան Արտաշերի գահակալութեան լուրը (2): Այսպիսի փոփոխութիւնը բնականաբար ցանկալի չէր Հայաստանի համար, ուստի և մեր մեծն Խոսրով թագաւորը արիւահեղ պատերազմներ սկսաւ, որ վերէացնի իր նախնի ազգակից ցեղը, բայց նենգաւոր մատնիչ սուրը վերջ տուեց նորա յաղթական յարձակամանցը :

Այս ժամանակից առաջուան բարեկամական յարաբերութիւնքը վերջացան և նախանձն ու թշնամութիւնը ներս մտան: Փաւստոս Բիւզանդացին պատմումէ, թէ Արտաշերի յաջորդ Հապուհը կանչեց իր մօտ Հայոց Արշակ թագաւորին, մեծ սէր

(1) Մովսես Խորենացի, Գիրք 1. գլ. ԾՎ.

(2) Թագավոր Արծրունի, Գիրք 1. գլ. ԾՎ.

և յարգանք ցոյց տուեց նրան և 'ի նշան պատռոյց
բաշխեց նրան իր Ամրպասականի երկրորդ պալատն
և նրա հետ խաղաղութեան դաշն կապեց: “ Բայց
Պարսից Շապուհ թագաւորը վախեցաւ, շարու-
նակումէ Բիւզանդը, թէ կարելի է Հայոց Արշակ
թագաւորը կըքանդի բարեկամութիւնն և կըմիա-
նայ Ծունաց կայսեր հետ կամ նրա կողմը կըքոնի,
Հայաւատաց նրա բարեկամութեանն և պայմանը
Հքանզուելու համար երդումն պահանջեց նրանից
և համարեա բոնի հարկադրեց նրան համաձայնիլ.
երգուիր ինձ, (ասաց Շապուհը) քո օրէնքով,
որ դու ինձ չես խարիլ: սրա համար Տիզընից
քահանայ և աւետարան ապսպարեցին և Արշակը
հրապարակաւ երդուեց, որ չի խարիլ նրան, կըմիայ
նրա հետ դաշնակից և պայմանը չի քանդիլ:, (1):
Շապուհի բարեկամութիւնը Վրջերումն աւելի
հաստատ եղաւ, երբ որ Արշակայ զօրքը յաղթե-
ցին Ծոյներին յօգուտ Պարսից “ Շապուհ ա-
սաց իր իշխանացն, եկէք անքակ սէր կապենք Ար-
շակ Հայոց թագաւորի հետ, որ նա էլ մեղանից
անբաժան լինի. կըտամիմ աղջիկն Արշակին կնու-
թեան և նրա հետ շատ կայք ” (2). բայց նախա-
րարաց մէկի խորամանկութիւնը ոչ միայն քան-
դեց այն բարեկամութիւնն, այլև պատճառ եղաւ
յաւիտենական անհաշտ թշնամութեան երկու պա-
լատանց. որովհետև Անդովի Ալիւնին երբ որ իմա-
ցաւ Շապուհի միտքը, թէ կամք ունի իր աղջիկը
տաւ Արշակին, վախելով թէ նրա աղջիկը չընկնի
իր հօր բարկութեան տակ լինելով Արշակայ հետ,
կաշուեց Պարսից իշխաններից մէկին, որ հաւա-

(1) Փաւասոս Բիւզանդացի, Գերք Գ. Ա. Փ. Օ:
(2) Փաւասոս Բիւզանդացի, Գերք Գ. Ա. Փ. Օ:

տացրեց Արշակին, թէ Շապուհը կեղծաւորու-
թիւն է անում և կամենումէ իրեն քաշել նրան
ու սպանել. Արշակ հաւատալով նրա խօսքին,
յանկարծ թողեց բանակը բոլոր պատրաստու-
թեամբը, փախաւ նախարարաց հետ և էլ միան-
գամ յետ չգարձաւ Պարսկաստուն. նրանից ծա-
գեցաւ պատերազմը Հայոց Արշակ թագաւորի և
Պարսից Շապուհ թագաւորի մէջ, որ շարունա-
կեց 30 տարիից աւելի :

(1) ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԲԻՒԶԱՆԴԻԵՆՆ ԿԱՅ-
ՍԵՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ : Հայաստանի մէջ քրիստոնէու-
թիւն մտնելով, մտաւ և հարազատ և երկարասե-
մէր Հայոց թագաւորաց և Արքանդեան կայսե-
րաց մէջ : Տրդատ կրթուելով Յունաց մէջ, քրիս-
տոնէական հաւատը ընդունելուց յետոյ մտեր-
մական բարեկամութիւն և սէր կապեց մեծին
Կոստանդիանոսի հետ, որ նոյնպէս նոր էր ճանա-
չել ճշմարիտ հաւատը : Տրդատ այս բարեկամու-
թիւնը հաստատ պահելու համար, ըստ վկայու-
թեան Խորենացու, մտածեց զեալ կայսեր մօտ
և խաղաղութեան դաշն կապել նորա հետ (1):
Կոստանդիանոս սիրով ընդունելով Սուրբ Գրի-
գորին, որ Տրդատայ հետն էր, և իրան “ Տրդատ
թագաւորին, ասում է Աղաթանգեղոսն, ինչպէս
սիրելի եղքօր՝ մեծ ուրախութեալի սէր է ցոյց տալի
աւելի նորա Սստուած ճանաչելու համար, դաշն
է կապումնորա հետ, միջնորդ ունելով Տէր Յի-
սուսին, որ մինչև վերջը հաւատարիմ սէր պահէ
իրենց թագաւորութեանց մէջ” : “ Արկու թագա-
ւորին և երկու հայրապետքն, ասսում է Արդան,

(1) Մովսէս Խորենացի, Գևորգ Գև. ու. 1:

զաշինք կապեցին ապրիլ և մեռնիլ իրար համար
և պայմանի գիրն անքակ մնալու համար թաց ա-
րին ահաւոր խորհուրդի մէջ,, : Այս գաշնա-
ղբութեան յիշատակը շատ ժամանակ մնաց Հայաս-
տանումը, նորա համար յիշում է Արդանէս Կա-
թողիկոսն իր նամակի մէջ, որ զրում է Կոս-
տանին կայսերը. նորա համար յիշում է Յով
սէփ Արթուղիկոսը թահորոս կայսեր նամա-
կումը (1): Հայաստանի և Բէւզանդիոյ բարեկա-
մական յարաբերութիւնց համար բացի Հայ մա-
տենադրերից, պատմումն շատ Բէւզանդիւն պատ-
մագիրներ, ինչպէս Յուլիանոս իր առաջին բա-
նումը, որ զրում է Կոստանդ կայսերը, Հայերին
կոչում է Յունաց հին Նիզակակիցներ: Մեծն
Կոստանդիանոս ասում է, թէ “բացի մեր առ-
տենին գործերից, Արթուղիկէ եկեղեցւոյ, բացի
բարեյիշատակ Եւսեբոսի տանից և Արշակ Հայոց
թառագորի տանից, ոչինչի համար չե գործադր-
ուիլ մեր կայքը,, : Սամուել պատմագիրն ասում
է. “մեծ թահորոսը շատ բարեգործութիւններ է ցոյց
տուել Հայաստանին: Արբ որ Պարսիկները կու-
րացրին Տիրան Հայոց թագաւորին և նախա-
րարքը խնդրեցին կայսեր օգնութիւնը, կայսրը,
շուտափից հոգացողութեամբ և մեծ պատրաս-
տութեամբ կատարեց նրանց խնդիրը և օգնեց Հա-
յաստանին, մանաւանդ երբ որ յիշեց Կոստան-
դիանոսի և Տրդատայ մէջ հաստատուած ուխ-
տը (2): Այս գաշինքը նորոգեց մեծն Կերսէուը.
Խաղաղութեան ուխտ կապելու համար (Արշակ)
Հայոց թագաւորը ուղարկեց մեծին Կերսէսին

(1) Խղճէ, երես 122:

(2) Մովսէս Խորենացի, Գայք Գո 72: ԱՅ:

Նորոգել միաբանական ուխտ և խաղաղութիւն
Վալես կայսեր հետ (1): Այս կրկնում է Մես
քովին էլ, ասելով, թէ Կերսէս Կաթուղիկոսն ու
զարկուեցաւ Հայաստանի և Յունաստանի մջ
հաստատել այն խաղաղութեան դաշինքը, որ կա-
պեցին մեծ թագաւորները՝ Կոստանդիանոս և
Տրդատ և Սուրբ լուսաւորիչները՝ Գրիգոր և
Սեղեստրոս, որ անոխակալութեամբ մասն իրար
հետ և չափեն ուխտի պայմանին (2): Կիրակոս
առում է, թէ Գրիգոր Գ. Կաթուղիկոսի ժա-
մանակն այս դաշինքը կրկին նորոգուեցաւ: Երբ
որ եկաւ նա Խրուտաղէմ, Գոռանդաց աղջը, որ
իշխում էին քաղաքներ և նրանց Պատրիարքն
աւելի սէր հաստատեցին մեր աղջի հետ, նրա
համար, որ նա անսիլքով բարի էր և Սուրբ
Գրոց լաւ տեղեակ: Առուած ժամանակը կրկին նու-
յուղեցին սուրբ Գրիգորի, Տրդատաց, Կոստան-
դիանոսի և Սեղեստրոսի հին դաշինքը,, : Բայց
Արշակունեաց վերջին թագաւորաց ժամանակ որ-
պիսի են, Արշակ, Պատ և այլն, այս բարեկա-
մութիւնը թուլացաւ, որովհետեւ մեծին Կեր-
սիսի մահից յիտոյ Պատը դաշինք կազեց Պար-
սից թագաւորի հետ, ընդդէմ իր Մուշեղ զօ-
րավարի և բոլոր նախարարաց կամացը որոնք խոր-
հուրդ էին տալիս նրան պահել առաջուան բա-
րեկամութիւնը Բիւլղանգեան տէրութեան հետ (3):

Այսպէս էր ահա Հայաստանի յարաբերութիւնը
Բիւլղանգեան կայսերաց հետ Արշակունեաց թագա-
ւորութեան ժամանակ և Մարզպանութեան ժա-

(1) Փաւատոս Բիւլղանգայի, Գիւք Դ. Ա. Ե.

(2) Մեսրովը, Գ. Ժ. Ժ. Օ.

(3) Փաւատոս Բիւլղանգայի, Գիւք Դ. Ա. Ե.

մանակը, մինչև Բազրատունիք Բագրատունեաց
թագաւորութեան ժամանակը հէնց նրանց առաջին
թագաւորաց ժամանակ, շատ մօտիկ բարեկամու-
թիւն էին անում Բազրատունիք կայսերաց հետ-
այսպէս է ասում Յովհաննէս Կաթուղիկոսն Աշտ
Ե-ի և Բարսեղ կայսեր համար. “ Սած կայսրն
Յունաց Բարսեղը իւազազութեան պայման և բա-
րեկամանկան սէր էր հաստատում մեր Աշտ թա-
գաւորի հետ. այսպէս և Միքատ Ա. իր հայրենի
դաշնաց համաձայն չէր հեռացնում իրեն Հռով-
մայեցւոց Լեռն կայսեր բարեկամական մտերմու-
թիւնից, որը որ ուխտի սիրալիք դաշնքով Միքա-
տին կոչում էր սիրելի որդի „ Սի ուրիշ տեղ
Յովհաննէս Կաթուղիկոսը պատմումէ, թէ “ Յու-
նաց Լեռն թագաւորը բաւականին նախախնամում
էր Միքատին, նրա հետ անքակտելի պահելով
միաբանական սիրոյ ուխտը ինչպէս իր սիրելի որդ-
ւոյ հետ, բայց Միքատն էլ տասնապատիկ հա-
տուցանումէ նորա փոխարէնն ինչպէս իրանից
մեծ և հարազատ հայր „ Այս միեւնոյն բարեկա-
մութիւնը կար Աշտ Ե-ի և Կոստանդին Գերփե-
ռուժենի մէջ, որը որ հրաւիրեց Աշտին Բիւ-
զանդիա և ընդունից նրան մեծավայելուչ թագա-
ւորական պատուով. այս միեւնոյն բարեկամու-
թիւնը մնաց Աշտ Գ. Ողորմածի և Յովհաննէս
Զմշկիկի մէջ, որը որ իր արեւելքի վերայ գալու
ժամանակը, գեսպան ուղարկեց Հայաստան օգնու-
թիւն ինդրելու. “ Յունաց դեսպաններից յետոյ
գնացին կայսեր մօտ մեր իշխաններից մի քանիսը,
Լեռն իմաստասէրը, Եւստաթէսս Թառունիցի իշխանը
և ուրիշ Եպիսկոպոսներ և Արդապետներ և սէր
ու խաղաղութիւն ձգեցին Յունաց կայսեր և Ա-
շտ Հայոց թագաւորի մէջ և բերին նրան Ա-
հան Հայոց Կաթուղիկոսի նամակը. թագաւորը

սիրով ընդունեց և պատռեց թուղթն և բերող-
ներին և սիրոյ ուխտ կապեց Հայոց հետ և Աշ-
տից զօրք ինդրեց „ (1):

Որքան Բազրատունեաց առաջին թագաւորաց
րարեկամութիւնը հաստատ և մօտիկ էր Ծիւզան-
գեան կայսերաց հետ, այնքան ընդ հակառակն սաս-
տիկ էր նոցա վերջին թագաւորաց թշնամութիւնն
և նախանձը, որ զիստարտապէս ներս մտաւ Կոս-
տանդին Մոնոմախոս թագաւորի նենդութիւնից,
որ գործ զրեց Գագիկ Հայոց թագաւորի հետ:

Կ. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ ԱԼԱՆԱՑ ՀԵՏ. Ալ-
տաշէս Գ-ի Ալանաց հետ կապած խաղաղութեան
դաշին համար պատռում է Մովսէս Խորենացին,
այսպէս. “ Ալանաց թագաւորը խաղաղութիւն էր
ինդրում և խոստանում էր կատարել Արտաշեսի
կամքն և հաստատեց նրա հետ երդումով մշնջե-
նական դաշինք, որ Ալանաց զօրքը միւս անգամ
ասպատակութիւն չըգան Հայոց աշխարհը. Ալ-
տաշէս այս բանին համաձայնեց, մաքումը դնելով
առնել Ալանաց թագաւորի Մաթինիկ աղջիկն և
կոչելով իր դայեակ Մմբատին, յայտնեց նրան իրա
միտքը, որ կամենում է առնել Ալանաց օրիորդին
իրան կութեան և ուխտ ու դաշինք հաստատել
այն քաջ ազգի հետ „ (2): Երբ որ վերջումը
Ալանաց գահը յափշտակուում էր, Արտաշէս ինչ-
պէս գաշնակից, ուղարկեց Մմբատին զօրքով, որ
հալածելով բռնաւորին, թագաւորեցրեց Մաթինի-
կի եղբօրը (3):

(1) Մատթէոս, 4L. Խօն.

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 4L. ՅՈՒ.

(3) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 4L. ՅՈՒ.

Դ. Յարմերութիւնք գրեսթ ՀԵՏ. Հայոց և
Հոնաց մէջ եղած միաբանութեան համար յի-
շում է Եղեշէն, այն ինչ Ապրդանը Յազկերտի
հետ ունեցած կռօւի ժամանակը “զեսպաններ է
ուղարկում Հոնաց և նրանց հետ դաշնակից շատ
բարբարոս ազգաց մօտ կապակցութիւն անել նրանց
հետ և անքականի միաբանութիւն ունենալ” (1),
Բացի Եղեշէից, որ իր պատմութեան մէջ շատ
տեղ է յիշում այս դաշնազութեան մասին (2),
Փաւստոս Ռիւզանդացին և Խորենացին նոյնագէտ
յիշում են Հայոց թագաւորաց յարաբերութիւն-
ները Հոնաց հետ: Փաւստոս այսպէս է պատ-
մում, թէ “Ատասի, Ըրշակ Բ. Հայոց թա-
գաւորի զօրավարը վերցնում է իրեն հետ Հա-
յոց զօրքը և Հոներին ու Ելաններին էլ օգնու-
թիւն է կանչում”, (3): Ինչպէս զիտենք, որ
Ելանք իրենց դաշնաց համաձայն պարտական էին
օգնել Հայոց, կարելի է կարծել, որ այսպիսի մի
դաշնքով էլ Հոնք էին պարտական, որովհետեւ
Փաւստոս Ռիւզանդացին մէկ տեսակ է խօսում
էղ երկու ազգի վերայ:

Ե. Ասմաներութիւնք եգեմաթ ԱԶԳԻ ՀԵՏ. Պատ-
մութիւնից մենք զիտենք, որ Կողքիսացիք Հայոց
առաջին թագաւորաց ժամանակը Հայոց իշխա-
նութեան տակն էին, բայց Բագրատուննեաց ժա-
մանակը նրանք լինում են Հայերին դաշնակից:
Յովհաննէս Կաթուղիկոսն այսպէս է պատմում,
թէ Եղուս Ա. կապում է Կողքիսացւոց թագա-


(1) Եղեշէ, երես 134:

(2) Եղեշէ, երես 225: Առվագէս Խորենացի, Գիրք Բ.
42. 26:

(3) Փաւստոս Ռիւզանդացի, Գիրք Գ. 42. 11:

ւորի հետ միաբանութեան դաշն, հովանուոր է
լինում և նա (Առղքիսի թագաւորը) ինչպէս որ-
դի, մեծ զոհունակութեամբ միշտ ծառայում է
Աշոտին, և թէպէտ Առղքիսի Կոստանդին թա-
գաւորը սկզբումը մի փոքր ընդդիմացաւ մեր
Սմբատին, բայց յետոյ սէր և հպատակութիւն
ցոյց տուեց նրան „: այս դաշնակցութեան զօ-
րութեամբն Աշոտ Բ. Սմբատի որդին մեծ օգնու-
թիւն ստացաւ Առղքիսի թագաւորից, ըստ մկայու-
թեան Յովհաննէս Կաթուղիկոսի:

Օ: ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ Վ. ԽԱՑ ՀԵՏ ՀԱՅՈց և Ա Պ քաց
մէջ շատ հին ժամանակից հետէ կար բարեկամական
յարաբերութիւն իրար հետ, շատ անգամ միմեանց
հետ խնամութիւններ են ունեցել. Կրտաշէս Ա.
տուեց իր Կրտաշամայ աղջեկը Ա քաց իշխան
Միհրդատին (1). Բազրատունեաց ժամանակը
Յովհաննէս Կաթուղիկոսը պատմումէ Սմբատ
Շ.ի և Ա քաց Կիւրապաղատի դաշնքը, որին
Սմբատը թագաւորացնումէ Ա քաստանումն և
իրանից երկրորդ է մինում. Յովհաննէս Կաթու-
ղիկոսը նոյնպէս Ա քաց Գուրգէն իշխանին կո-
չում է Աշոտ Բ. թագաւորի եղբայր Աբասի
աները. Այսուհի յարաբերութիւն ունէին Հայոց
հետ Աղուանքը.



Բ. ԵԿԵՂԵՑԻ.

—

ՀԱՅԱՏԱՆՔ ՄԷՋ. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆՔ. ՏԱՐԱԾՈՒԵԼ
Այն աել, որ Կոյի տապանը գաղարեց, որ առա-
ջին անգամ Աստուծոյն զոհաբերութիւն եղաւ,

(1) Առաջին խորհնացի, Գուրգէն Բ. Ա. ՓԵ.

այն տեղ առաջինը Քրիստոսի ուսման ճառադայթը
ծագեցաւ։ Արդար Հայոց թագաւորը, լսելով
Պաղեստին գնացած զեսպաններից, որոնց ուղար-
կել էր այն տեղի Մասինոս հազարապետի մօտ,
Յիսուսի Խրուսաղէմումը զործած հրաշքները,
հաստատ հաւատաց, թէ նա է ճշմարիտ Արդի
Սստուծոյ։ “Էկ մարդոյ զօրութիւն չէ, այլ Ես-
տուծոյ, որովհետեւ մարդ չի կարող մեռեալ յա-
րուցանել, այլ միայն Սստուած”։ Եւ որովհետեւ
Արդարի մարմինը բոլոր ապականուած էր սաստիկ
ցաւերով, որ պատահել էր Պարսկաստան եօթը
տարի առաջ և մարդկանցից հնար չեղաւ, ու-
ղարկեց Յիսուսի մօտ մի նամակ գալ և բժշկել
իրեն. և այս է նամակի պատճէնը։ “Արդար
“ Երշամի որդի, աշխարհքի իշխանից՝ Յիսուս
“ փրկիչ և բարերարիդ, որ երեկցար Խրուսաղէ-
“ մացւոց աշխարհքումն ողջոյն եղեցի։
“ Ես լսելու քո համար և արած բժշկութեանդ
“ համար, որ լինումէ առանց գեղերի և արմատ-
“ ների, որ ինչպէս ասում են զու կոյրերին գնալ
“ ես սալիս, բորոտներին սրբում ես, չար գերերին
“ հանում ես, երկար ժամանակուայ հիւանդներին
“ բժշկում ես և մեռածներին յարութիւն ես տալի։
“ Ես երբ որ քեզ համար էս բաները լսեցի, եր-
“ կու բան մաքումն զրի. կամ զու Սստուած ես
“ երկնքից իջած, կամ որդի ես Սստուծոյ և էդ
“ բանն անում ես. սրա համար ես քեզ զրեցի և
“ աղաջում եմ, որ նեղութիւն կրես, զաս ինձ մօտ
“ և բժշկես իմ հիւանդութիւնն։ “Եղյնպէս լսեցի,
“ որ Հրէայքը տրանջում են քեզ համար և կա-
“ մնում են քեզ չարչարել. ես ունիմ մի փոքր
“ և գեղեցիկ քաղաք, որ երկուսիս բաւական է”։
Ուղարկած մարդիկն էս նամակով պատահե-
ցին Յիսուսին Խրուսաղէմումն. այս բանը վկայում

է և աւետարանի խօսքը “ թէ մի քանի հեթանոսներ էին եկել նորա մօտ և լսողները չէին համարձակուում Յիսուսին ասել, այլ ասացին Փիլիպպոսին և Անդրէասին և նրանք ելասացին Յիսուսին ” . իսկ Փրկիչն էն ժամանակը յանձն շառաւ հրաւելքը, բայց նամակի արժանացրեց նրան այս պատճենովն. “ Երանի նրան, ով որ ինձ չէ տեսել և կըհաւատայ ինձ, զրուած է ինձ համար այսպէս. թէ ովքեր որ ինձ կըտեսնեն, չեն հաւատալ, իսկ ով որ չի տեսել, նրանք կըհաւատան և կապրեն : Իսկ նրա համար որ դու զրեցիր, որ ես զամքեղ մօտ, ես պէտք է կատարեմ էս տեղէն ամէն բանը, ինչի համար որ ուղարկուեցի ես : Երբ որ կըկատարեմ, յետոյ պէտք է համբառնամ նորա մօտ, ով որ ինձ ուղարկեց : Ինչ ժամանակ կըհամբառնամ, կուղարկեմ իմ աշակերտներից մէկին, որ քո ցաւը կըբժշկի և քեզ ել և ով որ քեզ չեա են, նրանց ել կեանք կըպարզեի ” : Անան Արգարի սուրհանդակը բերեց էս թուղթն և սրա հիտել Փրկչի կենդանադիրը, որ կայ մինչեւ էս օր Եղեսացւոց քաղաքումը ” :

“ Յիսուսի համբառնալույ յետոյ Թափման Առաքեալը, որ 12-ից մէկն էր, ուղարկեց Թագէոսին, որ հօթանամնից մէկն էր, Եղեսիա քաղաքը, բժշկել Արգարին և քարոզել Յիսուսի բանին համաձայն : Թագէոս եկաւ մի Նրէայ Տուրիա իշխանի տունը, որ ասում են, թէ Շազրատունի էր նորա համբաւը տարածուեց քաղաքն, Արգար լսելով ասեց . սա նա է, որի համար Յիսուս զրեց և իսկոյն կանչեց նրան : Երբ որ Թագէոս ներս մտաւ, Արգարին մեծ տեսիլք երեսցաւ Թագէոսի երեսին, ուստի վեր կացաւ զամփեց, վէր ընկաւ երեսի վերայ և երկրպագու-

Թիւն տուեց նրան և բոլոր իշխանքը, որք էն տեղ
էին գարմացան, որովհետեւ տեսիլքը չփմացան։
Ասաց նրան Աբգարը. “Ճշմարիտ դու ես օրչնեալ
Ծիսուսի աշակերտը, որ ինձ խոստացել է ուղար
կել էս տեղ, և կարօղ ես իմ ցաւս բժշկել։”
պատասխանեց Թաղէոս. “Եթէ հաւատաս Ծի-
սուս Քրիստոս Աստուծոյ որդուն, կըկատարուի
քո սրտի խնդրուածքը. Աբգար ասաց. “Ես
հաւատացի նրան և նրա ձօրը, ուստի և կամե-
ցայ զօրքս վերցնեմ և գամ կռտորեմ ձրէաներին,
որոնք նրան խաչեցին, եթէ Հռովմայեցւոց կա-
ռավարութիւնն ինձ չարգելէր,, :

Այս խօսքիցը սկսեց Թաղէոսն և քարոզեց
նրան ու իր քաղաքին և ձեռքը դնելով նորա վե-
րայ, բժշկեց նրան և քաղաքի Աբղիու պատաւ-
զրաս (ոաքը ցաւող) իշխանին, որ պատուելի էր
թագաւորի տանը, նաև քաղաքումը զտնուած բո-
լոր հիւանդներին և ցաւուներին։ Ամէնքը հաւա-
տացին և մկրտուեց Աբգարն ու բոլոր քաղաքն
և կուռքերի տաճարների դռները փակեցին և ինչ
որ մեջնին և սեանց վերայ պատկերներ կացին, եզե-
զով պատեցին և ծածկեցին. ոչ ոքի բռնութեամբ
չէին հաւատքի բերում, այլ օր ըստ օրէ հաւա-
տացեալքը շատանում էին։

“Թաղէոս առաքեան մատաքսազործ խոյր շե-
նող Ազգէ անունով մէկին մկրտեց, ձեռնազրեց
Աղեսիայի վերայ և իրան փոխանակ թողեց Աբգա-
րի մօտ. ինքը հրովարտակ ստացաւ Աբգարից, որ
ամէնքը ըսն Քրիստոսի աւետարանին,, (1):

Այն ժամանակ, որ սուրբ Թաղէոսը թագաւո-
րական հրովարտակի զօրութեամբ քարոզում էր

(1) Մովսէս Կորենացի, Գիւքք Բ. 42. 1. 1. 1. 1. 1.

Առաջոյ խօսքը հարաւային Հայաստանումը՝
սուրբ Տարգուղիմքոս առաքեալն էլ իր աշակերտ
ներովմ Ատրպատական աշխարհից անց է կենում.
Արասին գեան և Քրիստոսի ուսումը արարա-
ծում է Հայաստանի արևելիան մասումն, եկեղե-
ցիներ է շինում, իր աշակերտներից եպիսկոպոս
ներ է նշանակում (1) և մարտիրոսական պատկե-
նունում է Աքերանա քաղաքումը (2):

Արդարի յաջորդները կրկին դարձան կռապաշ-
տութեան և հաղածանքներ վերկացրին իրենց
հպատակ քրիստոնեից և նրանց հոգեոր հովուաց
վերայ: Այս հալածանաց մեջ շատերը ստացան
մարտիրոսական պատկը, շատերը պարտաւորուեցան
թախկնալլեռներումն և ծածուկ երկրպագութիւն
տալ Քրիստոսին: Առեփաննոս Օքքելեանն ասում
է, թէ “Են քրիստոնեայքը, որ գտնուում էին
(Հայաստանի) զանազան տեղերումը, մնացին ա-
ռանց հովիների, նրանցից շատերը, որ թախ էին
կացել լեռներումը, ճզնաւորական կեանք էին վա-
րում և քարոզում էին երկար ժամանակ մինչեւ
մեծ Լուսաւորչի Հայաստուն դալը և քրիստո-
նէական կրօնի Ըյսը տարածուիլը Հայոց երկա-
րումը” (3): Այսպէս սուրբ առաքելոց Հայաս-
տանումը ձգած սերմերը, Ծայելով հալածանքնե-
րին, հասան և պատրաստեցին ժողովուրդն Աստ-
ուածային խօսքը ընդունելու Հայաստանի երկ-
րորդ լուսաւորիչ սուրբ Գրիգորի բերանով: “Եոր
գաղափարները շատ շուտով տարածուեցին, թա-
փանցեցին բարձր կարգի ժողովրդոց մեջ և մանա-

(1) Առեփաննոս Օքքելեան, 4L. Օ:

(2) Մովսես Խորենացի, Գիրք Բ. 4L. 1Պ:

(3) Գլ. Օ: Մեծ Հայաստան Ինքնանի, եղես 261:

ւանդ թագաւորական գերգաստանի մէջ, Արտա-
շէս և Սաթինիկ միսք ունէին քրիստոնէութիւնն
ընդունելու (1) և երբ որ Տրդատ թագաւորն ե-
կաւ Հայաստուն, նա գտաւ Օտայ նախարարին,
որ կրթել էր իր Խոսրովիդուխտ քրոջը . . .
Օտան էր արդար, համբերատար և իմաստուն
մարդ և թէպէտ նա չճանաչեց Աստուածային
Ճշմարտութիւնը, բայց իմացաւ, որ կոքերը սուս
են. այսպէս էր և նորա սան Խոսրովիդուխտ հա-
մեստ աղջեկը, որ շատ առաքինի և պարկեշտ էր տ
ինչպէս էին և միւս կանայքն (2): Այսպէս քրիս-
տոնէութիւնն արմատակալած էր, երբ որ Տրդատ
իր նախարարաց և ժողովրդոց հետ ընդունեց քրիս-
տոնէութիւնը սուրբ Գրիգոր Հուսաւորչից. թա-
գաւորը գործակից եղաւ սուրբ Գրիգորին քրիս-
տոնէութիւնն ամէն տեղ տարածուելու համար ։
Սովէս Խորենացին ասում է. “**Սուրբ Հոգևոյն**
հաճոյ թուեցաւ բարձրացնել իմ **Լուսաւորչին**
վիճակաւորութեան աստիճանին, ևս աւելցնում եմ
թէ և առաքինութեան աստիճանին, բայց յետոյ
թագաւորը լինում է սուրբ Գրիգորին հաւասար
բանիւ և գործով, կարող եմ ասել թէ և զերա-
զանց ևս գտնուեցաւ թագաւորական կողմից,
որովհետև **Վստուծոյ համար մսնածելոյ և ճգնա-
ւորական կեանիք վարելու մէջ երկուան էլ հաւա-
սար էին**, բայց երբ որ կամենում էին նուածել
մէկին քաղցր կամ ստիպողական խօսքերով, էն
ժամանակը թագաւորը գերազանցուում էր, որով
հետեւ ինչպէս Տրդատի հաւատն էր, էնպէս էլ
զործքն էր. սրա համար ևս կոչում եմ նրան մեր

(1) Խոսկըն Արծրունի, Գիրք Ե. 42. 18.

(2) Մովսէս Խորենացի. Գիրք Բ. 42. 21.

լուսաւորութեան առաջին ճանապարհը և երկրորդ հայրը . . . Տրդատը քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ լուսելով ամենայն առաքինութեամբ, օրէց օր աւելի գնում էր Քրիստոսի ճանապարհը բանիւ և զործով և քաջալերում էր բոլոր նախարարներին և ամէն ժողովրդին լինել Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ, որ նրանց զրած գործքերն էլ վկայեն իրենց հաւատոյ համար (1): Երանելին Տրդատ մեծ հաստատութեամբ վրէժիշնդիր էր լինում հաւատոյ և բարի վարուց համար, մանաւանդ նրանց, որոնք իր տէրութիւնից դուրս էին (2): Ազաթմանզեղսն ասում է, թէ " թագաւորն ինքն էր քարոզում Աստուածային խօսքը, պատմելով ամէնքին էն հրաշքները, որ իր գլխովն անց էր կացիւ: Թագաւորի այսպիսի զործակցութիւնով Գրիգոր լուսաւորիչը պայծառացրեց, համարեա, բոլոր Հայաստանը քրիստոնէութեան ուսումովը քանդելով մեհեանները շինելով ամէն կողմերումը, գաւառներումը, քաղաքներումն, աւաններումն և գեղերումը տաճարներ և նշանակելով քահանայք, սարկաւագներ և անթիւ եկեղեցական պաշտօնեաններ»: Հայաստանի մի քամիտեղերումը կուապաշտութիւնը ծածկուած էր և քրիստոնէութեան ժամանակն երկու դարի չափ, որ բոլորովին վերջացաւ Խ. դարումն աւելի սուրբ Սնարովի քարոզութեամբը (3):

ՀԱՅՔ ԵՆ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱԶԴՅ. Հայոց մատենագիրները, որոց թուումն են Ազաթմանզեղուը (Խ. դարումն) և Օհնոր Գլակ (Լուսաւոր

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Խ:

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. 42. Ղ:

(3) Փաւառոս Ծիրազնդացի, Գիրք Գ. 42. Գո Գիրք Ե. Պ. Կորիւն:

շահակերպը) պարզ ասում են, որ Աճն
Կոստանդիանոս քրիստոնէութիւնն ընդունեց այն
ժամանակն, երբ որ վազուց Հայոց ազգն ընդու-
նել էր (1):

ԱՅՆ-Մարտէնն իր արևելեան կայսերութեան
Էրիօ պատմութեան յաւելուածքում արևմտեան
ուսումնականներից առաջինն եղաւ, որ նկատեց
էս վաստն և Տիֆլով Խասերոսի Ակեղեցական
պատմութեան վերայ (Գիր+ Ռ. Գւ. Հ), հաստա-
տեց, թէ քրիստոնէական հաւատը Կոստանդիա-
նոսի ընդունելուց առաջ՝ էր արդէն Հայաստանի
տիրապետող կրօնն և ուրեմն Հայք են աշխար-
հիս առաջին քրիստոնեայ ազգը (2):

(1) Ադաթանգեղոս, երես 642:

(2) Երես 76, 77, Փարիզ, 1825: Այս ԱՅՆ-Մարտէնի
խոսքերը. Այս պատերազմն, այսինքն՝ էն պատե-
րազմը որ Մաքսիմիանոսը սկսեց Հայոց գէմ, որոյ միշա-
տակը մեզ համր պահել է Եւսեբոսը, սկսուել էր էն
պատճառաւ, որ Հայերը պահում եին քրիստոնէութիւնն
Էս բանը չեին նկատել նոր ժամանակուան հեղինակները,
որոնք պարապում եին եկեղեցական հութիւններով: Այս
պատերազմը յայտնում է այն երեսեղի գործը, որ մինչեւ ցայ-
սօր անյայտ էր մեզ. սա մեզ ցոյց է տալի, որ 311 թուին,
այսինքն՝ յառաջ քան զիլոստանդիանոս Հայաստանը յայտ-
նուած էր արդէն քրիստոնեայ, աւետարանի վարդապետու-
թիւնը հրապարակաւ խստովանում էին այս մեծ տէրու-
թեան մեջ, որ մերձակայք էր Յունաց կայսերութեանն. և այս
բանը մեզ տեղեքը է տալի մտածելու, որ քրիստոնէական
վարդապետութիւնն էն տեղ արդէն հիմնուած էր մի քանի
ժամանակից յառաջ: Այս պարզ տեղեկութիւնը, որ տալիք
է մեզ Եւսեբոս, բաւական է, որ մեզ ցոյց տայ, թէ Հայք
են իսկապէս քրիստոնէական հաստան ընդունող առաջին
ազգը . . . ինչ որ չինի, կարելի է որպէս հաստատ ընդու-
նել, որ քրիստոնէութիւնը դառնում է 276 թուին Հայաս-
տանեայց թագաւորի, իշխանաց և ժաղովրդի կրօնը:

Մի ուրիշ տեղ միենոյն ԱՅՆ-Մարտէնն ասում է, 18
տարի յառաջ քան զիլոդատի Հայաստանի գահի վերաց
նստելն և 30 տարի յառաջ քան զիլոստանդիանոսի քրիս-
տոնէութիւնն ընդունելը, Հայքն և նրանց թագաւորը գրկել
էին քրիստոնէութիւնը: ԱՅՆ-Մարտէն, Հատուած Արշա-
կունի թագաւորաց, Գիրք Բ. երես 291:

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՆԴՈՒԹԵԱՌԱՄ ԵՐԵՒ ԸՆԴՀԱՅԵ-
ՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ. Հայոց եկեղեցին ընդունում է
միայն երեք ընդհանրական ժողովք, որովհետեւ երբ
որ Քաղկեդոնումը կազմուեց չորրորդ ժողովքը,
Հայոց Շարկէն Կաթուղիկոսը 491 թուին Պա-
ղարշապատ քաղաքումը ժողովեց Հայոց, Արաց
և Աղուանից հօգեորականներին և կրիսելով երեք
առաջին վճիռը, նզովեց Քաղկեդոնի ժողովքն։
Եյս օրից Հայոց եկեղեցին բաժանուեց Յու-
նաց եկեղեցուցն և թէպէտ մերջերումը մի քանի
կաթուղիկոսներ՝ (Եվք 649 թուին, Կերսէս
Գ. 647 թուին և Օպարիս 862 թուին)
Տիւղանդեան կայսերաց կամքին համաձայն, առ-
ունձնապէս ընդունեցին իրենք Քաղկեդոնի ժո-
ղովքը, բայց ոչինչ հետեանք չեւնեցան։ Ժողո-
վուրդը և եկեղեցին մինչև այսօր էլ չ ընդու-
նում (1)։

ԵՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑ-
ԻՆ. Հայոց պատմութեան մէջ եկեղեցին ունի մի
վսեմ և բարոյական նշանակութիւն, նա սովոր-
ցնելով աւետարանական Ճշմարտութիւնները, պատ-
ճառ գառաւ աղջի բարոյական զօրութեանն և
միութեանն և աղատեց Հայաստունն էն նիւթա-
կան զօրութեանց գերութիւնիցը, որ միշտ Ճնշում
էր նրան։ Հայաստունը մարտիրոսուումէր Սուրբ
եկեղեցւոյ համար, նա հաւասարվ Փրկչի խօս-

(1) Յովհանէս Կաթուղիկոս, երես 45, 48 և ուրիշ տեղե-
րումնեւ Սովորի, Գիւրք Բ. Արքակոս, Արքան, Ատեփաննու
Օքրելեան, Գ. Ժ. Անդրէս, երես 87, 158, 189, 220.
Հայական ժողովը, որ երգուում է Եկեղեցումը տարէնը
ըսրս անդամ։

Քին, թէ « երկինքն և երկիրը կանց կենան և իմ խօսքերս չեն անց կենալ », սաստիկ արիւնահեղ պատերազմներ ունեցաւ կուտազաշութեան, իսլամականութեան և Յունաց անհամբերութեան հետ, շատ դարեր անց կացրեց նա հզօր տէրութեանց սուրերի տակը Ճնշուելով, բայց նրանց սրերը կուտրուեցան Ճայոց եկեղեցւոյ հաւատարմութեան վերայ՝ Արևելան իշխանները խլեցին Ճայաստանից ամեն բանը, զբկեցին նրան հայրերից, մայրերից, կանանցից, երեխուքանցից, հայրենիքից և կեանքից իսկ՝ բայց նրանց հաւատը, որ ունեին առ Փրկիչն, անզրդուելի էր ինչպէս Աստուծոյ խօսքը, որը որ բարձրացրեց նրանց բոլոր անցաւոր բաներից և նրանց զօրութիւն տուեց տանել ամեն շարչարանքերն և նրանց համար մահուան մէջը բաց արեց կենաց սղբեւրը:

Պարսից թագաւորներն անխոջաբար հալածելով քրիստոնէութիւնը Ճայստանիցն, աշխատում էին տարածել մոգական օրէնքը, ստիպուած ոչ այնքան իրանց կրօնական ֆանատիկութիւնից՝ որքան քաղաքանկանութիւնիցը: Ճայաստանը մէկ քանի դարեր երկպառակութեան առարկայ էր դառել Յունաց և Պարսից մէջ: Պարսից թագաւորները կասկածելով Ճայոց հաւատարմութեան վերայ, ինչպէս Յունաց հաւատակիցներ, գործ զրեցին ամենայն զօրութիւնները, որ արմատահան անեն քրիստոնէութիւնը Ճայստանիցն և մացնեն կրակապաշտութիւնը, որ այդ կերպով աւելի պինդ և բարոյական կապերով միացնեն Ճայերին Պարսից հետ: Պարսից Հապուհ թագաւորն անթիւ զօրք է տալի ուրացող ՄԵհրուժանին և ուղարկում է Ճայաստան: ՄԵհրուժանն աշխատում է խափանել քրիստոնէութեան կապերը, հարկը պատճառ

բռնելով, կապում է եպիսկոպոսներին և քահանա-
նաներին և ուղարկում է Պարսից երկիրն. ինչոր
զբքեր է գտնուում՝ բոլորն այրումէ, հրամայում
է էլ չոռվորել յունարէն այլ պարսկերէն, էլ
չհամարձակել յունարէն խօսելու կամ թարգ-
մանելու, էն պատճառաւ իբր թէ, որ կտրի Հա-
յոց և Յունաց միջի բարեկամութիւնն և սէ-
լլ (1):

Փաւստոս Ափւղանդացին պատմում է, թէ Հա-
պուհ Ռա կածելով Հայոց Արշակ թագաւո-
րի բարեկամութեան վերայ, նախատում է նրան
կայսեր մօտ ունեցած հաւատարմութեան համար,
ասելով. “Ես դիտեմ, որ դուք կեղծաւորու-
թեամբ խաբում էք ինձ և սիրում էք նրան, ով
որ խոստովանում է ձեր հաւատը և խորհրդա-
կից լինելով նորա հետ, փախչում էք ինձանից ...
երդուում է Հապուհն արեգակով, ջրով և կրա-
կով, որ չել թողուլ կենդանի ոչ մի քրիստոնէի ...
էն ժամանակը Հապուհը մեծ հալածանքներ է
վեր կացնում քրիստոնէական կրօնի վերայ, հար-
կեր է աւելցնում և զանազան չարչարժանքներով և
հալածանքներով նեղացնում է նրանց: Արանից
յետոյ հրաման է տալի բոլոր իւր տէրութեան մէջ
սուր քաշել ամէնքին, ով որ իմ աշխարհքումն
քրիստոնէի անուն կունենայ, որ իմ տէրութեան
մէջը քրիստոնեայ անունով մէկ մարդ չ'լինի: Հա-
րիւր հազարաւորներ կոտորուեցան, որովհետեւ
այնպէս էր թագաւորի հրամանը, որ մէկ քրիս-
տոնեայ չ'լինի նորա տէրութեան սահմաններու-
մը (2):

(1) Վաղթէս Խորենացի, Գիրք Գ. 42. 1. Օ:

(2) Փաւստոս Ափւղանդացի, Գիրք Գ. 42. 2. Օ. Ժ.

Յաղկերտը՝ Ծապուհի յաջորդը, տեսնելով որ
յոյսնի հալածանքները յառաջադիմութիւն չեն
ունենում, իրան որդի Ծապուհին դնում է Հայոց
թագաւոր այն նենդաւոր մաքով, որ նախարար-
ները նրա հետ մօտիկանութիւն ուրախութեանց,
զուարծութեանց և որսորդութեան ժամանակը,
աննկատելի կերպիւ կը մօտենան նրան կամ ինա-
մութեամբ կամ ուրիշ միջոցներով և էն ժամա-
նակը հեշտ կը լինի նրանց դարձնել Մազդեզանց
կրակապաշտ կրօնքին և էս կերպով կը յաջողի
երանց բոլորովին հեռացնել Հայերին Յոյնե-
րեցը „(1): Եհա Պարսից Փրավարի այն կար-
ծիքները, որ զրգուեցին Յաղկերտին արմատահան
անել քրիստոնէութիւնը Հայութանիցը.“ Յայտ-
նի է ձեզ և բոլոր Երեացը, թէ ինչպէս մեծ և
պիտանի է Հայոց աշխարհը, նա մօտիկ է և սահ-
մանակից է Կայսեր իշխանութեանն և միւնոյն
հաւատն ու պաշտօնն ունի. սրա համար էլ Կայսրն
եւխանութիւն ունի նրանց վերայ. Եթէ դուք
ընտանեցնէք նրանց մեր օրէնքին և նրանք կարո-
ղանան ձանաչել, թէ մինչեւ հիմայ մոլորուած էին,
զարձ կը գան և կը սիրեն ձեզ և Երեաց աշխարհըն
և կը հեռանան Կայսերիցը, նրա օրէնքից և աշ-
խարհիցն, այնուհետեւ մեզ հետ սէր և միարա-
նութիւն կունենան. ինչ ժամանակ Հայերը մեզ
հետ սիրով կը լինին, Արացիք և Եղուաններն էլ
մերն են այնուհետեւ „(2): Հայոց Պարսից հետ
ունեցած հաւատոյ կոիւը Դ. դարուցն սկսած
շաբունակուեցաւ մինչեւ Խ. դարն, երբեմն երբեմն
միջոցներ տալով, և վերջացաւ Կաւատի որդի Խոս-

(1) Մազմէս Խորենացի, Գերք Գ. թւ. Դակ.

(2) Դաշտ Փարսկեցի, Եղես 71, 72.

բավ թագաւորի հրամանովը, ինչպէս աեսնում
ենք այլոց նամակիցը, որ զբեցին առերակի թոռ
Առոտանդին կայսերն իւ գարումն, այսպէս “ մնք
անդրդուելի պահեցինք հաւատը Պարսից խստած
քարոյ ամբարիշտներիցը. թէև նրանք ամայացրին
մեր գահը, ջնջեցին բոլոր նախարարացը և մեր
աշխարհքի զօրքը, սուրբ քաշեցին մարդկանցն և
կանանցն և զերի արին քաղաքների և գիւղերի
անթիւ բնակիչներին, այնու ամենայնիւ մնացած
ների վերայ սուրբ քաշ արած էր: Հատ անգամ,
նրանք աշխատեցան մոլորեցնել մել, բայց չկատ
բողացան . . . մինչև որ ամբարիշտ Կաւատն և
նորա որդի Խոսրով թագաւորը հրաման չհանեցին,
որ ամենքը մնան իրանց հաւատին և ոչ ոք
չհամարձակուի նեղացնիլ այերին. նրանք ամենքը
մեր հպատակներն են և մարմնով կրծառայն մեզ,
իսկ հոգւոյն թուղ նա աիրէ, ով որ գատումէ հոռ
զիներին , , (1): Երբ որ Արարացիք յաղթեցին
Պարսիկներին, ձայերն էլ ընկան նրանց կործանիչ
հարուածոց տակը և շատ արիւններ թափեցին
պաշտպանելով իրանց հայրենի սուրբ հաւատը
Սուտուլմանաց Փանատիկութիւնից (2): Արաւ
բացւոց յաջորդեցին Թաթարները: Թաթարաց
պատմութեան մի անյատ հեղինակ ձայոց լեզուով
այսպէս է խօսում Թաթարաց զօրավարի և նորա
զօրաց համար. “ անողորմաբար ճնշում էին խեղձ
քրիստոնէիցը, ճանապարհների և լեռների վերայ
գրած փայտէ խաշերն այրում էին և ոչինչով ”

(1) Ասողիկ, Գրէք Բ. ու. Բ:

(2) Թառվմա Վահճունի Գրէք Գ. ու. Ե. Յովհաննէս
Կաթողիկոս:

շին բաւականանում, աւելի նեղացնում էին, վանքերումն ուստում էին, խմում էին և արժանաւոր հոգևորականներին կախ էին տալի և ան- խղճաբար ծեծում էին „:

Յունաց և Հայոց կրօնական թշնամութիւն- ները սկսուումն արդէն Եւ դարումը, երբ որ Սա- հակ Կաթուղիկոսը զանգատում է Թթէոդոս կայ- սերը, թէ ինչ ժամանակ ինքը եկաւ Բիւզանդիոյ կայսերաց իշխանութեան ներքոյ գտնուած Հայաս- տանը, և նրան իրա արժանաւորութեան համա- ձայն ընդունելութիւն չեղաւ „: Ես չի հանգ- դիստից ընդունելութեան իմ վիճակիս մէջը, նրանց պահացուաց հրամանին համաձայն, գրում է Պահակը կայսերը, նրանք այնքան ատեցին մեզ, մինչև մեր նշանագիրներն ել չընդունեցին „ (1): Բայց այս թշնամութիւնն ամենքից աւելի յայտ- նուում է Փ. դարիցը, երբ սկսեցին ջնջել Հայոց ազգին հաւատոյ համար, ասումէ Ասողեկը . “ (Սե- բաստիա քաղաքի մետրապօլիտը) բռնանալով սկսեց չարչարել քահանայիցն և նրանցից զիւա- սորներին կապեց երկաթեայ շղթաներով և ուղար- կեց կայսերն և տանջելով բանդումը Գարրիել աւագ քահանային, սպանեցին նրան „ (2): Մատ- թէոս պատմագիրը պատմում է մէկ քանի Հայոց Յունաց հետ ունեցած շատ հարուածների յատ- կութիւններն Անտիոք քաղաքումը, թէ ինչպէս մէկ Յոյն արեղայ բարձով ինեղում է մէկ Հայ իշխանի, Էնդուք համար, որ նա չի հաւանեցաւ իրա համոզմանցը (3):

(1) Վոլեն Խորենացի, Գևորգ Գ. Ա. Թիւ.

(2) Գևորգ Գ. Ա. Թիւ.

(3) Մատթէոս, Արդան.

Այսպիսի կրօնական անհամբերութեան հոգւով
զինորուած էր Քիւղանդից տէրութիւնն ընդ-
դէմ Հայոց սկիզբումը Քիւղանդից կայսները
կարծելով, թէ պէտք է միայն Կաթուղիկոսին ի-
րանց կողմն դարձնեն, և ժամանակն և բոլոր
Հայոց ազգը կըմիանայ Յունաց եկեղեցւոյ ժետ,
զրա համար զանազան միջոցքներով փոխեցին վե-
րա յիշեալ Կաթուղիկոսների մտքերը, որ յայտ-
նի ընդունեցին Վհաղկեդոնի ժողովը, բայց դրա-
նով միայն կորցրին այդ Կաթուղիկոսաց նշանա-
կութիւնն, առելի շնուցին նոցա աղջի առա-
ջն (1): Յունաց կայսրները հաստատ հաւա-
տալով, որ անկարելի է ևս կերպովը ներգործել,
շատ անզամ մտքներումը զրին (Ժ. Դարումը) կոր-
ծանել Հայոց Կաթուղիկոսաց զահը (2), և
բռնութեամբ հարկադրել Հայերին ընդունել իրանց
հաւատը: Ա արգան պատմագիրն ասում է, թէ
“ Ուունսոս կայսրը սպառնում էր Հայերին Յոյն
դարձնել, սրա համար գալով Կարս քաղաքն, այ-
րեց Հայոց փայտէ եկեղեցին . . . Ելեքս կայսրը (3)
հրամայում է կրկին միրտել Հայերին. Խասհակ
Մնղեղոս Բ. կայսը խստութեամբ չարչարեց
Հայերին և ստիպեց նրանց օգնութիւն խնդրել
Հռովմայ Պապիցն (4): Այսպիսի քաղաքագի-
տութեան հետեւանքը շատ վաաթաք եղաւ Յու-
նաց համար. Հայերը, որ միշտ մաիկ էին տալի
Յունաց վերայ, ինչպէս իրանց հաւատակից քրիս-
տոնիայ տէրութեան վերայ, որին օգնել էին իրանք

(1) Հայք շատուած բառը գլուի վայր են գրում, այդպէս
էլ գրում են սովորաբար Պիդ Կաթուղիկոսի անունը, որ
ընդունեց Վհաղկեդոնի ժողովը:

(2) Մատթեոս: Եերահա Հնորհալի:

(3) Մատթեոս:

(4) Ա արգան:

Նրանց Պարսից հետ ունեցած ամեն պատերսպման
ներութիւն և այնքան նեղութիւններ էին կրել Սա-
սանեան ցեղեցը իրանց կայսերաց մօտ ունեցած
մտերմութեան համար, այս կրօնական հալածանք-
ներից յետոյ տառցին Յոյներին և աւելի ցանկա-
ցան լինել Թոռւրքաց հպատակ քան քրիստոնեաց
տէրութեան. ահա ի՞նչ է զրում Անոր-
հալին Մանուկը կայսերն, երբ որ նա առաջարկեց
միացնել Յունաց և Հայոց եկեղեցին. “Զեզ
արժան է ոչ թէ թակաւորական ահարկու զօրու-
թիւնով, այլ քրիստոնէական խոնարհութիւնով
ձեզ մօտ քաշել գեռացածներին . . . այդ կըլինի
այն ժամանակին, երբ որ խաղաղութիւնը միջնորդ
կունենաք, երբ որ խաղաղութեան և սիրոյ ճառա-
գայթները կրծագեն մեր ազգի վերայ, որոնք որ
բնակուում են ձեր տէրութեան սահմաններումն,
ոչ միայն ձեղանից, այլ և ձեր հոգեորսականներիցն
և ձեր ազգիցը, որոնք մեզ ատելն և անարգելը
համարում են աստղածահաճոյ դործ, աստուա-
ծային պատուիրանքի կատարումն և պատճառ
ժառանգելոյ երկնքի արքայութիւնը. թող հեռա-
ցնեն նրանք իրանցից անխաղաղասէր բնութիւնն և
սիրոյ խաղաղութեամբը վարուեն օտարներիս հետ,
որ հալածուած Քրիստոսի թշնամիներիցն արդա-
րութեան համար, եկել ենք ձեզ մօտ հանգստա-
նալու, որպէս թէ մէկ ամուռ ապաստանի մէջ.
այսպիսի բարի համբաւները տարածուելով Արևելք-
քումն, ամէնքին կըյօժարացնեն սիրով միաբանու-
թեամբ գալ ձեզ մօտ, միայն թէ չըկրկնուեն
միւս անգամ այն պատճառները, որ մեզ հեռացնեն
ձեղանից, որոնք են եկեղեցիների աւերմունքները,
տաճարների կործանմունքը, Քրիստոսի նշանները
կոտրատիլը, հոգեորսականաց սաստիկ նեղութիւն-
ներն և զանազան զրպարտութիւնները, և

Արոնական մարտիրոսութիւնները դարեւոր հա-
լածանքներից յետոյ հղան Հայոց պատմաբանա-
կան կենաց գլխաւոր հիմունքը, Հայոց ազգի
պատմութեան լու երեսները փայլում են հաւատոյ
համար նահատակուածների արիւնովը և տալաւոր-
ուած են սրանք ամէն մի Հայի մաքումը:

Հայերը կորցրին ազատութիւնը, կորցրին Հայ-
րենիք, արժանաւորութիւն, ազգականներին; բայց
ոչ մի զօրութիւն չկարողացաւ զբկել նրանց
քրիստոնէական հաւատից: Երկար ժամանակուայ
արիւնահեղ պատերազմներից յետոյ, երբ որ թշնա-
մին յոյսը կտրեց նրանց յաղթելու և խաղաղու-
թիւն առաջարկեց, Հայերը չաշխատեցին քաղա-
քական անկախութիւն գտնել: Կողմից ա-
ռաջարկուած խաղաղութեան սպայմանները միշտ
էն էին, համարեա, որ առաջարկեց Վահան Մա-
միկոնեանը Պարսից հետ ունեցած այնքան երկար
և յաղթական պատերազմներիցը յետոյ: “ Եթէ
Պարսիկները կըհամաձայնեն կատարել մեր երեք
սպայմանը, ասում է նա, մենք կըծառայենք նրանց
ինչպէս հաւատարիմ ծառայք, իսկ եթէ չեն հա-
մաձայնիլ և իրանց կարծիքին կըմնան, մենք բո-
լըս կըկօրչենք, ուրախութեամբ կըմեռնենք, բայց
չենք հնաղանդիլ Պարսից: Ես երեք սպայմանից
առաջին գլխաւոր և հարկաւորն այն է, որ զուք
թողնէք մեզ պաշտել մեր հայրենի ծշմարիտ հա-
ւատը, ոչ մէկ Հայի չհարկադրէք ընդունիլ մո-
գական օրէնքը, ոչ մէկ ուրացողի պատիւ և փառք
չտաք, կուատունները քանդուին Հայաստանիցը,
մենք չլսենք չոր և անարժան մարդկանցից եկե-
ղեցւոյ անարդանքն, ամէն տեղ ազատ և աներ-
կիւղ՝ թէ աշխարհական և թէ հոգեորական՝ դա-
ւանեն քրիստոնէութիւնն և կատարուեն եկեղե-
ցական պաշտօններն և ծէսէրն, ահա մեր առաջ-

ջին պահսնջմունքն ու : Եղբկորդ պահսնջմունքն
այն էր, որ ոչ թէ ըստ կամաց, այլ ըստ սրբա-
րութեան լաւ մարզք գերազանցուի վատիցն, օք-
տակարն անօգուտիցն և այլն և այլն : Եղբորդ պա-
հսնջմունքն այն էր, որ թաղաւորը իրա աշքով
մտիկ տայ ամեն բանին և ականջովը լսի և այլն.
“ուրեմն, շարունակեց Ա ահանը, եթէ այս բոլորն
կարող էք խոստանալ մեզ և խոստացածներդ թա-
գաւորի կնքով կրհաստատէք, այն ժամանակը
մենք յօժարութեամբ կրլսենք ձեր խօսքերը և
կրկաստարենք թագաւորի հրամանն, իսկ եթէ դուք
չէք կարող կատարել մեր երեք պահսնջմունքը,
իմացէք, որ ուրիշ հնարք չկայ և ինչպէս մենք
ուխտել ենք մեռնելու, այն յօժարութեամբը կր-
մեռնենք և Արևաց թաղաւորին հնազանդուիլ
չենք ” (1) :

ՀՈԴԵԽՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ: Հայաստանումն եկեղեցին
կարգադրուեցաւ հաստատ հիման վերայ. Վիրիստո-
նէութիւնը տարածուելուց յետոյ շուտով հոգե-
ւորական կարզը ստացաւ մեծին՝ Վերսիսի ժա-
մանակը կատարեալ ուղղութիւն (2): Եկեղեցա-
կան կարզը յաժանուեցաւ ինն աստիճան՝ հրեշտա-
կաց կարգին համեմատ: Հայոց հոգեւորականու-
թեան զլուկն էր Պատրիարդ Կաթուղիկոսը, նորա
թեմակալութեան տակն էին՝ Արաց և Ծղուա-
նից Երքեալիսկոպոսները, Սեբաստիոյ, Մելիտի-
նէի, Կոփրէկետի և Աբունեաց Անտրապօլիսնե-
րը (3) և վեճակաւոր Եպիսկոպոսները (4), որոնք

(1) Դաշտ Փարպեցի, երես 280, 281, 282:

(2) Փաւաստոս Բիւզանդացի, Գիւղիք Դ. գլ. Գ.

(3) Ատելաննոս Օլբելան, գլ. Թ. Էլ., Ի.Օ., Էլ. և Ա. Ա.

(4) Ըովհաննէս Կաթուղիկոս, երես 20: Ա արդան: Անտ-

քաննոս Օպրելան:

Գրիգոր լուսաւորչու ժամանակը 400-ից աւելի
էին,, ինչպէս ասում է Ագաթանգեղոսը (1):
Մեծին Կերոսիսի կաթուղիկոսութեան ժամանակը
փիճակաց թիւը շատացաւ (2) և Պատթեոս
պատմաբանն ասում է, թէ Է. գարումը 500 վիւ
ձակ կար (3). վերջումը Ժ. դարիցն սկսած Կա-
թուղիկոսները նշանակեցին եպիսկոպոսներ Հա-
յաստանիցը դուրս գտնուած քաղաքներումը, որ
տեղ շատ Հայք կային. այսպէս միշուում են
Ենտիոքայ, Տարսոնի, Երուսաղէմի, Տրապիզոնի
և ուրիշ շատ քաղաքաց եպիսկոպոսները: Հայոց
եկեղեցւոյ առաջին լուսաւորիչները սովորաբ
ասուում էին Պատրիարք և Կաթուղիկոս (4):
Հայիրն այնքան սիրում էին և երախտապարտ
էին լուսաւորչն, մինչև քրիստոնէութեան առա-
ջին ժամանակները Կաթուղիկոս ընտրում էին
Լուսաւորչու ազգիցն, այնպէս՝ որ երբ վերջա-
ցաւ նրանց ազգը, բոլոր աարաբազուութիւններն
ինչ որ եկաւ Հայաստանի գլխին, համարում էին
Էն պատճառիցը: Մեսրոպին ասում է. “Երշակը
տեսաւ, թէ եւ չի գտնուում Լուսաւորչու ցեղիցը
Հայրապետ և քուջ ու անձնազոհ Պաթիկոնեան
ցեղիցը զօրավար, ուրիմն այս էր Հայաստանի
քանդուելու պատճառը”՝ Կաթուղիկոսներն ընտ-
րուում էին ժողովրդիցը, բայց թէ ի՞նչ կանո-
նով, մնաք տեղեկութիւն չունինք. սկզբումն օժ-
ուում էին նրանք Կեսարիոյ Եպիսկոպոսիցն և

(1) Ագաթանգեղոս: Կիշակոս:

(2) Փաւասոս Բիւզանդացի, Գրեգ Խ. Ա. ԽԵ.

(3) Օովհաննէս Կաթուղիկոս: Կիրակոս:

(4) Ագաթանգեղոս: Փաւասոս Բիւզանդացի, Գրեգ Գ.
Դ. Ժ. Ժ. Ժ. Օ. և Ժ. Գրեգ Գ. Ա. Ժ. Ժ. Ժ. Գ. Պաղար Փարավեցին երես 191, 198: Յովհաննէս Կաթուղիկոս:

որովհետեւ Թաղէոս առաքելոյ քարոզած երկիրնեա
թիցը միայն Անսարիայումն անընդհատ շարունակէ
ուեցաւ եպիսկոպոսական կարգը սկսած Թաղէոս ա-
ռաքելու օրհնած Թէկոփելոս Եպիսկոպոսիցը մին-
չե Գրիգոր լուսաւորիչն, ուստի և նա համարելով
Հայաստանը սուրբ Յաղէոսի վիճակն, օծուեցաւ
Անսարիոյ Եպիսկոպոսիցը: Այսպէս են պատմում այս
անցքը Հայոց բոլոր պատմագիրները (1): Մոզ-
սէս Խորենացին ասում է, թէ “Տրդատի թագաւ
որութեան Ժէ. տարումը սուրբ Թաղէոս առա-
քելոյ աթոռը բարձրացաւ մեր Գրիգոր նախաւ
հայրն և ըստ աւետարանի Ծնօղն” (2): Այսպէս
շարունակուեցաւ մինչև մածն “Երսէսը (ի. զա-
րումը)։ Նորա ժամանակը “ երբ որ Առաջանդնու-
պօլսոյ և Երուսաղէմի եպիսկոպոսները սկսան
Պատրիարք կոչուիլ, Էն ժամանակն Արշակ թա-
գաւորն և նախարարները բարձրացրին նրան Պատ-
րիարքական զահն (3). այս ժամանակից սկսած
Պատրիարքներն էլ չօծուեցան Անսարիոյ Եպիսկո-
պոսիցն, այլ իրանց Եպիսկոպոսաց ժողովքիցը (4):

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Հայոց եկե-
ղեցին բոլորովին անկախ էր, Հայոց կաթուղիկոս
սաց իշխանութիւնը տարածուում էր ոչ միայն
բոլոր Հայաստանի վերայ, այլև Արաստանի և
Աղուանստանի (5). Օք զարումը Մովսէս Ամա-

(1) Աներովը, Աւ. Աւ. Ժ. Ժ. Օնոր Գյակ Պանդէի
նամակներումը, որ առ Տրդատ և սուրբ Գրիգոր: Փաւստով
Բիւզանդացի, Գիւր Դ. Աւ. Գ.

(2) Անվան Խորենացի, Գիւրը Բ. Աւ. Պ. Ա.:

(3) Յովհաննէս Կաթուղիկոս, երես 29: Ա արդանս:

(4) Յովհաննէս Կաթուղիկոս: Անվան Խորենացի, Գիւրը
Ա. Աւ. Լ. Ժու:

(5) Յովհաննէս Կաթուղիկոս: Աիրական

թուղիկոսի ժամանակը Ա Յաց եկեղեցին բաժանեաւ և այսոց եկեղեցուցն է միացաւ Յունաֆշետ

Կաթողիկոսի հջունութեանն եի նորն Ունեցած Յարդերը Թիւթեան Թագնուորական Իշխանութեան Վերաբ Կաթողիկոսական իշխանութեան յարաքերութիւնն առ Թագաւորական իշխանութիւնը սկսաւ արդէն Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը մտնելու օրիցը Տրդատը բոլորովին հնաւ զանդում է Գրիգոր լուսաւորչին վերջերումը Կաթողիկոսները Հաստատուելով ժողովրդիցն և պահպանելով ժողովրդի օգուտը մեծ բարոյական ազգեցութիւնն է իշխանութիւնն ունեին Հայաստանի վերայ Նրանք սաստիկ վերահայեցողութիւն էին անում Թագաւորական գործքերին և խաղաղութիւն էին ձգում Թագաւորի և նախարաց մէջ (1) միշտ անտրդում էին Թագաւորներին նրանց վատ գործքերի համար (2) Կապակցութիւնն ունեին Բիւզանդիոյ կայսերաց հետ ցոյց էին տալիս նրանց թէ ում է հարկաւոր նշանակել Հայոց թագաւորի Մարզպանաց ժամանակը բոլոր հրովարտակներն և գործնական թըղթիւրը զրում էին Կաթողիկոսի եպիսկոպոսաց և նախարարաց անունիցը թէպէտև Մարզպան կար բայց իշխանութիւնն և կառավարութիւնն առանձնապէս Կաթողիկոսի ձեռքին էր Պարսից Դեն Հապուհ զօրավարն ասաց թէ Յովսէփ

(1) Մովսէս Խորենացի Գիրք Գ. 42. Ի. Մովսէս Խորենացի Գիրք Բ. 42. ԺԵ. Ժ. 4. Լ. Պ. Պազմութիւնիցի երես 23:

(2) Մովսէս Խորենացի Գիրք Գ. 42. Ի. 4. ՕՐԵ. Երշիչէ երես 46.

Կաթուղիկոսն “ էր բոլոր քրիստոնէից բուն իշխանն և երաշխաւոր բոլոր թագաւորական գործոց մէջ,, (1):

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑ ԱՌԱՋԻՆ ԽԱՇ ՏԱՆԵԼՈՒ ՄՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ: Առվորութիւն էր Կաթուղիկոսաց առաջին խաչ տանել . Վարդան պատմագիրն ասումէ, թէ Ալբ-Երսլանի որդի Մելք-Շահը “ որ էր ողորմած և բարերար մարդ, աւելի մեր ազգի համար, հրամայում է Բարսեղ Կաթուղիկոսին իրան առաջին խաչ կրել և այնպէս գնալ իրան մօստ :

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՆԵԼՈՒ ՄՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ: Առվորաբար Կաթուղիկոսների պատկերները հանում էին. երբ որ Առղօմոն Կաթուղիկոսին հարցրին, թէ նա ինչի՞ ընդունեց այդ աստիճանն էդպէս ծեր լինելով, նա պատասխան տուեց. “ որ նկարեն իմ պատկերն ուրիշ այրապետաց պատկերների հետը ”, որ և կատարուեցաւ, ասում է Վարդանը. “ որովհետեւ մէկ տարուց յետոյ նա մեռաւ և նրա պատկերը մնաց ուրիշների հետ ”:

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՏԻՏՈՂՅԸ: Անձն Սահմակ իրան նամակներումը, որ զրից թէկողոս կայսերն, Ետտիկէս Պատրիարքին և Անատոլ զօրապարին, կոչում է իրան սովորաբար “ Սահմակ Խափիսկոպոս Հայոց ”, (2): Եյսպէս կոչեց իրան և Յովսէփ Կաթուղիկոսը Պարսից Յազկերտ թագաւորին զրած նամակումը (3). “ Եկեւսէս Հնորհալին իրան

(1) Եղիշէ, երես 300:

(2) Առվլէս Խորենացի, Գիրք Գ. Ա. ՌԵ. ՌԵ.

(3) Եղիշէ, երես 46:

ուղարկած թղթերը սկսում է այս խօսքերովը,
ու Կերսէս ծառայ Քրիստոսի և նորա ողորմու-
թեամբն և կամքովը ձայոց Ավաթուղիկոս,,,:
Եյսպէս էր ձայոց կաթուղիկոսների տիտղոսը.
Վերջին ժամանակումն այս տիտղոսը փոքր ինչ մե-
ծացաւ:

ԱՅՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՆԻՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ. Ստո-
րագրութիւնը սովորաբար կարմիր թանաքով էր,
Ավաթուղիկոսի կոնդակի վերայ կնիք էր դրուում,
որի մէջ տեղը Փրկչի պատկերն էր, իսկ շրջա-
կայքը Ավաթուղիկոսի անունը Ավաթուղիկոսի բնա-
կարանը առ հասարակ կոչուում էր Ավաթուղիկո-
սարան:

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՏՈՒՆԸ. Վատթէոս պատմագիրը
պատմելով կաթուղիկոսական տան կարգերի և
շքեղութեան համար, ասում է, “տան երկու
եպիսկոպոս և չորս վարդապետք կային Ավաթու-
ղիկոսի տանը, վաճուուն միանձն աբեղայ և 500
աշխարհական,,,: Ավաթուղիկոսի գահն ոչինչ բա-
նով պակաս չէր քան զթագաւորս:” Ենթիւ և
զարմանալի էին զարդարանքներն եկեղեցիների և
կաթուղիկոսական տան համար, որ ընծայել էին
առաջին թագաւորներն և առաջին հայրապետներն,,,:
ուրիշ մատենագիրները յիշում են Ավաթուղիկոսի
առաջի բոլոր ծառայութիւնները (1):

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿԱԼՈՒԱԾՔԸ. Եղր որ Տրդատն
ընդունեց քրիստոնէական հաւատը, տուեց կա-

(1) Փաւատոս Բիւզանդացի, Գիւրք Դա և Ժեւ Գիւրք
Զ: թ: Եթ: Ասողիկ, Գիւրք Բ: Գլ: Բ: Յովհաննէս Ավա-
թուղիկոս, երես հ5: Վատթէոս Լաստիվերտցի, Գլ: Ճ:

թուղիկոսական տանը մէկ քանի կալուածքներ։
 Յովհաննէս կաթուղիկոսը յիշում է միայն Ա-
 րամուն գիւղը (1). Փաւստոս Բիւզանդացին
 ասում է. մեծն “Սերսէսը նկատում էր “իրան
 առանձին իշխանութեան 15 գաւառը „, յետոյ
 թուում է նրանցից գլխաւորները, որոնք են “Ա-
 րարատ, Դարանաղի, Եկեղեց, Տարօն, Աղնու-
 նիք, Օսպիք և ինչ որ նրանց մէջ տեղը և շըր-
 ջակայքումը կային” (2). Մատթէոսը պատմումէ,
 թէ “երբ որ Պետրոս հայրապետը, որ գետադարձ
 էր կոչուում, բարձրացաւ Հայաստանի կաթու-
 ղիկոսական գահը, ստացաւ իրա նախորդներիցը
 Հայոց թագաւորներից ընծայած 500 երեսի հա-
 րուսա և արդիւնաբեր գիւղեր „,

Կաթուղիկոսի բնակուելու տեղը. Գրիգոր լու-
 սաւորչի ժամանակից սկսած մինչև Գիւտ կա-
 թուղիկոսը (Ե. դարումը), կաթուղիկոսական
 գահն էր Ա աղարշապատումը, բայց Գիւտ կա-
 թուղիկոսը փոխեց Դվին քաղաքը (3). Դաւիթ
 կաթուղիկոսը (Ը. դարումը) նեղանալով Աւ-
 ճուգեանթուլքերիցը, փոխեց աթոռն Արամանս (4).
 Պետրոս գետադարձը բնակուում էր Աերաստիա
 քաղաքումը (Ժ.Ը. դարումը) (5). Բարսեղ կա-
 թուղիկոսը, կաթուղիկոսական աթոռը հաստա-
 տեց Բագրատունիաց Անի մայրաքաղաքումը (6).
 Էս տեղեց նրա յաջորդները փոխեցին Հռոմեայ
 քաղաքը (7). Վերջերումը կաթուղիկոսները հա-

(1) Յովհաննէս կաթուղիկոս

(2) Փաւստոս Բիւզանդացի, Գիւտ Դ. Ա. Ժ.Պ.

(3) Ա արձան:

(4) Ա ատթէոս

(5) Աիրակոս:

(6) Ա ատթէոս:

(7) Աիրակոս:

լածուելով Քրիստոսի հաւատոյ թշնամիներիցը,
հարկադրուեցան փոփոխել իրանց աթոռը զանա-
զան քաղաքներ, որ տեղ որ յոյս ունէին իրանք
ապաստանարան գտնել հալածանքներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ Ուրեմն էն ժամանակն, երբ
որ հասարակութեան ամէն կարգի մարդիկը շփո-
թութեան մէջ էին, հոգևորականութիւնը գտնու-
ում էր բարեկարգութեան մէջ. այն դժուարու-
թիւնները որ պատահում էին քրիստոնէու-
թիւնը տարածելուս, հարկադրեցին առաջին
հոգեոր լուսաւորիչներին աւելի մեծ ոյժ գործ
դնել: Բայց երբ որ աշխարհական իշխանութիւնը
քաղաքական անդադար խռովութեանց մէջ Ար-
շակունեաց ցեղեցն անցնում էր Սասանեան ցեղեն,
Սասանեաններից Արւանդացւոց, երբ որ նա-
խարարները ուրացութեամբ կամ բռնութեամբ աշ-
խատում էին խլել այն իշխանութիւնը մէկս մէկից,
եկեղեցական կառավարութիւնն երևում էր ան-
զրդուելի հիմանց վերայ հաստատուած: Հայաս-
տունը լքուեցաւ վանքերով, իւրաքանչիւր վանքն
ուներով անթիւ ուիտաւորներ, կեղրոն ղարձաւ
իրան գաւառին, աշխարհական իշխանութիւնը
հոգևորականութեան հետ մէկ գծի վերայ էր ըն-
թանում և երբ որ աշխարհականը թուլանում էր,
իսկոյն յառաջ էր գալի հոգևորական իշխանութեան
անյաղթելութիւնն: Այսպէս Հայաստանը, որ չ'կա-
րողացաւ զիմանալքաղաքական մըրիկների, Արւ-
անդիոյ և Հռոմայ կրօնական պահանջմունքները
հերքելու համար պատրաստ զէնք ունէր: Աթու-
զիկոսն եղաւ իւր եկեղեցւոյ անկախ գլուխն, եթէ
նիւթական միջոցներով յետ էր նա, այսու ամե-
նայնիւ իւր բարձր առտիճանովը հաւասար էր
Հռովմայ պատին, և արևելեան Պատրիարգացը:

Հայոց եկեղեցւոյ էս անկախութեան պատճառն է
հոգեորական կապը, որ բոլոր աշխարհի վերայ
ցրուած Հայերին մի ազդ է շինում։

— ԱՆՁԱՇԽԱՑՔ ԱՅ ։ —

Գ. ՆԵՐՎԻԿԻ ԱՌԵՍԱԾԲՈՒԹԻՒՆ։

Հայկ եկաւ Հայաստան իր ազգականաց հետ
ոչ յաղթողի նման, այլ բնակուելու, էնտեղի թա-
փառական ժողովուրդը նանաչեղով իրենց մօտ
եկողների գերազանցութիւնը, յօժարութեամբ հնա-
զանդուեցան նրանց և ուրախութեամբ բնակուե-
ցան նրանց բնակարանների շրջակալքումը։ Արա-
համար Հայաստանումը չսահմանուեցան Թահու-
ւական կարգերը։ Հայեր Հայաստանը համարում
եր ոչթէ իբրև իրեն հայրենական ժառանգութիւն,
այլ իբրև սեպհականութիւն բոլոր իր ազդի. որա
համար ազգի ամեն մի անդամը վիճակ էր ստա-
նում, իր մեծիցը կախումն ունեղով։ այն մեծ
միայն իրաւունք ուներ կռիւ սկսելոյ և խաղա-
ղութիւն ձգելոյ. այնպէս Հայաստանը բաժանուե-
ցաւ վիճակաւոր կալուածքներ, որոնք կոչուեցան
նախարարութիւններ, իսկ կալուածատէրները նախա-
րաբներ։ Թահպէտ մի քանի ժամանակից յետոյ երբ
որ ազգակցական կապակցութիւնները տկարացան
և միապետութիւնը տիրեց, նախարաբներն էլ կալ-
ուածատէր իշխանաց կարգն ընկան, բայց ներքին
կառավարութիւնն, ինչպէս դատաստանն և իրա-
ւունքը, պարզե և պատիժ, հարկը ժողովել և
զօրքը միշտ մնացին նրանց սեպհականութիւն։
Աղալարշակ, որ ուղում էր քաղաքական միու-
թիւն, պահպանի տէլրութեան մէջ, տեսաւ իրան

տիրած Հայաստանումը շատ ինքնագլուխ նախարարներ մեծ մեծ կալուածքներով, որա համար իր թագաւորելուց յետոյ ուղարկեց Կիբուռէի դիւնատունը որոնել, թէ “ո՞ր տեղից են էս նախարարներն”, (1) և երբ որ իմացաւ նրանց ծագումն և ժողովրդի ու նախարարաց միացնող սիրտ կապակցութիւնը, չփստահացաւ զիսլով նրանց և “նախարարութիւններ հաստատեց և այս նախարարութենանց զլուխներ կարգեց օգտակար մարդկանց, թէ մեր Հայկ նահապետի ցեղեցն և թէ ուրիշ ցեղեց,, (2): Բայց երեխ թէ վախելով ընդդեմ ներգործութիւններից և կամելով նրանց ոյժը տկարացնել, սկսաւ նոր նախարարներ էլ հաստատել և երբորդական տորթենուը ուշրտավեան մէջ, ժառանգութիւն տուեց Վարացան ցեղին, որոնք էին Եժդահակ Արաց թագաւորի ցեղեցը (3): Տիգրան վերջինն էլ, ինչպէս երեսում է, գործ է զնում Ապարշակի քաղաքականութիւնն, որովհետեւ բարձրացնում է նախարարութեան անցայտ և օտար մարդկանց, որոնք իրեն հաւատարմութիւն էին ցոյց տուել, այսպէս նա հաստատումէ Ուսփսեան նախարարութիւնը: Մովսէս Խորենացին ասումէ: “ինչոր երկրորդականութեան ճիշդեղեր կային, թէ էս տեղ և թէ Արքէից կողմերը հաստատում է Տիգրանը, ովոնդ բուշը անյայտ ճաշ-

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Ա. 42. Ը, թու

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Գ:

(3) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Ը: Տէրութեան երկրորդն էր ինչպէս մեծ վէզեր կամ առաջին խորհրդական, առաջի աստիճանաւոր: Այս կոչումը մի քանի արտօնութիւններ ուներ, նրանք երաւոնք ունեին վարսակալ դնելու թանգարդին քարերով զարդարած, երկու ականջներումը դինտեր և կարմիր կոշեկ մի ստքին, գործ ածել ունէ զրգալ և պատառքաղ և խմել ոսկե բաժակներով:

Դէս էին եղել ապդագոհմէ և զօրէի մէջ, չնուեանք
տնյամբ մըայն եցեւէլէ էն եղել և Տիգրանի համար
պատերազմէլ էն Յունաց հետ։ “Արանցից ոմանք
Առածէից նահազիցն էին, ոմանք մեր կողմերից,
այսինքն մեր պատմած Աճենից ազգից, ոմանք
Հայկայ սերունդից և մի քանիսն էլ նորաեկներից։
Մնաք նրանց անունը չենք ասիլ. առաջին՝ որ
մեզ յայտնի չեն, երկրորդ՝ փախչելով աշխատու-
թիւն կրելուց և երրորդ՝ որ շատերի անհաստա-
տութիւնը կարծիքի տակ է ձգում ամենքի վերայ
մտածել. սրա համար ոչինչ չենք պատմել էն
ազգերի համար, որ վերջին Տիգրանիցը հաստատ-
ուեցան, (1)։

Արշակունեաց միքանի թագաւորներն ուրիշ կերպ
քաղաքականութիւն գործ զրին առ նախարարս,
նրանք համարձակ արիւնահեղ պատերազմներ բայց
արին նրանց հետ և ջնջեցին ամբողջ ազգերին։
Փաւատոս Իհւղանդացին ասում է, թէ Տիգրանը
Հայր իշխանի խրատելովը կոտորեց շատ նախա-
րարներ առանց ոչինչ պատճառի (2). սա նոյն-
պէս ուրիշ տեղ ասումէ, թէ “Հայր Մարդ-
պետը չար մարդ էր նա ջնջեց բոլոր
նախարարութեան ցեղերը Տիգրանի թագաւորու-
թեան ժամանակն „ (3). Խապէս էլ Արշակ թա-
գաւորն, ըստ Վկայութեան նոյն իսկ Փաւատոսի,
“ կոտորեց շատ նախարարների, շատերի արմատը
կտրեց և շատերի կալուածքն էլ թագաւորական
շինեց „ . այս բանը Մովսէս Խորենացին էլ հաս-
տատում է, ասելով. “ Արշակը սուրը քաշեց

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. ԿՊ.

(2) Գիրք Գ. 42. ԺԲ.

(3) Գիրք Դ. 42. ԺԲ.

չու նախարարների, մանաւանդ ջնջեց Առմարտա-
կան ցեղը „(1): Խորենացին մինչև անդամ պատ-
մում է, թէ ի՞նչ խնդիրներ գործ զբեց Արշակը
այս բանի համար, “որպէս կամելով վարձատրել
Առմարտականներին, նա կանչեց նրանց իր մօտ,
ինչպէս իր ազգակիցների, իր քանդելու արքու-
նիքը Արմաւիր՝ հրամայեց կոտորել մարդկերանցն
և կանանցն երեխերանց հետ „(2):

Բազգաառնեաց թագաւորներն եւ էնպէս էին
վարուում նախարարաց հետ, նրանք կամենում
էին կենդնդոացնել իրանց ձեռքի մէջ նախարարաց
իշխանութիւնը, որ ազգի բոլոր զօրութիւնն իրենց
օգտին գործ ածեն, աշխատում էին ջնջել հին
նախարարութիւններն և նորերը սահմանել,
որոնք իրանցից կախումն ունեին: Յովհաննէս
Ժամանակակից Արթուղիկոոը գանգատուում է,
թէ “մեր թագաւորներն և իշխաններն աշխա-
տում են ցրուել մեր բուն նախարարներին, խել
նրանց կալուածքներն և ըստ իրենց հաճոյիցը,
նոր իշխաններ հաստատել, որոնք որ իրանցից կա-
խումն ունեին „:

Այսպէս թագաւորական իշխանութեան հետ եւ
ընթանում էր և նախարարական իշխանութիւնն,
որոնց ձեռքին էր այսատանին ներքին կառավա-
րութիւնը. վասն որոյ և մենք կաշխատենք ցոյց
տալ, թէ ի՞նչ յարաբերութիւններ ունեին նա-
խարարներն ազգի և թագաւորի. հետ (3):

(1) Գիւք Գ. Աւ. Ա.:

(2) Գիւք Գ. Աւ. Ա.:

(3) Կախարար բառը եթէ քննենք բառազննութեամբ, համ-
մածայնում է լատինաց պրաեֆեկտուս բառին, որովհետեւ
նախ նշանակում է առաջին, առաջ (առնեմ բայից) նշանա-

“Նախարարաց ծագումը մէկ լինելով ժողովրդի ծագման հետ, իշխում էին ժողովրդի վերայ սիրով և քաղցրութեամբ, միշտ պահպանում էին ժողովրդի իրաւունքը, կառավարում էին և դատում էին ըստ հին սովորութեանց, որովհետեւ ազգի նահապետական կեանքից իրաւարանական և քաղաքական կեանքն անց կենալու ժամանակը զրաւոր օրէնքներ չկային:

Ազարշակը տեսնելով Հայոց նախարարաց կեանքի այս անորոշ գիծը, շփոթուեցաւ և զրեց իւր եղբօրն այսպէս. “յայտնի չէ, թէ ի՞նչ կարգեր են եղել այստեղ, ով է եղել էս աշխարհքի գլխաւորներիցն առաջինը կամ վերջինը, ոչինչ օրինա-

կամ է առաջին գործող, տերութեան առաջին աստիւ մանաւոր:

“Նախարարաց ազգի առաջին մարդը կոչում էր Տէր, Պառագեր, Նահապետ, իշխան, զորօրինակ տէր Պատիսնեանց, Էլիան Արքունունեանց և այն: Խորենացի, Գրեք Տ. Ք. Բ., Խ. Խ. Խ. Օ.: Փաւասոս Բիւզանդացի, Գրեք Տ. Ք. Ժ. Օ.: Ղազար Փարպեցի, երես 212 և 296:

Ես կարծում եմ, որ տէր բառու չի նշանակում պարոն, այլ մեծ. Եթէ քննում ենք Հայոց լեզուի մասնիկները, որնցից բարդուելով բառեր են շինուում, տեսնում ենք, որ մասնիկ ո՞չ, երբ որ դրուում է բառի սկզբումը, միշտ նշանակում է մեծ, զգորինակ եղբ, տիեզր, ին, ուիկին, այլ, ուխոյր կամ թէ կրմատեալ տէր:

“Նախարարաց միւս անդամները կոչուում են սեպուն. դժուար է իմասնալ, թէ ինչիցն է բարդուել էս բառը, ուրեմն և ճիշտ նշանակութիւնն էժուար է յայտնել. շատ կարելի է, որ Փաբսից շատուր բառիցը լինե, որ հայերէն ասուում է շապուն, այսինքն թագաւորի որդի, կամ թէ կարելի է դուրս եկած լինի սեպէ բառիցը, որ վրացերէն նշանակում է թագաւոր և ուրեմն սեպուն նշանակում է թագաւորի որդի. մենք չենք կարող վճռաբար դատել այս խնդիրը, միայն թէ Հայացատանումը նախարարաց երկրորդական անդամներն այսպէս են կոչուում, ուրեմն կարելի է ասել, թէ սեպուն բառը մի և նոյն նշանակութիւնն ունի Ուուսաց Կոյզ բառին:

Ղազար Փարպեցի, երես 78, 80, 94, 98, 103, 114, 117, 124 և 125:

որ բան չկայ, այլ բոլորն խառն ՚ի խուռն և վայ-
րենի,, (1): «Ասիարարները միշտ հոգս էին քա-
շում իրանց երկրի քարեկարդութեան համար, աշ-
խատում էին մեծացնել զիւղերը, զարդարում էին
քաղաքներն և ժողովում էին հարկն և զօրքը՝
նրանց պարտքն էր պահպանել ներքին խաղա-
զութիւնը. սրա համար էլնախարարներն իրաւունք
ունէին զօրքի մէկ մասն իրենց տնօրինութեան տակը
թողնուլ, իսկ միւս մասն առնել և գնալ թա-
գաւորական ծառայութիւն (2). որոնցից թագա-
ւորը նշակում էր մէկ զիխաւոր զօրապետ, որը որ
առաջնորդում էր զօրքին աերութիւնը պահպա-
նելու օտար թշնամիներիցն և նախարարաց մ.ջ
ծագած խոռովութիւնները հանդարտացնելու: Բայց
որովհետեւ նախարարներն աւելի իւրեանց օգտին
էին նայում քան թէ թագաւորաց սրանց ժառանգա-
կան կալուածքների համար և քիչ զօրք էին ու-
ղարկում թագաւորական ծառայութիւնը, մանա-
ւանդ Բագրատունեաց անզօր թագաւորաց ժա-
մանակն, երբ որ ամենայն կողմից թշնամիքն յար-
ձակուում էին Հայաստանի վերայ, այդ պատճա-
ռաւ էլ թշնամեաց թիւը միշտ շատ էր լինում
և Հայերն երբէք չեին կռուում շատ զօրքով»:

Բայցի էս զինուորական պարտաւորութիւնները,
նախարարները պարտական էին նոյնալիս ամենայն
տարի իրանց երկրից հարկը վճարել թագաւու-
րին (3). իսկ եթէ չեին կատարում այս պարտա-
կանութիւնն, այդ նշանակում էր, որ նրանք ա-
պստամբուել են: Թռովմա Արծրունին պատմում

(1) Վովսէս Խորենացի, Գիրք Ե. 7L. Թա:

(2) Վովսէս Խորենացի. Գիրք Գ. 7L. Յ. Զ.

(3) Թափմա Արծրունի, Գիրք Դ. 4L. Ե:

է, թէ “Սմբատ Սիւնեաց իշխանը միւս տարին
էլ չի հնազանդէց Հայոց թագաւորին, վահարէլով
հարէ”, Միւս տեղումն ասում է, թէ “Սմբատ
Հայոց թագաւորը գնաց Եպահունեաց կողմերն,
որովհետև Արդուլ Ուահմանի որդիքը, որոնք կոչ-
ուում էին Կայսիք, ապստամբուհով թագաւորի
իշխանութիւնից, ”և հարէ էին չնարում և ”
ջօր էին ուսլի ինչպէս պարտաւոր էին ըստ օրի-
նաց,, (1): Մուծն Կաթուղիկոսը թա-
գաւորի և նախարարաց փոխադարձ յարաբերու-
թեանց համար այսպէս է խօսում. “որ թագա-
ւորն անիրաւութիւն չի անի, չի նեղացնի, բայց
արդարութիւն գործ գնի և հայրական խնամք ու-
նենայ նախարարաց վերայ, որ նրանք էլ չի վեր
կննան թագաւորի դէմ և չի հեռանան նրանցից,
այլ ծառայեն հաւատով և ծշմարտութեամբ,, (2):

Այն ժամանակն էր թագաւորը հզօր, երբ որ
նախարարները համաձայն էին նորա հետ. Յովհան-
նէս Կաթուղիկոսը մէկ երեելի անցք է պատմում,
թէ “երբ որ Սմբատ թագաւորը տեսաւ, թէ խաղա-
ղութիւնը տիրեց Հայաստանին և միաբանութիւնն
ու սէրը թագաւորեցին իրա և նախարարաց մէջ,
էն ժամանակը մոքումը դրեց գնուլ և Տարօնու-
երկիրը հնազանդացնել, : “Նախարարներն՝ որոնք
անդադար կուուում էին իրանց թագաւորաց հետ
իրանց իրաւունքների և ազատութեան համար,
աւելի փստահութեամբ և եռանդով ընդդիմանում
էին օտար թշնամիներին և հենց մի բան պատա-
հած ժամանակն իսկոյն և իսկ զէնք էին վերցնում
իրանց հայրենեաց քաղցր ազատութեան համար:

(1) Տնովմա Արծրունի, Գուգաք Գ. Ա. Ժ. Ժ.

(2) Մովսէս Խորենացի, Գուգաք Գ. Ա. Ժ. Ժ. Լ. Բ.

Պարսկաստանը սովորած լինելով իրան թագաւորաց բռնակալ իշխանութեանցը (ձեսպոտիզմъ), յօժարութեամբ մոտու Սելեկիացւոց լծի տակը. Հայաստանութիւն էլ հենց որ տարածուեց Աղքասանդր մեծի մահուան համբաւը, նախարարները վեր կացան և սաստիկ պատերազմներ արին Մակեդոնացւոց և Սելեկիացւոց թագաւորների հետ։ Պարսկաստանն Արշակունեաց ցեղի վեր ընկնելուց յետոյ հնադանդուեցաւ Աստանեան ցեղին, բայց Հայաստանութիւնն երբ որ Արշակունեաց ցեղը վերջոցաւ, Հայերը սաստիկ պատերազմներ արին Պարսից հետ իրանց անկախութեան համար։ Ոչ Արաբացիք, ոչ Բռաթարներն, ոչ Թրամեռալանը՝ որոնք ամէն աշխարհէից Հայաստանն ամայացրին, չի կարողացան հարիագրել նախարարաց, որ նրանք ըլութեամբ ստրկանան. այս տիրողներն անկտանդ էին միայն իրանց բանակներում։ Հայաստանի այս քաղաքական կարդերը զօրեղացնում և յայտնում են Հայոց պատմաբանական կեանքի գլխաւոր երեսյթները։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ՆԱԽԱՐԱԲԱՑ. Հայոց պատմաբանները միաձայն հաւանութեամբ բաժանում են նախարարներին երկու աւագ և կրտսեր։ Եղիշէն ասում է. “ Երեսուն և հինգ մարդ կային ոչ միայն առաջ նախարարներիցն, այլև կրտսերներից. զրանց բոլըն էլ նախարարաց ցեղից էին ” (1). Կա նոյնպէս ասում է և կանանց համար, “ հինգ հարիւրի չափ ես յականէ յանուանէ ճանաչում եմ, ոչ միայն առաջներից այլև կրտսերներից ”, : “ Արտաշէր Պարսից թագաւորը հրամայեց յետ

դարձնել Ասմարականաց և Վահառունեաց ազ-
գից իւլած տները, միայն թէ չե հաստատեց նրանց
իրանց հայրենի գահի վերայ, այլ շատերիցը
ցածր կարգեց և էջունք նախարարաց կարգը
ձգեց „(1):

Կախարարները հաշուում էին իրանց ազգային
աւագութեան համեմատ. թագաւորի սեղանի վե-
րայ նրանք բազմում էին բարձերի վերայ
իրանց աւագութեան կարգովը. Հայոց լեզուն դեռ
մինչեւ ցայսօր պահում է այդ սովորութեանց հետ-
քերն. այս խօսքերս. “ Էարչ և պատիւ սպանաւ
նագաւորնեց „, հաստատում են մեր ասածն: Երբ
Ապարշակ Վրշակունին Հայոց գահը բարձրա-
ցաւ, շատ նախարարութիւններ հաստատեց, ուս-
տի նոր կարգեր մտան թագաւորի և նախարարաց
միմեանց մէջ: Ապարշակի հաստատած այս նա-
խարահութեան կարգերը փոփոխուեցան վերջե-
րումը Խոսրովի և ուրիշ թագաւորաց ժամանակը:
Սկսրովը պատմում է, թէ Մեծն Կերսէս Ա-
ստրիայումն օծուելուց յետոյ յետ է դառնում
Հայաստան, նորոգում է Խոսրով մեծի և ուրիշ
թագաւորաց կարգերն. այս մի և նոյն կարգը հաս-
տատում է Կերսէսն Վրշակի սեղանի վերայ „(2):
Եյս կերպով կազմուած էին նախագահութեան
զրքերը, որ պահուում էին թագաւորական դի-
ւաններումն, որոց մէջ զրուում էին նախարարաց
ցեղերն իրանց աւագութեան համաձայն և նշա-
նակուած էին իւրաքանչիւր նախարարաց տեղերը,
բայց տարարադտարար մեր պատմաբաններիցն ոչ ոք

(1) Մովսէս Խոսրենացի, Գիրք Բ, 42. ԿՊԱ Գիրք Գ
Հ. ՕՐԵ. Մեսրովը, 42. ԺԲՆ:

(2) Մեսրովը Հ. ԺԲՆ:

Ճշմարիտ տեղեկութիւններ չի թողել մեզ համար,
թէ նրանցից ո՞րն էր առաջինը կամ յետինը (1):
Գ. Եմինն իրա խորենացու Ուռւսերէն թարգմա-
նութեան մէջն աւելցրել է նախագահութեան դր-
քից մէկ հատուած՝ այս հատուածը, որ գրուած
է եղել քառածալ մազաղաթի վերայ, գտել է
Գ. Հախվերդեանցը մէկ հսյերէն հին ձեռագրի
կազմի մէջ. նա վերաբերում է Պարսից Արտաշէր
և Առամ թագաւորաց և մեր Սահակ Կաթու-
ղիկոսի ժամանակին և իրան մէջ պարունակում է
եօթանասուն նախարարաց անուններ, որոնք մէկս
մէկու յետեից տարուած են իրանց կարգին և
տեղին համաձայն, որ հաստատել է Պարսից թա-
գաւորն: Այն թղթի մէջ նախարարաց անունից
առաջ դրած է մէկ քանի խօսք, որից կարելի է
կարծել, թէ Սուրբ Սահակն իրան Տիգրոն Առա-
մի պալատումն եղած ժամանակը վերցրած և բե-
րած պէտք է լինի այս նոր հաստատուած կարգի
ցուցակը: Մէջ բերենք էս տեղ այս հետաքրքիր
հատուածը հին Հայաստանի քաղաքական կար-
գերից: “Սահակ՝ Արտաշէս թագաւորի պալատումը
պտոտում էր էն, ինչ որ Տիգրոնումը խօսեցել
էին (ասելով).” “Քաղոց ամսի 17-ին թագաւոր
թագաւորաց և բարերար Արտաշէի և Առամի
դիւանումը տեսայ Առամի հրովարտակն ևս Սա-
հակ Կաթուղիկոսս և ինուրելով գրեցի (Պարսից
թագաւորին) այն բանի համար, որ նորին բարե-
րարութիւնը հրաման տայ Հայոց նախարարաց
աղգերը գրել թագաւորական դիւանումն ինչպէս
առաջ Հայաստանումը լինում էր. որ էստուց յե-

(1) Ադաթանգեղոս: Ստեփաննոս Օրբելիան, Գիւք Ե:
Փաւաստու Ծիսցանդացի, Գիւք Դ, և Գ:

այս Հայոց ազատների և տանուտէրների գահը
յայտնի լինի,, : Բատ հրամանին թագաւորին թա-
գաւորաց Ներսէջն և ես . . . հակ Կաթուղիկոս
Հայոց կնքեցինք նամակը և դրինք մատանին թա-
գաւորի և մեր և այս բոլորն է արդար և ճշմա-
րիս :

Առաջին իշխանն և Մաղիսաղն. Եւ Արևելաց
տէր. Ի. Սապետ, Գ. Արծրունեաց տէր, Դ. Մա-
միկոնէից տէր, Ե. Շահապն՞օրփաց տէր, Զ. Պո-
կաց տէր, Է. Ուշտունեաց տէր, Ը. Վահու-
նեաց տէր, Թ. Կասպէից տէր. Ժ. Ենձաւացեաց
տէր, Ժ. Սպահունեաց տէր, Ժ. Վամա-
րական, Ժ. Վ. Այլ Սպահունի, Ժ. Վ. Վանեա-
դացին, Ժ. Վ. Վաստունի տէր, Ժ. Օ. Գողթան
տէր, Ժ. Վ. Գնունեաց տէր, Ժ. Վ. Այլ Ենձա-
ւացի, Ժ. Վ. Տայոց, Խ. Բասենոյ դատաւորն,
Խ. Գնթունեաց տէր, Խ. Վ. Վարձաւունին,
Խ. Գարմանայ տէր, (1). Խ. Վահառունի,
Խ. Օ. Գարեղենից տէր, Խ. Վ. Երեղենից տէր,
Խ. Արևելաց երկրորդն, Խ. Վ. Արծրունեաց երկ-
րորդն, Լ. Արծրունեաց երրորդն, Լ. Վ. Մամի-
կոնէից երկրորդն, Լ. Վ. Առփանեանն, Լ. Վ. Գա-
շոցեանն, Լ. Վ. Դիմաքսեանն, Լ. Վ. Բուխա Դի-
մաքսեանն, Լ. Օ. Այլ Երեղեանն, Լ. Վ. Այլ
Դիմաքսեանն, Լ. Վ. Գալունին, Լ. Յ. Արաւի-
ղեանն, Խ. Վշահմարեանն. Խ. Վ. Համբուժեանն,
Խ. Վ. Վարասպակիանն, Խ. Վ. Ջիւնտիանն, Խ. Վ.
Ակէցինն, Խ. Վ. Օլորեհաւանեանն, Խ. Վ. Ըն-
ծայեցինն, Խ. Վ. Մանդակունին, Խ. Վ. Սղկունին,

(1) Ջեռագրումն էստեղ թողուած է, որովհետեւ Խ. Վ.
Թուից յետոյ պէտք է լինէր Խ. Վ. պյլ է Խ. Վ. մենք թո-
ղուած ենք այնպէս ինչպէս իսկականութեն է:

Խօֆա Տայգրեանն, ՌՕ. Երմանթունին, ՌԵ.
Սպանդունին, ՌԻ. Առաւենեանն, ՌԴ. Տրու-
նին, ՌԴ. Մամբերացին, ՌԵ. Հաւունին,
Ռ.Օ. Բանունին, ՌԵ. Քաջբերունին, ՌԻ.
Մեհնունին, ՌԹ. Նախճերին, Կ. Քաղաքա-
պետն արքունի, ԿՐ. Որսապետն արքունի, ԿԲ.
Երտաշէսեանն, ԿԳ. Վանանդացին երկրորդ,
ԿԴ. Ցուն, ԿԵ. Վիժանու, ԿԶ. Եքածոյ,
ԿԵ. Ծիրակա Դիմաքսեանն, ԿՄ. Գաղըթկանն,
ԿԹ. Մարացեան տէր, Հ. Վազրասպունին:

Նախարարաց գահակալութեան կարդը քան-
դել շատ անդամ պատճառ գառաւ արիւնահեղ
պատերազմների: Երբ որ Ախւնեաց Անդովք նա-
խարարին Շապուհ Փարսից թագաւորը նշանա-
կեց իրա սեղանի վերայ ԺԴ. տեղը, որը որ առաջ-
նակարգերիցն էր, Անդովքը վերաւորուելով՝ ոչինչ
չի կերաւ, և զրա վըէմն առնելու համար թալա-
նեց թագաւորի պալատն և նորա իշխանների ա-
ւարները ցրուեց, մտաւ Բահարերին և Էնտեղ ամ-
րացաւ: Թագաւորը շրջապատեց բերդը, բայց երբ
որ երկք անդամ յաղթուեցաւ, Շապուհը հրա-
մայեց յետ գառնալ աւերել Ախւնեաց աշխարհն
և ջնջել բոլոր նախարարաց ցեղը (1):

Թարի ՆԱԽԱՐԱՐԱՑ: Հին Հայտստանը լինելով
նախարարաց ցեղական զօրեղ իշխանութեան տակ,
ուստի և նախարարների ամէն մի անդամը ստա-
նում էր առանձին վիճակ կամ բաժին. զրա հա-
մար ՚ի հարկէ չի կարելի վճռել նախարարաց թիւը.

(1) Ատեփաննոս Օրբելեան, դԼ. Խմ. Գաւառոս Բիւզան-
դացի, Գեւը Դ. ԳԼ. ՌԻ. Մովսէս Խորենացի, Գեւը Գ-
Ռ. ԿԲ:

ու միայն ամէն մի նահանգն, այլ և զաւառներն էլ ունէին իրանց նախարարները : Ասեփաննոս Օրբելեանն ասում է, թէ “Առաքելոյ հաւասար Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը հրամայում է Ծրդատ Վեծին տալ ամենայն իշխանի ինչ աեղ և պատիւ որ հարկաւոր է աջ ու ձախ կողմերումը, նա էլ փառաւոր բարձեր շինեց սեղանի վերայ նստելու 4000 էլեանաց համար” (1): Մեսրովը պատմագիրը վկայում է, թէ 400 նախարարներ կային Արշակ թագաւորի ժամանակը (2). Թէպէտ Փաւստոս Բիւզանդացին միենոյն Արշակի ժամանակը հաշուում է մինչև 900 (3): Արշակունեաց վերջին թագաւորաց ժամանակները (4), մանաւանդ Արաբացւոց յարձակմանց ժամանակը շատ նախարարաց ցեղերն էլ չեն յիշուում: Ու ևոնդ պատմագիրն ասում է, թէ Արաբները “շատ Հայոց նախարարներ սպանեցին՝ նրանց երկիրը թողարով տունց նախարարաց և Հայաստանը զբկելով նախարարական ցեղերից (5):

ՆԱԽԱՐԱՐԱՑ ՀԱԴՈՒՍՏՆԵՐԸ. Պատմաբանների միջը միայն Արշակն է մէկ քանի տեղեկութիւն տալի մեզ նախարարաց հաղուստի համար, խօսելով Ապասակի համար, որ գալով Յազկերտ թա-

(1) Ասեփաննոս Օրբելեան, գլ. Թա.

(2) Մեսրով, գլ. ԺԲ:

(3) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Գ. Ա. Բ., Թա: Գիւք Դ. Ա. Բ.:

(4) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Գ. Ա. Օ. Գիւք Դ. Ա. Բ. մինչ Գիւք Ե. Ա. Օ. Գիւք Ֆ. Ա. Օ.:

(5) Դ. Ա. Օ. գլ. Թա:

գաւորի պալատն, “արքունական պալատականաց սովորութեան համաձայն հազաւ պատուական հանդերձը, որ ստացելէր թագաւորից, կապեց պատուավուրն և դրեց գլխին ոսկեղջն խոյրը, կապեց իր մէջքը մարգարտազարդ և պատուական քարերով զարդարած ոսկէ կամարը, ձգեց գինտերը ականջները, շարքը վիզն և ծածկեց սամեյրը,, (1): Պրոկոպիոս բաւականին մանրամասնաբար պատմում է Արեմանեան Հայաստանի նախարարաց շորերը, որ գտնուում էին նրա ժամանակ Ծիւղանդեան կայսեր իշխանութեան ներքոյ։ Միւս (փոքր) Հայաստունը, սկսեալ Եփրատ գետից մինչև Տիգրանակերտ քաղաքը՝ հինգ Հայ կառավարիչ ուներ, այս նախարարքը ժառանգականներ էին և Հռովմայեցւոց կայսերներից ստանում էին միայն իրանց արժանաւորութեան նշանները, որ աւելորդ չեմ համարում նկարազրել, որովհետեւ ոչ ոք նրանց չի տեսել. նրանց վերարկուն մազեց էր, ոչ թէ ոչխարի բրդից, այլ պինկ ձկան մազեց։ Արանց ծիրանի ոսկեղարդ զգեստը տեղ տեղ ժողոված և պնդացրած էր իրանց վերայ. վերարկուի վրայից ունեին ոսկէ կոճակներ թանգակին ակներով զարդարուած, որոնցից կախուած էին շլթաններ յակինթներով զարդարած, նրանց մետաքսէ շապիկների վերայ տեղ տեղ ոսկէ գեղեցիկ քորոցներ էին խրած, նրանց գուլքէքը կարմիր էին մինչև ծունկը քաշած, որ բացի Հռովմայեցւոց կայսերից և Պարսից թագաւորից ոչ ոք չէր կարող հագնիլ,, (2):

(1) Երես 341. Փաւատոս Բիւղանդացի, Գերք Գ. Դ. Ժ.Ե.:

(2) Պրոկոպիոս Յուստինոսի շինութեանց վերայ, Գերք Գ. Դ. Ե.:

Սովորէնացին ասում է, թէ զինուորութեան առաջին կարգը առւեց Անձն Տիպրան, որի ժամանտկ “Հիտևակ զօրքը ձիաւորներ դարձան, պարսաւորներն” աղեղնաւորներ, շերտաւորները սրաւորներ և նիզակաւորներ, մերկերը ծած կուեցան վահաններով և երկաթի զրահներով. Էս մէկ տեղ հաւաքուած զօրաց տեսքն և նրանց զրահների և զէնքերի փայլելն ու շողշողալը բաւական էր թշնամեացը հալածելու” (1): Երկրորդ անգամ զինուորական կարգը հաստատեց Ապարաշակը. Հայաստանի աշխարհադրական զրութիւնն էնպէս էր, որ ամէն տեղից կարելի էր ներս մտնել, ոչ մեծ լեռներ կային սահմաններումը, որ թշնամեաց յարձակմունքն արգելեն, ոչ ծովեր կային նորա շրջակայքումը, մանաւանդ որ նրա Արևելքան հիւսիսային կողմումը բնակուում էին զինուորական ազգեր, որ միշտ յարձակուում էին նորա վերայ. Ռւստի Ապարաշակ էլ պէտք էր որ առանձին ուշադարձութիւն անէր զինուորական բարեկարգութեան վերայ. Նա բաժանեց զօրքը չորս զիսաւոր բանակ, որոնց կառավարիչները կոչուում էին սահմանակալ, կողմնակալ և բղեշներ (2): Արանք մեծ իշխանութիւն ունէին. սրանց էր յանձնուած աէրութեան պահպանելը, սրանցից երկուուր, ինչպէս ասացինք, կոչուումէին բղեշներ,

(1) Առաջին Խորենացի, Գիերք Ա. Գլ. Խո.

(2) Անկարելի է ճշմարտապէս մեկնել այս բառի նշանակութիւնն, երեսում է մացրել է Ապարաշակ. իսկ Հայոց եղուումը ոչինչ բառից չի ծագում:

մէկն էր Աղջնեաց նահանգի բղեշիր, որ պահպառ նում էր հարաւային սահմանները, միւսը Գուշ գարաց նահանգի բղեշիր, որ պահպառնում էր հիւսիսային սահմանները, միւս երկուսն էլ կոչում էին արեւելեան և արեւտեան զօրաց սպարապետներ։

Արեւմտեան զօրքն երկու մասն էր բաժանած նրանցից մէկի կառավարութիւնը Բաղրատունեաց ցեղի ձեռքին էր և բնակուումէին Հիւսիսային արեւմտքումը՝ Ապեր գաւառումը, որ տեղ էր նրանց կալուածքներն, ինչպէս Խորենացին ասում է, թէ Վաղարշակ “նշանակում է Բաղրատին Արեւմտեան սահմանի կողմնակալ և 11000 զօրաց հրամանատար” . միւս մասը զօրաց՝ էր հարաւային արեւմտքումը՝ Օռփաց նահանգութն՝ Անդեղտան ցեղի իշխանութեան տակ, որ տեղ էր նրանց կալուածքը. ինչպէս Խորենացին ասում է, թէ վեթիսարի հասակաւ և զօրեղ Տորք անունով մէկին Վաղարշակը նշանակում է կողմնակալ արեւմտքումը . . . նորա ցեղը կոչում է Անգեղտուն (1)։

Արեւելեան մասի զօրքն էլ բաժանուում էր երկու առանձին մասը, որոնց կառավարում էին սպարապետներ երկու ցեղեց՝ մէկը հիւսիսային արեւելքումը, միւսը հարաւային արեւելքումը՝ Հիւսիսային արեւելքը կառավարում էր Առանի ցեղը. “սրանից յետոյ մեծ անուանի և բազմամարդ արեւելան հիւսիսոյ կողմի վերաց էլ կողմնակալութիւն է հաստատում անուանի և ամէն գործի մէջ խելք Էռանին” (2): Խսկ արեւելեան սահմանումը “նշանակում է կողմնակալներ Վաղմոսի և Միսակի

(1) Առվակս Խորենացի, Գիրք Բ. 4L. Պ:

(2) Առվակս Խորենացի, Գիրք Բ. 4L. Բ:

Յեղերի առաջիններին,, (1): Օօրքի այս չորս
գլխաւոր մասը բաժանելը մեծ բարի հետևանքներ
ունեցաւ. քանի որ այս զօրքը կար, և այսատանի
վերայ չեն կարողանում նորա թշնամիքն այնպէս
յարձակմունքներ անել, ինչպէս վերջերումը լինում
էին. նորա համար, որ թշնամեաց յարձակմանց
ժամանակը զօրքը միանում էր և միաբան զօրու-
թեամբ հալածում էին թշնամեացն (2): Այս
բաժանումը շատ երկար տևեց (3) և վերջացաւ
Արշակունեաց ցեղի հետ միասին: Մուշեղ սպա-
րապետը տեսնելով Պարսից օր ըստ օրէ հզօրա-
նալը՝ Հապուհ թագաւորի ժամանակն առաջար-
կեց Յունաց իշխանացն և նրանցով էլ կայսերը,
թէ պէտք է նրանք և այոց աշխարհի ամէն մի գա-
ւառումը մի մի քաղաքներ շնեն և զօրքեր դնեն,
կամ թէ մի պարսպապատ բերդեր մինչև Պան-
ձակ, որ Պարսից կողմի և այոց սահմանն էր և
թէ բոլոր և այոց ազատներին և զօրքին պէտք էր
զինավառել 'ի հաշիւ կայսեր, որ իրանց թշնա-
մի Պարսիկներից գգուշովթիւն լինի. Յուն-
աց թագաւորը շատ խնդութեամբ սկսաւ կատա-
րել այս բաները (4): Միայն թահոգոս փոքր մի
մասսամբ Մուշեղի խօսքը լսեց և այս նպատակաւը
շնեց թահոգոսուպօլիս քաղաքը, որ և այերէն
ասուում է Ապարին:

Արշակունեաց թագաւորութեան վերջանալուց
յետոյ Պարսից թագաւորներն իրանց սեպհակա-
նեցին և այոց զօրաց կարգադրութիւնը, նրանցով

(1) Մովսէս Խորենացի, Պիեք Բ. Դ. Բ.

(2) Մովսէս Խորենացի, Պիեք Բ. Դ. Ծ. Պ. Ծ. Պ.

(3) Մովսէս Խորենացի, Դ. Օ. Լ. Թ. Փաւատոս Ծ. Կ. Պ. Պ. Պ. Պ.

(4) Փաւատոս Ծ. Կ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ.

Եին պահպանում իրանց տէրութեան սահման-
ները. “ Եղեշէն ասում է . “ սովորութիւն էր ա-
ռաջուան ժամանակից, երբ որ Հայաստանից ար-
քունիք կըդար ձիաւոր զօրքը մէկ պատուելի զօ-
րավարի առաջնորդութեամբ,(Պարսից թագաւորը)
նրա դէմը մարդ էր զըկում և հարցնում էր Հա-
յոց աշխարհի բարօրութիւնն և խաղաղութիւնը,
կրկնելով երկու կամ երեք անգամ և զօրախաղա-
ղութեան հանդէսն ինքն էր տեսնում և դեռ պա-
տերազմ չըդնացած՝ շնորհակալ էր լինում նրանց
դալու համար և բոլոր իրա աթոռակիցների և մե-
ծամեծների մօտ զովելով նրանց՝ յիշում էր
նրանց նախնեաց ծառայութիւնները և ամէն մէկի
քաջութիւնները (1):

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԴ. Պատերազմի ժամանակը
Հայոց զօրքը սովորաբար երեք մասն էր բա-
ժանուում, աջ թե , ձախ թե և կեղրոն.
այսպէս էր բաժանուած Վարդանայ, Վահան
Մամիկոննեանի և ուրիշ զօրավարաց զօրքը (2):
Մէկ քանի տեղ էլ յիշուած են առաջապահ և
վերջապահ զօրքեր (3): Իսյց զօրավարներն ի-
րանց կարգադրութեամբն երբեմն երբեմն էս կար-
գիցը դուրս են եկել և ուրիշ կարգով անօրինել
զօրքը, ինչպէս երեւում է Օննորի գրուածիցն,
երբ որ նկարազրում է Տրդատի պատերազմը (4):
Հայկը այնպէս հնարքով կանգնացրեց իրան սա-
կաւաթիւ զօրքը. որ կարողացաւ ջարդել նրան-

(1) Եղեշէ, երես 73:

(2) Եղեշէ, երես 204: Պազար Փարպեցի, երես 111, 112.

Թառման Արծրունի, Գիրք Խ. 4. 42. Օ:

(3) Եղեշէ, երես 137: Պազար Փարպեցի, երես 117:

(4) Պազար Փարպեցի, երես 215:

ցով Ռէլի անթիւ ամբոխը. “նա կարգեց Արմենակին, ասում է Մարաբասը, իրա երկու եղքօր հետ աջ կողմն և կադմոսին իրան երկու որդւոց հետ ձախ կողմն, որովհետեւ նրանք լաւ վարժուած էին աղեղ և սուր բանացնելումն. ինքն էլ կանգնեց մնացած զօրաց Ճակատին երեք անկիւնի ձեւով. սա կամաց կամաց առաջ գնաց,, (1): Վաշն Մուշեղ սպարապետն ուրիշ տեսակ կարգադրեց իրան զօրքը Ձիրաւի դաշտումը պատերազմելու. “չսպասելով Յունաց զօրքին՝ մշկ տեղ հաւաք ուած՝ աներկիւղ յարձակուեցաւ նա մեծ վստահութեամբ իրան ընտրեալ մարդկանց հետ ինքն առաջ ընկած, իսկ միւս զինավառեալներն իրան քամակին քառանկիւնի ձեռվ,, (2): Անձ ճարտարութիւն ցոյց տուեց Թռունիկ զօրքը կարգադրելուս (1072 թուում), երբ որ հազար ձիաւորով յանկարծ պատահեց Փիլարտեսի զօրքին. նա այնպէս կարգադրեց իրա զօրքը, որ ինչ ժամանակ թշնամին պատուեց իրա կեդրոնը, “ նա շըջապատեց նրանց, շատերին կոտորեց, 1500 գերի բռնեց իրանց զօրքարաց հետ, իսկ մնացածներին փախցրեց,,(3): Շատ անգամ երբ որ թշնամին յարձակուել է, մեր զօրքը պահպանել է իրան վահանով (4): Այսպէս Ձիրաւի պատերազմումն, երբ որ Պարսիկները մեր զօրքին շըջապատեցին, նրանիք մտան Յունաց վահանների տակն, ինչպէս մշկ ամուր քաղաքի մեջ չ'վնասուելու համար: Այսպէս արեց Գորդոնոս հետեւակ զօրքի իշխանը՝ վահանապատ առնելով Պապի զօրքը, ինչպէս պարսպով պա-

(1) Մովսէս Խորենացի, Գերեց Եւ Կւ ԺԱ:

(2) Մեսրոպ, Գիրք Խ:

(3) Մատթեոս, եղես 134:

(4) Փաւաստոս Իշխանդացի, Գերեց Եւ Կւ Եւ:

առաջ „ (1)։ Յովհաննէս Արթուղիկոսն ասումէ, թէ “ Սահակ իշխանը հրամայից հետեւակ գնդին վահանափակ լինիլ, որ մի անպարտութիւն պարսպի ձեւ ստացաւ, իսկ նույն քամակիցը կանգնացրեց ձիւոր զօրքը զինավառուած և զարդարուած։ Եռաջապահները վահանափակ զօրքի առաջին սրբնթաց ձիանց վերայ այս այն կողմն էին վագում,, ։ Իս բանի համար խօսում են և թուշ-մա Մըծրունին (2), Ղազար Փարպեցին (3), Փաւստոս Բիւզանդացին (4) և ուրիշները։

ՀԱՅԵՑ ԶՈՐԱՑ ԶԳԵՍՏՆԵՐԸ (Ապստաման) Հերոդոս
տուր խօսելով Քսերքսէսի զօրքի համար, որ
Տաւաքուած էին զանազան ազդերից և նկարագրեա-
լով նրանց զգեստներն և սաղաւարտները, Հայոց
զօրքի համար միայն այսքան է յիշում. “ Հայե-
քը զինաւորուած էին Փախւզացւոց ձեռվ, լինե-
լով նրանց գաղթականները ” (5): Հարկաւոր եմ
համարում բացատրել Հերոդոտոսի էս խօսքերը,
որ միշտ Մնծ Հայաստանը նա համարում է կամ
Վարաց և Պարսից աշխարհ և կամ անուանում է
իրա ժամանակը երեսելի եղած գաւառների մէկն
անունով. ինչպէս Ապերը, որը որ նա կոչում է
Սասփիր և այլն. իսկ բուն Հայաստանը նա կոչում
է Մնծ Հայաստանի Արեմանեան մասն և Փաքք
Հայաստանի մասը, որ տեղ Յոյներ շատ կային և
Արա համար պէտք է կարծել, որ Հերոդոտոսը

(1) Առաջեւ Խորենացի, Գեղը Բ. Ա. և լ. Ե.

(2) ፩-፭፻፭ ፩-፭፻፭

(3) ԵՐԵՒ 123:

(4) ԳԵՐԵ ԵՐ ԵՐԵՎ 5:

(5) Հերոդոտոս, Գավրիլ Եղիշ: ԱԱ-ՀՊ:

Քսերքսէսի շատ զօրաց թուռումը Հայոց զօրքին
ուրիշ անուն կը լինի տուած, իսկ այս տեղ Հայոց
գունդասանը նա համարել կը լինի Փաքք Հայատա-
նի գունդը, որոնց մէջ կարելի է Յոյներն էլ լինին,
որ զաղթել էին Փոխւղիսյից: Գրենք հիմայ Հա-
յոց զօրաց պատրաստութեանց համար մէկ քանի
հատուկառ տեղիկութիւններ, որ քաղել ինք Հա-
յոց ժամանակադիրներից: Օքահ: Յոփհաննէս
Ասթուղիկոսը հետեւալ խօսքերն է ասում Եզե-
րաց թագաւորի զօրաց համար, որ ուղարկեց Աշոտ
թաղաւորին օգնութիւն: Հատ զօրք գումարեց, կար-
ծես թէ, օդագնաց ձիաներով, երկաթակուռ զրահ-
ներով, սարսափելի սաղաւարաններով, պղղպա-
տեայ լանջապահնակներով, ամուր վահաններով,
զանազան զէնքերով և նիզակներով և տուեց նրանց
ձեռքը, որ նրանցով վրէժ առնի թշնամիներից ,:
Սաղաւարտութիւնն էին կամ պղղպա-
տից կամ պղնձից, շատ տեղ Հայոց ժամանակա-
գիրներն ասում են, թէ ի՞նչպէս էին փայլում
նրանք. Սաղաւարտի ձեի համար մեծ տիղեկու-
թիւն է տալի Ա արդան պատմագիրը, Ա աղթանկ
Ա զօրաց թագաւորի համար խօսելիս, “ որ պարս-
կերէն ասուում եր Գուրգասլան, որ է դայլառիւծ
կամ գայլազլուխ: Էնդուր որ սաղաւարտի վերայ
առաջի կողմն գայլի պատկեր ունէր, յետի կողմն
առիւծի ,: Ա արելի է Հայերին էլ էնպիսի սաղա-
ւարտներ ունենացին: Ինչ ժամանակ Բարիկ Աիւ-
նին մենամարտութիւն դուրս եկաւ Հոնանգուր
հսկայի հետ, գլխին ունէր Պարսից Շապուհ
թագաւորի վազքի կերպով սաղաւարտը (1):
Ա արծես թէ Խորենացին էլ յիշում է վիշապաձե-
սաղաւարտներն, եղբ որ պատմաւմ է Յունաց

(1) Առելիանոս Օբերեն, Ա. Ժ.

Թաէնդոս կոյսեր մեր Պապ Թագաւորին օդնուա
թիւն ուղարկած զօրքի համար. “ Ախշատների ման-
ուածները, որ ահազին բաց բերանով ուսեւ էին
օգեցն; ոչինչ բանի չեմ կարող նմանացնել, այլ
ինչպէս ազամանդիայ լետոն, որ կըծուուի ծովի
վերայ, այնպէս Յունաց զօրքը յարձակուեցան
Պարսից զօրաց վերայ ” : “ Յա յիշում է Այսպէս
Նրանց զինուորական զգեստները՝ ասելով ” : “ Յու-
նաց զօրքը վառուած էին ոսկեղին և արծաթեղին
զենքերով և նրանց ձիանքն էլ նոյնպէս զարդար-
ուած էին, որ կարծես, թէ մէկ պարիսպ էին տես-
նում. զօրքերից շատերը կապած ունէին կաշէ
փարապանակներ և էին ինչպէս մէկ մէկ կարծր
քար. իսկ նրանց մազերն ինչպէս տերեւակալած
ծառեր (1): ”

Թուղմա Վրձրունին պատմում է Շուղայի զօ-
րաց պատերազմական զգեստները. մէջ բերենք էս
տեղ այս հետաքրքիր հատուածն աւելի նրա հա-
մար, որ կարելի է Հայոց զօրքերն էլ այսպիսի
հազուածով պատերազմած լինէին. այս զօրաց
զգեստն էնպիսի բրդից էր, որ սպունզի նման ջուր
էր վերցնում. դրա համար զօրքերն էլ չ'վախենա-
լով կրակից, սաստկացնում էին պատերազմը.
Նկարազրենք նոյնպէս և ձիանց բոլոր մասունքը.
երեսը, կուրծքը, շինքը, մէջքը, քամակը և ուս-
ները ծածկուած էին մէկ տեսակ երկաթեայ զրահն-
ներով և զանազան զարդարանքներով. “ իսկ
իրենք՝ ձիաւորները զբահաւորուած էին. զինե-
րին ունէին սաղաւարտ, կոներին բազկապաններ,
բարձերի վերա զանկապաններ, կոշկաձև ոտից ա-
մաններ, թիկունքներին վահաններ, մէջկերին սուր,

ձեռքերին նիղակ, ձիանց առաջին պատրաստ էաւ
պարզներ և ազեղններ, ոսկէ և արծաթէ զարդա-
րանքներ, մէջկներին կամարներ, զրօշակները բաց
թողած՝ որոնք քնարների և թմբուկների հնչելու
ժամանակը պատրաստ էին պատերազմելու,, (1):

ՀԱՅՈՑ ԶՈՒՏԱ ԶԻԿԱՎԱՐԻԱԹԻՒԽՆԸԸ. Օտար պատ-
մարաններիցը միայն Ստրաբոնն է յիշուում Հա-
յոց զօրաց զինավառութիւնը, նա ասում է, թէ
“Եղուանները պատերազմում են հետեւակ ու հե-
ծեալզօրքիրով” թեթև և ծանր զէնքերով, ինչպէս
և Հայերն,, (2): Եյս տեղեկութեանց պահասու-
թիւնները կաշխատենք լցնել մեր հայրենի մատենա-
զիրներիցը. հետեւալ զէնքերն էին գործ ածում
Հայերն ըստ վկայութեան նոցա. ոռոք, մէկ ա-
ռանձին ճարտարութիւն ունէին Հայոց զօրքիրը
սուր բանացնելումը, նրանք կարում էին սրով զրահ-
ներ և ամէն տեսակ երկաթներ։ Մովսէս Խորենացին
Տրդատի համար ասում է, թէ “սաստիկ ուժով իրան
քաշելով երկսայրի սուրը՝ մէկ հարուածով կարեց
թշնամուն՝ ձիու գլուխն ու շլիքն էլ հետն,, (3):
այս թշնամին “վառուած էր պահպանակով”,
որին որ ոչմի նետ չէր կարողանում ներգործել,,
այսպիսի քաջազործութեան պատճառն չի կարելի
միայն համարել զօրաց կարծութիւնն և քաջու-
թիւնն, այլև սրի երկաթի բնութիւնը, որին ա-
սում ենք պողովատիկ։ Մատթէոս պատմազիրը
Յովհաննէս թագաւորի Աշոտ եղբօր համար զրում
է այսպէս. “Եշոտը կայծակի նման նեքսե ընկաւ
և խփեց (Ա բաց դեսպանին) պողովատով և նորա

(1) Քնովմա Արծունի, Գեւք Բ. Ա. Բ.

(2) Ստրաբոն, Գիրք Ժ. Ա.

(3) Մովսէս Խորենացի, Գեւք Բ. Ա. Ձեւ

Երկաթապատ մարմինը կիսեց մինչև ոտերը „(1)“
Եյս բանս պատմում է և ուրիշների համար։
Նրկսայրի սուրը բացի խորենացուցը յիշում է
և Ասողիկը՝ խօսելով Աքասի համար։ “ Հուտով
ձին պահանջելով՝ զբնքը վրէն կապեց, երկսայրի
սուրը ձեռին բռնեց, զնաց ասպատակով քա-
մակիցն և գետի մէջ տեղը հասնելով նրան,
իր հզօր բազիի հարուածով կիսիցը կտրեց և
ձիուցը վէր քցեց „(2): “ Անդակ. Նիզակը Հայոց
զօրքի շատ զործածական զբնքերիցը մէկն էր։
Փաւստոս Բիւզանզացին ասում է, թէ 30000
զօրք թողեց Պապ Թագաւորը Ամրապատականի
Գանձակ Վաղաքումը, որոնք էին ընտիր նիզա-
կաւորներ լաւ զբնավառուուած պատրաստու-
թեամբ և զբահաւորուած „(3): “ Այսպէս և
Մուշեղ սպաբապեար մէկ տեղ հաւաքեց բոլոր
Հայոց զօրքը, որոնք բացի վահանաւորներն էին
“ 90000 ընտիր զբնավառուածներ՝ նիզակները
ձեռքներին „(4): Ա ահան Ամատունին նիզա-
կով յաղթեց Հիւսիսային Կովկասեան ազգերին,
որոնց առաջնորդը համարուում էր անյալթելի,
բայց քաջն Ա ահան ձեռները երկինքը բարձրա-
ցրած՝ կանչեց։ “ Տէր Աստուած, ուղարկի՛ր իմ
նիզակն այս հսկայ աղզի մէջը։ Նրա աղօթքը
հաճելի եղե Աստուածոյն և ձիու գաւակովը զլիսի
վերայ կործանեց իւր թշնամոյն (5): Ինչպէս
սուրն երկաթ էր կտրում, էնպէս էլ նիզակն անց
էր կենում երկաթեայ հագուստի մէջ։ Մովսէս

(1) Ատաթէռ, Գւ. Ե. Ե. Թ.

(2) Գիրք Գ. Ա. Ե.

(3) Գիրք Ե. Գ. Զ.

(4) Փաւստոս Բիւզանզացի, Գիրք Ե. Գ. Զ.

(5) Մովսէս Խորենացի, Գիրք Գ. Ա. Թ.

Խորենացին ասում է . . . գոյտում եմ իմ բարձրաց
հասակ և նիզակաւոր (Տիզբանին) . . . պատեա
բազմի ժամանակ նիզակով ջրի նման կտրեց եր-
կաթի շոր, շամփրեց Աժդահակին իւր նիզակի
սուր ծայրովն և ձեռը յետ քաշելով թոքի
կէս մասը զէնքի հետ դուրս բերեց , , (1):

Հատ անդամ նիզակը թաթախում էին թոյնի
մէջն, Խնչուկս Խորենացին ասում է, թէ Ար
շակ թագաւորի նիզակը թաց էր արած զեռնոց
արիւնով . . . պատերազմեց Պոնտացւոց հետ և
իրա մէշատակը ծովի ափումը թողեց նշան իր
բոլորատէդ նիզակը, որ զեռնոց արիւնի մէջ կը
թաթախած, խփեց մէկ արձանի և խոր մացնե-
լով նրա մէջ, թողեց իրան քաջութեան
մէշատակ „ (2): Եզյս անցքը պատմում է և Յովէ
հաննէս Կամուզիկոսն, այն զանազանութեամբ
միայն, որ նա ասում է, թէ նիզակն օձի արիւնի
մէջ էր թաթախած :

Զէնքը թունաւորելու սովորութիւնն ուրիշ
ազգաց մէջ էլ եղել է . . . Ասրաբոնն Տարաւայ
քաղաքի բնակիչների վերայ խօսելու ժամանակը
վկայում է այս բանն, ասելով թէ նրանք փիզ
որսալուս նրանցից մէկ քանիսին սպանեցին օձի
լիլուի մէջ թաթախած նետերով: Յուստինոսն
Ացէքսանդր մեծի պատմութեան մէջ ասում է,
թէ նրա թշնամիների մէկ քանիսը միսելով իրանց
նեաները թոյնի մէջ, այնպէս էին խոցոտում նրա
զօրքին: Լա բանը ասում է Ասրաբոնը Ասանց
համար, որմնք զարմանալի կերպիւ մխում էին
իրանց սուրերը թոյնով և էապիսի նետերով թու-

(1) Մովսես Խորենացի, Գիեզ Եւ գլ. Իմա:

(2) Մովսես Խորենացի, Գիեզ Բ. ու Թ.

Նաւորուածների խոցերի ժահահստութիւնը շատ
ծանր էր (1):

Վշիչն և նետ. Հայելն երեւելի էին այս զէնքը
գործածելումը. սրանով կատարեց Հայկ Էն քո-
ջազործութիւնը, որ պատճառ դառաւ. Հայոց
ազգի անկախութեանը: Մարաբառը այսպէս է նկա-
րագրում Հայկին. « Անուանի և քաջ նախարարը
վարժ նետ ձգողն և հաստաղեղը », (2): Խորենա-
ցին Հայկի սերունդներին կոչում է « Քաջ և ա-
պշտառ մարդիկ », և երբ որ նկարագրում է Շե-
լլ հետ արած պատերազմն, էս մականունն է առա-
վ Հայկին. « իմանալով այս բանը աղջնառոց
Հայկն, առաջ է վազում, մօտ է զնում Ռէլին,
ովինդ քաշում է լոյնալէֆ (աղեղը), դիպջնում է
երկըթեանի (նսոր) կրծքի տախտակին և շեշ-
տակի թիկունքի մեջ տեղիցն անց կենալով՝ գիտին
է ընկնում նետը», (3):

Հայերը շատ գարեր երեւելի եղան իրանց նե-
տաձութիւնովը. Քոնսկունար Քրիստոսից 360
տարի առաջ, Հայոց վերայ այսպէս է խօսում,
« Նրանք էին հմուտ նիզակ գործածողներ, նրանց
աղեղները, համարեած թէ, երեք կանգուն էին, իսկ
նիտիքն երկու կանգունից աւելի. նետ ձգելուս մին-
չև վերջին ծայրերն էին քաշում ջիզերն՝ առաջ
զնելով ձախ ոտք. իսկ նրանց նետերն անց էին
կենում վահանների և զբահների միջեց», (4): Ստա-
տիոս Լատին բանասաելծը, որ մեռաւ Քրիստո-
սի 96 թուումը, Հայաստանին տեսաբին է ասում

(1) Գիւք Ժ. Երեւ 499:

(2) Մովսէս Խորենացի, Գիւք Ե. 42. Թի:

(3) Մովսէս Խորենացի, Գիւք Ե. 42. Թի:

(4) Քոնսկունար, Գիւք Գու կ պատմութեան Վեհաբ:

նրանց լւա աղեղ դործ ածելու պատճառաւու։ Պատ
զար Փարսկեցին (Եւ դարումը) յիշում է շատ
ճարտար նետ ձգողների (1): “Խակ Ա ահան Մա-
միկոնեան ամբողջ ցերեկը հանդսութիւն չեր տա-
լի Պարսկա զօրացը իրանց բանակումը, զիշերն էլ
նե աեր եր ձգում նրանց վերայ” (2): Ծովհաննէս
Կաթուղիկոսը՝ Ձ զարի մատենագիրը շատ տեղ
իրան պատմութեան մէջը պատմում է Հայոց ճար-
տար նետաձգութեան համար, զորօրինակ՝ “Արա-
ծառայներն (Աշուա Բ-ի.) քաջ մարդիկ էին և շատ
ճարտար էին նետ ձգում իրանց լայն աղեղներովնե,
էնպէս որ մազը չեին սխալուում, : Եւ իրսէս Ըներ-
հալու խօսքելիցը, որ պատմում է Հայկի համար,
երեսում է, թէ նրանց նետերն էլ թոյնի մէջ մըխ-
ռւած էին:

Ա մ լ լ . Այս զէնքն էլ նոյնպէս երկաթ եր
կտրում. Մատթէոսը պատմում է, թէ “մօտենա-
լով նրան և հազցնելով երկաթի սաղաւարտը՝ մէկ
վաղը հարուածով կտրեց էն պինդ սաղաւարտն” (3): Ես զէնքը կրոցը կոչուում եր վաղակաւոր:

Ճիկա. Այս զէնքն էլ երկաթ եր կտրում. նոյնա-
պէս Մատթէոսը պատմում է, թէ “Արդղարին
եր պողովատիկ ծիկռովը խփեց քաղաքի երկաթի
գուանն և ճղելով երկաթն՝ այն կողմն անցկացրուց,
որ և մէջը մնաց մինչև էս օր,, (4):

Սահետ էամ Սահեր և նըսն: Ուելանար կարծում
է, թէ այս Պարսից բառ է, բայց Ա եսդոնեան եղա-
բարք ասում են Հայոց բառ է. թուի թէ սրանից
է բղինել Լատինացւոց ուկուսիս բառը, որ Ա ալ-

(1) Երես 112, 193:

(2) Երես 258, 262:

(3) Ծովհաննէս Կաթուղիկոս:

(4) Մատթէոս Ութհայեցէ, թւ. Խիզ:

քնն էլ յիշում է, սրա հաւաստութիւնը կարեւ
լի է իմացած և երողոտոսից և Վսենոփոնտից (գիրք
Դ.) որ ասում են սակուր մի զբնք էր, որ Սկիւ-
թացիք էին գործ դեռմ. բայց մենք գիտենք, որ
պրանք շատ անզամ Ակիւթացի կոչել են և ա-
յօց: Ահա Հայոց պատմաբանների ասելովն այս
զբնքերն են գործ զրել Հայերը պատերազմներումն
Եղեշէն (1) շատ անզամ յիշում է սաղաւարտ-
ների փայլելը, որերի շողշողալը, նիզակների ճօ-
ճալը, վահանների ճաքիլը, աղեղանց լարերի ճայթ-
մունքն: Եղեշէի այս հետեւալ խօսքերիցն երե-
ւում է, թէ աղեղնաւորները բացի նետից ուրիշ
զբնք չեն գործ ածում և թէ վահանաւորները
հետեւակ զօրք էին. Երբ որ Ակիւնիրսեհ Պար-
սից հազարատեալ լսեց, թէ Արդանը 60000-ից
աւելի զօրք ունի, հարցրեց. “Քանի՞ն զինավառ-
ները, քանի՞ն են անզենք աղեղնաւորն և քանի՞ն
հետեւակ վահանաւորները,, (2):

Ուհակէտ Հայերը պահպանելով մերձակայ ազ-
գաց իդաւունքները յարձակմունքներ չեն անում
նրանց վերայ և չեն յափշտակում նրանց քա-
զաքներն ու բերդերը, բայց որովհետեւ ուրիշները
Հայոց քաղաքների վերայ յարձակմունքներ էին
անում, Հայերն էլ պարտական էին լինում պահ-
պանել իրենց, ուրեմն հարկաւոր է խօսել և այն
զբնքերի համար էլ, որով շրջապատում էին բեր-
դերն և որոնց համար յիշուում են Հայոց պատ-
մազրաց մէջ:

Եւ Այս մքենայով Պարսից Հապուհ թա-

(1) Եղեշէ, երես 205.

(2) Եղեշէ, երես 167.

գաւորը Տիգրանակերտ քաղաքը քանդեց և առաւ.
" Ծյուերն, ասում է Խորենացին, մեծ բռնութեաւք
բերին (ըս Դժենայն) և պարսպին կպցրին. այս
մէկ ակներաւոր մեքենայ է, որ երեք երեք մարդ
են քաշողները, նեքսեից ունի կացիններ, երկու
բերանանի սակրներ (տէրոր) և կացաւոր կռանն եր
(լուսուն), որոնցով փորեցին հիմքն և խարիսա-
լելով կործանեցին Հայկազուն Տիգրանի հաստա-
տած պինդ և գեղեցիկ պատերը" (1):

Փէլէիստան. Այս մեքենայն շատ անգամ յիշ-
ուում է Հայ պատմագրաց մէջ. Կիրակոսն ա-
սում է, թէ Զարմաղանի զօրքը պաշարեցին (Ա-
նի) քաղաքն ամէն կողմից, շատ Փէլէիստաններ
կանգնացրին հնարքով և կռուելով քաղաքի հետ,
քաջարար առան. նոյնպէս ասում է սա և Պուր-
չի թաթարաց զօրավարի համար, թէ " շատ չի-
վէիստաններ դրին և կործանեցին Կարին քաղաքի
պարիսպը,,,: Լաստիվերտցին փոքր ինչ նկարա-
գրում է էս մեքենան, երբ որ պատմում է Ծուլ-
րիւ սուլթանի Մանազկերտ քաղաքի պաշարիլու:
Ան Հայ քահանայ գերազանց հանդիսացաւ էս
քաղաքը պահպանելու ժամանակ. " սրանից յետոց,
ասում է Լաստիվերտցին, մեքենանելո դրին և նո-
րանով սկսան պատերազմիլ, իսկ մեզանից մի ծեր
քահանայ, որ շատ տեղեակ էր էս արուեստին, սա
էլ շինեց փիլիկուան. երբ որ նրանք քարեր էին
դնում պարսոնտների մէջ և ձգում էին քաղաքն,
երէցն էլ իր քարն ուղղակի նրանց քարի վերայ
էր արձակում և դիպցնում անօրինաց քարին և
իրանց վերայ յետ դարձնում. անօրէններն եօթն
անգամ կրկնեցին այս, բայց ոչինչ չի կարողա-

ցան անել, քահանայի քարը նրանց քարի վերայ
զօրացաւ,, (1):

Բարբան. Լաստիվերտցին նկարագրում է և այս
մեքենայն, շարունակելով առաջիկայ պատմութիւնը.
“յետոյ պատրաստեցին ուրիշ մեքենայ, որ իրենք
բարձան են ասում, որ շատ մեծ էր, որի համար
ասում էին թէ 400 մարդ էին նրա պարանները
քարշողն և վաթսուն լիտր քար դնելով պարանի
մէջ, ձգում էին քաղաքը. նրա առաջին էլ բամ-
բակից և ուրիշ բաներից պարիսպ կանգնեցրին,
որ նրան չ'առնի քահանայի քարն. երբ որ այս-
պէս պատրաստեցին, մի քար ձգեցին, որ դիպաւ
պարսպին, փլացրեց և խոռ արեց „Այս բարանի
ահապին մեծութիւնը յիշում է և Մատթէոսն,
երբ որ ասում է Տուղթիլի համար, թէ “ուղար-
կեց Բաղեշ և բերել տուեց էն բարանը, որ Ա-
սէլ թագաւորը շինել էր Ներ (քաղաքի պաշարե-
լու) համար ահաւոր էր և զարմա-
նալի և ինչ ժամանակ կանգնեցին անօրէն բարձանը,
սարսափեցրեց բոլոր քաղաքն և առաջին հարուա-
ծովը երեք պահապան և առաջապահին ձգեց քա-
ղաքն, և էս ժամանակը մի քահանայ դուրս եկաւ, որ
շուտափոյթ մի ուրիշ մեքենայ շինեց նրա ընդդէմ
և առաջին քարովը խփեց ու կոտրեց բարանն և
քաղաքը սիրտ առաւ, որովհեակ սաստիկ վախե-
ցան. մի քանի օրից յետոյ այլապղիքն ամրացրին
բարանն, էնպէս որ էլ ոչ մի կողմից չէր կարելի
մերձենալ. սկսեցին ձկել քաղաքի վերայ մեծ քա-
րեր, որից քաղաքը սաստիկ դողում էր „ յետոյ
պատմում էնա, թէ մի Փռանդ կրակ տուեց այս
մեքենան (2): Այս զրուածներից երեսում է, որ

(1) Լաստիվերտցի, Աւ. Փ.Օ:

(2) Գլ. Հ.Օ:

Փիլեկուանն ու Բարբանը մի և նոյն մեքենան են՝ կարելի է շատ փոքր զանազանութիւն ունենային իրարից և գուցէ լինի այս մի տեսակ պարսոնտ, որ կարող էր մեծ մեծ քարեր ձգել շատ հեռու տեղ :

Պարստ կամ պարստաւար. Յովհաննէս Աաթուղիկոսն և Ստեփաննոս Օքբելեանը յիշում են այս գործքն. “ երբ որ Պարսից Շալուհ թագաւորը պաշարեց իր բաղմաթիւ զօրքովն անառիկ Բազարերդ ասուած բերդը, որ Միւնեաց նահանգութն է, բնակիչքը պարսաբարով և քարեր զլորելով Պարսից զօրքերից շատին գետին էին փըռում, ” (1):

Հրացանութեան. Յովհաննէս Աաթուղիկոսը պատմում է, թէ Դուին քաղաքը պաշարելուս Ամբատ Բ-ը շըջապատելով, շատ խռովութիւններ, աւարառութիւններ, կործանմռնքներ և հրացանութիւններ արեց յընթացս երկու տարուան „ Յովհաննէս Աաթուղիկոսի խօսքերիցը չի երեռում, թէ ի՞նչ տեսակ հրացանութիւն էր : Խակ թաղման Ըրծրունին մի փոքր պարզում է այս խնդիրը, երբ որ պատմում է Բուղայի զօրքի համար : ” կրակ և ծծումք նաւթի մէջ խառնած զործ էին դնում պատերազմումը. հեղուկ նիւթերն ածում էին շուշէ ամանի մէջ և մանրացրած ծծումքը խառնում էին հետն և կրակը նրա մօտ հնարելով ձգում էին բերդի վերայ, ” (2): Այս մեքենան Հայքն էլ գործ են ածել : Թաղման Ըրծրունին ասում է, թէ Բուղայի զօրքը կոռելով պարսպի մօտ, հագել էին էնպիսի զգեստ :

(1) Գ. Տ. Բ.

(2) Ուսումն Արծրունի, Գ. Ե. Պ. Պ. Բ.

ներ, որով աներկիւղ էին կրակից էրուեա
լուց „ ”

Թ.ԻՒ ԶՕՐԵՑ. Հայաստանը իւր աղմբնիստրական
կառավարութիւնից յետոյ շատ զինուորական զօ-
րութիւն չունեցաւ, նախարարները ակամայից էին
իրենց զօրքը յանձնում թագաւորին։ Արամ տես-
նելով, որ զօրել թշնամիքն իր հայրենի երկիրը
նեղացնում են, “ ժողովում է շատ ընտանի քաջ
աղեղնաւորներ, որոնք աջողակ էին նիզակ բանա-
ցնելում, որոնք ամէնքը ջահիլ, ազնիւ, կարիճ և
գեղեցիկ էին և պատրաստ էին սրտով պատերազ-
մելու թուով հինգ բիւր (50000) ” (1). Միւս
պատերազմնումն Արամ յարձակուեց “ 40000 հե-
տեակ և 2000 հեծելազօրքով ”, (2): Հայոց թա-
գաւորներից ամէնքից շատ զօրք ուներ Արտաշէս
Խորենացին ասում է. “ Հրամայեց Արտաշէս շատ
զօրք ժողովել Արևելքից և Հիւսիսից, մինչև որ
հաշիւն էլ չիմացաւ, այլ ճանապարհներին և ի-
շեաններումն ամէն մարդ մի քար էր ձգում և մի
կարկառ (կիտուկ) էր թողումիրանց շատութեան
նշան ”, (3): Եւազրէս պատմումէ Արտաշիսի զօր-
քի շատութիւնն այսպէս. “ Աղէքսանդրի և Պա-
րեհի զօրքը շատ փշքը էր՝ համեմատելով Արտա-
շիսի զօրաց հետ. նրանց զօրքի բազմութեան թօ-
զեցը ցերեկուան լոյսը պարզ չէր երեւում, այլ սա
իր նետաձգութեամբն արեգակը խաւարացրեց՝ ձե-
ռագործութեամբ ցերեկը զիշեր դարձնելով
սրա համար հեղեղներն էլ չի կարացին մեծացնել

(1) Առվեէս Խորենացի, Գիրք Ա. 42. Ժ.Պ.

(2) Առվեէս Խորենացի, Գիրք Ա. 42. Ժ.Պ.

(3) Առվեէս Խորենացի, Գիրք Ա. 42. Ժ.Պ.

գետը, իւմելով ջուրը սակաւացքին ինչպէս ձմեռն.
Էլթիւ չմնաց, տկարացաւ սրա զօրքը համարելու
համար, մինչև որ շափիլ հարկաւոր եղաւ քան
թէ համարել „ (1)։ Փաւստոս Բիւզանդացին ա-
սում է, թէ Ա տսակ Արշակ Բար զօրավարը
260000 զօրքով վեց տարուայ չափ քանդեց Յու-
նաց սահմանները (2)։ Յունաց և Պարսից Հա-
պուհ թագաւորի հետ ունեցած կռուի ժամանակն
Արշակը Հապուհին օգնութիւն ուղարկեց Իր
Ա տսակ զօրավարին “ 400000 լաւ զինավառած
ընտրեալ քաջ և զինուորական արուեստին տեղեակ
մարդիկ „ (3)։ Միւս տեղումն ասում է, թէ “ Ա տ-
սակ սպարապետը հանդէս արեց բոլոր Հայոց զօր-
քին և էին զինաւորած ձիաւորներն և տէգաւոր-
ներն ՚ի միասին 600000 (60 բիւր) միասիրտ, միա-
ձայն և միամիտ զինուորք „, (4)։ Արշակունեաց
անկումից յետոյ Հայոց զօրաց թիւը աւելի փրք-
րացաւ։ Ա արդանանց պատերազմի ժամանակը
Ա արդանն միայն “ 66000 ձիաւոր և հետեակ զօրք
ունէր „, (5)։ Թառվամ Արծրունին Բազրատու-
նեաց ժամանակ մի զարմանալի բան է պատմում,
թէ Ամբատ ունէր 100000 զինավառեալ, բնտիք
զօրք (6)։ Այս զարմացքով պատմում է Սատ-

(1) Ո՞վկէ՞ս Խորենացի, Գիւք Ե. Ա. Ժ. Ժ.

(2) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Դ. Ա. Ժ. Ժ. Ը.

(3) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Դ. Ա. Ժ. Ժ. Ի.

(4) Փաւստոս Բիւզանդացի, Գիւք Դ. Ա. Ժ. Ա. Զի-
րելի ասել, թէ Հայոց զօրքաց թիւը մի ժամանակ
այսքան շատ է եղել։ Փաւստոսի պատմութիւնը միշտ կաս-
կածանաց տակ է եղել, բայց կարելի է բեր բառը Փաւս-
տոսի ժամանակը չեր նշանակում տառը հազար ինչպէս
հիմա։

(5) Խղիչէ, երես 174։

(6) Գիւք Տ. Ա. Ժ. Ի.

թէսով, թէ Աշոտ Աղօրմածի ժամանակ “զօրահանդէս եղաւե էին 100000 զինավառեալընտիր մարդիկ”, որոնք շատ քաջ և վարժուած էին պատերազմական գործերում, (1). Յովհաննէս Չմշկիկ Յունաց կայսերը Հայաստուն օգնութիւն ուղարկեց 80000 զօրք (2). Բազրատունեաց վերջին տարիներումը զօրաց մէջ զինուորական հոգին և եռանդը վեր է ընկում: Մատթէոս պատմաբանն ասում է, թէ “Աշոտի մահից յետոյ թուլացան Հայոց զօրքերն, ափեցին պատերազմի արուեստը, մտան Յունաց ծառայութեան Ծի տակ, նստան զինետուններումը, սիրեցին նուռագարաններ և գույսանաց երգեր, հեռացան միարանութիւնից և մեմեանց օգնելուց” (3):

Բազրատունեաց բարձրելուց յետոյ Լաստիվերացին ողբում է դառնապէս. “ուր է, ասում է նս, զօրաց բազմութիւնը, որ ամպի նման իրար վերայ կիտուած էին և դարնան ծաղկանց նման գոյն գոյն շորերով փայլում էին, ահա չկան նրանք և էլ չեն երեսում” (3):

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԶՈՐԸՑ. Հայոց զօրքը բաժանուում էր հետեւակ և հեծեալ. հեծեալ զօրքը երկեւ լի էր հին ժամանակը մինչև այն ժամանակն էլ, որ Հայաստունը զրկուած էր անկախութիւնից, որ Հայաստունը զրկուած էր պատերազմներու Հայոց զօրավարներն էին առաջնորդները. “թէպէտ գանձը Պարսկաց արքունիքն էր գնում, բայց հեծելազօրը բոլորը Հայոց նախարարաց ձեռքովն էր պատերազմ գնում” (4):

(1) Մատթէոս, Աւ. 1. Դ.

(2) Մատթէոս Աւ. 10. Դ.

(3) Լաստիվերացի, Աւ. մ. Ճ.

(4) Եշէէ, երես 13.

Նեանակ զօրքը բաժանուում էր զանազան գնտեր,
որոնք բացի իրենց զրօշակներից ունեին և առանց
ձին նշաններ:

Թաղվար Արծրունին պատմելով Տարօնի Բագա-
րատ իշխանի Արաբացւոց Առւսա զօրավարի հետ
արած պատերազմն՝ ասում է. “ կանգնելով մի-
մեանց դէմ պատերազմում էին, փողերը հնչում էին,
զրօշակները ծածանում էին, նշանները փայլում էին,
նիզակները և վահանները գոռում էին ” (1): Ասո-
վիկ էս խօսքերից, որ ասում է թէ “ Արատ թա-
գաւորի մանկլաւիկին ունէր իրեն առանձին գուն-
ար կարմիր հագած,, կարելի է կարծել, թէ զըն-
տերը բաժանուում էին և զգեստների գոյներովք:
Անը չենք համարիլ էս տեղ գնդերի անունները,
որ ասում են Հայոց մատենագիրները (2):

Օյնուորսակն ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ. Հայոց զօրաց զօ-
րավարները կոչուում էին Ա. “ աղարապէտ : Այս
բառը դուրս է դալիս Պարսից աղանդ բառից և
նշանակում է զօրավար, զօրապետ :

Սպարապետ կոչուում էր Հայոց զօրաց բոլոր
հրամանատարն, ինչպէս երեւում է Ագաթանգե-
ղոսի այս խօսքերից. “ առաջինի անունն էր Ար-
տաւազդ, ” որ սպարապետ էր Հայոց բոլոր զօրա-
ցը,, : Խորենացին և Թաղվար Արծրունին (3).
սպարապետ կոչում են հիւսիսային, հարաւային,

(1) Գիրք Բ. թ. Օ. Ադաթանգեղոս:

(2) Թաղվար Արծրունի, Գիրք Գ. թ. մեջ Փաւառապետականդացիքի, Գիրք Գ. թ. մեջ:

(3) Գ. թ. 1. Պատմական Փարագեցի, երես 108, 223, 282: Խ-
զեւ 167: Մատմէոս, թ. 1 Գ. թ. Թաղվար Արծրունի, Գիրք
Բ. թ. Ա. թ. Օ. Գիրք Գ. թ. Գ. Ասողիկ, Գիրք Գ.
թ. Բ. երեւ Մերովէ, թ. մեջ Թաղվար Արծրունի
Գիրք Ա. թ. Թաղվար Արծրունի:

արևելեան և արևմտեան առանձին բանակաց
զօրավարներին էլ. իսկ գլխաւոր զօրավարին Խո-
րենացին ասում է Աշխադլապետ (1) և Թուվմա-
Նըծրունին Գլխապետ:

Սպարապետը մեծ իշխանութիւն ունէր, երբ որ
թագաւոր չէր լինում՝ սպարապետներն էին կա-
ռավարում տէրութիւնն ինչպէս Արդան և
Աշխան Ամփիկոնեանք, Ամէժ գնունի, Թէկողո-
րոս Ուշունի, և այլն. սպարապետներ նշա-
նակում էր թագաւորը (2): Իսկ Հայոց թագա-
ւորութիւնը բարձուելուց յետոյ սպարապետ նշա-
նակում էին Պարսից թագաւորները կամ Յունաց
կայսրները (3): Սպարապետները մեծ մասամբ
Ամփիկոնեանց ցեղեցն էին լինում, թէև շատ
անգամ եղել են և Բագրատունեաց և Ուշ-
տունեաց ցեղեցն էլ: Սպարապետի կոչման յատ-
կութիւնը (սահետիւրա) խաչ էր, որ տանում էին
նրանց առաջին. Թուվմա Նըծրունին ասում է,
թէ Սմբատ տուեց Գաղղիկին Հայոց զօրաց ա-
ռաջնորդութեան կոչումն և ըստ օրինակի Յու-
նաց կայսրների, արժանացրեց նրան իրան առա-
ջին խաչ կրելու (4): Երբ որ սպարապետը գա-
լիս էր զօրաց մօտ, զօրքն ողջունում էր նրան
փողերը հնչելով - այսպէս երբ որ հնչեցին Ա-
շխան Ամփիկոնեանի առաջին փողերը՝ Պարսից
Կիխոր գեսպանի ներկայութեամբը, նա ասաց
նրան, թէ “այս պատիւը միայն Պարսից զ-
րավարներին է պատկանում” (5):

(1) Պովես Խորենացի, Պարք Գ. 42. Օ:

(2) Փաւստոս Բիւզանդացի, Պարք Ե. 42. Լ. 3:

(3) Պ. թոք Գ. 42. Ը:

(4) Թուվմա Նըծրունի, Պարք Գ. 42. Օ:

(5) Ղազար Փարպեցի, Երես 286:

Բ. Սորտառալար. այս բառն էլ դուրս է դալի Պարսկաց ապահ բառից և նշանակում է զլխաւոր զօրավար. այսպէս էր կոչուում հռչակաւորն Օքաքարիա, որ Վրաց Գևորգ Թամաւորի աղջկայ Թամար թագուհւոյ զօրաց սպարապետն էր:

Գ. Սորտառելար. Յունաց բառ է, այսպէս կոչեց Թէկողոս կայուը Վարդանին, նշանակելով նրան ձայոց զօրաց սպարապետ (1): Փաւստոս Իմւզանդացին իր պատմութեան մէկ տեղումը Մուշեղին ասում է ստրատելատ (2), իսկ միւս տեղերումը սպարապետ, ուրեմն կարելի է կարծել, որ այս երկու անունն մէկ նշանակութիւն ունին:

ԲԱՆԱԿԻ ՏԵՂԸ. Ձայոց զօրքը Արշակունեաց ժամանակը բանակ էր տալի Շահապիվան սարումը, ինչպէս վկայում է Փաւստոս Իմւզանդացին, ասելով. “(Արշակ Բ) թագաւորի բանակն էր Շահապիվանումն, Արշակունեաց բուն բանակի տեղը՝ սօսի ծառերի տակին դաշտավայրի վրայ (3):

ՎՐԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ. Ձին ժամանակներումը բանակի մէջ միշտ եկեղեցի կար, բայց վերջերումն այս սովորութիւնը խափանուեց և միայն ԺԷ. դարումը. Օքաքարիայն՝ Վրաց Թամար թագուհւոյ սպասալարը կրկին վերանորոգեց. Աիրակոս պատմագիրը գեղեցիկ նկարազրում է այս անցքը:

Փատերազմի ժամանակը սովորաբար փող էին հնչում, ինչպէս Խորենացու այս խօսքերիցը յայտ-

(1) Փաւստոս Իմւզանդացի, Գիւք Գ. Դ. Ռ. Օ. Ե.

(2) Փաւստոս Իմւզանդացի, Գիւք Ե. Ռ. Ռ. Ռ.

(3) Փաւստոս Իմւզանդացի, Գիւք Գ. Ռ. Ռ. Ժ. Ժ.

նի է. “Սմբատ հրամայեց հնչել պղնձեայ փողերն և զօրքը յառաջ վարեց” (1): Օննորն առում է, թէ Տրդատ “դառնալով փոքրիկ պատերազմից, բարձրացաւ Արձան լեռան զլուխն և այնպէս հնչեցրեց համբաւարեր փողերը, որ բոլոր զօրքը հաւաքուեցաւ մի տեղ,, (2): Փողահարների համար յիշում է և Եղեշն (3):

ԵՌԵՆՁԻՆ ԵՎՏԿՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԶՈՐԱՑ (խառերիստիկա). Հայոց զինուորները գերազանցուում էին իրանց մարմույ ուժով և ամուր կազմուածքովն և ընդունակ էին կրել ծանր զրկանքներ, պատրաստ լինելով միշտ պահպանել իրանց հայրենեաց սահմանները, բայց նրանք պատերազմելու կիրք չունեին, այնպէս որ փառասէր Արտաշէս Ա. թագաւորը, որ նուածեց իր ձեռքի տակ Պարսկաստունը, փոքր Ասիան և արշաւանքներ արեց մինչև բուն Յունաստուն, սպանուեցաւ բանակի մէջ իր զօրքերից (4): Փաւստոս Բիւզանդացու վկայութեան համեմատ, Հայերը յօժար սրտով չէին պատերազմում իրենց հայրենիքից դուրս: Քըրիստոսի ծննդից 370 տարի յետոյ Հայաստանի բնակիչքն անբաւական լինելով Արշակ Գոհի շարունակ պատերազմներից, բազմաթիւ պատղամաւորներ ուղարկեցին նախարարներից, գաւառապետներից և գիւղերի ընարեալ մարդիկներից Մեծին Կերսիսի մօտ՝ խնդրելով նրան համոզել թագաւորին խաղաղութեան դաշինք կապելու, սպառնալով նրան, որ հակառակ դէպքումը “Հայոց երկրից

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 72. Խ.Օ:

(2) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 72. Խ.Օ:

(3) Եղեշն, երես 167:

(4) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 72. Ժ.Պ.

ոչ ոք չի դնալ նրան օգնութիւն, եթէ նա կա-
մենում է պատերազմել, թող պատերազմէ, մեզ
պէտք չ' և մենք կը թողնենք իրեն ,, (1):

Հայոց զօրքը միշտ կախումն ունէր աւելի նա-
խարարներից, քան թէ թագաւորից, դժուար էր,
մինչև անզամ անկարելի էր նաև միացնել բոլոր
նախարարաց անձնական շահասիրութիւնն, և այ-
սու ամենայնիւ զօրաց յառաջալիմութիւնը կա-
խեալ էր նախարարաց թագաւորի հետ ունեցած հա-
մաձայնութիւնից. այս անհամաձայնութեանցը զոհ
էր լինում միշտայս ազգը, որ միշտ ոգեսրուած
էր հայրենասիրութեամբ և հպատակ իրան թա-
գաւորին: Հապուհ Բ. Պարսից թագաւորը Դ. դա-
րումը պատերազմելով Հայոց հետ, այս խօսքերն ե-
ասում Հայոց զօրաց համար. “բայց աւելի զարմա-
ցել եմ ես Հայոց գնդի մտերմութեան և տիրասի-
րութեան վերայ: Եհա քանի տարի է, որ նրանց
տէր Արշակը կորած է նրանցից, բայց նրանք պա-
տերազմելուս նրանով էին միմեանց սիրտ տալի և
ինչ ժամանակ մեր ախոյեաններին վէր էին ձգում,
բոլոր ասում էին, թէ Արշակի համար են անում,
իսկ նա իրանց միջին չէր, բայց նրանք իրանց
տիրասիրութեան համար՝ որ ունէին իրենց բուն
թագաւորի վերայ, բոլոր սպանուած ախոյեաննե-
րին նրան էին նուիրում: Իայց Առւշեղի էդ կա-
տաղի գունդն, ինձ թուում էր, թէ կրակի բոցեր
էին դուրս գալի էդ գնդիցն և իրա դրօշակներիցը.
ինչպէս կրակը հրդեհի ժամանակը, ինչպէս բոցը
տարածում է եղեգի մէջ, այնպէս էր այս գունդը
յարձակմունք անում Երանի նրան, յա-
ւելացրեց Հապուհ, ովոր Հայոց այսպիսի տիրա-
սէր և մտերիմ զօրքի տէրը կըլինի ,, (2): Ակհ-

(1) Փաւատոս Ինւզանդացի, Գիւք Դ. Շ. ՕՒ:

(2) Փաւատոս Ինւզանդացի, Գիւք Խ. Շ. Եւ:

բան Պարսից զօրապետը այսպէս է խօսում Հա-
յոց զօրաց և նրանց զօրապետ Աշհանի համար,
հաշիւ տալով իւր նախորդի Հայաստանի վերայ
արած պատերազմների համար Աղալարշ (Պալաշ)
Պարսից թագաւորին։ “Երբ որ ես զօրագլուխ
կարգուեցայ, ասում էր Անհրանը, որքան վնաս-
ներ հասցը Աշհանն իր սակաւաթիւ մարդիկ-
ներովը, որ ճշմարիտ ասեմ, մի ժամանակ մի քա-
նի հարիւր հազիւ կային. էս բանին կարեն վկայել
մեր գնդի աւագորեալը, որ էն տեղէին և հիմա էս
տեղ են։ Օյանը է ասել, մինչեւ անգամ անհա-
ւատալի էլ կըթուի իմ խօսքն, թէ ի՞նչպէս նա
այնքան քիչ մարդով աներկիւղ կռուում էր,
յարձակուում էր բոլոր զօրաց վերայ և մեծ վնաս-
ներ էր տալի։ Բայց ես մի բան պէտք է պատմեմ,
որ ես ինքս վկայ էի և որ չլսած բան է ու գե-
րազանցուում է բոլոր մարդկային գործերից, որ
ամէն լսողի համար անհաւատալի կըթուի. երեսուն
զինուորով Աշհան աներկիւղ յարձակուեցաւ 3000
մարդոց վերայ, այնպիսի յաղթութիւն արեց, որ
էն տեղ եղածները մինչեւ հիմայ յիշում են էդ
բանն և մինչեւ հիմի չեն կարողանում ազատուել
իրանց վերայ ներդործած ահիցը. ոչինչ բանի չե-
կարելի նմանացնել էս նոր գործն. ինչպէս ժիր
մշակները սուր մանգաղներով և գերանդիներով
հնձում են խոտն և շատ որայ կապելով իրար
մօտ թողում են և իրանք զոււրծութեամբ ամէնքն
իրենց տներն են գնում անհոգ, իսկ և իսկ այս-
պէս էլ յարձակուեցաւ Աշհան Անհրանի գնդի
վերայ երեսուն մարդով, ջարդեց և վեր ’ի վայր
արեց ամբողջ գունդը և կուարեց շատ քաջ զին-
ուորներին . . . շատ երեւելի և քաջ Պարսիկ-
ների որի բերանը տուեց, բայց իրենք չփախան,
յետ չդարձրին իրենց ձիանքը, այլ երկար ժա-

մանակ անհոգութեամբ ման էին գալի մեղ մօտ,
և ոչ ոք մեր զօրքիցը չ'համարձակուեց մաիկ տալ
նրանց վերայ, նրանք մեր ամէնքիս աշքումը թու-
ում էին ոչ թէ մարդիկ, այլ աստուածներ: Թռէ-
պէտ այս խօսքերը, որ ասում եմ ձեզ մօտ, յան-
դգնութիւն են իմ կողմանէ, շարունակեց Արիշ-
րանը, բայց ես վստահանում եմ յայտնել իմ կար-
ծէքը եթէ Հայաստանն էնպիսի մարդ-
կանցով մեր հետ լիներ, Ա բացիք և Եղուանք
չէին համարձակել ծռուիլ մեզանից և ուրիշ տե-
սակ մտածել . . . բոլոր միաբան գովելով Արիշ-
րանի խօսքերն, ասում էին, թէ նրա խօսածները
խելօք և ճշմարիտ են և թէ արդարե բոլորն այդ-
պէս էր,, (1):

Սովորութիւն էր Հայոց մէջ պատերազմ մտնե-
լոց յառաջ քաջալերելզօրքին՝ նախնեաց քաջա-
գործութիւնները յիշելով (2): Օրինակի հա-
մար մէջ բերենք երկու ձառ, որ խօսուել են Հա-
յոց պատմաբանական երկու մեծ կէտերումը: Հայկ
պատերազմ մանելով Բէլի հետ, իր սեպհական
անկախութեան համար, իր ազգի քաղաքական ա-
զատութեան համար, կանչեց իր զօրքը և ասեց
նրանց. “Բէլայ ամբոխի գէմը դուրս գալուս աշ-
խատենք այն կողմն ներգործել, որ տեղ Բէլն է,
կամ մեռնենք և մեր ընտանիքն նրանց ծառայու-
թեան տակ ընկնին և կամ մեր մատների յաջո-
ղակութիւնը ցոյց տանք նրանց, ցրուենք ամբոխն
և մենք ստանանք յաղթութիւնը” (3):

Ամիկոնեան Ա արդան զօրավարը, զինաւորուե-

(1) Պաշտառ Փարպեցի, Երես 278:

(2) Եշելէ, Երես 182:

(3) Առվաճա Խորենացի, Գահեք Ա. 22. Ճ. Ը.

լով Վրիստոսի հաւատոյ համար և շայոց աղջի խղճի ազատութեան համար, պատերազմնուց յառաջ հանդէս առնելով գորքին, խօսեց նրանց հետ այսպէս. « շատ պատերազմներ եմ մտել ևս և դուք էլ ինձ հետ. երբեմն քաջաբար յաղթել ենք թշնամիներին, երբեմն էլ նրանք են մեզ յաղթել, շատ անգամ յաղթել ենք, քան թէ յաղթուել։ Այս ամէնը բոլոր մարմնոյ պարծանք էր, որովհետեւ անցաւոր թագաւորի հրամանաւն էինք պատերազմում, ով որ փախչում էր, էս աշխարհումն վատ անուն էր թողում և անողորմ մահ էր ստանում, իսկ ով որ քաջութեամբ յառաջ էր գնում, իր ազգի համար քաջ անուն էր ժառանգում և երկրաւոր ու մահկանացու թագաւորիցը մեծ մեծ պարզեներ էր ստանում. մենք ահա ամենքս մեր մարմնի վերայ շատ վերքեր և սպիտեր ունինք և այն քաջութեանց համար է, որ մեծ մեծ պարզեներ ենք ստացել։ Ես անարդ և անօգուտ եմ համարում էն քաջութիւնները և էն շատ պարզեներն առ ոչինչ, որովհետեւ բոլորն անցաւոր են։ Այժմ եթէ մահկանացու հրամանատուի համար էն քաջութիւններն արինք, որքան աւելի պէտք է անենք անմահ թագաւորի համար, որ կենդանեաց և մեռելոց տէրն է և պէտք է դատի ամենքին իրանց գործովը։ Որքան էլ ծերտնանք, էլի էս մարմնիցը պէտք է դուրս գնանք, որ մօտենանք կենդանի Աստուծոյն, որ նրանից էլ գուրս զնանք։

“ Աղաչում եմ ձեզ իմ քաջ նիդակակիցներ, թէպէտ ձեզանից շատերն ինձանից վեր էք քաջութեամբ և հայրենի պատուի գահով բարձր, բայց երբ որ դուք ձեր յօժար կամքովն ինձ ձեզ առաջնորդ և զօրագլուխ կարդեցիք, թող հեշտ և ախորժելի համարուին իմ խօսքերը ձեր մեծերի և փոքրների ականջներին։

Չվախենանք հեթանոսաց բազմութիւնիցն և
մահկանացու մարդի ահազին սրիցն երեսներս յետ
չ'դարձնենք. եթէ Աստուած յաղթութիւնը մեր
ձեռքը կըտայ, կրջարդենք նրանց զօրութիւնը, որ
ճշմարտութեան կողմը բարձրանայ. իսկ եթէ մեր
կեանքի ժամանակը հասել կլինի, էս պատերազմի
մէջ սուրբ մահով և ուրախ սրտով մեռնինք,
միայն թէ մեր քաջութեան հետ վատութիւն և
երկչուառութիւն չ'խառնենք:

“Ես չեմ մոռանում իմ և մեր մի քանիսի արարքը,
որ անօրէն իշխանին խափեցինք ինչպէս մի ան-
պիտան երեխայ, երեսահանց իրու թէ նրա ամրա-
րիշտ կամքը կատարեցինք, բայց մեր ծածուկ խոր-
հուրդի համար Աստուած ինքը վկայ է մեզ, թէ
ինչպէս անքակտելի ենք մնացել իրանից: Դուք
ինքներդ դիտեք, որ մեր արածը մեր սիրելեաց
համար էր, նրանք մեծ նեղութեան մէջ էին և
հնարք էին որոնում նրանց անդորրացնելոյ, որ
նրանց հետ ՚ի միասին կռուինք անօրէն իշխանի
դէմ մեր հայրենի աստուածատուր օրէնքի հա-
մար: Երբ որ մենք նրանց ոչինչ չ'կարողացանք
օգնել, անկարելի է որ մարմնաւոր սիրոյ համար
Աստուածը մարդկանց հետ փոխենք:

“Երկու և երեք կռուի մէջ Աստուած ինքը մեծ
զօրութեամբ մեզ օգնեց, որ կարողացանք քաջ
անուն ժառանգել, արքունի զօրքին սաստիկ կռ-
տորել, մոդերին անխնայ ջարդել, պիղծ կռապաշ-
տութիւնը շատ տեղերից սրբել, թագաւորի անի-
րաւ հրամանն ոտքի տակ տալ, ծովի չփոթու-
թիւնը իջևնել, լեռնացած ալեքը դաշտացնել,
բարձրադէզ փրփուրը փչացաւ և գազանացած
բարկութիւնը դադարեց. (Յազկերտ)՝ որ ամպերի
նման էր գոռգոռում յաղթուեց և սովորական
բնութիւնից ցած էր խօսում, մեզ հետ նա՝ որ

Հրամայական խօսքերով էր կամենում իր շաբ
միտքը կատարել սուրբ եկեղեցւոյ վերայ, հիմա
աղեղներով, նիզակներով և սրերով է կռուռմ։
Նա՝ որ կարծում էր, (թէ քրիստոնեութիւնը մեզ
վերայ շորի նման է, (երբ կամենայ կարող է հա-
նիլ տալ մեր հագիցը), հիմա մարմնոյ գոյնի
նման չի կարողանում փոխել, յոյս ունիմ, որ
մինչև վերջն էլ չկարողանայ, որովհետեւ սրա
հիմքը հաստատ դրած է անշարժ փիմի վերայ, ոչ
թէ երկրիս վերայ, այլ երկնքումը, որ տեղ ոչ անձ-
րե է դալի, ոչ քամին է փշում և ոչ հեղեղներ
են լինում։ Մենք էլ թէպէտ մարմնով երկրումն
ենք, այլ հաւատով երկնքումն ենք հաստատուած,
որ տեղ ոչ ոք չի կարող քրիստոսի անձեռագործ
շինուածքին համել։

Հաստատ յոյս ունեցէք մեր ճշմարիտ զօրաւ
պլուխ Քրիստոսի վերայ, որ նա չի մոռանալ ձեր
նահատակութիւնը։ Քաջնոր, այս մեզ համար
մեծ շնորհք է, որ Աստուած մեր ձեռքովն անում
է և որի մէջ Աստուծոյ զօրութիւնը պարզ երե-
ւում է։ Եթէ աստուածային օրէնքի համար ու-
րիշներին կոտորելով, մեր անձանց համար պար-
ծանք ժառանդեցինք և մեր ազգատոհմի քաջ ա-
նունը թողինք եկեղեցւոյն և հատուցմունքն Աստ-
ուածանից ենք ստանալու, որ պահուած է մեր
ամէն մէկի համար մեր յօժար սրտին և գործոցք
համեմատ, որքան աւելի կը լինի, եթէ մեռնենք
մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանն համար,
որին հրեշտակներն էլ ցանկանում են, միայն թէ
միջոց ունենան։ Լայ պարզենին ամէնքն էլ արժա-
նի չեն, այլ որոնց համար պատրաստել է բարե-
րար Տէրն և որոնց ոչ թէ մենք մեր արգար դործ-
քերի համար արժանացանք, այլ աննախանձ,

պարզեատուի ոկրմութիւնն է. ինչպէս Սուրբ կուկարանի մէջ առումէ. “որ տեղ մեղքն աւելանում է, էն տեղ Աստուածային շնորհքն էլ աւելանում է յառաջ մննք սգաւորի նման տիրած էինք հոգւով և մարմնով, այսօր ուրախացած և ոգեսորուած ենք երկուսովն էլ, որովհետեւ մեր բարերար Տէրն ենք տեսնում մեզ առաջնորդ եղած։ Մնր զօրագլուխը մարդ չէ, այլ ամենայն մարտիրոսաց զլուխն ինքն է։ Երկիւղը նշան է թերահաւատութեան, մենք թերահաւատութիւնը վաղուց ենք մեզանից հեռացրել, թողուրեմն, փախչի նրա հետ և երկիւղը մեր մաքիցն ու խորհուրդիցն։ Այսպէս խօսեցաւ քաջ և արին Աւրդան իր անթիւ զօրաց առաջին” (1)։

— ՀՅԱՀՔՔՔՔՔՔ —

Ե. ԵՐԿՐԱԳՈՒԾԱԹԻՒԽԻՆ ԵՒ Ա. Ա. ՀԵԿՈՒԾԱԿԱԹԻՒԽԻՆ

—

Երկրագործութիւնն ըստ վկայութեան Սուրբ դրոց, մարդուս առուած է Աստուածանից “և առաւ Աստուած մարդին, որ ստեղծեց և զրեց նրան իամփկութեան զրախտի մէջ գոլծել նրան և պահել” (2) և հանեց արձակեց նրան Տէր Աստուածը փափկութեան զրախտից՝ գոլծել ելի՛լ, որ տեղից ինքն առնուեցաւ” (3) և նոյնպէս ջըհեղեղից յե-

(1) Եշէէ, եղեւ 174—183։

(2) Ծանդոց, Հ. Բ. համար 15։

(3) Ծանդոց, Հ. Պ. համար 23։

առյ, “և սկսեց Կոյ հողագործ մարտն եւնեւ
գոյքել և այդէ ո՞նկեց,, (1):

Այսպէս Հայաստանումն երկրագործութիւնը
սկսուեց Եկոռի գիւղումը, Մասնաց լեռան ստո-
րոտումն. Եկոռի խօսքը կազմուել է երկու բառից.
արի, «առաջ, որ նշանակում է, թէ տնկեց խաղողն
ուռեր կամ վաղեր. որ մինչև հիմա էլ յիշուում
է Կոյ Կահապետի երկրագործութիւնն: Եռ հա-
սարակ ՚ի սկզբանէ մինչև քայսօր էլ երկրագոր-
ծութիւնը յարդ ունի Հայաստանումը: Մովսէս
Խորենացու վկայութեամբն երկրագործութիւնը
Հայաստանումն աւելի ծաղկեց Երտաշիսի ժամա-
նակն, որովհետեւ նրա ժամանակը Հայաստանը
լցուեցաւ բնակիչներով. “ Երտաշէս իր քաջա-
գործութիւններից և առաքինութիւններից յետոյ,
հրամայում է ջոկել գիւղերի և ագարակների սահ-
մաններն . . . : Երտաշէսի ժամանակը Հայոց աշ-
խարհումն անգործ գետին չկար, ոչ լեռների և ոչ
զաշտերի վերայ և էսպէս բարեշն էր մեր աշ-
խարհքը,, (2): Կոյսպէս երկրագործութիւնը
ծաղկեցաւ Հայաստանումն Եշոտ Բագրատունու
ժամանակն. “ որովհետեւ տափարակ տեղերումն,
ասում է Յովհաննէս կաթուղիկոսը, զոմեր և ա-
գարակներ էր շինում և զաշտերը զարդարում էր
այդիներով ու պարտէզներով,,:

Աս ժամանակից յետոյ թէպէտ Հայոց մատե-
նագրաց մէջ ոչինչ յիշատակութիւն չենք գտնում
երկրագործութեան համար, բայց գիտելով որ Հա-
յերը մինչև հիմա իրանց սեպհական յատկու-
թեան համաձայն երկրագործ ազգ են, կարելի է

(1) Կանոնոց, 42. թշ. համար 20.

(2) Գիւղ Բւ 42. ԿԱ:

կարծել, որ Հայերը ամէն արուեստից աւելի ի-
րենց աշխատանքը նուիրել են երկրագործութեանն.
Ինձինքնանի քննութեան համաձայն Հայաստա-
նումը հնարուել են շատ երկրագործական գոր-
ծիքներ, որ Աւրոպացւոց անծանօթ են (1):

Հուետիոս ասում է, թէ “Եփրատ գետի ա-
փունքը ինչպէս մարդկան ազգի՝ այնպէս էլ վա-
ճառականութեան օրօրոցն է եղել,, (2): Խորե-
նացին ասում է: “ շատ անգամ պատահում էր,
որ մերոնք նաւում էին Յունաց (Միջերկրական)
և Կասպից ծովի վերայ: Միջերկրական և Կաս-
պից ծովերի վերայ Հայոց արած ճանապարհոր-
դութիւններն ուղղակի կարելի է ասել, որ վաճա-
ռականութեան նպատակաւ են եղել. այս բանս
հաստատում է և Ստրաբոն էլ ասելով, թէ
Աօրս ազգերը բնակուելով Կասպից ծովի Հիւսի-
սային ափումը Տանայիս գետի մօտքերին, “առ-
նում էին Մարերից և Հայերից Հնդկաց և Բա-
րիլացւոց ապրանքները (3): Հայաստանի վաճա-
ռականութեան համար Սուրբ գիրքն էլ յիշում է.
Եղեկիէլ մարդարէն խօսելով զանազան տեղերից
Տիւրոս քաղաքը բերած ապրանքների համար, շա-
րունակում է, թէ Թարգոմայ տանիցը Տեծնելու
ձիերով և ջորիներով լորին քո վաճառնե-
րը,, (4):

(1) Հնախօսութիւն Հայաստանի՝ Անմիմեանի, Գիւլք Գ.
ՔԼ. Ժիմս. Երես 135:

(2) Պատմութիւն վաճառականութեան և նաւագնացու-
թեան Նախնեաց:

(3) Ստրաբոն, Գիւլք Ժ.Ը.

(4) Գլ. Ի.Հ. Համար 14: Հայոց ձիանքը հաշակուած էին
Հին ժամանակը Յիսեռ անունով, որ նժոյդ բարիցն է, Ստրա-
բոն, Գիւլք Ժ.Ը: Պինդոս Գիւլք Զ: Ա. Ի.Հ: Պլուտար-
քոս. (Կենսագրութիւն Պինդոսի): Փալատոս Բիւլանդացի,
Գիւլք Խ. Ա. Լ.Հ: Գաղար Փալապեցի, Երես 235: Յովհան-
նէս Կաթուղիկոս: Խուլմա Արքանի, Գիւլք Գ: Ա. Ժ. Ժ.:

Ինչպէս Փիւնիկիայի, նոյնպէս էլ ուրիշ երկիր-
ների հետ ձայաստան երևելի վաճառականութիւն-
ներ է արել, որովհետեւ թէպէտ նա ցամաքուղի
թագաւորութիւն է եղել, բայց իր աշխարհազրա-
կան դրութեամբը գտնուելով երեք ծովի մէջ, այ-
սինքն՝ Աւ, Կա սպից և Միջերկրական ծովերի մէջ,
իր գետերով հաղորդակցութիւն է ունեցել նրանց
հետ։ Այսպէս Փասիսը կամ Շորոխը թափուում
է Աւ ծովը, Երասիսը՝ Կասպից ծովը, Եփատն
և Տիգրիսը՝ Գարսից ծոցը։ Եփրատ գետը Աս-
մուսատի և Մարաշի կողմերումը շատ մօտենում
է Միջերկրական ծովին, և տեղ էլ Եփրատի մօտ
շատ գետեր կան, որ թափուում են Միջերկրա-
կան ծովը։

Ձայաստանի այս դրութիւնն և նորա բերքերի
առատութիւնը բնականաբար ծաղկեցրին վաճա-
ռականութիւնն, որովհետեւ ամեն կողմից ապրան-
քը բերում էին վերոյիշեալ ծովերովն և էն տեղե-
րից մի մասը գետերով, մի մասը ցամաքի ճանա-
պարհով մտնում էին ձայաստան, այսպէս էլ
Ձայոց ապրանքն էն մի և նոյն ճանապարհներովը
տարածուում էր ամեն կողմից։

Յունաց և Ձոռվմայեցւոց մատենագրաց մէջ
շատ տեղ կարդում ենք Ձայաստանի վաճառա-
կանութեան համար։ Ձայաստանն էր ինչպէս վա-
ճառականութեան ճանապարհների կեղրոնն, էն-
պէս էլ Երևելքի Երևմուտքի հետ ունեցած վա-
ճառականութեան կեղրոնը։ Ձայաստանի միջովն
էին համարում հին աշխարհի երեք զվարոր վա-
ճառականութեան ճանապարհը։

Ա. Շանտաղարի Կառողից ժողովը. Ստրաբոնի և
Պլինիոսի վկայութեանց համաձայն Անդկաց ապ-
րանքը ցամաքային ճանապարհով հասնում էր
Եփարսս գետը, էն տեղից Կուր գետի նաւահան-

կիստը, որ տեղից ցամաքի ճանապարհով բերում
էին Փասիս գետը, որ թափուռում է Աև ծովն և
արդէն Աև ծովի նաւահանդիստներիցը տարած-
ուռում էր Յունաստան և Եւրոպայի զանազան
կողմերը (1).

Ուրեմն Հնդկաստանի ապրանքն անց էր կե-
նում Հայաստանիցը. Հայոց այն ճանապարհովը
վաճառականութիւն անելու համար խօսում է
Հուետիոսը (2). Նա ասում է, թէ “Կասպից և
Աև ծովերը հասցնում էին Հայերին ապրանք,
որ նրանք ծախում էին Պարսիկներին և Արկա-
նացւոց. այս Ճանապարհովն ոչ միայն լինում էր
Հիւսիսականների և Պարսից վաճառականու-
թիւնն, այլ նաև Հնդկաց և Չինաց, որոնց ապ-
րանքն Օքսոս գետովը հասնում էր մինչև Կաս-
պից ծովը, որ տեղից Առոր գետովը հասնում էր
Բոլոր Եւրոպայ:

Բ. Ճանապարհը Աև ծովով. Արևելեան և ա-
ւելի Հնդկաց ապրանքներով Հայերը վաճառա-
կանութիւն էին անում Կասպից ծովովը, իսկ
Արևմտեան ապրանքներով Աև ծովովը. Այս ճա-
նապարհի հանգամանքը նկարագրում է Սարաբոն.
Նա ասում է, թէ “կարելի է նաւել Փասիսովը
դէպի վեր մինչև Սարապաննայ (Կարելի է Սպեր
գաւառի աղաւաղաց անունը լինի) և էս տեղից
ցամաքով գնալ մինչև Առոր գետն , . : Այսպէս
են միանում երկու առեւտրական ճանապարհները
Կասպից և Աև ծովի միջոցովն ու Առոր գե-
տովը :

(1) Սարաբոն, Գելեք ԺԱ. Պլինիոս, Գելեք Օ., 7L.

(2) Պատմութիւն վաճառականութեան և նաւագնացու-
թեան նախնեաց, 7L. ԺԲ.

Հայոց վաճառականներն Արևմտեան ապրանքը
ստանալով Աև ծովիցը Փասխս զետով, մի և նոյն
զետովն էլ ուղարկում էին իրանց ապրանքը Կող-
քիսի աշխարհքը և Փասխս զետի նաւահան-
գիստները միշտ լիքն էր լինում դանապան երկիր-
ների ապրանքներով։ Հայաստանի բերքերը Կող-
քիս մոնելու համար կարելի է հաստատել և սրա-
նից, որ Կողքիսից առաւելապէս դուրս էին աս;
Նում ոսկի, ցորեն, աղ, կտաւատ, մեղք, մեղքա-
մոմ, ոչխարի և եղջերուի մորթի, բժշկական
բոյսեր և մանաւանդ խաշնդիղ։ Լս բերքերիցը
շատը Կողքիսի պտուղ չեր, ուրեմն էնդոնք բե-
րում էին մերձակայ երկիրներից և մի քանիսն
էլ յատկապէս Հայաստանին էին պատկանում։
Աև ծովի վրայով վաճառականութիւնն ուշ
սկսուեց քան թէ Աիջերկրական, որովհետեւ ա-
ռաջ փոքր Ասիայի և փոքր Հայաստանի բնաւ-
կիչքը ցանձրի ճանապարհով և զնտերովն էին
աանում Աիջերկրական ծովի ափը։

Թէպէս Ստրաբոն, Եւսեբիոսն և ուրիշ մա-
տենագիրները յիշում են, թէ Եզիպտացիք և
Փիւնիկեցի Աև ծովի վերայեվ նաւագնացութիւն
են արել թէպէս Փոխքոսի Կողքիս ճանապար-
հորդելու և Արգոնաւորդաց պատերազմը եղել են
Յունաց պատմութեան շատ վաղ ժամանակը,
բայց էստոնք միայն մի ժամանակի փորձ են եղել
և ոչ թէ շարունակ ճանապարհորդութիւն են
բաց արել Աև ծովի վերայ։ Աև ծովի ճանա-
պարհորդութիւնը սկսաւ Բիւզանդեան կայսերաց
ժամանակին, երբ որ Յունաց նաւերը Կողքիսից
սկսան Ասիայի ապրանքը տանել Արևմտեան եր-
կիրներն և Ասիկոմիդիա, որ երեելի ապրանք պա-
հելու տեղ էր, մանաւանդ Բ. դարումը. Բայց երբ
որ Աղէքսանդրիայի վաճառականութիւնը սկսաւ

ծաղկել, Աւ ծովի վաճառականութիւնը վեր ըն-
կաւ. Եւ դարից յետոյ, երբ որ Սարագինոսները
Խզիպասոսին տիրեցին, Աղէքսանդրիան ընկնելու
մօտեցաւ և Աւ ծովի վաճառականութիւնը կրկին
սկսաւ բարձրանալ, որ տեղից և սկսան ձնդկաս-
տանի ապրանքը դուրս տանել, բայց շուտով ծո-
վային աւազակութիւններն էլի հարկադրեցին դի-
մել Աղէքսանդրիա և Ժ.Օ. դարու վերջումը
Պոնտոսի վաճառականութիւնը կրկին սկսաւ վեր
ընկնել:

Գ. Շահապարհ Եւրոպ գետի ձբայով. Արևե-
լան Ովկիանոսի հետ ձայաստանն առևմտուր էր
անում Եփրատ և Տիգրիս գետերովը, որ թափում
էին Պարսից ծոցն, Եփրատի վերայ էր էն ժա-
մանակուայ վաճառաշահ Բարիլն քաղաքը. “Հա-
միրամն, ասում է Դիոդորոս Սիկիլիացին, հիմնեց
Եփրատ և Տիգրիս գետերի վերայ շատ ուրիշ
քաղաքներ և նրանց մեջ տօնավաճառներ (արմարք)
հաստատեց, ուր բերում էին ապրանք Մարաց,
Բարեղագինւոյ երկրներից և բոլոր շրջակայ կող-
մերից. որովհետեւ էս մեծ գետերը շատ աշխարհ-
ներ են գնում, շատ հեշտացնում են վաճառա-
կանաց ճանապարհը, որով էս գետերին մօտիկ
տեղերը շատ տօնավաճառներով հարստացած են
և ամենքից աւելի Բարիլնի հարստութիւնն են
շատացնում, (1): Այս տեղ Մարք բառը պէտք
է հասկանանք ձայաստան, որովհետեւ Ե. հին
մատենադիրները շատ անգամ խառնում են իրար
էս երկիրներն, էնդուր որ, մի ժամանակ ձայաս-
տանի մի մասը Մարաց իշխանութեան ներքոյ էր
և Բ. Եփրատ ոչ թէ Մարաստանով էր ընթա-

նում, ինչպէս Դփողորս ասում է, այլ հայաստանովը, որի բնակիչքը շատ անդամ Եփրատովը գնում էին Բաբիլոն. այս բանը հաստատում է և հերողոտոսն էլ, պատմելով Հայոց Եփրատի վրայով արած ճանապարհորդութիւնն և նրանց նաւերի շինելը (1): “Սա ասում էր, թէ “Հայաստանումը, որ Ասորեստանի վերեն է, ուուի ճըղքերից նաւի կողքեր են շինում, զբսից մորթի են քաշում, հաւասարում են ինչպէս գետին, ոչ նաւի խելն՝ և ոչ առաջն են սուր ծայր թողում, այլ վահանի նման բոլորակ են շինում, էսպիսի նաւը բարձում են աւելի գինով, թողում են գետի վերայ գնալ՝ երկու հոգւով միայն թիաւորելով։ Իս նաւերիցը մեծերն էլ են շինում, մանրերն էլ, աւելցնում է հերոդոտոս. սրանցից մեծերը մինչեւ 5000 տաղանդի չափ վերցնում են, և ամէն մէկ նաւն էլ տանում է էշեր և նաւն որբան մեծ է այնքան շատ էլ է տանում։ Սաւարկողներն երբ որ հասնում են Բաբիլոն և բեռը դատարկում են, նաւի կողերն էլ և ամէն բանն էլ ծախում են, այլ մորթիքը բարձում են իշանոնցը տանում են Հայաստան, որովհետեւ գետի սրընթացութեան համար ընդդէմ նաւարկելն անկարելի է, սրա համար էլ է, որ փայտից չեն շինում նաւերն, այլ մորթուց. երբ որ էսպիս իշանոնց վերայ բարձած գալիս են Հայաստուն, ուրիշ նաւեր են շինում մի ևնոյն կերպիւ, : Հերոդոտոսի այս խօսքերիցն աւելի ոչինչ լաւ վկայութիւն չի կարող լինել Հայոց Եփրատոյ վրայով արած փաղուցվան վաճառականութեան համար։

Հայոց վաճառաշահ քաղաքներից աւելի երես իքն էին. Դվին, Բաղէշ, Կարս, Անդոնի, Կոմանա (1) Արծն: Արծն քաղաքի վաճառականաց համար Լաստիվերտցին այսպէս է խօսում. “վաճառականներն եկեղեցի էին շինում և զարդարում, կրօնաւորներին օթեաններ և հանգստութիւն էին տալի և աղքատներին էլ ողորմում և խնամք էին տանում, իրենց առուարի մէջ խարէութիւն և նենգութիւն չին անում և շահ առնելը համարուած էր անարդանք և ենթարկուած էր դատաստանի,, (2): Սպեր, Փասիս գետի վերայ, որ ոսկով առաս է Խնձիձեանի հետախուզութեամբը Սուրբ Պրքի միջի Սարեր կոչուածը այս է, նրա կարծիքով այս տեղ էր Արդոնաւորդաց պատերազմն և էս տեղ եկան Սողոմոնի նաւերն ոսկու համար (3):

ԴԻԱՄՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ. Հայաստան շատ վաղժամանակից գովուած է իր ոսկոյ և արծաթի առատութեան համար. բայց մենք ոչինչ տեղեկութիւն չունինք, թէ Հայկաղուն թագաւորները դրամ կտրում էին թէ ոչ յայտնի է միայն, որ Աքիմենաց, որց իշխանութեան ներքոյ եղած թագաւորներն և իշխաններն իրաւունք ունէին իրանց պատկերի նման դրամ կարել և էս դրամներից շատերը հասել են մինչև մեր ժամանակները (4): Վարդան

(1) Առեծ Հայաստան Խնձիձեանի, Երես 463: Տառիկա Արծունի, Գիրք Բ: ՊԼ: Զ: Գիրք Դ: ՊԼ: Դ: Լաստիվերտցի, ՊԼ: ԽԸ: Ապարան, ՊԼ: ԺԲ:

(2) Լաստիվերտցի, ՊԼ: ԺԲ:

(3) Հասկոսութիւն Հայաստանի, Խնձիձեան, Գիրք Ա: ՊԼ: Բ: Երես 102, 120:

(4) Լուիս դաքսի, դրամահատութիւն (նումիսմատիկա) աստրապների Աքիմենացւոց թագաւորութեան ներքոյ:

ՃԳԱ դարու պատմագրի էս խօսքերը, թէ “ Կ և ոն
թագաւորի ժամանակը զրամ գտնուեցաւ Հայոց
զբերով, որ Հայիտղոնի կոտորալո նահաւորաց
անունն էր վրեն գրած „ կարող էին միակ վկայու-
թիւն լինել, որ Հայկազանց ժամանակը զրամ
եղել է, եթէ Հայիտղոնց ասելով մենք իմանանք
“ Հայկազանց ցեղեց ” և ոչ թէ “ Հայոց ” .

Արշակունեաց թագաւորութեան ժամանակ, երբ
որ Պարսից թագաւորները համարուեցան աւագ-
ներ, այս աւագութեան հետ էլ նրանցն էր սեպ-
հականած զրամ կտրեն. և երբ որ Արտաշէս
Հայաստանի փառասէր թագաւորն աւագութիւնն
իրեն սեպհականեց, “ Էն ժամանակը սկսաւ իր
պատկերով զրամ կտրել,, (1). մինչեւ մեր ժա-
մանակը հասած շատ փողեր զրամագէտները Տիգ-
րանին են սեպհականացնում, որ նկարած է երկու
արծուով և աստղով զարդարած թագով . այս
զրամները կտրած են Անտիոքումը, Տիգրանի Ասո-
րեստանի վերայ իշխած ժամանակը Շատ զրամ-
ներ էլ սեպհականացնում են Արտաւազդին, բայց
նրանցից աւելի երեսելին համարուեմ է մի պղնձի
զրամ երկու զլսով, որոց մինը Տիգրանի զլուխն
է, միւսն Արտաւազդինն. Երկուսի զլսին էլ թագ-
կայ, Տիգրանը մօրուքով է, իսկ Արտաւազդն ա-
ռանց մօրուքի: Են զրամները, որոնք Հայոց զրա-
մագէտները սեպհականացնում են Արշակունեաց
և Բաղրամունեացն, էն զրամների վերայ զրուած
են էնպիսի թագաւորաց անուններ, որոնց համար
Հայ պատմաբանները չեն յիշում, այլ միայն Յու-
նաց (2): Երեսումէ որ Բիւզանդիան կայսրներից

(1) Մովսէս Խորենացի, Գիրք Բ. 42. Ժ. Ժ. Ժ.

(2) Եկարագրութիւն մետաղաց Յունաց, Գիրք Բ. Երես 78 և այլն:

կարգուած կուսակաները, որ Հայաստանի արեւ
մտեան մասումն էին, իրենք իրանց թագաւորներ
էին կոչում և իրենց անունովը դրամ էին կըտ-
րում (1):

Արշակունեաց ցեղը բարձուելուց յետոյ, երբ որ
Հայաստանի վերայ տիրեցին Պարսիկներն և Յոյ-
ները, Հայաստանումը սկսան գործ ածուել Պար-
սից և Յունաց դրամները. վերջերումը Յունաց
դրամները վերջացան Արաբացւոց դրամները գործ
ածելով (2): Ալեքիայի Հայոց թագաւորներն
իրենց համար դրամ էին կտրում. Ուուբենեան
Հայոց թագաւորաց դրամների համար գրել են
Սեսանին. Նկարագրութիւն 'ի վերայ Ուուբենեանց
դրամոց. ժողուածու Անսիլիայի 'ի վերայ դրամոց.
Ծրօսէ Պետերբուրգի Ակադեմիայի յիշատակարա-
նումը Գիրք Օ. Երես 3, 4, Ե. Լանդլօնա դրա-
մագիտութիւն Հայաստանի միջին դարերումը.
Փարիզ 1855 և այլն:

Ժ.Գ. դարումը Վարդան պատմագիրը յիշում
է սպիտակ և կարմիր դրամներ, 'ի հարկէ պարզ երե-
ւում է, որ էդ ժողերն էին արծաթեայ և պղնձեայ:
Թաումա Մեծովիցին ԺԵ. դարու մատենագիրն
էլ խօսում է իր ժամանակի մի քանի դրամների
վերայ (3):

(1) Աերէս: Ասողի, Գիրք Բ. Դ. Դ. Պորդիմն՝ հե-
տախուզութիւն Ասասնեան դրամոց Փահիվացւոց ասու-
թեանց մէջ: Տարեգիր Գերմանացւոց արեելեան միարանու-
թեան 1854: Փրիդրէկոս սորէ, նասակ առ Օլսհառլեն 'ի
վերայ Ասասնեան դրամոց:

(2) Ով որ ցանկանում է, որ ժողերի հետ լաւ ծանօթանալ
կարող էտալ Պ.Վ. Լանդլօային դրամագիտութիւն Հայա-
տանի հին ժամանակը, որ տպած է Փարիզ 1859 թ. Իագ-
ուոց մետաները Պ. Ուօշետի. դրամագիտութիւն Ասարուպ-
ների Աղեմիտաց իշխանի ներքոյ Լուին դոքսի:

(3) Խնձօնեան Հնախօսութիւն Հայաստանի, Գիրք Ա.
Դ. Երես 241-243:

ՕՇ ՀԵՅՈՑ ԱԿՐՈՒՆ. ԳԻՒՆ ԵԽ
ԳՐԸՆԿՐԻՄՈՒԹԻՒՆԸ:

Հայոց լեզուն Եւրոպայի ուսումնականաց քննութեան համաձայն պատկանում է Հնդկաւ Եւրոպական լեզուաց ճիւղերին և մօտենում է Սանկուրիտացւոց լեզուին Օճնդացւոց կամ հին Պարսից լեզուի միջնորդութեամբն, որովհետեւ բառեր կան, որ Հայոց և Սանկուրիտացւոց լեզուի մէջ մի և նոյն են և աւելի մօտիկ են իրենց տեսակով Օճնդացւոց, քան թէ Սանկուրիտացւոցը Մեր դատողութիւնը չէ ներում մեզ քննել, թէ ի՞նչ ճանապարհով լեզուագիտութեան արուեստը (ՓԱԼՈԼՈՐԻԱ) հասել է վերսիշեալ հաստատութեանն, այս միայն կասենք, որ Հայոց լեզուի Հնդկաւ Եւրոպական լեզուի ցեղին պատկանիլը հիմնուած է Հայոց լեզուի նմանութիւնից Սանկուրիտի լեզուի հետ իր ամենագլխաւոր հիմունքներովն, այսինքն նման լինիլը էական դերանունների, էական բայի, ցեղական յարաբերութիւններ նշանակող գոյական անունների, թուական անուանց, բառերի ծագման սիստեմայի և կազմութեանց (1)։

Հայոց գիրք. Հին հեթանոսական ժամանակա- ներումը Հայաստանումը գործ էին ածում մի տեսակ հերոզլեֆական նշանադիրներ. Վդաթանգե-

(1) Յաւալի է մեզ համար, որ Յունաց և Լատինացւոց տառերի պակասութեան համար չկարողացանք հաղորդել մետղին, ՊԵՂԵԱՆԱՑի լեզուագիտական քննութիւնները, որ արելէ մեր լեզուի ծագման մասին, Հնդկաւ Եւրոպական, սանկուրիտացւոց և Օճնդացւոց լեզուից համեմատելով իրար հանկուրիտացւոց, Յունաց, Հայոց և Պարսից բառերի գլուխութեանը, որ հիմունքները՝ Պահոմի, Թարգ:

Դոս նկարագրելով Լուսաւորչի չարչանքն և
փորձութիւններն, ասումէ. “Տրդատ թագաւորի
ատենապետները նշանագերներով զրում էին էն
սուրբ մարդոյ բոլոր ասածները,, (1):

Միւս տեղը նոյն Ագաթանգեղոսը խօսելով
սուրբ Հոփիսիմեթ վերայ, որին Տրդատ խնդրել
էր իր հետ ամուսնանալ և բացասութիւն ստա-
ցաւ, աւելցնում է. “Էն տեղ պատահեցան նշա-
նագերներով զրողներ, որոնք գրելով բոլոր (սուրբ
կուսի խօսածները), կարդացին թագաւորի առա-
ջեն” (2):

Բացի Ագաթանգեղոսից, այս նշանագիրները
լինելը հաստատում են և մի քանի հին ձեռագրաց
մէջ գործ ածուած նշանագիրները մի քանի բառե-
րում. զորօրինակ ալբարի բառը մինչեւ հիմա
էլ նշանագիրով է գործ ածուում, որ ան-
կասկած մնացորդ է հին նշանագիրների և մինչեւ
ցայսօր էլ գտնուում է էսպիսի հին ձեռագրների
միջից ժողոված նշանագրների կարգումը (3):

Հայաստանի մէջ քրիստոնէութեան լոյսը դեռ
չմտած ժամանակից սկսեալ գտնուեցան, անյայտ
է թէ ունմից, Հայոց ազգային տառեր, բայց ա-
ռանց ձայնաւորաց Արարացւոց և Երբայեցւոց
այբուբենից նման. և որովհետեւ էս գրերը ինչպէս
Կորիւն ասում է, “չկարողացան լիովին արտա-
սանել Հայոց բառերն և վանկերն,, ուստի և մո-
ռացուեցան, նրանց փոխանակ Յունաց, Փարսից
և Ասորւոց գրերի գործածելովը Խորենացին յի-
շում է միայն Պարսից և Յունաց գրերի գործա-

(1) Ագաթանգեղոս, երես 85,

(2) Ագաթանգեղոս, երես 126:

(3) Կորիւն: Խորենացի, Գիլոց Գ. 72. ՕՐ.

ծութեան համար (1). բայց ինչպէս երեսւմ է ամէնից աւելի գործ էին ածում Ասորւոց զրերն, ինչպէս Դազար Փարանցին ասում է (2): “ տըրտմում էր երանելի Առաջողը (Անարովը) տեսնելով Հայոց մանկանց մեծ ծախսերը, որոնք շատ թոշակներով և հեռու ձանապարհներով և երկարաժամանակեայ տառապանքներով մաշում էին իրենց կեանքն Ասորւոց դպրոցներումն, որովհետեւ եկեղեցական պաշտամունքն և կարդացմունքը Ասորւոց դրով էին լինում Հայոց վանքերումն և եկեղեցիներումն, որից էնպիսի մեծ աշխարհքի ժողովուրդը չհասկանալով նրանց լեզուն, ոչինչ չէին կարող լսել և օգուտ քաղել,, (3). Դազար Փարանցու էս խօսքերից երեսւմ է, որ եկեղեցական պաշտամունքն Ասորւոց լեզուով էր լինում, այն ինչ Խորհենացին ասում է, թէ եկեղեցիներումը գործ էր ածուում Յունաց լեզուն (4), ուրեմն պէտք է կարծել, որ Հայաստանում մի տեղ Յունաց լեզուն է գործ ածուել, միւս տեղումն Ասորւոց կամ թէ երբեմն մինն և երբեմն միւսն: Ասորւոց տառերը Հայաստանումը գործ ածուելը կարծիք առւեց Բօշարին Հայոց լեզուն Ասորւոց լեզուին նմանեցնելու (5): Ա արդան պատմազիրն ամէնքից աւելի հանգամանօրէն պատմում է, թէ Անսրովը կայի Հայոց զրեր կային. նա ասում է. “ Առամ Շապուհի թագաւորութեան հինգերորդ տարումն և Շապուհի որդի Արտաշը թագաւորութեան առաջին տարումը, սուրբ Անսրովը շինում է Հայոց զրերը:

(1) Գրեք Ա. Աւ. Գու Գրեք Գու Աւ. ՕՐԻ

(2) Դազար Փարանցի, երես 27.

(3) Երես 26, 30:

(4) Գրեք Գու Աւ. Լ. Զ:

(5) Գրեք Բ. Աւ. Թմ:

Հին ժամանակից մնացած 22 գիրը, որ գտնուել
էր Գանիել Ասորւոյ մօտ, մոռացուել էին մեր
լեզուի բոլոր հնչումներն արտասանել չկարողա-
նալու համար և բաւականում էին միայն Յու-
նաց, Ասորւոց և Պարսից զբերը: Մեսրովը չկա-
րողանալով էս վերջի գրերովը Սուրբ գիրքը թարգ-
մանել Հայ լեզուաւ, իրեն տուեց աղօթքի և
ստացաւ 14 տառ Աստուածանից, որ իր աջովը
գծագրեց նրա առաջին ինչպէս մեծ Մովսէսին
Ախնա սարումը, այսպէս էլ սրան Բալու սա-
րումն . . . և թէ հին ժամանակը հայերէն զիր
եղել է, էս հաստատուեց Լևոն (Հայոց) թագա-
ւորի ժամանակը, որ գտնուեցաւ Արտելիայումը
փող Հայերէն դրով գրած Հայոց կռապաշա թա-
գաւորաց անունով. էս հին զբերի պահասութիւնը
լըրեց մեր նոր Եղբայր (Մասրովիք), (1):

Հայոց քաղաքական կենաց ամենադժուար մի-
ջոցումն, այսինքն՝ Վրիսառոսի ծննդից յետոյ
Եւ գարումն երբ որ նրանց ազգութիւնը մի կողմից
Ճնշուած: Էր Պարսից ամենի նիւթական միջոց-
ներից և միւս կողմից կուլ. Էր գնում Յունաց
քաղաքականութեան ծաղկելուց, անմահ Մեսրովը
հոգալով ազգութեանը փրկութեան և պահպա-

(1) Աստուածային շնորհը, որ նկատուում է Հայոց գիրը
գտնելուս, տեսնում ենք ուրիշ ազգերի տառերը գտնելուս
որովհետեւ նրանց զիրը գանուիլն էլ անկարելի էր առանց
Աստուածային գննականութեան լինել, այս հրաշովի գիւտի
վկայերը ակամայից տեսան նրա մէջ Աստուածային ներգոր-
ծութիւնը: Ա արդան և Հայոց ուրիշ պասմաբանները, ոյնք
տեղեկութիւն են հազարդում մեզ Հայոց հին տառերի վե-
րայ, իրենց ասածները հաստատում են Փիլաստրատէսի հե-
տևեալ խօսքերովը, որ ժամանակից էր Կարակալլայ կայսեր որ
իր “ կեանք Տուսքեան Ապողոնի, ասուած շարադրութեան
մէջ ասում է “ մի անգամ Պամիկիլոսը կալու մի վազը, որ
վին ուներ ոսկի օղ, որի վերայ Հայոց տառերով գրուած
էր: “ Առշակ թագաւոր Նիբրի Աստուածն ու :

նելու համար մտածեց գանել գտնել ազգային
զբերն։ Ին ժամանակի Սահակ կաթուղիկոսն ու
Վռամշապուհ թագաւորը ճանաչեցին էս քանքա-
րաշատ մտքի պիտանութիւնն և երբ որ Մեսրով
ոքեռորուած սուրբ հոգւոյ շնորհքովը, գալով
սուրբ Սահակի մօտ, յայտնեց նրան իր երկար
ժամանակուայ մտածմունքը, քաջալերութիւն ստա-
ցաւ նրանից, թէ, զօրացի՛ր պինդ կաց, առ քեզ
օգնական էն քահանաներից, որ ես կըպատուիրեմ
և երբ որ տկարանաք վանկերը դասաւորելուս
քերեք ինձ մօտ, ես կուղղեմ, այդ շատ հետ բան
է. բայց յառաջուց մեզ հարկաւոր է թագաւո-
րին իմաց տալ էղպիսի մեծ և պիտանի
խնդրի համար, որովհետև մի քանի օրից յառաջ
երբ որ եկեղեցումը խօսք է ընկել էդ պիտոյքի
կարօտութեան համար, մէկը թագաւորին ասել է,
թէ մի գեղում մի եպիսկոպոսի մօտ ես հայերէն
նշանագիրներ տեսայ, թագաւորն էլ էդ բանը յի-
շեց և ինձ պատմեց։ Եջր որ սուրբ Սահակ Հա-
յոց կաթուղիկոսն երանելի Մաշտոցի (Մեսրովի)
հետ եկաւ Վռամշապուհ թագաւորի մօտ և ի-
մաց տուեց նրան էս օգտակար գործոյ համար,
թագաւորը յիշեց էն վանականի ասածներն և
պատմելով ուրախացրեց նրանց։ Նոքա լսելով
թագաւորից էս բանը, շտապեցնում էին նրան ա-
սելով, թէ աշխատի՛ր Հայոց աշխարհքիս էս օգ-
տաբեր զիւտի համար, որ լինի քո ժամանակը։
սա ապագայումը քեզ մեծ օդուտ կըբերէ երկնային
արքայութիւնը ժառանգելու և քո յիշատակը ան-
մոռանալի անելու, սա մեծ օդուտ է, քան թէ քո
աշխարհային իշխանութիւնն և կամ քեզանից
յառաջ եղած քո Արշակունի նախնեաց իշխանու-
թիւնը։ Թագաւորն լսելով էս բանն՝ ուրախացաւ-

և փառք տուեց Աստուծոյ, որ իր թագաւորութեան ժամանակը էսպիսի հողեռ կենաց փափաքը մտաւ Հայոց աշխարհն „ (1) ։ Են բապէին արքայական հրովարտակով սուրհանդակ ուղարկեցին Աբէլ քահանայի մօտ, որ պատմել էր թագաւորին այս ինչ եպիսկոպոսի մօտ հայերէն տառեր լինիլը, պատուիրելով. որ շուտով վերցնի ու բերի թաղաւորին։ Աբէլը էս նշանագիրները վերցրեց Դանիէլ եպիսկոպոսից, որի մօտ պահուած էին, և ուղարկեց թագաւորին, Աահակ կաթուղիկոսին և երանելի Անսրովքին. նրանք “սովորեցան (էս այբուբենն) և մի քանի տարուայ մէջ երեխեքանցը սորվացըին, բայց հաստատ իմացան, որ իսկապէս չի կարելի հնչել Հայոց բոլոր բառերը յիշեալ տիրալի և պակասաւոր այբուբենովը ” (2)։ Եւ Դարի բոլոր մատենագրաց վկայութեամբը հին ժամանակից մնացած այբուբենքը Աահակ կաթուղիկոսի ժամանակ երկրորդ անդամ նորոգուելուց և երկու տարի գործ դրուելուց յետոյ՝ բաւական չեղաւ գործածութեան համար, որովհետեւ նրա տառերովը անկարելի էր իսկութեամբ հնչել Հայոց լեզուի բոլոր ձայներն և կապել իրար հետ տառերը կամ հնչումները ” (3)։ Ա երոյգրեալ բանից երեսում է, որ հին նշանագրների մէջ բաւական չէր բաղաձայներն, այնպէս որ նրանցով չէր արտասանուամ Հայոց լեզուի բոլոր հնչմունքներն և նոցա մէջ էլ ձայնաւորներ չկային, որոնցով

(1) Պաղար Փարփեցի, երես 26. 28.

(2) Առվակ Խորենացի, Գիւք Գ. 72. Ռ. 103.

(3) Կոբիւն Խորենացի, Գիւք Գ. 72. Ռ. 103. Փարփեցի, երես 28 և ուրիշ յետին դարսւա մատենագիրը:

կարելի լինէր կտակել բաղաձայներն և լեզուի հնշ-
մունքները : Սուրբ Մեսրովը լրացնում է հին
այբուբենը, որ 22 տառ էր, և շինում է 7 ձայ-
նաւոր և եօթը բաղաձայններ (1) և նրանցով
տալիս է մեզ կարողութիւն մեր լեզուի իւրա-
քանչիւր հնչումն արտասանելու մեր սեպհական առ-
սերովը: Կրա մեծագործութիւնն անմահ պէտք
է մնայ իրեն երախտագէտ ազգի մտքումը (2),
որովհետև եթէ Հայերս մինչև հիմի մարդկու-
թեան մէջ ապրում ենք, սրանով մենք պարտա-
կան ենք 'ի թիւս այլոց մեր բազմաքանքար և ան-
մահ հայրենակեց Մեսրովին (3): Ուրեմն 36
տառ է Մեսրովեան այբուբենը, որի վերայ Ժ. Պ.
Դարումն երկու տառ էլ աւելցրին, այսինքն՝ օ և
ֆ: 38 տառից բաղկացած այբուբենն առանց ինչ
փոփոխութեան մինչև հիմա գործ ենք ածում
Հայերս: Աէն—Մարտէնն ասում է, թէ “ նրան
(Հայոց) այբուբենին են պարտական Հայոց լե-
զուն և զրականութիւն պահպանելու համար, հա-
ւատալի է, որ էս ազգն առանց նրա (այբուբե-
նին) շուտով կը խառնուեր Փարսից կամ Ասորւսց
հետ և բոլորովին կը կորչէր, ինչպէս հին Ասիայի
շատ ազգերը. նա շուտով բաժանեց Հայոց ազգն
և եկեղեցին, երկար ժամանակ պահպանեց նրանց
քաղաքական և կրօնական անկախութիւնն և
մինչև հիմի պահպանում է նրանց անկախու-
թիւնը,, :

(1) Փարսկեցի, երես 26—30. Խոթենացի Գրեք Պ. Դ.
ՕԲ. ՕԳ: Կրիւն Ասողիկ:

(2) Հայոց եկեղեցին սուրբ Մեսրովի տօնը կատարում
է հոկտեմբեր ամսին:

(3) Պ. Հմինի Մովսէս Խոթենացու Ժարդմանութեան
Դաշտելուածումը “ Հայոց այբուբենի վերայ ” :

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. Հայաստանը գտնուեա-
լով երեք մեծ ծովերի մէջ տեղը, այսինքն Սև
ծովի, Միջերկրական ծովի և Կասպից ծովի և
ունելով Եփրատ, Տիգրիս, Երասխ, Կուր և ու-
րիշ նաւազնաց գետեր, սկզբումը դիմչելով Մա-
րաց, Ասորեստանի, Միջագետքի և Ասորւոց սահ-
մաններին և վերջերումն ընկնելով Պարսից թա-
դաւորութեան և Հռովմայեցւոց կայսերութեան
մէջ տեղը, բնականաբար իր աշխարհագրական
դիրքով կապ ունէր կամ վաճառականութեան
կողմից կամ բարոյական կողմից հին աշխարհի
վերյգբեալ բոլը ազգերի հետ, և միշտ ունեցել
է ուղղակի կամ կողմնակի ազգեցութիւն էն ա-
նցքերի վերայ, որ կատարուել են քաղաքական
կամ կրօնական ասպարէզներումը: Արա համար
էլ Հայաստանի պատմութիւնն և Հայոց գրա-
կանութեան յիշատակարանները նոր լուսով լու-
սաւորում են Վոհայի քաղաքական և զինուորա-
կան կեանքը, աշխարհազրութիւնը, թագաւորաց
վերականգնելը, բոլը հին ազգաց քաղաքական և
կրօնական օրէնքները Կասպից ծովի ափից սկսած
մինչև Պարսից ծոցը պահպանում են ամենա-
մանը հանդամանքները, որ վերաբերում են Մա-
րաց և Ասորւոց թագաւորութեանցը, մանաւանդ
Համիրամի վիճակին և Աիւրոսի պատմութեանը.
Հաղորդում են մեզ շատ հետաքրքիր ու հարկաւոր
տեղեկութիւններ Պարսից Արշակունի և Սասա-
նեան ցեղերի թաղաւորութեանց համար, լրաց-
նում են Արևելեան կայսերութեան պատմութեան
լուսանցքները, բացատրում են շատ տեղեր Արա-
բացւոց, Թուլք Մելջուգաց, Անգոլաց և Խա-
չակիր զօրաց իշխանութիւնից և պարունակում են
մի քանի տեղեկութիւնք Կովկասեան լեռների և
Կոքսենեան Պոնտոսի բնակիչների վերայ: Արևե-

Եան բոլոր ազդերը՝ Զինացիք, Հնդիկները, Պարսկիներն և Արաբացիք ընդուխմացան քրիստոնէութեան տարածուելուն, բայց Հայերն ընդունեցին այս սուրբ հաւատը բոլորով սրբիւ պատրաստուած և ջերմեռանդօրէն, սրա համար էլ Աստուած առատապէս վարձատրեց նոյնա, որովհետեւ էն ժամանակից սկսեալ, իսկապէս ասել, Հայերը երեւլի տեղ են բռնել Ասիայի ազգերի մէջ և մի առանձին ինքն ուրոյն ազգ են:

Հայաստանի համար հեթանոսութիւնից քրիստոնէութիւն դառնալը մի և նոյն է, թէ խաւառից լոյս դաշտ. և Լուսաւաշիւ մականունը (Յունական), որ արուեցաւ Աստուծոյ բանը քարոզողներ Հայաստանումն, այս բանիս մեծ հաստատութիւն է: Այս քրիստոնէութիւնը՝ Հայաստանն օտար էր իր զրացի Յունաց և Ասորեստաննեացց լուսաւորութիւնից, ոչ ոք յանձն շառաւ զրել Հայոց հեթանոս թագաւորաց երեւելի պատմութիւններն և Մովսէս Խորենացին էլ պէտք է դիմէր Յունաց և Ասորւոց աղբիւրներին. նա ասում է. “շատ քաջազործութիւններ են եղել մեր աշխարհումը, որ արժանի են եղել զրով յիշաատելու, բայց նրանցից ոչ ոք չի հոգս արել զրելու” (1). Փոքրինչ յետոյ էլ հաստատելով, որ այս մեռեալ անդործութիւնն ոչ թէ գուրս է եկել նրանից, որ Հայոց տառեր չեն եղել և ոչ թէ նրանից, որ Հայաստանումը շատ մասնաւոր պատերազմներ են եղել, որովհետեւ գործ են ածուել մերձակայ ազգաց՝ Պարսից, Ասորւոց և Յունաց զրերն և Հայաստանը շատ ժամանակա-

ներ խաղաղէ եղել . Խորենացին ասում է . “ Այլինք թուռմ է , թէ ինչպէս հիմա , նոյնպէս հների մջն էլիմաստութեան և բերանացի երդերի սէր չի եղել ” :

Խոր չքննելով , թէ արդեօք Հայոց զրիրի պակասութիւնը , մշտական պատերազմները կամ թէ ուրիշ հանգամանքներն են եղել պատճառ էն ընդհանուր անհետաքրքրութեանն և մտացական անզործունէութեանը , մնաք այնու ամենայնիւ պէտք է խոստովանենք , թէ Հայոց զրականութիւնը սկսուում է Հայոց այբուբենքը դժնելու օրից (1) : Առաջին անմիջապէս հետևանքն այս զիւտի եղան եօթանասնից թարգմանած Առարք Գիրքը փոխել Հայոց լեզուով , որ սկսեցին ուուրբ Սահակն և սուրբ Մեսրոպին իրանց աշակերտների օգնութեամբն : Այս թարգմանութիւնը Յուներէնից է , (որ Սահակ կաթողիկոսին ուղարկեց Ա. Պոլսոյ Արքսիմիլիանոս պատրիարքը) շատ գերազանցուում է իր ճշգութեամբն և պատուականութեամբը (2) : Լակրօզը կոչում է այս թարգմանութիւնը թագաւոր թարգմանութեանց (3) :

(1) Միշտ այս ժամանակը Հայերն ինչպէս ուրիշ մանր աղբերը համարեա թէ , ունեին միայն պատմաբանական աղբային երգեր , որոնք բերանացի աւանդում էին ապագայից իրենց հին թագաւորաց և դիւցազնց զորձքերն : Այս երգերը շատ ժամանակ պահուում էին ազգի մէջ , առ հասարակ երգուում էին նուազարաններ ածնով և պար գալով , բայց նրանցից ոչոք Յունաց Հոմերոսի , Փարսից Գիրդոսի և Նոդկաց Ա իսափ և Ալմիկի նման չհաւաքեց և չմիացրեց այս դիւցազնական ասածուացքներն : Այս երգերը հատուածներով լազդից ազդ էին անցնում և էին համարեա Հայոց ազգի հին պատմութեան իսկական աղքիւները :

(2) Առվես Խորենացի , Գիրք Գ. գլ. ԱՊԱ Արքիւն :

(3) Կա ասում է ըստ իմ կարծեաց , Հայոց թարգմանութիւնը Նոր կտակարանի շատ թարգմանութիւններից գերազանց է . Այս լեզուին է միայն պատկանում բառ ու բառ իսկականից թարգմանելու յատկութիւնը : Չեղ յայտնի է Ա-

Այսպէս ասում են և Ա հստօնեան եղբարքը Մոկ-
սէս Խորենացւոյ իրանց կատիներէն թարգմանու-
թեան յառաջաբանութեան մէջ : Ուսումնական
Ենդիացի Ալարդոս Բուկանանք հաստատումէ,
թէ հայագէտները զարմանում են այս թարգմա-
նութեան ծշղութեան վերայ, որին անկասկած օգ-
նել են այս լեզուի հարստութիւնն և փափկահըն-
չութիւնն և սուրբ Սահակ և Մեսրովը թարգ-
մանչաց Յունարէն գերազանց լեզուն զիտենալը
Հայոց զիտութեանց և զրականութեան վերայ ցոյց
տուած սէրն և յառաջադիմութիւնն իրանց այ-
բուրենքը գտնելուց և Սուրբ Գիւրը թարգմանե-
լուց յետոյ կարելի է հաւասարել Եւրոպայի ընդ-
հանուր յառաջադիմութեանը ԺԵ. դարումը մի-
ջին դարերից նոր դարում լոյսը դուրս գալու ժա-
մանակը :

Այս երկու իրարից այսքան զանազան ազգերի
լուսաւորութեան պատմութիւնն ունի մի ընդհա-
նուր զիծ : Արեախնը, Ա ալին և Բեսարիովնը ինչ-
պէս ԺԵ. դարու մեծ մարդիկ, իրենց պարագ հա-

առրոց լեզուի հոգին: Դշտիապտացւոց լեզուն աւելի է հեռա-
նում Յունարէնից, որի հետ ուրիշները գտնում են նրա մէջ
փոքր նմանութիւն նոր կատարանի թարգմանութեան մէջ:
Ուշնչ չի կարելի ճշմարտադոյն լինի այն դատողութիւնից,
որ արեց հանգուցեալ Պիւրը Հայոց թարգմանութեան հա-
մար: Հայոց թարգմանութիւնը շատ յայտնի չէ, բայց նա-
լու և Ըստրիներիցը, որ շատ անգամ ուղղուել է Յունարէն
բնագրի վերայ, ինչպէս միայումեն Պարիդոր Աբուֆարածն և
ուրիշներն: Դու ձեզ այս կարծիքը չեմ ասիլ, որ կարող է ան-
ստոյդ երկի, եթէ ես կարողանայի ձեզ զգացնել այն ամենայն
գեղեցկութիւններն, արժանաւորութիւնն և եռանդը, թող-
լով արդ են Հայոց թարգմանութեան հնութիւնն: Այս
թարգմանութեան միջոցով կարելի է վերականգնել եօթանաս-
նից բնագիրը շատ տեղերում: Դու պէտք է ամբողջգիր զրեի,
եթէ ես կամենայի գրաւոր յայտնել այն ինչ որ ես կարող
եմ խօսիլ Հայոց թարգմանութեան համար, որ ես շատ ո-
քինաւոր կերպի յարգում եմ,, .

մարեցին իրենց աշխատանաց գլխաւոր նսկատակը
թողուլ Յունաց կյասիկական ճիշտ թարգմանու-
թիւնն. այս մի և նոյն եռանդեամբն էլ ոգեսոր-
ուած էին Եր դարումը ձայոց լուսաւորութեան
ջերմ պաշտօնեաները, որ թարգմանեն բոլոր Յու-
նաց և Ասորւոց մատենագրութիւնները, որոնց
գլուխն կանգնած էին Սահակն և Մեսրովին: Եյս
նպատակաւ նոքա ուղարկեցին իրենց աշակերտնե-
րից վաժսուն գերազանց և ընդունակ անձինք
Եղեսիա, Եղեքսանդրիա, Եթէնը և Ծիւղանդիա,
որ կատարելագործուին Յունաց և Ասորւոց լեզ-
ուաց մէջ և սովորեն քերականութիւն, փիլիսո-
փայութիւն և պատմութիւն: Խնչպէս ԺԴ և ԺԴ
գալումը ճանապարհորդում էին Գերմանիայից Ե-
տալիա և Գաղղիա, այսպէս էլ Եր դարումը շա-
տերն Ասիայից զնում էին Յունաստուն լուսաւո-
րութիւն ստանալու համար: Եթէնքի սովինս-
ներն իրենց մէջ բաժանեցին այն երկիրն. խնչպէս
ճարտարախօսութեան մէջ իշխողներ. այսպէս Եւ-
նապիսով վկայութեան համաձայն Յուլիանոսի մօտ
թափուում էին բոլը աշխարհքից, Եպիփանոսի
մօտ Ասորեստանից, Գիովանտոսի մօտ Երարիա-
յից իսկ Պոնտոսի մօտի երկիրներից՝ Ծիւթա-
նիայից և առ Հասարակ Ասիայի Յունաստանից
հաւաքուումէին Պրօերեսիոսին լսելու, որ լինելով
ազգաւ ձայ, համարուում էր իր ունկնդիրների
հայրենակից: Պրօերեսիոսն այնքան փառք ստացաւ,
որ նրա արձանը կանգնեցին ձոռվամումը. նրան
տուին պերճախօսութեան նախուութ պատուա-
նունը, որ հաստատում է Գրիգոր Աստուա-
ծառանը՝ նրա երևելի աշակերտներից մէկը, այսպէս.

ովոր միայն գիտեր Աթէնքը՝ նա միշտ
լսում և խօսում էր մեր դաստիարակների վերայ, ո
չայ երիտասարդները, որոնք ուղարկուել էին Սա-
հակից, մասն իրենց հայրենակցի ուսումնարանը.
Աթէնքում մենք տեսնում ենք նոցա Մեծին Բար-
սրդի և Գրիգոր Աստուածաբանին ընկեր, որոնք
նոյնպէս սովորում էին Պրօերեսիոսի մօտ: Խսկ թէ
չայ երիտասարդները ինչքան յառաջադէմ էին
գիտութեան մէջ և ի՞նչ պատիւ ունեին Աթէն-
քում, այս բանի համար շատ հետաքրքիր է Գրի-
գոր Աստուածաբանի էս պատմութիւնն. “Ես
նկատում եմ, ասում է նա, որ չայերը միամիտ
մարդիկ չեն, այլ շատ խորամիտ և անթափանցելի:
Այսպէս այս ժամանակս մի քանիսը որոնք Բար-
սրդի աւելի ծանօթներից և ընկերներիցն էին,
զեռ նրանց հայրերի և պապերի ընկերութեան
ժամանակից, որոնք սովորեցին մի ուսումնարա-
նում, գալիս էին նորա մօտ բարեկամական կերպով
և նրան առաջարկում էին խնդիրներ. աւելի հա-
կածառութեան քան թէ մտացական, նրանք վա-
զուց գիտելով Բարսրդի ընդունակութիւնն և աչք-
ները չվերցնելով նրա էն ժամանակուան ստացած
փառքի վերայ, աշխատում էին առաջին խնդրոց
մէջ նրան իրենց ձեռքի տակն առնուլ..... բայց ես
մի անհեռատես և Աթէնքին շատ սրտով կպած,
(որովհետեւ հաւատալով նրանց արտաքուստ քաղցր
գիմացը, չէի կասկածել նրանց նախանձաւորու-
թեան վերայ), երբ որ նրանք սկսան տկարանալ
և փախչել, ես բորբոքուեցի Աթէնքի փառքի
համար և որ նա չընկնի նրանց աչքի առաջն և ա-
տելութեան առարկայ չդառնայ, ես վերանորոգեցի
խօսակցութիւնները, քաջալերեցի պատանեացն և
կշռելով նրանց արժանաւորութիւնն, (այսպիսի

Հանդամանքներում մի փոքր կողմասպահութիւնն
էլ կարող է ամէն բան անել) մէջ բերի ինչպէս
առուում է, զանազան զօրութիւններ կռուի մէջ:
Բայց հէնց ինչպէս հասկացայ ևս խօսակցութեան
նելքին նպատակն, որովհետև էլ անկարելի եր
թածէիլ այն և հէնց այս գաղանիքն ինքն ըստ
ինքեան պարզ երեսեցաւ, Էն ժամանակը գործ զնե-
լով շուտափոյթ միջոցներ, ևս խօսքը դարձրի և
միանալով Բարսղի հետ, յաղթութիւնը շնորհի
կասկածելի: Բարսեղն էլ իսկոյն գործը հասկա-
ցաւ, որովհետև այնքան ներգործեց իր փերայ, որ
հաղիւ թէ ուրիշ վերայ կարողանար այնքան ներ-
դործել... Եւ մինչև որ չհարկադրեցի նրանց
բոլորովին ՚ի փախուստ դառնալու և յաղթող չհան-
դիսացայ նրանց վերայ, չդադարեցի հաւաքարա-
նութիւններից ... նրանք էլ առանց յառաջադիմու-
թեան հնոացան, շատ անարգեցին իրենք իրանց
համարձակութեան համար, բայց շատ նեղացան
ինձանից, ինչպէս շարամիտ մարդից և յայտնեցին
ինձ պարզ թշնամութիւն, մեղադրելով ինձ մատ-
նողութեան մէջ, ասելով, թէ ևս “ Տաքնեցի ” ու
Թայն իշտեց, այլ և իոն Ամենին (1): Այս պատ-
մութիւնից, որ հաղորդումէ մեզ Գրիգոր Աստ-
ուածաբանն, ՚ի հարկէ այն նպատակաւ, որ սառը
ճզի ձայերին և ցոյց տայ Բարսղի պերձախօսու-
թեան զօրութիւնը, կարնի է նկատել այն փառքն
և ուսումն, ինչ որ ունեին Սահակայ և Ան-
րոփայ աշակերտները. ինչպէս երեւում է, նրանք
կը Աթէսքի ներկայացուցիչքն, որովհետև երբ որ

(1) Գրոծ սուրբ Նարեց Ուռւսերէն թարգմանութեան մէջ
իւղ. նաև Գրիգոր Աստուածաբանի դամբանական-ժառ. Աւ-
շաբից և Կրտսագովիկոյ Արքակիսկոպոս Բարսղի մլուայ:

տկարացան նրանք Բարսղի հետ վիճելում, Գրիգորը բարը բարբուռուեց Ամենի է խառնէ համար, և որ չփեր ընկնէր Աթէնքը նոցա առաջին և առելութեան տակ չընկնէր, պահպանեց Հայ երիտասարդներին. իսկ երբ որ նա միացաւ Բարսղի հետ, այն ժամանակը Հայերն անարգելով նորան մասնիշութեան համար, ասացին, թէ ճապնեց ու մայն չբանց, այլ և իսկ Ամենից:

Հայոց այս հռչակաւոր երիտասարդները, որոնք բոլորովին արժանաւոր աշակերտք էին սուրբ Սահակին, Մեսրովին և Պրօերեսիոսին և արժանաւոր ընկերք էին մեծին Բարսղի և Գրիգոր Եսուսածաբանի, 435 թուին յետ դարձան իրենց հայրենիքը: Գրականութեան հանդիսի մէջ սրանցից աւելի երեսելեն են, ինչպէս պատմաբաննք: Մովսէս Խորենացին, Եղիշէն, Ղազար Փարավեցին, Կորիւն, Դաւիթ անյաղթ փիլիսոփայն, Եղնիկ եպիսկոպոս Առղբացին և շատ ուրիշները:

Մենք տեսանք, թէ ո՞րքան հարկաւոր է եղել ընդհանուր պատմութեան համար Հայոց պատմաբանների գրուածներն ուսանիլ: «Մոքանոր լուսով լուսաւորում են հին Եսիայի ու Ախուզանդեան կայսերութեանց անցքերը, մանրաւմասն փառտեր են հաղորդում մեզ և իրենց վերայ են դարձնում մեր ուշադրութիւնն աւելի գերազանց ոճով, քան թէ Արարացւոց և Պարսիցն. այս յարաբերութեամբ նրանք գերազանցում են նաև մեծ մասմբ Ախուզանդեան պատմաբաններից: » Ինչ որ վերաբերում է զեղեցիկ հնչմանցն և գերազանց ոճոյն, ասում է Աէն—Մարտէնը, Կրտնք գրաւիչ չեն համարուում երեակայութեամբ ուրիշ Երեսելեան մատենագրաց նման, երբ որ ուզում են պերճախօս լինիլ, բայց բոլորովին չթողննով այն ոճը, ինչոք կաղմաւմ է Երեսելեան ոճը, Հայ պատմադիրները.

կարողանում էին պահպանել իրենց ոճն այն ան-
յարմար նմանութիւններից և էն օտարոտի ձիգ
ձիգ փոխաբերութիւններից, որ են առ հասարակ
Ըրաբացւոց և Պարսից Ճարտարախօսութեան նշան-
ները: Կարելի է նաև առանց Շոխարանութեան ա-
սել, թէ նրանցից շատերն, ինչպէս Խորենացին,
Եղիշէն, Պազար Փարպեցին, Յովհաննէս կա-
թուղիկոսը (1) և մի քանի ուրիշներն արժանի են
Խորոպայի ուսումնականաց ուշադրութեանն իրենց
պերճախօսութեամբը, մաքուր ոճովն և ճարտա-
սանական և ուսումնական հատուածներովը, նրանց
շատ հետաքրքրութեամբ կարելի է կարդալ այն մեծ
Տիղինակութիւններից յետոյ, որ մենք ունինք և
նրանցից յետոյ, որոնք ծնեցին Յունաստանն և

(1) Յովհաննէս կաթուղիկոսն էր Թադարի կիսումը և առ երե-
կի և աւելի իր պատմաբանական բուն հայեցուածքովն իրա
կենդանի և ազդու ոճովն և խորին գաղափարներովը, որոնցով
լեզն է նորա պատմութիւնն Ունեղով վաս երեակայութիւնն
և առատօրէն լցնում է ձեերով և փոխաբերութիւններով,
բայց և այնպէս չպատճառելով զղուանք և անհամաձայնու-
թիւն, ազդու, բայց համառօտ խրատներով և շարժողու-
թեամբ, որ նա շատ է գործ ածում պատմութեան մէջ, նա
յիշում է Յունաց լաւ պատմաբաններին: «Եա հազրոգում
է շատ հետաքրքիր տեղեկութիւններ Արաբացւոց պատմու-
թեանը վերաբերեալ, և քննում է նրանց յաղթական արշա-
ւանքներն Ասիայումը՝ համարելով բոլոր պատերազմներն և
յարձակմունքներն Երուսէքիրի օրից սկսած: Առաջին ան-
դամ նորա պատմութիւնը տպուեցաւ Փարիզումը 1841 թուին
Աչն-Մարտէնի Պալլէիերէն թարգմաննութեամբը: Հայոց
լեզուով նա լսյ ընծայուեցաւ 1843 թուին Երուսաղէմումը:
իսկ ամէնքից լաւ տպած օրինակն է Ապարեանց ճեմարանի
Հայկաբանութեան վարժապետ Պ. Խմբնի տպածը, որ աշ-
խատել է համեմատել զանազան ձեռագիրներ և առաջի տը-
պածն և ընծայել է իր ազգին այս հաւասարիմ օրինակը
Յառաջաբանութեան մէջ Պ. Խմբնը բոլորովին հերքում է
յետին դարերին Խորսպացւոց և Հայոց պատմաբանների ան-
գիմն կարծիքները, որոնք վերաբերում են Յովհաննէս կա-
թուղիկոսի պատմութեանը:

Հառվել,, (1) Հայոց այս պատմաբանների հաշ-
թումը կարելի է թուել այս վերջին մատենա-
գիքս էլ. Սեբէոս, Յառվմա Արծրունի, Ասոզիկ,
Ներսէս Շնորհալի, Վարդան, Արակոս, Ստե-
փաննոս Օքրեկեան և մի քանի ուրիշներն էլ:

Հայոց գրականութիւնն ունի Պղատոնի և Ա-
րեստոտելի հաւատարիմ և ազգու թարգմանու-
թիւնը, որ արել է Եւ դարումը Դաւիթ անյաղթ
փելիսովոյն, Եւսեբիոսի Արքազան պատմութիւնը,
Վարք սուրբ Հարց, Հօպոկրատէսի, Գալինոսի և
ուրիշ յետին մատենագիրների: Մովսէս Խորենա-
ցին իր պատմութեան մէջ՝ մէջ է բերում Դիոդո-
րոս Սիկիլիացւոյ (2), Յովենիփոսի (3), Իմուսո-
սի (4), Եբիադենոսի (5), Անգաղոնսի (6), Ամե-
սիադորոսի (7), Մանեթոսի (8), Յուլիոս Եփ-
րիկանոսի (9) Փղեզոնի Տրաղացւոյ (10) և շատ
Յունաց երեսելի մատենազրաց հեղինակութիւնները.
այս հեղինակութեանց մեծ մասը մեզ չի հասել:

Հայոց լեզուի մէջ պահուած են մի քանի Յու-
նաց և Ասորւոց շարադրութեանց թարգմանու-
թիւնքը, որոց իսկականը կորած է. զորօրինակ.
Ժամանակազրութիւն Եւսեբիոսի, Հատուածք
Ծովհան Ասկեբերանից, Վնտիրքայ Միքայել
պատրիարքի Բնդհանուք պատմութիւնը (Ժ. Ք.
դարումը) և այլոց:

- (1) Յեշաստակարան Հայաստանի: Աճ-Մարտենի.
- (2) Գիեզ Գ. Ա. Ե.
- (3) Գիեզ Ե. Ա. Գիեզ Բ. Ա. Ժմերիկ. Յ. Ա. Ե.
- (4) Գիեզ Ե. Ա. Գ. Զ.
- (5) Գիեզ Ե. Ա. Գ. Ե. Գիեզ Բ. Ա. Բ.
- (6) Գիեզ Ե. Ա. Ե. Ժբէ
- (7) Գիեզ Ե. Ա. Զ.
- (8) Գիեզ Բ. Ա. Ժ. Գ.
- (9) Գիեզ Բ. Ա. Ժ. Գ.
- (10) Գիեզ Բ. Ա. Ժ. Ժ.

Հայոց գրականութիւնը տալիս է մեզ շատ առաջարկաւոր և արժանաւոր տեղեկութիւնը Աստվածանեան ժամանակի Ծննդաւեստի դեսի վերայ և նոյն մոգական և կրօնական աղանդոց վերայ, որովհետեւ երբ որ Հայաստանիցն Երշակունեաց տան թագաւորութիւնը վերջացաւ, մոգերը Պարսից թագաւորաց զօրութեամբն աշխատեցին կրակապաշտութիւնը մտցնել Հայաստան։ Կն ժամանակը Հայոց հոգևորտկաններն իրենց զրութեանց մէջ աշխատեցին մոգտկան օրինաց ստութիւնը ցոյց տալ. ուրեմն նրանց հաղորդած տեղեկութիւններն ոչինչ կասկածանաց տակ չեն կարող ընկնիլ, որովհետեւ այնպիսի մարդիկ են եղել նրանց զրողները, որոնք անմիջապէս դործ են ունեցել մոգերի հետ, ոյն պատճառաւ, որ զգուշացնեն ժողովրդին նրանց սւաս ուսմունքներից։ Հայոց լեզուումը շատ կան նոյնպէս հերքումներ զանազան աղանդների և հերձուածների (1)։

Ենկարելի է ներկայումն վճռաբար ցոյց տալ Հայոց զրականութեան նշանակութիւնը, որովհետեւ զեռ շատ հայ ձեռազբներ թալլուած են վանքերի գրատանց փոշիների տակ, որոնցից մի քանիսը միայն տպուած են և շատ քիչերն են յայտնի հյուրոպայի մատենազգացն. և դժուար թէ մէկ հայ մատենադիր քննուած լինի կրիստոնեական դատողութեամբ և գնահատուած, որովհետեւ զեռ նոր է մտել Եւրոպայ Հայերէն լեզուն և նրա գրականութիւնը սովորելու սէրը։

Մեր ներկայ քննութեանց սահմանը չի ներում մեղ խօսիլ առանձնապէս ամէն մի երևելի մատե-

(1) Ծիշտառակարան Հայաստանի, Վեն-Պարտենի. Յանչաբան. Ը արագութիւն Պ. Խոզեանցի ու Թարուակ մոդեր ուսմունք համեմ. „ 1858:

նազրի վերայ, բայց մնչք կարող ենք միայն մի
սկատողութիւն անել, այսոց այս մօտցական գոր-
ծունեութիւնը, որ սկսել է Ե. գարիցն, ամէնքից
աւելի վկայում է ազգի լուսաւորութեան և ած-
ման աստիճանն և նեղութեանց ու հարուածոց
առակը նրան մէջ հոգեւորական կեանքը, ներքին զօ-
րութիւնն և բարյականութիւնը զարթնիւք. որով-
հետեւ դժուար է մեկնել, թէ ի՞նչպէս այս ցրուած
ազգը, որ այսքան անընդ գերութեան մէջ է, կայ իրեն
հոգեւորական կենաց անկախութեամբը, պարա-
պում է արուեստներով, ունի օւսումնականք, մշա-
կեալ լեզու և մարդկային գիտութեան ամեն պի-
գերի վերայ առաւ պլուածներ:

ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

1. Թւագուռական սկզբնաւորութիւնը չտարածուց լիսպէս Հայաստանումը. թագաւորի իշխանութիւնը սահմանափակուած էր նախարարաց և նահապետաց իշխանութեան մէջ :
2. Եկեղեցին Հայոց վիճակի մէջ մեծ նշանակութիւն ունի իր անկախութեամբն և ազգային սկզբունքներովը:
3. Կախուրաբներն, ինչպէս Հայկազունք, միշտ մոռծելով ժողովրդի օգուտը, ունէին մեծ ներգործութիւն Հայոց պատմաբանական կենտրոց վերայ:
4. Հայոց գորգը քաջաբար պաշտպանելով իր հոյրենիքը, հեռանումէր արտաքին կոփիներից:
5. Հայք շատ հին ժամանակից հետէ եղել են առելի երկրագործ ժողովուրդ. նրանք վաճառական յարարերութիւնը են ունեցել հին աշխարհի ամէն ազգերի հետ:
6. Հայոց լեզուն պատկանում է Հնդկա—Արարապիան ինզուների ծիւզերին և մօտենում է Սանսկրիտաց լեզուին՝ Օհնդացւոց լեզուի միջոցաւ:
7. Հայոց դրերի գիւտը մեծ ներգործութիւն և անհյաւ ազգութեան աճման վերայ և է Հայոց մինչև յայժմ իրրեւ առանձին ազգ մնալու դիմաւոր պատճառներից մէկը:
8. Հայոց դրականութիւնը պահելով Յունաց և ասենագիրների հնդինակութեանց շատ Ճիշդ թարգմանութիւնները, որոնք համարումէին կորած կամ զանազան աղաւաղութեանց ենթարկուած, ունին շատ հարկաւոր գիտնական նշանակութիւն, բայց ինչպէս ժողովրդի հոգւոյ կինաց պատկեր, Հայոց դրականութիւնը պարզում է Հայոց մուացական և բարոյական աճողութեան սկսեալ քրիստոնեութեան առաջին դարերից:

«Ազգային գրադարան



NL0243340

